



## Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ  
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial  
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով  
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

**Share** — copy and redistribute the material in any medium or format

**Adapt** — remix, transform, and build upon the material

Удк

892

1 4  
27

12012



Մեծ

892

28 JUN 2005

ՄԵԾ ՄԱՐԳԵՐԻ  
ՊԱՏՄՈՒԹԻՒՆՆԵՐ

ՄԵՋԻՆ ԵՒ ՆՈՐ ԳԱՐԵՐՈՒՄ

480

ՓՈՒԱՂԲԵՑ Գ. Յ.—Ս.

1873

Թ Ի Յ Լ Ի Ս

ՀԱՄԱՐՁՈՒՄ ԷՆՑԻԱՃԵԱՆՑԻ ԵՒ ԸՆԿ. ՏՊԱՐԱՆՈՒՄ:

2005 JUL 8

1873  
730  
13

Дозволено цензурою, г. Тифлисъ. 13 Июля 1873 года.



892-2012  
4082  
41  
1884

### ԴԷՊԻ ՀԱՅ-ԳՐԱԿԱՆՈՒԹԻՒՆԸ:

#### I.

Անն մի անգոր վաստակ, որ ձգումեմ քոյ դատու-  
ղութեան առաջն, հայկական գրականութիւն. քոյ կառքից  
է կախուած ընդունել նորան ա բ հ ա մ ա բ հ ա բ ա բ կամ  
պատուի մի ն շ մ ա բ ա ն ք ո վ. բայց ես, որ կամենումեմ  
իմ կեանքը նուիրել երկնային ճշմարտութիւնների անկեղ-  
ծութեան, ես կամենումեմ նոյնպէս մի կարճ, բայց, իմ  
հայեացքով, ճշմարիտ ակնարկութիւն անել քոյ այժմեան  
ոչ զուարթ զրութեան վերայ, առանց վախենալու քեզա-  
նից և այս աշխատութեան գեղեցիկ կողմերի վերայ:

#### II.

Ամէն մի գրականական մարմին կամ արտադրութիւն,  
որքան և փոքրիկ վնէր, կարելի է, ըստ ինձ, տեսանել  
երկու կողմից, ներքին և արտաքին: Առաջինը պնջքան  
մեծ նշանակութիւն ունի, որքան մարդկութեան համար  
օգտաւէտ ճշմարտութիւնների մեծ կարգ էր ներկայացնում.  
այն ինչ երկրորդի արժանատրութիւնը նորանում է, որ  
այդ փակտերը որքան կարելի է աւելի կարճ, վայելուչ,  
գեղեցիկ և ներդաշնակ շինուածքով աչքի առաջն բերուէին.  
վերջինին օգնական են գալիս քերականական օրէնքները,  
ճարտասանական արուեստը . . . դա է—գրականական լե-

զուի արտաքին կողմի մշակութիւնը: Ընդհանուր գրահանական լեզուն այն փամանակ միայն կ'օժտենայ կատարելութեան, երբ նորա տէրը մի ազգային ամբողջութիւն է կազմում, երբ նա ունէր իւր ստորին և բարձր ուսումնական կարգի շինութիւնները. այլապէս, դործնական աշխարհի փորձերը պարզապէս աչքի առաջ ևն բերում այն իրողութիւնը, որ նորա մէջ, իբրև անչուտ հետեանք, ծրնանուելու ևն զանազանակերպութիւն, ընդհանուր խօսու, բարեղոնեան խառնակութիւն: Հայկական լեզուն իւր այժմեան դրութիւնով, ընդհանրապէս, այս վիճակին է նկատարկուած. և ազգերը, որոնց մէջ ցրուած է նորա տարբը, կլիման ուր ապրում է նա՛ լեզուն—բոլորը մեծ փոփոխութիւններ են ձգել և ձգում են նորա կանոնաւոր զարգացման վերայ. բայց չնայելով դորա վերայ, դարձեալ վերածնող հայկական գրականութեան պարտականութիւնն է յառաջ մղել լեզուի արտաքին կողմի մշակութիւնը կարելաչափ կերպով. նա չպետք է բռնականանայ փակուելի լով յառաջաբերութիւնով. նա սրարտական է նոյնպէս, իւր պարբերութեան ներգործող ձեւներով, մօցնել արտաքին կարելաչափ ներդաշնակութիւն, որ անչուտ նեղ կապի մէջ էր նորա նիւթերի ծանրութեան ատիճանից: Այդ յարաբերութիւնով, ես աշխատել եմ ուշագրութեան արժանի կացուցանել այս թարգմանական վաստակը. հնչաւ կարելի է նշմարել, որ ես կամեցել եմ ստանալ լեզուի շինութեան հիմք, որքան կարելի էր իմ ծանր շրջապատ հանգամանքներին մէջ, հաստատուն կացուցանել, այնպէս, որ լոգիկան ստանաւ չզգեաք է, իմ կարծիքով, իւրեան դաւաճանած համարէր,

Թէ որքան կրթողական ազդեցութիւն կարող են ունենալ, մանաւանդ հայութեան մէջ, այս տեսակ գրուած-

ները, ևս կարծումեմ ինձ բաւական էր միայն հրատարակութիւնը, ևս կարծումեմ ինձ բաւական էր միայն հրատարակութիւնը անգլիական մտածողի այս նշանաւոր խօսքերի վերայ նորանց մասին. «Մեծ, մանաւանդ թէ օգտաւէտ մարդերի պատմութիւնները (կենսագրութիւնները) վերին ստախճան կրթողական և արդիւնաւոր են, ինչպէս նպատակ միջոց, ձեռնարկութիւն և գրգիտ հասարակ մարդերի համար: (Ներնագործունէութիւն—self—heif), հեղինակութիւն Մեծցլի, պ. Ալուանիկովի ուսական թարգմանական աշխատութեան մէջ: Ս.—Պետ. 1867 թ.):

Ամէն մի մանկանացու գրեթէ ոչնչանումը բնութեան զարմանահարաչ օրէնքների գիտութեան անտանձանութեան առաջ. և այն տարբերութիւնը կտր մասուր հաշակարարութեան և անտաշ մարդկային մնացողի մէջ, որ առաջինն առած էր, շատ թէ քիչ, ստեղծագործութեան իմաստասիրութեան ճաշակը, այն ինչ երկրորդը դեռ թաւալում էր անխորհուրդ կենդանական գոյացութեան մէջ . . . Մեծ ուրախութիւնով, ուրեմն, պատրաստ եմ ստանիլ իմ յարգելի կրիտիկոններից, եթէ նորանց մարդասիրութիւնը ծառայութիւն ցոյց տար, տպագրապէս մատակարարելով ինձ բանաւոր ցուցմամբ սխալանքների, որոնք իմ անիզօր գրչի անխուսափելի սեփականութիւններ էին, սրովհետև, սէրը զեպի անտանձան կատարելութիւնը մասուր աշխարհում, դեռ հեռաւորապէս չէ ցուցանում սիրողի պակասութիւնների նուազութիւնը (խակ սմբողջական կատարելութիւն, ի հարկէ, մշ կրեք):

1873 Ընոյն Մարտի 25-ին: Գրեթէ Եկր - Սեւի՛ն - Երեւան:

## ՀԱՅ-ԸՆԹԵՐՑՈՂ ՆԵՐԻՆ:

Անցանում, թէ և ատտիճանարար, սուտ—պոյէտիքականութեան ժամանակը, որտեղ երեսակացութիւնը խաղում էր զեզեցիկ ֆրազներով և միայն, հիմայ, միտքը ես պահանջումէ ինքեան կերակուր—փակտերի զիտութիւն, որոնք կան արդէն գործնական հողում և հասուն մտածութիւնով լի միջոցներ մարդկային նիւթական ապագան կանոնաւոր և բարեբաղդ անկրու համար: Սուտ—պոյէտիքականութիւնը տեղի է տալիս զուտ—բանաստեղծական պատկերներին, որոնք շատ նեղ կապի մէջ էին իրականութեան հետ. բանաստեղծութիւնը մտանումէ ներդաշնակ յարարութեան մէջ բանականութեան հետ . . .

Ահա, այդ սկզբին յարմար մի գիրք, որ ներկայացնումն մաքուր հայկական խօսքով. սորանում զուրս են բերած լուսաւորութեան հալածանքների փակտեր, որոնք նկարագրուած են պարզ և սրտաշարժ կերպով. այդ պարզութիւնը—բնական պոյէտիքականութիւն է և նա կարող է մաշուած ուսումնականութեան աչքերից համակրութեան արտասուքներ խլել՝ ճշմարտութեան պաշտօնների սրտերն ընդարձակելու և նորանցը գովայնելու համար . . . Հուովը և նորա հետեողները, անձնատուր եղած իւրեանց կտրութեան պաշտպանութեան, ամէն զօրութիւնով աշխատում էին խափանարար լինել մարդկային մտքի ազատ զարգացման, Հուովը ինքը սգիտութեան մէջ մեռած լինելով, օ-

տան էր ճշմարտութեան ձայնից, մարդկային իրաւունքների հաւասարութեան զազափարի զիտութիւնից և կեղծ աստուածապաշտութեան անունով հալածում՝ այրումէր կրակով լուսաւորութեան հերոսներին. նա հեռի լինելով լոյս քրիստոնէական աշխարհից, թէ օեսականապէս և թէ գործնապէս, հեռի էր մի և նոյն ժամանակ և զթութեան, խղճմտանքի ու արդարութեան սկիզբներից. նա, վերջապէս իւր արծաթամոլ բնաւորութիւնը միջոցներ էր որոնում աւելի հարստացնելու:

Ուսումնասիրեցէք, ուրեմն, մարդկութեան նահատակների տանջանքների պատմութիւնը. և այն միջոցում, երբ տեսանումէք որ կ ո յ ը հ ո գ և ո թ ա կ ա ն ու թ իւ Ն ը փայտակոյտներ է դնում հրապարակներում՝ նորանցն այրելու, կարեկցեցէք նորանց տանջանքների խստութեան, աշխատեցէք աւելի կենդանի պահել այդ անմեղ նահատակների յիշատակը:

Բայց նորանց նուիրական աղքատիկ կեանքը, ծանր հառաչանքները շղթաների տակ, մթին ու խոնաւ բանդերում, մարդ մի անգամ իմանալուց յետոյ կարող է մոռանալ նորանց անունները:



ՄԵԾ ՄԱՐԿԵՐԻ ՊԱՏՄՈՒԹԻՒՆՆԵՐ ՄԻՋԻՆ ԵՒ ՆՈՐ  
ԴԱՐԵՐՈՒՄ:

Այս զբոյսի մէջ մենք կամենում ենք պատմել մի-  
ջին և նոր զարերի մի քանի մեծ մարդերի մասին:  
Ընթերցողը կարող է տեսանել, որ քանի տղէտ է եղել  
դարը, մեծ հանձարները այնքան յառաջադէմ են  
եղել իւրեանց ժամանակակիցներէրց, նորանց հալածողու-  
թիւնները և տանջանքը այնքան խիստ են եղել, նորանք  
այն քան հանդիսաւոր կերպով կընկել են իւրեանց կեանքը  
(Բրունդի և Հուսի այրուիլը հրապարակով): Մարդ-  
կութիւնը քանի զարդանում է, այնքան քնքրոյշ կեր-  
պարանք են ստանում հալածանքները. հոյակապ և  
երևելի մարդերին ջանք են անում զրկել անկիւնից,  
վնաս հասուցանել զըպարտութիւնով, նենգաւոր  
խորհրդով, վարձկան մարդասպանով, միւս կողմից,  
այնքան աւելի ոյժ է ստանում ժողովրդական համա-  
կրութիւնը ղէպի նորանց, այնքան աւելի մեծ յար-  
գանք է զարթնում ամբոխի մէջ ղէպի բանասուր  
մտածութիւնը . . . Թէ այսպէս թէ այնպէս, հասու-

ցանկնք պատուի հարկը այն բոլոր մեծ մարդերին, որոնք սերով և անշահասէր նպատակով կատարած են իւրեանց գործը:

Այդպիսի հանձարեղ մարդերը ոչ միայն մեծ մտաւոր ընդունակութիւններով, բայց և անսահման սէրով դէպի ճշմարտութիւնը և մարդկութիւնը ամէն ժամանակ երևումեն այն ամէն ազգերում, որոնք ընդունակ են զարգանալու: Քիչ անգամ չէ պատահում որ նորանք չունենային իւրեանց ժամանակի պակասութիւնները, բայց և այնպէս նորանք միշտ յառաջ են գնում և շատ անգամ կորնչում անհետանումեն, պատերազմելով շրջապատ տղիտութեան և սուլիւրատութեան դէմ: Նեղիւրտ, իւրեանց յանձնած պաշտօնով և հնութիւնից աւանդած կարծիքներով զոհ մարդերին անկարելի է հանդարտօրէն նայել նոր զաղափանների, նոր կենսական պահանջների վերայ . . .

Նորանցը անկարող լինելով հասկանալու մարդերը,

Լ լինն զնոսա, սպանանեն,

Ա պա զարձանս նոցին կանգնեն,

Ի բանիլ աչացն

Զփառս նոցին տեսանելով . . .

Այո, նեղութիւնները և հալածանքը երբեք չեն կանգնեցնում հանձարեղ մարդերին, նորանք միայն զօրեղացնումէին նորանց գործունէութիւնը: Նորանցը շրջապատումեն ունկնդիրների և մտերիմ կուսակից-

ների խումբեր. նորանց նահատակութիւնները յառաջ են բերում ամբողջ դարերի համակրութիւնը: Մահից զկնի, նորանց ստուէրն անգամ հանդիստ չէ սալիս թշնամիներին, հողի է պարգևում իւրեանց հետևողներին, իսկ միտքը շարժում է մարդերին դէպի յառաջ. ահա, թէ որպիսի է զօրութիւնը մեծ զաղափարի, մեծ գործի . . .

1.

Ա Ք Է Լ Ա Ր :

(1079-1142 թիւ Քրիստոսի ծննդից յետոյ)

Քրիստոսի ծննդից մի քանի տարիներ անց կենսուց յետոյ նոր ազգերը փոխադրուեցան դէպի Ներպայ և, ինչպէս յայտնի է, տիրապետելով նախկին հռովմէական կայսրութեան, բաժանեցին նորան զանազան մասների և հետ զհետէ կազմակերպեցին նորանոր կայսրութիւններ. Անդլիան, Ֆրանսիան, Գերմանիան [նեմէցներ], Իսպանիան, Շուէցիան, Դանիան և ուրիշ ազգեր: Նոր ազգերը այն ժամանակ դտանվումէին տղիտութեան և սնտիապաշտութեան մէջ, և թէպէտ ընդունեցին քրիստոնէութիւնը, բայց նա կաթոլիկական էր [միայն ուսուցը և յոյները մնացին հաւատարիմ արևելեան դաւանութեան]: Այդպիսի հասարակաց տղիտութեան միջոցում մարդերն ապրում էին խիստ չքաւորութեան մէջ. խիստ շատերը մե-

Անուամէին, որովհետեւ անկարող էին բժշկել իւր-  
 բեանց կամ զգուշանալ հիւանդութիւններէց: Շատ  
 անգամ յտաջ էր դարձնուած ժամտախոտ, որից՝ մեռա-  
 նուակեր երբեմն բնակիչներէ աւելոյժ երրորդական մասը:  
 Ամենայն սեղ թաղաւորուամէին պատերապմներ և ա-  
 լաղակութիւններ: Իւրաքանչիւր քաղաք և իւրաքան-  
 ջիւր զիւղ բերդի էր նմանուում: Հասարակութիւնը  
 թշնամի էր իւրաքանչիւր անհատի հետ, և իւրա-  
 քանչիւր անհատը — հասարակութեան հետ: Աչինչ  
 զիտութիւններ չկային, մի միայն կաթովիկ հողեորա-  
 կանութիւնն ունէր մի փոքր սեղեկութիւն, միայն  
 նա էր տարեզիրներ [առասպելներ] զրողը, նա էր նոյն-  
 պէս կառաւարոււմ ուսումնարանները, ուր ուսումը  
 ամենեւին անկենդան և անպտուղ էր: Ստակները մի  
 քիչ հաւատ գտանելով մի սերունդի մէջ, յարգանքի  
 առարկայ էին դառնում երրորդ սերունդի մէջ, իսկ  
 չորրորդ սերունդը կառուցանուակեր նորանց պատուի  
 համար սաւառներ: Մարդերն այն ժամանակ չափազանց  
 սնտոխապաշտութեան մէջ էին գտանուում: Ս. յգոր  
 համար կաթովիկ հողեորականութեան՝ դժուար չէր  
 ձեռքի տակ բերել մեծ իշխանութիւն ժողովրդի վե-  
 րայ, ոչ միայն հաւատի գործերի, բայց և զիտու-  
 թեան ու քաղաքական գործերի մէջ: Մտաւոր կող-  
 մից, կաթովիկ հողեորականութիւնն աշխատուակեր  
 ճնշել բոլոր ազատ մտածութիւնները և հալածոււմ-  
 էր նորան յետին խտութիւնով: Բայց նոր ազգերի

մջ զտանուամէին շատ առողջ գորութիւններ և, իւր  
 բոլոր խտութիւնով, կաթովիկ հողեորականութիւնը  
 չկարողացաւ ամենեւին հանդցնել ազատ մտքը, այն-  
 ուսմանայիւ նա, ընդդէմ ամենատեսակ արդէլքների,  
 արտայայտուակեր որ և է կերպով: այդպէս, ազատ դազա-  
 փարների առաջին ներկայացուցիչներից մին էր Սբէլարը:

Պետրոս Սբէլարը ծնուէց Պրանսիայում [Նանտ  
 քաղաքի մօտ, 1079 թուականում]:

Նա շառաւիղուակեր բրետանեան ազնուականներից,  
 իսկ բրետանեան ցեղը նշանաւոր էր մաքի սեփական  
 ուղղութիւնով և անկախ բնաւորութիւնով: Սբէ-  
 լարը երիտասարդութիւնից չափազանց սիրեց զիտու-  
 թիւնը և վճնեց հիմնաւորապէս պարսպել զրակա-  
 նութիւնով և վիլիխափայութիւնով: Ա. յդ ժամանակ  
 բոլոր երեւելի մարդերը գտանուակէին զինուորական  
 ծառայութեան մէջ, նա հրաժարուէց նորանից, թո-  
 դեց իւր եղբայրներին բոլոր գոյքը և ուղեւորուէց ճա-  
 նապարհորդելու, նա կամենուակեր ուսանել: Ճանա-  
 պարհորդութեան ժամանակ նա լուակեր զանազան ու-  
 սուցիչների. բացի վանազան ուսուցիչներից, նա լսեց  
 և Քան Ռոտուսլինին, — ամենախելօք մարդին, որը այդ-  
 որ համար շուտով դատասարտուէց կաթովիքական  
 հողեորական խորհուրդից Սուստոնի մէջ [1092 թ.]  
 մահի երկիւղից նա ստիպուած էր հեռանալ ստա-  
 ցուածից և ապա փախել դէպի Անգլիայ:

Քան տարեկան Սբէլարը մնումէ փարիզի մէջ և

լումէ այնտեղ Շամսոյացի Վիլլհելմի դասերը. այդ մարդն այն ժամանակ զտանվումէր մեծ փառքում և ուսուցանումէր ֆարիզեան Աստուածամայր ուսումնարանում [ուսումնարանն այդպէս էր անուանվում ֆարիզեան Աստուածամայր եկեղեցու մօտ զտանվելու համար:] Պետրոս Աբէլարը շուտով փայլեց բազմաթիւ ունկնդիրներին խմբում իւր անկախ մտածութիւնով, ընդարձակ զխոսութիւններով և բնական ճարտարութիւնով: Չնայելով իւր հռչակաւորութեան վերայ, Վիլլհելմը բոլորովին հին սկիզբների համաձային էր մատակարարում. այդ պատճառով Աբէլարը չընդունեց նորա զխոսութիւնը:

Չնայելով իւր երիտասարդութեան վերայ, նա ինքն շուտով դարձաւ ուսուցիչ, սկսեց կարդալ «դիալեկտիկայ» [այդպէս էր անվանվում այն ժամանակի փիլիսոփայութիւնը], նախ Մելէնում, ապա Կորբելում, որ մօտ էր ֆարիզին, և վերջապէս նոյն իսկ ֆարիզում, ֆարիզեան Աստուածամայր ուսումնարանում, որտեղ ուսուցանումէր յառաջ Վիլլհելմը: Վիլլհելմն այն ժամանակ դուրս եկաւ, տարով իւր պաշտօնը մի յաջորդի, որ նոյնպէս այդ պաշտօնը տուեց Աբէլարին, ինքն նստելով նորա աշակերտների մէջ, որպէս հասարակ լսող:

Միայն, երբ Վիլլհելմն խնայաւ թէ Աբէլարը բռնեւ է իւր տեղը, ցոյց տուեց անբաւականութիւն, որի համար Աբէլարը պէտք է նորից դառնար դէպի

Մելէն: Բայց շուտով կրկին դարձաւ դէպի ֆարիզ, և ուսուցանումէր ուսումնարանում՝ ս. Ժէնեւայի սարի վերայ: Որտեղ և զնումէր՝ ամենայն տեղ հետևում էին նմա լսողների բազմութիւններ: Փարիզում լսում էին մօտ 5000 մարդ: Նորանց թւում զտանվումէր և ապագայ պապը [Կէլէստին II], տասն և երկու ապագայ կարդինալներ [ճիրանակիրներ], ևս առաւել շատ ապագայ հանճարներ, որոնց կարգում և Արնոլդ Բրէտչիանեանը: Աբէլարը լսողներին ձգումէր դէպի ինքն իւր ճարտարախոսութիւնով, որը խոստովանվումէին նոյն իսկ թշնամիները, բացի դորանից նա քաշումէր դէպի ինքն իւր ասեփական մտածութիւնով և մտքերի համարձակութիւնով, որ խիստ հազուադիւր էին այն ժամանակ: Շատ անգամ նա յայտնումէր այնպիսի մտքեր, որոնցը նորա դարում ոչ ոք չէր համարձակվում յայտնել. այդոր համար բոլոր հնամուլ մարդերն սկսեցին ատել նորան. նոյն իսկ զաստովութիւնը աւանդումէր նա բոլորովին նոր ուղիւթիւնով. նա մեղմացնումէր իւր փիլիսոփայութեան համաձակութիւնը զբաւել խոտորումներով կամ ընտիր հատուածներով իւրեան ամենասիրելի հին լատին-բանաստեղծներից, [Վիրգիլեայից, Հորացիայից, Լուկիանից]: այդ կերպով նորա դասախոսութիւնը չէր անկենդան և միակերպ . . . . Այդոր համար նա վաստակեց անսովոր փառք, հռչակուեց իւր զաստիարակութիւնով ֆարիզե մէջ: Փարիզն այդ ժամանակ

կենդանա տեղի էր դրականութեան և արհեստաների : Աբէլարի մէջ այդ ժամանակ ծագեց միտք՝ փոփոխելու աստուածաբանութեան նոյն իսկ դասատուութիւնը, մտցնելով նորա մէջ փիլիսոփայութիւնը, որովհետեւ փիլիսոփայութիւնը նա համարումէր հաւատի անհրաժեշտ սիւնը : Աստուածաբանութեան ամենանշանաւոր դասատուն համարվումէր Անսէլմ Լաօնեսներ, նորա լրողների թիւը խիօտ շատ էր. բայց նորա դաստիստութիւնը մի միայն բացատրութիւն էր Աստուածաշնչին : Աբէլարն ինքն ուղեորուեց դէպի Լաօն լեւու այդ ուսուցչի դասերը. նա տեսաւ նորա դաստիստութեան անպտղութիւնը և ինքն վճռեց բանալու Աստուածաբանութեան ընթերցանութիւնը : Նրբ մի քանիսը խնդրեցին նորան այլ ժամանակի ձգելու իւր առաջարկութիւնը, նա պատասխանեց նորանց. «Նստի՛ր եմ հնազանդուել բանականութեան և ոչ սովորութեան :» . . . Այդպիսի ազատամտութիւնը վերաւորեց ծերունի Անսէլմին, որ արպեցեց Աբէլարին շարունակելու դասերը. ուստի նաստիպուեցաւ վերահառնալ դէպի Փարիզ : Այստեղ նա հանդիստ, մի քանի տարիների ընթացքում շարունակումէր իւր դաստիստութիւնը, որը դադարեցուցած էր Լաօնի մէջ : Բարեկամները նախազուշակումէին նորա փառաւոր ապագան : Այդ միջոցումն էր, որ Աբէլարը ծանօթացաւ Ելոյիլիսայի հետ : Այդ երիտասարդ աղջկը հռչակաւորաւ էր բոլոր տերութեան մէջ իւր մտածու-

թիւնով ու դիտու թիւններով . նորա մօրն զբայր Յուլ բերտը հպարտանումէր նորանով, և ինքն խնդրեց Աբէլարին ինչպէս մի ականաւոր ուսուցչի բնակելու իւր մօտ և յանձն առնելու երիտասարդ աղջկը կրթութիւնը : Որովհետեւ Աբէլարը սչ միայն ականաւոր փիլիսոփոս էր, բայց և միանդամայն ճարտարախօս, բայցի դորանից և բանաստեղծ ու երաժիշտ, ապա հասկանալի է, որ Աբէլարը և Ելոյիլը սիրումէին միմեանց փոխադարձաբար : Վերջին ժամանակում, իւր համբաւաւոր նամակադրութեան մէջ, Աբէլարը պատմումէ իւր սէրի պատմութիւնը. նա ասումէ, որ դաստիստութեան ժամանակ «մեր զրքերը բաց էին, բայց մեր աչքերը աւելի շուտ արտափայլումէին մեր սէրը, քան թէ նայում ուսումնական գրուածների երեսների վերայ :» Այդ ժամանակ, ի հարկէ, մեծահասակ աղջականները իւրեանց բոլորովն իրաւացի էին համարում ինքնակամ կերպով խշտելու փոքրահասակների կեանքի և յօժարութիւնների վերայ : Նորա մօրն զբայր Յուլ բերտը, խնանալով նորանց սէրը, նորանցը միմեանցից բաժանեց : Այն ժամանակ Աբէլարը տարաւ Ելոյիլին, և Յուլ բերտի հետ հաշտուելու համար, պատկուեց նորա հետ : Ելոյիլը հազիւ համաձայնուեց պրտակուելու նորա հետ, որովհետեւ նա վախնումէր որ այդ պատկը չը վնասէր Աբէլարի փառքը և ապագան. այլ որ համար պատկը կատարուեցաւ դադտնի, միայն մի քանի բարեկամների ներկայութիւնով և պատկուելուց յետ, նա միշտ բնակվումէր իւր մօրն զբար մօտ. բայց որովհետեւ

մօրեղբայրը վարվումէր նորա հետ միշտ խստութիւնով, ապա Աբէլարը տարաւ նորան Արժանտելեան վանքը, որտեղ կրթուած էր սկզբում: Այնտեղ նա ազաւ ասեղայական հանդերձ, միայն չէր մատուցանում պատարագ: Ֆուլբերտը և Էլոյիլը ազգակիցներն սկսեցին կասկածել, որ Աբէլարը կամենումէ բաժանուել նորանից, և վճռելով վրէժխնդիր լինել Աբէլարից, այնպէս վիրաւորեցին նորան, որ նա պարտ էր յաւիտեան հեռանալ աշխարհային կեանքից: Այն ժամանակ Էլոյիլան դարձաւ բողոքովն արեղայուհի, իսկ Աբէլարը եղաւ Սէն-Գէնիսի արեղայ:

Մտանելով այդ մենաստանի մէջ, նա չկարողացաւ այլ ևս համբերել անկարգութիւններին, որոնց մէջ նա ստիպուած էր ապրել: Այդոր համար նա այդտեղեց ուղևորուեց դէպի Սէն-Վիլ մենաստանը կամուկանիւ մէջ. ուր բացեց ուսումնարան: Կողները խմբերով հաւաքվումէին նորա շուրջը. շուտով պակասեցին մինչև անգամ տեղերը և կենսական միջոցները: Միւս ուսումնարանները դատարկուեցան, բայց հարածանքը չըթոյլատրեց նմա երկար օգուտ քաղելու այդ յառաջադիմութիւնից . . . . Ապա Աբէլարը, ցանկանալով միաւորել իւր խօսակցութեան մէջ զբաւոր մատակարարութիւնը խօսակցականի հետ, վճռեց հրատարակել իւր աստուածաբանական դասերը այս վերնադրով. *Մոխաֆիտելէ\* Աստուածաբանութեան*. այդ գրքի մէջ նա բաւականութիւն առեց այն ժամանակ

զարթած կարիքին՝ հասկանալ այն, ինչին պէտք էր միայն հաւատալ: Մեր աշակերտները-ասումէր նա այս գրքի առիթով-աւելի հետաքրքիր էին հասկանալ, քան անհասկանալի մասների վերայ. նորանք ասում էին որ ամենևին աւելորդ է ասել խօսքեր՝ առանց նորանցը հասկանալու. որ ծաղրալի է ուսուցանել այն բանը, ինչ որ չեն կարող հասկանալ, ոչ ուսուցիչը և ոչ աշակերտները: Աբէլարի զիրքը մեծ շիթ պատճառեց աստուածաբանների մէջ: Այդ գրքի մասին մատնողութիւններ արեցին, և Աբէլարը հրաւիրուեց ժողովն մէջ, որ զիտութիւնով հաւաքուած էր Սուսասոնում:

Դեռ Աբէլարը չեկած, նորա թշնամիները կարողացան զըսարտել նորան Սուսասոն քաղաքի ժողովրդի առաջև, և երբ նա եկաւ այս քաղաքը, ժողովուրդը ձգումէր նորա և նորա աշակերտների վերայ քարեր: Աբէլարը սկսեց հրապարակով պարզապէս յայտնել իւր մտքերը, և շուտով հաւաքուեցան նորա մօտ լսողներ խումբեր: Միայն նորա թշնամիների զործունէութիւնը զորանից աւելի աստիկացաւ. ժողովը հաւաքուած էր յստիպապէս Աբէլարին դատապարտելու. ժամանակն անց էր կենում, և Աբէլարի վերայ մի խօսք ևս չէր բացուած. դա չարացրեց նորա թշնամիներին: Չինի՞ դատաւորները իւրեանց վերայ աւելի շատ մղորութիւններ են գտանում, քան թէ նորա վերայ, հարցանումէին նորանք:

Ժողովն արդարեւ մեծ դժուարութեան մէջ էր գտանվում Աբէլարի մասին: Նա չէր կամենում թողնել նորան արդարացած, բայց և այնպէս, նա չդիտեր թէ ի՞նչպէս պիտոյ էր նորան դատապարտել. մանաւանդ նա վախենումէր հրապարակով քննութեան ենթարկել զործը. այլ զիպուածում նա անշուշտ կվերջանար Աբէլարի օգտի համար, նա շատ լաւ տեղեակ էր ճարտասանութեան, Ատուածաշնչին և փիլիսոփայութեան: Այդոր համար միւս օրը եպիսկոպոսները յառաջուց հաւաքուեցան խորհուրդ անելու: Նորանցից մին՝ Շատրեան եպիսկոպոսը, պաշտպանեց Աբէլարին և պահանջեց, որ թող տան նմա ազատօրէն պատասխանելու նորա վերայ բարձած մեղադրութիւնների համար նոյն իսկ ժողովի առաջև. այդ եպիսկոպոսը յիշեց նորանց առաջև Նիկողիմոսի խօսքը, որ կամենումէր ազատել Բիսուս Բրիստոսին. «Միայն մեր օրէնքն է դատապարտում մարդին, առանց լսելու նմա յառաջուց և իմանալու թէ ի՞նչ է զործել նա»: Ժողովն այս խօսքերի վերայ պատասխանեց ըրթմնջանքով: Այն ժամանակ նոյն Շատրեան եպիսկոպոսն առաջարկեց ուղարկել զործն այլ ժողովի և, սպասելով նմա, տանել Աբէլարին դէպի Սէն-Ղէնիսի մենաստանը, այս մենաստանի վանահօր հետ միասին, որ գտանվումէր ժողովում. բայց Աբէլարի թշնամիները չէին ցանկանում այդ. նորանք ասացին Ռէյմեան արքեպիսկոպոսին, որ նա կոչել է ժողովն յատկապէս Աբէլա-

րի համար, բայց զործն ուղարկվումէ դէպի այլ դատարան և թէ այդպիսի կերպով նա բոլորովն կազատուի ամենատեսակ դատադատութիւնից: Եւ արդարեւ, նորանք վախենումէին, որ եթէ զործը տանեն իւրեանց վիճակից դուրս, ապա Աբէլարը կազատուի նորանցից: Այդպիսի կերպով վճռեցին, որ Աբէլարը լինէր դատադատուած շուտով առանց բացատրութեան նորա կողմից:

Նորան կոչեցին ժողովն մէջ, առանց քննութեան դատապարտեցին և ստիպեցին սեփական ձեռքով ձգել իւր դիրքը կրակի մէջ: Գիրքն այրվումէր բոցի մէջ, ժողովում տիրապետումէր լուծիւն. թվումէր, թէ բոլորը վերջացել է . . . Ներկայ եղողներից մին կիսաձայն ասաց, որ նա կարգացել է այն դրքի մի մասը. այդոր համար մի քանիների մէջ սկսուեց հակառակութիւն և ուսումնարանների ուսուցիչներից մին ասաց եպիսկոպոսին Ղանիէլի խօսքը. «այդպէս, Իսրայէլի անդառն որդիներ, առանց քննելու գործերը եւ ասանց իմաստա ճշմարտութեանը, դուք դատապարտեցիք ձեր եղբայրներից միսին: Լաւ կ'լինէր, եթէ դուք աստուածային ողորմութիւնով, ազատէիք արդարացած մի նշանաւոր անմեղ մարդ, ինչպէս երբեմն Շուշանն ազատուեց իւր ստալիսս մեղադրիչներից.» Այն ժամանակ երբեպիսկոպոսը վերկացաւ տեղից և ասաց, որ ամեկանիւմ Աբէլարը հերիախկոս է և մինչև անգամ չէ կարելի լսել նմա. բայց եթէ կամենում են այդ, նա թողնումէ որ

Աբէլարը մեկնէր բոլորի առաջն իւր հաւատը, որ կարելի լինէր ներել նմա կամ.. դատապարտել և ուղղել» Աբէլարը կամենումէր վեր կենալ իւր անձը պաշտպանելու ժողովի առաջն, բայց նորա թշնամիները, արդէն վճռած լինելով խլացնել նորա խօսքը, չթողեցին այդ: Նա դատապարտուեց և յանձնուեց Saint—Médard [Սէն—Մեդար] անունով մենաստանի վանահօր, որ գտանվում էր արդէն եղած ժողովում, և ձգուեց նորա մենաստանի մէջ, ինչպէս մի բանտի մէջ: Նախաախնքը, տխրութիւնը և յուսահատութիւնը պաշարել էին Աբէլարին այն ժամանակ, երբ գտանվումէր նա Saint—Médard մենաստանում: Ոչ այն քաղցր ընդունելութիւնը, որը ցոյց տուին նմա մենաստանում, ոչ մխիթարութիւնները չէին կարողանում մեղմացնել նորա տխրութիւնը: Այս մետաստանի մէջ նա նորից պատահեց Գոսվինտսին: Գոսվինտսը հասաւ այնտեղ, իբրև վամնահայր, չարագործութեան արմատները խլելու և այնոր համար՝ որ բաց անի ընթերցանութիւններ: Աբէլարը շքապատուած էր այդ ուսումնական անձի խորամանկաբար-ողորմածասիրտ խորհուրդներով, որ անդադար քարոզումէր համբերութիւն, հեղութիւն և հաւատարմութիւն: «Հաւատարմութիւն, հաւատարմութիւն»-բացականչեց Աբէլարը-ինչ՞ դուք ինձ այդպէս քարոզումէք, խորհուրդ էք տալիս, բարձրաձայն քարոզումէք հաւատարմութիւն: Կան շատ մարդեր, որոնք դատողու-

թիւններ են անում ամենայն տեսակ հաւատարմութիւնների վերայ և մի և նոյն ժամանակ անընդունակ են պատասխանելու. ի՞նչ բան է հաւատարմութիւնը»-Գուք ճշմարիտն էք ասում, -խօսքը յառաջ տարաւ անբաւականութիւնով Գոսվինտսը-չատերը որոնք ցանկանումեն դատողութիւններ տալ հաւատարմութեան վերայ, ուղիղ չեն իմանում, ի՞նչ բան է հաւատարմութիւնը, բայց եթէ դուք նախ և յառաջ կասէք կամ փորձ կփորձէք անել մի որևիցէ բան հաւատարմութեան դէմ, ապա դուք կզգաք, որ մենք գիտնք՝ թէ ինչ բան է հաւատարմութիւնը, հակառակորդին հալածելու ժամանակ: «Այդ հաստատ և կծողական խօսքից, -ասումէ մի ապեղայ Գոսվինտսի կենսադրութեան մէջ -անգիւղի-բը այսինքն Աբէլարը վախեցաւ. հեռեորդ օրերում նա աւելի խոնարհ էր սահմանած խիստ կանոններին և վախեցումէր ուսել ճարտէից:

Ապա Աբէլարին տարան դէպի Սէն-Գիոնէսիոսի մենաստանը, որտեղ գեռ յառաջուց արեղաները սաստիկ հակառակվումէին նմա իւրեանց սպականած վարքերով և անվայելուչ խօսակցութիւններով: Աբէլարն այստեղ գտաւ զբթէ այնքան թշնամիներ, որքան կային արեղաններ, և շուտով յարուցին նորա դէմ նոր փոթորիկներ: Աստուածահաճոյ Բէդայի գրուածքի մի տեղից նա եզրափակեց, որ մենաստանի հիմնադիր Գիոնէսիոսը չէր Գիոնէսիոս Արիսպագային,

որին դարձրեց դէպ'ի ճշմարիտ հաւատը սուրբ Պատմար: Բոլոր մենաստանի մէջ մեծ ամբաւականութիւն ծաղեց, վանահայրն շտապեց խորհուրդ կազմել և բոլոր եղբայրութեան ներկայութիւնով, սատակ յանդիմանեց Աբեղարին, ասաց նմա, որ ինքն խնդրամատոյց է լինելու թագաւորին, որ վրէժխնդիր լինէր իւր վատքը և թագն անկատուելու պատճառով, և հրամայեց զգուշութիւնով պահպանել Աբեղարին մինչև այն ժամանակ, երբ կներկայացնեն նորան թագաւորին: Ասումեն մինչև անգամ որ նշանակեցին պատժել նորան այդ համարձակութեան համար մորակով:

Արջին ծայրին հասած այդպիսի յիմարութիւնից և բռնութիւնից, Աբեղարը իւրեան համակրող մի քանի արեզանների և աշակերտների համաձայնութիւնով, փախաւ մենաստանից ծածուկ զիշերով դէպ'ի Պրովանս, Saint — Ayoul մենաստանի մէջ, որի վանահայրն էր նորա վաղեմի բարեկամներից մին. այն ինչ Սէն — Ղիսնէսիոսի մենաստանի վանահայրը սպանումէր Աբեղարին անջատել եկեղեցու ճոցից, եթէ նա նոյն բոպէին չէր վերադառնալ. բայց շուտով նա ինքրն մեռաւ: Նորա յաջորդ Սուգերին էր աւելի մարդասէր, և Աբեղարը թող'ավութիւն ստացաւ ընտրելու իւր համար ապատանարան, ինչտեղ ցանկանումէր նա քաշուեց մի անապատ տեղ, որ զտանվումէր Նո ժանի մօտ, շինեց իւր համար աղօթարան եղևիներից և դամիշեց, ու թախ կացաւ այնտեղ մի եկեղեցական պաշտօնեայով միասին, կրկնելով պապմոսի խօսքը՝ «Ս. հա

քաշուեցայ դէպ'ի հեռաւոր տեղեր և մնացի անապատի մէջ»


Բայց այդ առանձնութիւնն անապատի մէջ երկար չտևեց. բոլոր կողմերից եկան հաւարուեցան այնտեղ: Մինչև անգամ հարուստ մարդերը թողումէին իւրեանց քաղաքները և բերդերը, զայլս էին ուսուցչի մօտ, բնակվումէին վրաններում, ննջում էին ծղնտոի վերայ, սնանվումէին կոշտ հացով, բայց ապրում էին նորա խօսակցութիւնով: Մենակութիւնը թվումէր Աբեղարին մխիթարութեան տեղ. այնտեղ հանգիստ էր նա. և բացի դորանից, նա ունէր շատ աշակերտներ: Իրբ շինեցին մի նոր աղօթարան փայտից և քարից, Աբեղարն անուանեց նորան Պարսիկէս, որ է մխիթարիչ: Այնուամենայնով այդ ուրախութիւնը շատ չտևեց նորա համար, եթէ փառքը չէր մոռանում նորան անապատի մէջ, ապա չէր մոռանում նորան նոյնպէս և հալածանքը:

Այս ժամանակ վերկացաւ նորա դէմ ամենազարհուրելի հակառակորդը, հռչակաւոր սուրբ Բեռնարդը, որ վանահայր էր Ալէրիոյ մենաստանին: Պարակ'էտը մի հասարակութիւն է, որ կազմուած է, նորա անդամներից մինի խօսքով, «տրամաբանութեան հողով», անհանգիստ էր անում Բէրնարդին, իսկ Աբեղարի վարդապետութիւնը [ուսումը] թվումէր կասկածաւոր: Նորա քամբարտութեան գլխաւոր պատճառներից մին յայտնվում է մի նոր հակառակորդ համարիւր այնքան

892-2072

892

4



զարհուրելի, ինչքան առաջինը. այդ անձն էր սուրբ Նորբէրը, կանոնիկոսների մենաստան հիմնող Պրէմոնտրայի մէջ, մի անձն՝ որ յարգելի էր եկեղեցուն և ներգործողը իշխանների առաջը: Նորբէրը հաւատում էր սուտ ֆրիստոսի փութով դալստեանը անհեռատեսաբար ու չափազանց նախանձով էր նայում այն բանի վերայ, ինչ որ խաղտում էր նորա կարծիքով հաւատի միութիւնը: Այդ իսկ պատճառով, հաճելի էր նմա, որ Աբէլարը խօսում էր հոգևորականների անամուսնութեան դէմ: Աբէլարն զգում էր սպառնալիքը. ամէն մի բովանդակում նա սպասում էր, որ իւրեան կքաշեն դէպի նոր դատաստան, ինչպէս հերիտիկոսի և Աստուած հայհոյողի: Նա չկարողացաւ տանել աւելի այդպիսի դժուարատար կեանքը, բոլորովին յոյսը կտրել էր գտանելու կաթոլիքական կողմերում հաշտութիւն, մտածում էր մինչև անգամ դառնալ դէպի հեթանոսները. յոյս ունէր որ նորանց մէջ գտանի աւելի մարդասիրութիւն:

Այս ժամանակ սուրբ Գիլդայի մենաստանը, ներքին Բրէտանիում, կորուսեց իւր պատտրին [հովութիւն] և նորա տեղ ընտրեց Աբէլարին: Ցանկանալով փախչել իւրեան սպառնացող հալածանքներից, Աբէլարն ընդունեց այդ առաջարկութիւնը և բնակուեց այդ հեռավոր մենաստանի մէջ, որ գտանվում էր Ուիկիանոսի արևելքներից ողողւած ապառաժի վերայ: Բայց շուտով Աբէլարն ստիպուեցաւ ցաւել, որ նա թողել է իւր

Պարակլետը. հեռանալով մի քանի վտանգներից, նա ընկաւ նոր և աւելի զարհուրելի վտանգների մէջ: Նա ստիպուած էր գործ ունենալ վայրենի, յանդուգն և ապականուած աբեղանների հետ, թողնելը հարևան բարոնին, որ բռնաւորապէս իշխում էր մենաստանի վերայ, և որի կատաղի թիկնապահները չարագործութիւններ էին անում շրջակայ տեղերում: Աբէլարը կամեցաւ ընտելացնել այդ անկարգ աբեղաններին առաւել մաքուր բարոյականութեան, և նորանք չափազանց ատում էին նորան: Շուտով նորա կեանքը վտանգի եթարկուեց. միանգամ կամենում էին նորան թունաւորել. միւսանգամ սպառնացին նորան խեղտել: Նա ստիպուած էր նորից փախչել:

Այդ միջոցում նորա Պարակլետը պտուի հրամանով, յանձնուեց Էլ'դիլին, որ կազմեց այնտեղ արեւազայական ընկերութիւն, իսկ ինքն զարձաւ նորա վանահայրուհի: Այդ իսկ ապաստանարանում Աբէլարը գտաւ մի փոքր միսիթարութիւն, անց կացրեց մի քիչ ժամանակ իւր կեանքը հանդատութեան մէջ, և ՚ի հարկէ, իւր կեանքի ամենահանգիստ ժամանակը զարձաւ նորա համար մեծ մտաւորական գործունէութեան ժամանակ: Նա զբում էր նոր շարադրութիւններ և ուղղում էր հինները. կամենում էր նորից պարապել հրապարակական դասախօսութիւնով: Մտն յիսուն և եօթն տարեկան ժամանակում, նա բաց արեց իւր «ղխայէկտիկայի» ուսումնարանը Աէն-ձէնեւայի նոյն իսկ սարի վերայ, որտեղ նա յառաջուց դասախօսու-

Թիւն էր անում . . . միայն թէ նա շուտով պարտ էր դադարեցնել իւր դասերը . . .

Մի քանի օր, Արլի՝ հէլմ-դը-Սէն-Տերի անունով, նամակով դաւաճանեց սուրբ Բէրնարի, Կլէրիկ մենաստանի վանահօր առաջև Աբէլարի Աստուծաբանութեան: Դժուար էր Աբէլարին մեղադրել հերիտիկոսութեան մէջ. բայց նորա դասաւարտութեան ձևերը ճշգրտմէին հին ուսումնարանների մարդերի սրտերի մէջ մեծ վտանգներ. նորա ուսումը յառաջ բերեց եւս աւելի յանդուգն մտածողներ իւր աշակերտների մէջ. նորանցից մին չճածկեց իւր ատելութիւնը դէպի կաթողիքական բռնաւորութիւնը. իսկ միւսը որ վերջում կենդանի այրուեց Հռովմում, հալածուեց այն իսկ պատճառով որ պաշտպանումէր կաթողիքական եկեղեցու հոգևոր և մարմնավոր նոր փոփոխութիւնները: Այդպիսի կերպով հալածման և ազատութեան հողին սխեց զարթնել: շին հասկացողութեան տէր մարդերը տեսան առաջիկայ վտանգը: Նորանց զլիսաւոր ներկայացուցիչը, Բէրնարդը, դաւաճանումէ Աբէլարին իւր նամակում պատի և նորա ծիրանակիրների առաջև: «Մարդկային միտքը, զրոււմէ նա իւր առաջին նամակում՝ դէպի ծիրանակիրները, ամենայն բան դէպի չարն է գործ դնում և ոչինչ չէ թողնում հաւատի համար: Նա դաշումէ այն ամենին, որ բարձր էր և զօրեղ իւրեանից, նա դէն է ձգում աստուածային իրերը. նա քննութեան է ենթարկում մինչև անգամ այն, որ չէ բացայայտում Աստուածաշունչը, կարգա-

յի՛ք, օրինակի համար, Պետրոս Աբէլարի զիրքը, որին նա անուանումէ Աստուծաբանութեան:» Իւր նամակի մէջ դէպի պապը, նա շատ ջանք է անում՝ մտնեցնել Աբէլարին Արնոլդ Բրէսիանեանի հետ, «այս երկու օձերին» և վերջացնումէ խնդիրքով՝ որ սուրբ հայրը ձեռք զարկէր եկեղեցին պաշտպանելու. «կապի՛ր սուրբ քոյ մէջքի վերայ, ասումէ նա: Անարդարութեան աստիակութիւնը սառուցել է արդէն շատերի ողորմածարտութիւնը:» Իւր նամակի մէջ դէպի եպիսկոպոսները և ծիրանակիրները նա ներկայացնումէ Աբէլարին «հասարակաշարժեալ խաչի Քշնամի, արեղայ զուրսից, և հերիտիկոս ներսից, որ չգիտէ ոչ կանոն և ոչ եկեղեցական օրէնքներ, ներկայացնումէ նորան մի դալարուող օձ, որ զուրս է դալին բոյնից, ներկայացնումէ մի նոր հիլոբայ [բազմազլխանի օձ], որ, մի զլին փոխանակ, որ կորած էր Սուսսոնում, արձակումէ եօթն ուրիշ զուլաներ.» և այլն, և այլն, և այլն:

Բացի գորանից, Բերնարդը յաջողութիւն դաւաճրանսիայում դատապարտել Աբէլարի ուսումը. այդ ուսումը յայտնուեց, ինչպէս մի ուսումն, որ վստահեալ էր յայտնուեալ արժանի էր աստուծաբանութեան, հակասուի հասարի էր ճշմարտութեան և յայտնի էր իրականութեան: Միայն Բերնարդը զորանով չբաւականացաւ: Սրբ Ֆրանսիական Ժողովի կողմից Ռէյմեան և Սանեան արքեպիսկոպոսները ուղարկումէին նամակներ դէպի պապը, նա ինքն ուղղութեան տակ ձգեց նորանցը իւր սե-

փական ձեռքով: Այս նամակներում արքեպիսկոպոս-  
ները տալիս էին զործերի հաշիւ և խնդրումէին պա-  
պից հաստատել իւրեանց կարծիքը, որ էր՝ խիստ  
պատժել ըստ արժանւոյն նորանցը, որոնք պաշտպա-  
նումէին դատապարտուած տեղերը, և ոչնչացնել Ա-  
բէլարի գրուածները, այլ և արգելել նմա ուսուցա-  
նելու այդ գրքերի վերայ և գրելու: Քացի դորանից,  
Քէրնարդն ինքն գրեց դէպ'ի պապը իւր անունով մի  
նամակ, որանով աղաչումէր առանց տարակուսելու  
սպանել այդ Գող'իաթին [Աբէլարին] և նորա ընկեր  
Արնոլդ Բրէսչիանեանին: Նոյն ժամանակ նա ուղարկեց  
հռովմէական դռնի ծիրանակիրներին նամակներ, որոնց  
մէջ ամենայն ճիգն գործադրած էին հետաքրքրելու  
նորանց դէպ'ի այդ զործը: Նա ասումէր. «չգիտեմ,  
աւելի լաւ չէր լինելու արդեօք, որ այդ տեսակ խօ-  
սողների բերանները փայտով ջարդէին, քան թէ նո-  
րանց ասածները պատճառներով հերքէին»:

Աբէլարը իւր կողմից, չէր արհամարհում իւր անձի  
պաշտպանութիւնը. նորա աշակերտներից մին գրեց նո-  
րա օգտի համար մի պաշտպանողական թուղթ, որի  
մէջ երգիծաբանօրէն նկարագրումէ այն խորհուրդը,  
որ դատապարտումէր Աբէլարին: |

Պապի վճիռը մի քանի ժամանակ մնաց անյայտ.  
առաջին նամակն իսկոյն հրատարակուեց. այդ նամակը  
դատապարտումէր Աբէլարին և հրամայումէր նմա,  
ինչպէս հերիտիկոսի բոլորովն լուել:

Երկրորդ նամակը, որ ուղարկած էր միւս օրը, առ-  
ժամանակ մնաց դադունութեան մէջ. նա հրամայումէր  
բանդարկել Պետրոս Աբէլարին և Արնոլդ Բրէսչիանե-  
անին առանձին առանձին մենաստանների մէջ, ինչ-  
պէս ապականուած ուսումների հեղինակների և ինչ-  
պէս կաթոլ'իքական հաւատի վերայ յարձակողների,  
այլ և հրամանագրումէր այրել նորանց գրքերը ամե-  
նայն տեղ, որտեղ նորանք կգտնուին: Այն ինչ Ա-  
բէլարը չէր իմանում պապի վճիռը, և չնայելով բո-  
լոր ծերութեան և հիւանդութեան վերայ, քիչ էր  
մնացել որ ուղևորուի դէպ'ի պապը՝ արդարանալու  
համար: Քայց գիշերը վերայ հասանելով ճանապար-  
հում, նա իջևանեց Կլ'իւնի մենաստանում,  
որի վանահայրն էր արժանապատիւ Պետրոսը:  
Պետրոսը բոլորովն հակառակ էր Քէրնարդին. միանա-  
գամ նա գրեց նմա. «դուք կատարումէք ծանր և  
դժուար պարտականութիւններ. պաս, հսկողութիւն,  
բայց չէք կտրողանում կատարել մի թեթեւ պարտա-  
կանութիւն, այն է՝ սիրել»: Այդ գրուածը բոլորո-  
վն չխանգարեց մի և նոյն Պետրոս Կլ'իւնեանին գրե-  
լու որ «ամէն հերիտիկոսների հետ պէտք է վարուել,  
ինչպէս կատաղի զազանի հետ»: Միայն թէ Աբէլա-  
րին նա ընդունեց համակրութիւնով և յանգանքով:  
Այս իսկ մենաստանի մէջ Աբէլարն իմացաւ իւր վճի-  
ռը, նա խնդրումէր որ իւրեան թոյլ տան անցուցա-  
նելու այնտեղ իւր կեանքի մնացորդը: Հրամանն ստա-  
ցաւ, միայն թէ մեռաւ Աբէլարը մի ուրիշ տեղ: Նո-

րա հիւանդութիւնը սաստկանումէր և պահանջումէր օղի փոփոխութիւն. նորան ուղարկեցին դէպ'ի Շալ'ոն, որ գտանվումէր Սաոնի վերայ, դէպ'ի Սէն-Մարսէլ արթարանը, որտեղ նա մեռաւ 21-ին Ապրիլի 1142 թուականի, վաթսուն և երրորդ տարում իւր ծննդից :

2.

Գ Ա Ն Տ.

[1265—1321]

Երբ հին հռովմական կայսրութիւնն ընկաւ, նորանից յետոյ իտալիան ենթարկուեց շատ աշխարհականների յարձակումների. նորա վերայ իշխումէին փոփոսակի, Գոթերը, Լոնգոբարդերը, Գրէկները, վրամասիական Կարլոսը, վերջապէս գերմանական կայսրերը, XII-երորդ դարում իտալական քաղաքներէ և գերմանական կայսրութիւնների մէջ լինումէին շատ պատերազմներ և վերջապէս հաստատուեցաւ հաշտութիւն, որ խոտանումէր իտալական քաղաքներին շատ իրաւունքներ. իրաւունք օգուտ քաղելու ազատ եկեղեցական արդիւնքներից, իրաւունք փող կտրելու, իրաւունք դատարան կառուցանելու և այլն: Այդպիսի կերպով, համարիք, բոլոր իտալական քաղաքները դարձան ընկերութիւններ [Comuni]. բայց այս ընկերութիւն-

ներն ընդունումէին գերմանական կայսրի գերազոյն իշխանութիւնը, իսկ նորանց իրաւունքները յատկապէս պարունակումէին արթունակէն մէջ, որոնք նման էին վերոյիշածներին: Բայց այդ արտօնութիւնները ոչ միայն քաղաքները և կայսրներն էին տարբեր հասկանում, այլ և մինչև անգամ մի և նոյն քաղաքի քաղաքացիները: Խոսիլայի բնակիչները բաժանվումէին երկու մասների. Գրէկները՝ կայսրի կողմակիցներ և Գվէլները՝ պապի կողմակիցներ: Գվէլները դաշնակից էին պապի հետ և չէին ընդունում ոչ մի կայսր, եթէ նորան չէր ընդունում պապը:

Բայց և պապերը XIII-երորդ դարում կորուսին իւրեանց նախկին քաղաքական նշանակութիւնը. նորանք դէպ'ի չարը դործադրեցին իւրեանց հոգևորական իշխանութիւնը, այնպէս վատթար կերպով, որ ապստամբեցրին իւրեանց դէմ բոլոր բարեպաշտ մարդերին: Պապական նահանգների մէջ թաղաւորումէին կատարեալ անկարգութիւն և անիշխանութիւն: Ամենափոքր քաղաքները պատերազմումէին միմեանց հետ և ծիծաղումէին պապերի աստիճանաւորների վերայ: Երբ պապերի նշանակութիւնն ընկաւ, առանձին բերդատերերն առաւել զօրացան և դարձան ճշմարիտ բռնակալներ:

Սակայն դորա փոխարէն միւս քաղաքների հասարակապետական կառավարութիւնը շատ օգնեց հարստութեան, զիտութիւնների և արհեստների տարած-

ման զարդանայուն: Ամենաճաղկած քաղաքներն այդ ժամանակ էին. Յլորէնցիան, Միլանը, Վենետիկը, Գե- նուան և Պիզանը. իսկ ամենից ծաղկածն էր Յլորէն- ցիան, որովհետև նորա կառավարութիւնն այնպէս էր, որ զանազանվումէր իւր ռամկապետական խնայու- թիւնով: Բայց և այստեղ, ինչպէս և բոլոր իտալիայ- ում, ազնուապետներն ունէին բերդաձև պալատներ, որոնք անվանվումէին ժամանակակիցներից «աշտարակ- ներ»: Բնակուելով այդ աշտարակների՝ մէջ, նորանք պատճառումէին շատ նեղութիւններ խեղճ հայրենա- նակիցներին:

Հէնց այդ Յլորէնցիայում ծնուեց առաջին և հռը- չակաւոր իտալական բանաստեղծ Գանտ Ալիգերին [1265 թ.]: Նորա հայրը պատկանումէր գվելֆների մասնին և երկու անգամ արտաքսուեց Յլորէնցիայից: Եւ նորա տղան դեռ որրոցի մէջ պէտք է զգար ան- իշխանութեան պատերազմների խստութիւնը: Իշխե- լով Յլորէնցիային, Գիբելինները մոռացան ամենատե- սակ չափաւորութիւնը. նորանց զօրականների ժողովման վերայ վճռած էր հիմնայատակ առնել քաղաքը, «ա- ւելի լաւ է կործանուի, քան թշնամիների ձեռն ընկնի:» 1267 թուականին Գանտի հայրը կարողացաւ նորից վերադառնալ դէպի Յլորէնցիան և գրկել իւր որդուն, բայց տղան շուտով որբացաւ: Նորա բաղդից, ճնայե- լով բաղդի փոփոխութիւնների վերայ, ընտանիքի հա- մոր մնացին մի քանի միջոցներ. բացի այն տունը որ

ունէին Յլորէնցիայի մէջ, նորանք ունէին նոյնպէս կալուածատեղիներ և հիւղեր: Գանտի մայրը ոչինչ չէր արհամարհում, նորա ընդունակութիւնները զարգացնե- լու համար: Մահից յառաջ, նա յանձնեց նորա դաստի- արակութունը ուսումնական Բրունէտոյ Վաթինին, այն ականաւոր պրոֆէսորին, որ նոյնպէս գվելֆ էր, ինչպէս և Գանտի հայրը: Բրունէտոյի առաջնորդու- թեամբ Գանտն ստացաւ կարևոր գիտնական տեղե- կութիւններ, և որովհետև այդ պրոֆէսորը չէր մի անկնդան պեղանտ սխոլաստիկոս, այդոր համար և նորա ազդեցութիւնը եղաւ փրկարար Գանտի բոցա- վառ բանաստեղծական հոգու վերայ:

Արդէն տասն տարեկան ժամանակը Գանտը պա- տահեց այն մարդին, որ նորա բոլոր կեանքի մէջ ե- ղաւ նորա համար վերին աստիճանի սիրելի առարկայ. դա էր Բէատրիչէն: Խռովալից շփոթութիւնով ան- ցուցանումէ նա իւր երիտասարդութիւնը: Ազգակից- ներն ուղարկումէն նորան, այն ժամանակեան սովո- բութեան համեմատ, դէպի Բոլոնեան համալսարան, և ապա դէպի պաղուանեան համալսարան, որն ա- մէնից ականաւոր համալսարանն էր, իրաւաբանական գիտութիւնների կողմից: Բայց շուտով Գանտի ծանր նախազգացումները [մարգարէութիւնները] կատարու- եցան. Բէատրիչան պատկուեցաւ մի հարուստ պարոնի հետ և երեք տարուց յետոյ մեռաւ [1290 թ.]: Նորա սէրը դէպի Բէատրիչէն վճռողապէս ազդեցութիւն գոր- ծեց Գանտի մտքերի բոլոր ուղղութեան վերայ. նա գրումէր

քողովորական լեզուով՝ ոտանաւորներ, որոնցը նուիրած էր Բիատրիչէին և նորանք այնպէս զեղեցիկ էին, որ մի առ մի անցանումէին բերանից դէպ'ի բերան և մեծ փառք վատասեցին նմանորա ժամանակակիցների մէջ. նա յանկարծ դարձաւ սկանաւոր մարդ իւր ժամանակում և միայն թէ, նա այնպէս բարձրացաւ, որ բոլոր նախանձ պարտ էր լռել: Բիատրիչէի մահից մի տարի անցներուց զինի, նա հրատարակեց առաջին անգամ՝ ոտանաւորների ժողովածու, այս վերնագրով «Նոր կեանք» (Vita Nuova): Այդ ժամանակից նա երևումէ, նորան անուանումեն Բանաստեղծ:

Նորան շրջապատումեն այն ժամանակահանաւոր մարդերը, հռչակաւոր պրոֆէսորները և ճարտպանները. դորանք այնպիսի մարդեր էին, որոնց մեծ մասը մեծ դեր էր կատարում հասարակապետական գործերի մէջ: Մշտական պատերազմների ժամանակ, միջնադարեան քաղաքներում, Գանաք ևս ստիպուեց նորանցը մասնակից լինելու. յաճախ ստիպվումէր պատերազմել առաջին կարգի մէջ և ենթարկուել շատ վտանգների: 1292 թ. Գանաք պատկուեց ձէմէի վերայ, որ նշանաւոր տանից էր-Գոնատներից: Այս տան զլիսաւոր կորզոյ Գոնատին մեծ դեր էր խաղում Յլորէնցիայի մէջ: Այդ ժամանակ արդէն Գոնաք սկսեց իւր «Աստուածային կոմէդիան» [La divine comédie], բայց նորա հետ միասին մասնակից էր լինում և հասարակական գործերին: Յլորէնցիայի մէջ վաղուց

արդէն ծագած էր կախ ժողովրդի-քաղաքացիների և ազնուանականների մէջ. ազնուականութիւնը ստիպուած էր հրաժարուել իւր իրաւունքների մի մասնից, բայց և այնպէս, նա մեծ ազդեցութիւն ուներ: 1292 թ. մի նոր յեղափոխութիւն կատարուեցաւ. ազնուականութիւնը զրկուած էր բոլոր կայսերական պարտականութիւններից. ապա նշանակուած էր մի նոր աստիճանաւոր, որի անօրէնութեան տակ գտանվումէին 1000 մարդեր, որպէս զի նա կատարի դատատանական վճիռները ազնուականների դէմ, որոնք յաճախ սուրերը ձեռներում ընդխնանումէին վճիռների կատարման: Նմանապիսի ապառամութիւններն ազնուականների դէմ գտանվումէին շատ խաղաղանքազարներին մէջ, որոնց հետեւանքը լինումէին սպանութիւններ. Յլորէնցիայում արիւնհեղութիւնը խիստ սակաւ էր լինում: Ազգային լուսաւորութիւնը յառաջ բերեց արհեստների և ճարտարապետութիւնների ծաղկումը. Յլորէնցիան այդ ժամանակ ոչ միայն ամենահարուստ քաղաքն էր Իտալիայի մէջ, բայց ուներ և ազդեցութիւն բոլոր Տոսկանի մէջ, և թէպէտ ժողովուրդների և ազնուականների մէջ կար ատելութիւն, բայց նա չունեցաւ վատթար հետեւանքներ: Որովհետեւ բոլոր ազնուականութիւնը զրկուած էր կայսերական ծառայութիւններից, ապա Գանաք ևս զրկուեցաւ: Միայն թէ, սորանից յետոյ նա չխտորուեց հասարակապետական գործերի մասնակցութիւնից. նա

ներկայանումէր ազգային ժողովների մէջ և իսկ նորանց մէջ նա սովորեց քաջ խօսել ժողովրդական բարբառով, որի օրինակը թողեց նա իւր զրքերի մէջ: Յետոյ Յլորէնցիան նորան, որպէս դեսպան, ուղարկեց հարեան հասարակապետութիւնների, Վայսրների և պապի մօտ: Իւր փայլուն ընդունակութիւնների շնորհով, նա յաջողութիւնով կատարեց իւր յանձնարարութիւնները: Ֆէրարի մէջ նորան զերապատիւ էին համարում միւս դեսպաններից: Պէրուզայում նա ազատումէ շատ քաղաքացիները և յետ է դարձուցանում նորանցը դէպի տուն. Նէապօլի մէջ ազատումէ նա պատժից մի դատապարտուած Յլորէնացու: Գանտի ազդեցութիւնը մեծացաւ և նոյն իսկ Յլորէնցիայի մէջ: Այնուամենայնով չնչին մարդերը տարածումէին նոր վերայ վատ համբաւներ: Այդպէս, միանգամ Գանտը գտանվումէր ս. Յովհաննէսի եկեղեցում, և մի երեսայ պատահմամբ ընկաւ աւազաններից միսի մէջ: Որպէս զի ազատի, Գանտը կտորեց մարմարիոնի մի մասը: Այս ազնիւ արարմունքի համար, նորան դէմ յանդիման մեղադրումէին սրբապղծութեան մէջ: Այդ միջոցում Յլորէնցիայում յառաջ եկան նոր շիտթութիւններ: Հարեան քաղաքում, Պիստոյում քաղաքացիները բաժանուեցին երկու մասների, «եռ» և «պիստի»: Տղէտ հասարակութիւնների մէջ կուսակցութիւնների վէճը շատ անգամ երկու ներգործող անձների կամ ազգատոհմների անձնական պատերազմի բնաւորութիւն է

ստանում: Այդպէս, վէճը աշխարհական և հոգեորական իշխանութեան մէջ թվումէր ամենեւին անձնական վէճ՝ Գրեգորիոս VII-ի և Հենրիխ IV-ի մէջ: Այդպէս և Պիստոյի մէջ կուսակցութիւնների պատերազմը յայտնագործուեց երկու ցեղերի անձնական պատերազմի մէջ: Յլորէնացիները խառնուեցան նորանց վէճի մէջ, յայտնուեցան որպէս միջնորդներ, առան իւրեանց մօտ որպէս պատանդներ երկու կուսակցութիւնների զխաւորներին և պահեցին նորանցը՝ ամենահարուստ տունների մէջ: Բայց շուտով և վլորէնտիական կալուածատէրերը իւրեանց հիւրերի կողմը բռնեցին: Եւ այդպիսի կերպով նոյն իսկ Յլորէնցիայում կազմուեցին նոյնպէս երկու կուսակցութիւններ, «եռ» և «պիստի»: Զարգացած մարդերի մէջ միշտ ցանկութիւն կայ կուռելու. այդոր համար իւրաքանչիւր հանգամանք առիթ էր տալիս կուսակցութիւններին կուռելու. նախ կռիւր ծագեց հասարակական բայն մէջ, և ապա կռիւրը պատահումէին թաղման հանդէսներում:

Այդ երկպառակութիւնների մէջ, Գանտը նշանակուած էր հասարակապետութեան զխաւոր [պրիոր], պրիորներն ընտրվումէին հինգ հատ և նորանք կառավարումէին հասարակապետական գործերը: Գանտն ամենանշանաւոր պրիորներից մի էր. միանգամ երկամեայ միջոցում նա միայնակ մինչև անգամ պարավումէր գործերով: Այդ ժամանակ կորզոյ Գանտին զլուի էր սեաւ կուսակցութեան և զազանի խորհուրդի

մէջ իւր կուսակցութեան առաջնորդների հետ վճուեց խնդրել պապից Ֆրանսիական զօրք և պրինց՝ «կարգ» ձգելու համար Յլորէնցիայում: Պրիորները միայն թէ խնանու մէին՝ այդ զաղտնի դաւաճանական դաշնակցութիւնը ընդդէմ քաղաքի ազատութեան և, հոգևորուած Դանտի խորհուրդներով և խոհականութիւնով, զրահաորեցին քաղաքական և զիւզական ժողովուրդները և նորանց օգնութիւնով ստիպեցին երկու կուսակցութիւնների գլխավորներին ՚ի վայր ձգել իւրեանց սուրերը, բայց Կորզոյ Գոնատուն և շատ սեռերի արտաքսեցին քաղաքից: Սեկոլմնապահութիւն ցուցանելու համար, արտաքսեցին և սպիտակ կուսակցութեան մի քանի անդամներ:

Միայն Կորզոյ Գոնատին չհանդարտուեց և ուզեորուեց դէպի պապը խնդրելու Ֆրանսիական պրինցին և զօրքերին: Այդ ժամանակ Դանտը դուրս եկաւ պրիորներից և ուղարկուեցաւ Յլորէնցիայից դէպի շուովմ, պապին թեքելու համար զորանից: Պապը աշխատեց հանդարտացնել նորան և նա դարձաւ կրօնին դէպի Յլորէնցիայ: Բայց հէնց նա հասաւ տուն, իսկոյն Ֆրանսիական պրինցն անցաւ Ալբերը և հասաւ Պիսաոյուն, ուր նորա մօտ եկաւ Կորզոյ Գոնատին և սեռաւ կուսակցութեան միտ անդամները: Յլորէնցիան ընկաւ շիտթուութեան մէջ:

Դանտը նորից ուղարկուեցաւ դէպի պապը:

Այն միջոցում Ֆրանսիական պրինցը, ունենալով

իւր ձեռքին պապական հրովարտար, ուղարկեց Տոսկանի մէջ իւր համբաւաբերներին: Նա երդուեց յարգել հասարակութեան օրէնքները և աղատութիւնները, այդ պատճառով և թոյլատրուեցաւ նմա մտանել Յլորէնցիայի մէջ: Նա մտաւ քաղաքի մէջ 2000 հեծեկազորներով, որոնց թվում դասնվումէր և Կորզոյ Գոնատին: Այժմ հասաւ Յլորէնցիայի համար ամենատխուր ժամանակը. վեցօրեայ ժամանակում շարունակվումէին յափշտակութիւններ, հրդեհածըզութիւններ և սպանութիւններ: Ֆրանսիական պրինցը ձեանումէր, որպէս թէ ոչինչ չէ տեսնում և թոյլ էր տալիս այս բոլոր շարագործութիւններն անելու: Գորանից յետոյ նշանակուած էին նոր պրիորներ, բոլորը սեռաւ կուսակցութիւնից. նորանից յետոյ, սպիտակների և զիբէլների գրեթէ բոլոր ընտանիքները արտաքուեցան [700 մարդերից աւելի]. ուրիշների թվում Դանտը և այն ժամանակի նշանաւոր պատմաբան Գինոյ Կոմպանիին: Դանտի վճիռը յայտնեցին 1302 թուականի Յունուարի 17-ին. նա մեղադրուեցաւ կաշառառութիւնների և դաւաճանութեան մէջ: Նոր կառաւարիչները առանց զժուարութեան դատումէին պատճառանքներ հակառակորդներին մեղադրելու. համարի՛ր բոլոր արտաքսուածներին մեղադրումէին կաշառակերութիւնների և դաւաճանութիւնների մէջ. նոյն թուականին Մարտի 10-ին Դանտի վերայ վերջին վճիռը կտրեցին՝ որանով նա սխտի

այրուէր, եթէ նա կրմբանուի հաւարակապետութեան ասհմաններում:

Դանտը լսեց այդ վճռահատութիւններէ մասին շուովմի մէջ, իսկ Յլորէնցիայում նա ունէր կին և հինգ այր-տղաներ մին մինից աւելի վոքք, անդրանիկն էր Ծ տարեկան, և բացի դորանից նա ունէր ևս երկու երիտասարդ եղբօրաղջիկներ: Նորա տունը և ամարանոցը յափշտակուեցին և այրուեցան. մնացած կայքն 'ի բաց վերցրին: Այնուամենայնով նորա կինը յաջողութիւն գտաւ ամրապէս պահպանել մի արկղ, որտեղ նա յառաջուց դարսած էր թանկագին ապրանքներ և Դանտի թղթերը:

Հասկանալի է թէ ինչպէս Դանտը բարկացած էր պապի և սեաւ կուսակցութեան դէմ: Զանազան կուսակցութիւնների արքայականները միաբանուեցին այժմ սեաւերի դէմ: Նոր պապը, (Բենեդիկտ XI ուղարկեց իւր կարգինալին դէպի Յլորէնցիայ) հաշտեցնեալութնամի կուսակցութիւնները. բայց 'ի հարկէ, նմանապիսի խառնակութիւնը գործի մէջ ոչինչ չօգնեց, ընդհակառակն յարուցեց մի անողորմ ատելութիւն նորանց մէջ: Կարգինալը պիտոյ է թողնէր քաղաքը և, նորանից հեռանալիս, զրկեց նորան եկեղեցուց: Սեաւերը նորից սկսեցին իւրեանց կատաղութիւնները և այրեցին քաղաքը [այրուեց 70 տուն]: Այն ժամանակ արքայականները Դանտի հետ վճռեցին յարձակուիլ Յլորէնցիայի վերայ: Հարստահարուած քնար

կիչները հրաւիրեցին նորանցը, բացի դորանից, նորանց օգնեցին Պիստոյացիները, այլ և նորանք իւրեանց յոյսը զնուակին պապի վերայ: Նորանք ժողովեցին 9000 զորական մարդեր. առաւօտեան արշալոյսի ժամանակ նորանք անցան արուարձանը և մտան քաղաքի մէջ: Դանտը խորհուրդ էր տալիս զօրքին փախչել արիւնհեղութիւնից. նա մտաւ քաղաքի մէջ, զարգարուած ձիթենի ճիւղերով. զրոշակները տարածուած. էին, թուրերը հանած և այս աղաղակով. «կեցցէ խաղաղութիւնը, կեցցէ խաղաղութիւնը» ուղղուեցան դէպի սուրբ Մարկայի հրապարակը՝ Բայց պատահմամբ ծագեցան խառնակութիւններ, և այս զօրքը ոչ թէ միայն յետս էր հալածած, բայց մեծ մասնով բոլորովին սպանած [1304 թ.]:

Այժմ սեաւերը մտադրուեցան վրէժխնդիր լինել նոյն իսկ Պիստոյացից, նորա օգնութեան համար, մտեցան դէպի նա և սկսեցին պաշարել նորան: Այդ պաշարումը ցոյց է տալիս, թէ մինչև որ կատաղութեան էին հասանում իտալական քաղաքները, միջնապատերազմի ժամանակ:

Պիստոյացիներին այց ելեց մի ամենասատիկ քաղց. ազատուելու համար բոլոր այն բաներից, որոնք պիտանացու չէին պատերազմի համար, նորանք թշնամիների ձեռքը ձգեցին իւրեանց կիները և որդիները և անձնատուր չէին լինում մինչև անգամ և այն ժամանակ, երբ կեղան իւրեանց բոլոր ձիւրը: ձիւր այդ-

պիսի յամառութիւն՝ ցուցանումէին և շրջապատողները. նորանց նոյնպէս արգելք չէին լինում ոչ դժուարութիւնները, ոչ անյարմար տեղը և ոչ ժամանակի անյարմարութիւնը. և ահագին ծախքերը ծածկելու համար, նորանք, քաղաքը պաշարելուց զինի, ենթարկեցին իւրեանցը ամենաճանր հարկերի, և ոչինչ ուշադրութիւն չէին դարձուցանում նորա վերայ, որ նորանցը մերժեց նոյն իսկ պապը: Երկու կողմերը միմեանց հետ վարվումէին խստութիւնով. պիստոյացիները չարչարումէին բոլոր իւրեանց ձեռքի տակ ընկնողներին. պաշարողները նոյնպէս կտրումէին բոլոր գերիները, քիթերը, ոտները և ձեռները: Վերջապէս պիստոյացիներն անձնատուր եղան մի քանի պայմաններով, որոնցը պաշարողները երդուեցին ամենախիստ կերպով կատարել: Բայց այնուամենայնով ընդդէմ երդման յաղթողները քանդեցին քաղաքական պարիսպները, սպիտակների բոլոր պաշտոնները և ամարանոցները:

Այն միջոցում Դանտը, անյաջող յարձակումներից յետոյ Չլորէնցիայի վերայ, պարտ էր կեանքի բոլոր մնացորդը թափառել մի տեղեց գէպի միւս տեղը: Շատերն ընդունումէին նորան ուրախութիւնով և շատանդամ անցուցանումէր նա մի քանի ամիսներ աշխատութեան և մենութեան մէջ: Հայրենիքում տարածուած էին նորան վերայ զանազան կեղծ համբաւներ: Այնուամենայնով Դանտը պահեց այնտեղ իւր վաղեմի բարեկամներին և ուղարկումէր նորանց՝ բանաստեղծական

գրութիւններ, որոնք զազանի կերպով տարածվումէին նորան յարգողների մէջ: Շատ անգամ նա զանազան վումէ իւր դառն վիճակի, իւր չքաւորութեան և արտոման վերայ: Բայց հայրենիքից դուրս, նա օգտուէտ գտանուեցաւ նմա: Նա մի գիրք շինեց ժողովրդական բարբառի վերայ [de vulgari eloquio]: Մինչև Դանտը ժողովրդական իտալական լեզուն կազմուած էր զանազան գիւղական բարբառներից և բոլորովին անմշակ էր. ասորի՝ անաւոր և կրթուած մարդերը խօսումէին կամ յունարէն [Արևելեան իտալիայում] կամ լաթիներէն լեզուով [Արևմտեան իտալիայում]: Դանտն առաջին անգամը գրեց իւր գրքերը ժողովրդական բարբառով: Այն ժամանակեան ուսումնականները զարմանումէին տեսանելով «այնքան մեծ գիտութիւնը այնպիսի զրծուծ հանդերձի մէջ»: Այդոր համար Դանտը իւր շինած գրքի մէջ ժողովրդական բարբառի վերայ արդարացնումէ նորան մանրակրկիտ ուսուցիչների [պեղանաների] զըպարտութիւններից:

Այն միջոցում Բենեդիկտոս XI-երորդի մահից յետոյ, կարգինայները տասն և մի ամիս չէին կարողանում համաձայնիլ նորոգ պապ ընտրելու վերաբերութիւնով. վերջապէս Ֆրանսիական թագաւորի խորամանակ հարկների շնորհով, ընտրեցին պապ բորյոստեան արքեպիսկոպոսին, Բէտրանին Կլէմէնս Վ անունով: Նորընտիր պապը փոխադրեց իւր աթոռանիստ տեղը Ֆրանսիական քաղաքի, Ավինիոնի մէջ և մի կատարեալ մեքենայ էր փլիպպոս IV-ի ձեռքում: Կլէմէնտը ատեց

նմա հինգ տարի ժամանակով արդիւնքների տասն-երորդական մասը, որոնք ստացվումէին բոլոր հողեւորական գոյքերից Ֆրանսիայում և բացի դորանից ձեռնտու եղաւ նմա՝ ոչնչացնելու «տաճարականներ» ասուած արեղայական կարգը: Այդ ասպետներ-արեղաները չափազանց հարուստ էին: Փիլիպպոսը ցանկանումէր խել բոլորովին նորանց հարստութիւնները այնպէս, ինչպէս յախշտակից երբայեցիներինը: Նա յանկարծ կողոպտեց երբայական ստացուածները և հալածեց նորանցը իւր երկրից, և ութ տարուց յետ կրկին թոյլատրեց յետ դառնալ, կրկին կողոպտելու դիտաւորութիւնով, հենց կհարստանային նորանք կրկին: Պապը նախ չէր համաձայնվում ոչնչացնելու կարգը. բայց վերջապէս համաձայնուեց: Պատճառանք գտանելը դժուար չէր Նւ<sup>ա</sup>հա 1307-երորդ թուի Սեպտեմբեր ամսում ֆիլիպպոսն ուղարկեց զէպիբոլոր նահանգապետները գաղտնի հրամանագրեր՝ մի և նոյն օրը ժողովելու բոլոր տաճարականներին, իսկ մինչև այդ ժամանակը պահպանել ամենախիստ գաղտնիքը: Նւ արդարև, նշանակած օրը նորանցը բոլորին ըմբռնեցին, իսկ կարգի [օրդէնի] ստացուածներն առանց ուշացնելու արքունիքի մէջ առան: Կալանաւորներին սկսան հարցի և փորձի ենթարկել: Նորանք պարտաւոր էին խոստովանիլ այն, ինչ կամենումէր կառաւարութիւնը, եթէ խոստովանվումէին, թողութիւն էին խոստանում, եթէ կամակորովումէին — մահի պատիժ: 1309 թ. ֆարիզի մէջ ծանր այրուող խա-

րոյի վերայ խորովեցին մինչև 'ի մահ 54 ասպետներ. այդպիսի իսկ ճակատագրի հանդիպեցին նորանք տերութեան և սիւս մասների մէջ: Օրդէնը [կարգը] ոչնչացնելու համար կոչեցին եպիսկոպոսական ժողով. բայց ժողովը հրաժարուեց դորանից: Սպա ոչնչացուցին կարգը լիպսպական հրովարտակով. պապը ջանք էր անում որ օրդէնի գոյքը չլինէր թագաւորին, բայց ֆիլիպպոսը դորանում ևս զերազանցեց պապից իւր խորամանկութիւնով: Կարգի վերջին դրօսամէյտերը [գրուխը] էր Յակոբը Մոլէ. նա դեռ գործի սկզբում կոչուած էր ֆարիզ, դրուած բանտում և ապա դատապարտուած մնալու այնտեղ մինչև 'ի մահ: Երբ կարգումէին նորա վճիռը հրապարակով, նա յայտնեց որ իւրեան ստիպել էին բռնաբար խոստովանիլ այն, ինչ ամենեւին չէր գործած: Այդոր համար ֆիլիպպոսը հրամայեց նորան միւս իսկ օրում այրել նոյն իսկ ֆարիզում: Դարձեալ ժողովեցան շատ հանդիսատեսներ: Մոլէն հերոսաբար տարաւ մարտիրոսական մահը, և մինչև յետին րոպէն հաստատումէր իւր անմեղութիւնը և հրաւիրումէր թագաւորին ու պապին զէպի աստուածային դատաստանը (1314 թ.):

«Տաճարականներին» գործի ժամանակում Դանտը եկաւ ֆարիզ և ականատես էր նմա. այդոր համար ևս նա աստիկ զօրեղ կերպով վերաւորեց այդաւաղակապետ «Պիլատոսին»: Նորա շրջագայութեան ժամանակ Ֆրանսիայում հալածումէին ոչ միայն տա-

ճարականներին, բայց և բոլոր խտալացիներին, մանա-  
 ւանդ Ֆլորէնտացիներին, և Դանտը հեռացաւ Ֆրանս-  
 սիայից զզվողութեան ամենախոր զգացումով: Այն  
 միջոցով Իտալիայի մէջ ծագել էին կարեւոր անց-  
 քեր: Գերմանիայում դահլը ժառանգեց նոր կայսր Հեն-  
 րիկոս VII-ը: Նա, Նլիմէնտ V-ի համաձայնութիւնով  
 գնումէ դէպի Իտալիայ կրկին առնելու իւր նախնիների  
 ստացուածները: Շատ խտալացիներ, մանր հասարակա-  
 պետութիւնների երկպառակութիւններից յողնած,  
 ցանկանումէին Իտալիայի միութունը գերմանական  
 կայսրի գերագոյն հովանաւորութեան ներքոյ: Դանտը  
 բռնեց նոյնպէս նորա կողմը և առաջին անգամ հան-  
 դիսացաւ իւր դրուածներում, որպէս հրապարակա-  
 կան գրող [պուբլիցիստ]:

Այն ամենայնով, Հէնրիխ VII-ը չարդարացրեց  
 Դանտի յոյսը. նա հաստատամիտ կերպով չէր ներ-  
 գործում: Ճլորէնցիան նորան չընդունեց, բայց նկա-  
 սեց, որ ինքը շատ շատերին է արտաքսել իւր քա-  
 ղաքացիներից, և թէ այլոր համար Հենրիկոս VII-ի  
 կուսակցութիւնը խիստ շտտանումէ. այդ պատճառով  
 թողութեան թուղթ հրատարակուեց բոլոր աքսորա-  
 կանների համար, բացի Դանտը և մի քանի այլ մար-  
 դեր: Ա.երջապէս նոյն խակ Հենրիկոսը 'ի զուր թագա-  
 դրութիւններից յետոյ, մեռաւ, առանց մի բան զոր-  
 ծելու:

Թէպէտ և Դանտը Հենրիկոսի կողմն էր բռնում,

բայց համարի'ր թէ չէր երևում նորա բանակի մէջ  
 և ծածկվումէր պանազան տեղերում: Հենրիկոսի մահից  
 յետոյ նա գաղթուեց Ռաւէննայի մէջ: Այնտեղ նա  
 շարունակումէ իւր «Աստուածային կոմէդիան»: Այս  
 գոյէմի [վիպասանական երգի] մէջ նա նկարագրումէ  
 քաւարանը և դժոխքը, որոնց մէջ չարչարվումեն  
 մեղքերի համար նորա ժամանակակիցները: Այդ ժամա-  
 նակ, բարեկամները հողացին նորա վերայ Ճլորէնցի-  
 այում և նմա թոյլատրուած էր յետս դառնալ, բայց  
 միայն անարգ պայմանով. նա պիտոյ է վճարէր բա-  
 ւական մեծ տուգանք և յայտնի ապաշխարէր սուրբ  
 Յովհաննէսի եկեղեցու մէջ: Դանտը պատասխանեց իւր  
 բարեկամներին. «ահա՛ թէ ինչպիսի փառաւոր կոչում  
 է սպասում Դանտ Ալիգերիուն իւր հայրենիքի մէջ,  
 հնգետասանամեայ աքսորամանկց յետո Ոչ, այն մարդը,  
 որ նուիրուած է փիլիսոփայութեան, որ քարսզած է  
 արդարութիւն, չէ կարող հաշտուել այն մտքի հետ,  
 որ ուսուցանումէ գնել թողութիւնն արծաթով և  
 խօսել որպէս բարերարները վերայ, այն մարդերի հա-  
 մար, որոնք վիրաւորել են նորան: Ոչ, ես յետս դառ-  
 նալու չեմ դէպի իմ հայրենիքը այդ ճանապարհով:  
 Աթէ դուք կգտանէք միջոց, որ չլինէր իմ պատուի  
 և անունի վիրաւորանք, ես նորան կընդունեմ. և հէնց  
 այս բոպէիս օգուտ կքաղեմ նորանկոց: Բայց եթէ  
 Ճլորէնցիայի մէջ դառնալու ոչինչ ճանապարհ չկայ,  
 բացի անարգանքը, ապա ես երբէք յետ չեմ դառ-

նալ դէպի նա: Ի՞նչ է, մի թէ ես չեմ տեսնում  
ամենայն տեղ արեգակ և աստղեր: Մի՞ թէ որ և իցէ  
երկնքի տակ ես չէի կարող հետազօտել [քննել] ճշ-  
մարտութիւնը . . . . Ս. յղպիսի պատասխանի վերայ  
Ձերէնցիպսւմ հրատարակուեց մշտական արտաքսման  
վճիւ:

Որպէս հետեանք զանազան հանգամանքների, Գոն-  
տը ստիպուած էր նորից թափառել քաղաքից դէպի  
քաղաք: Վերջապէս, նա կրկին դարձաւ դէպի Ռա-  
ւեննայ, որտեղ յուսադրվումէ հանգստանալ: Նա  
կոչումէ այնտեղ իւր ընտանիքը, նորա երկու փաքրիկ  
տղաները մեռան ժանտախտի ժամանակ 1309 թուա-  
կանում: Երկու անդրանիկները իւր աղջիկ Բէատրիչէի  
հետ [18 տարեկան] գալիս են նորա մօտ. բացի դորանից  
նորա մօտ եկան մի քանի վաղեմի բարեկամներ. Գանտը  
փորձ փարձեց հիմնել Ռաւեննայի մէջ գրականական  
ուսումնարան: Նորա փառքը մեծ էր: Բարեկամները  
ցանկանումէին կատարել նմա յաղթական հանդէս և  
գնել նորա վերայ դավնեայ պսակ նորա զրուածների  
համար:

Բայց արեղայական կարգերից մի քանիները և իշ-  
խանութիւնները, որոնց վերայ յարձակուել էր Գանտը  
իւր զրուածների մէջ, յարձակուեցան նորա դէմ: Նս-  
րանք մեղադրեցին նորան պապի առաջև, ինչպէս մի  
հերիախիտի: Վտանգն անխուսափելի էր [այն ժամա-  
նակ, չնայելով երբեմն մինչև անգամ թաղաւորի

պաշտպանութեան վերայ, շատ անգամ այրումէին  
պրօֆէսորներին, մեղադրելով նորանցը հերիախիտու-  
թեան և կախարդութեան մէջ]: Գանտն այն ժամա-  
նակ զնայ դէպի Վենեցիայ, յետո դարձաւ դէպի  
Ռաւեննայ հիւանդ և միքանի օրից յետոյ մեռաւ:  
[1321 թ.] այն դափնեայ պսակը, որ պիտոյ է զար-  
գարէր նորա յաղթութիւնը, զրուեցաւ նորա մահար-  
ձանի վերայ: Բայց և մահից յետոյ ևս փոքրիկ  
Ռաւեննայ երկր չհարողոցաւ ներել Գանտին: Ս. յղպէս,  
անցանելով տան և երկու ասարի, հոգևորականութիւնն  
արգելեց նորա զրուածները «Միապետութեան վերայ»  
և մինչև անգամ կամենումէին դժբա տալ գերեզմա-  
նից նորա ոսկրները: Իւր ժամանակեան ուսումնական-  
ների մէջ Գանտը բռնումէ պատուաւոր տեղ, նա խնա-  
նումէր այն բոլորը, ինչ իմանումէին նորա ժամանա-  
կում և մանաւանդ շատ գիտութիւնների մէջ նա  
անումէր նոր դիւտեր: Նա որոշեց երկրի ծանրութեան  
կենտրոնը, սրամիտ նկատողութիւններ էր անում  
թուշունների թուիչքի վերայ, աստղերի փայլունութեան  
վերայ, ծիածանի վերայ, շողիների վերայ, որոնք կազմ-  
վումէին այրուելու ժամանակ: Գալիլէից յառաջ, նա  
վերաբերումէր պտուղների հասունութիւնը լոյսին, որ  
շողիացնումէ նորանից թթուածինը: Աինէից յառաջ,  
նա հաստատումէր, որ ծաղիկները բաց են անում  
լոյսին իւրեանց թերթերը, սերմը պտղաւէտ անելու  
համար բաց են անում իւրեանց թերթերը և ցիւցերը,

և այս թերթերի ու ցիցերի կազմուածքով բայատրեց բոյսերի կարգաւորութիւնը [կլասսիֆիկացիայ] . նա հաստատուեալ, որ աննդարար հիւթերը շարժվում են բոյսերի մէջ . Բէկոնից յառաջ, նա ցոյց տուեց որ փորձը մնորդային զիտութեան մի աղբիւր է . Վիլոյնց յառաջ, նա հիմնեց պատմութեան փիլիսոփայութիւնը: Գանտը չէր խոնարհվում հեղինակութեան առաջև . միատեսակ կերպով բացատրում է և դերմանական կայսրի կարծիքները, և Արիստոտէլի կարծիքները և պապի ժամանակակիցների կարծիքները . մասնաւորի բարիքը նա ցածր է համարում ընդհանուրի բարիքից, քաղաքի բարիքները ստոր է համարում հայրենիքի բարիքներից: Իսկ հայրենիքի բարիքը ցածր է համարում մնորդութեան բարիքից . բացի դորանից Գանտը սաստիկ սիրում էր ազատական արուեստները և ծանօթ էր իւր ժամանակի լաւ երաժիշտների հետ: Նա ինքն ուներ լաւ ձայն, և երգում էր հանդարտօրէն իւր կեանքի ազատ ժամերում: Բայց այդպիսի ժամերը խիստ սակաւ էին պատահում: Բացի քամբախտութիւնից, նա իւր արտաքսման ժամանակ միշտ տկար էր աչքերից:

Գանտի գրութիւնը, նա մասնաւանդ «Աստուածային կոմէդիան», որի մէջ նա զօրեղ կերպով վերաւորում էր այն ժամանակեան կաթոլիքական հոգևորականութիւնը [Այդպէս, XI-X-երորդ երգի մէջ նա ասում է նորա համար . «ձեր ազահ սրտերը բոլոր աշխարհը զզուեցրեց, տանակոխ անելով բարութիւնը և բարձրացնելով

յանցաքները և այն և այն .], պատճառեցին բոլորի մէջ զարմանք: Այդ զարմանքը առաւել սաստիկացու առաջին երկու դարերում Գանտի մահից զինի: Գրեխաւոր իտալական քաղաքների մէջ հիմնուեցան վարդապետական [պրոֆէսորական] ամբիոններ նորա պոյէմը մեկնելու համար: Ժողովրդական տեսարանները զանազան ձևերով խաղում էին հատուածներ այդ պոյէմից:

Առաջին մի և կէս դարերի ընթացքում [մինչև 1472 թ.] նա հրատարակուեց 60 անգամից աւելի: Որանից յետոյ, թարգմանուեցան նորանք բոլոր և րուպական լեզուներով: —

3.

Հ Ո Ւ Ս .

[1373 — 1415]

Ալաոնական ժողովուրդներից ամենից կրթուածները և լուսաւորուածները ՚ի հարկէ նորանք էին, որոնք արեմուտքին մօտ էին, չեխերը և լեհերը . իսկ XIV և XV դարերում չեխերը մին էին ամենալուսաւոր և րուպական ժողովուրդներից: Չեխերի մայրաքաղաքում, Պրագայի մէջ համալսարան հիմնուեց 1348 թ. վում, աւելի վաղ բոլոր գերմանական համալսարաններից: Նա մայրաւում էր այն միջոցում լաւ և րուպական համալսարանների հետ: Նորա մէջ ուսանողները

Հասանուձէին թուով մինչև 30,000-ի միայն պրօֆէսորները Հասանուձէին մինչև երկու հարիւրի: Այդ շինութիւնը նմանուձէր մի հասարակութեան, որի քաղաքացիները [ստուղենաները] կազմուած էին չորս «ժողովուրդներից»: չեխերից, բաւարացիներից, սակսոնացիներից. և լեհերից. չեխերը կազմուձէին միայն վեցերորդական մասը: Բայց, բոլոր միջնադարեան համալսարանների պէս, Պրագայի համալսարանը եկեղեցական և լատինական էր. միայն թէ նորա մէջ կարող էր ազատ կերպով դաստիարակ լինել ամէն մի մարդ, որ ունէր ուսումնական աստիճան: Այդոր համար և այնտեղ կարողացաւ մտանել ազատ անգլիական մտածողը, Վիլիէփի վարդապետութիւնը: Վիլիէփի զբքերը բերուեցան Բոհեմիայի մէջ հարսանիքի ժամանակ, երբ սկսուած էին ազգակցական յարաբերութիւններ չեխական և անգլիական պալատի մէջ: Վիլիէփեան վարդապետութեան ամենից նշանաւոր ներկայացուցիչը Բոհեմիայի մէջ էր Հուսը:

Նա ծնուեց 1373 թ. Հուսիսեց զիւղաքաղաքում, որից և ստացաւ իւր անունը: Նա զիւղացու որդի էր, բայց ծնողները ոչինչ չէին խնայում նորա կրթութեան համար: Երբ Հուսը վերջացրեց իւր վարդապետութիւնը հարեան քաղաքում, նորա հայրն արդէն մեռաւ, մայրն ինքն առաջնորդումէր նորան դէպի պրագայան համալսարանը: Բեկտորին ընծայելու զիւսաւորութիւնով նա առաւ իւր հետ մի էգ սաղ[ղազ]

և կարկանդակ. բայց ճանապարհորդութեան ժամանակ սաղը փախաւ: Այդ քամբաղդ դիպուածը տխուր նախադուշակութիւն դարձաւ նորա մօր համար. նա ծնկաչոք խնդրեց աստուածից օրհնութիւն, և այդ նախադուշակութիւնը բոլոր մնացած ճանապարհորդութեան մէջ աստիկ անհանդատութիւն պատճառեց նմա: Հուսի երիտասարդութիւնն այնքան ծանօթ չէ մեզ: Մի անգամ երեկոյան ժամանակ նա կարդումէր մօտ կրակին. ս. Վալդէտիոսի վարքը: Նա շարժուեց այդ մարտիրոսի չարչարանքներից և զրեց ձեռքը կրքալի մէջ. նորա ընկերներից մին ընդհատեց նորան և հարցրեց. այդ ի՞նչ ես անում: «Ահա փորձ եմ փորձում. այդ սուրբի տանջանքների ո՞ր մասը կարող էի տանել:» Արդէն 1398 թվում նա մտաւ պրագայան համալսարան, որպէս հրասարակական դաստիարակ, իսկ հետեւած տարում պաշտպանուձէր վիճաբանութեան մէջ Վիլիէփի զբքերից հանած վարդապետութիւնը: Չնայելով դորա վերայ, նա նշանակուած էր փիլիսոփայական փակուլտէտի դեկան [մեծ ուսուչապետ համալսարանական], հովու և քարոզիչ Բեթլէհեմեան մատուռի մէջ [1401-2]: Յաջորդ թուականում նա հաստատուած էր արդէն համալսարանի ընկտոր [կարգավար]:

Հուսի ամենազինաւոր բարեկամն էր Հերոնիմոսը. նա նոյնպէս համաձայն էր վիլիէփեան կարծիքների հետ: Հերոնիմոսը խիստ շատ ճանապարհորդութիւններ ա-

րեց արտասահմանում, եղաւ Սկսիրդում և բերեց այնտեղից շատ, Բոհեմիայի մէջ անձանօթ վիկլիփեան հեղինակութիւններ: Արդէն 1403 թվում Հուան ունէր հրապարակական վէճ վիկլիփեան վարդապետութեան վերաբերութիւնով և որովհետև համալսարանական պրոֆէսորներէից շատերը նեմէցներ էին, ատեցողներ այդպիսի մտքերը, ապա քառասուն ու հինգ յօդուածներ գտան հերիտիկոսական, և սահմանուեցաւ, որ համալսարանական մատակարարներից ոչ ոք չմեկնարանէր նորանցը թէ հրապարակով, թէ գաղտնութիւնով :

Բայց երբ Գրիգոր XII-դ պապը դերմանական կայսր ընդունեց Ռուպրէխտին, որ հակառակ էր չեխական թագաւոր Վոյլաւին, ապա Վոյլաւը վրէժխնդի էր զաւ նորանով, որ սկսեց պաշտպանել ընկերմատական [փոխակերպող] ուսուցիչներին Պրագայի մէջ. և նորանք բաւական շատ էին. Հուար զլուխ էր կանգնած բոլորի: Նորան սիրումէին քաղաքի մէջ. հեղութիւնը, անարատ կեանքը, քաղցրարարողութիւնը և փափկութիւնը ամէնների հետ՝ սեփականութիւններ էին նորան: Յովիայ թագուհին առաւ նորան իւր մօտ հոգևորական, և մինչև անգամ խտասիրտ Վոյլաւը թոյլատրումէր նորան իւր մօտ: Հուար բարեկամ էր մինչև անգամ Սբինոկ արքեպիսկոպոսի հետ, որ, Հուսի առաջնորդութիւնով ընդունեց մի քանի բանաւոր միջոցներ: Այդպէս, Հուան ապացուցեց նմա, ինչպէս վնասակար է

զուտ և մշնարիտ կաթոլիքական վարդապետութեան ուխտագոյնելի ճանապարհորդութիւնը դէպի կարծիքաւոր քրիստոսական արիւնը, որ գտանվումէր մի բրանդէնբուրգեան քաղաքում և կատարումէր կարծիքական հրաշքներ: Արքեպիսկոպոսը հրամայեց կոմմիսսեային [ժողովին] քննել այդ գործը և ապա արգելեց իւր թէմի բոլոր աշխարհականներին մասնակցելու այդ ուղեգնացութիւններում: Միջին զարերում կաթոլիքական հոգևորականութիւնը յաճախ հանդէս էր բերում կեղծ սրբութիւններ և ժողովում էր ուխտաւորներ: Աննովիէնտիոս Պապը ևս սահմանեց այս օրէնք. «արդելումէնք մենք ցոյց տալու կամ հանդէս բերելու շահաստացութեան համար՝ հին մասները, ուր և լինէին նորանք, բացի դամբարանից, որանում հանգչումէն նորանք: Երկրազուլութիւնը նորադիտ մասներին արգելվումէ, եթէ հոովմէական քահանայապետի իշխանութիւնը ընդունած և հաստատած չէ: Տեղական եկեղեցիների զլխաւորները պարտաւոր են խիստ զգուշանալ՝ որ ուխտաւորները մասներին երկրպագելիս չհրապուրուէին սուա հրաշքներից կամ կեղծ հրովարտակներից, ինչպէս սրատահումէ շատ անգամ զարշէլի շահաստացութեան սերի համար:» Եւ, չնայելով այդ սահմանադրութեան վերայ, շատ անգամ պատահումէին չարաչար գործադրութիւններ, և Հուար միշտ յարձակվումէր նորանց դէմ. իւր քարոզութիւնների մէջ նա յարձակվումէր կաթոլիքական հոգևոր

րականութեան հպարտութեան, վեղխութեան, նենգութեան և ազահոլութեան վերայ, մեղադրումէր պրէլատներին, այնոր համար՝ ուր նորանք կողոպտումեն ժողովրդին, փոխանակ պաշտպանելու նորան. արեղաներին-այնոր համար՝ որ նորանք միայն զայլթաղեցնումեն աշխարհականներին: Նա յարձակվումէր բարձրագոյն հոգևոր կառաւարութեան վենայ այնոր համար՝ որ թոյլ են տալիս ստորին հոգևորականութեան յանցաքներ զործելու և առաջնորդներին էր վերագրում պատասխանատվութիւնը հպատակներից զործած մեղքերի համար: Նա յարձակուեց մինչև անգամ եկեղեցիներէ բռնայն հոյակապութեան վերայ. «պստեղը, որ ուրիշ էս, ծածկուած էն ուրիշ, ինչ աչքաները Բոնոնի [Բաբելոն] էն ման գալի»: Նա հրաւիրումէր հոգևորականութեանը դէպի առաքելական ժամանակների պարզութիւնը և Յիսուս Քրիստոսի կեանքը ցուցանումէր, ինչպէս ամենալաւ օրինակ նմանութեան:

Բայց Հուսի բարեկամութիւնը Արինոկ արքեպիսկոպոսի հետ շարունակուեց ոչ երկար, մինչև 1407 թիւը: Այդ միջոցում՝ վոյլաւը կատարելապէս կռուեց պապի, Գրիգորիոս XII-դի հետ. և պապը իւր կուսակիցներով միասին սկսեց մեղադրել նորան այնոր համար, որ նա սարածումէ վիկլիփեան հերիտիկոսութիւնը\*:

Անձներն ազատ կացուցանելու համար մեղադրուելոց հերիտիկոսութեան մէջ, թագաւորը, և արքեպիսկոպոսն սկսեցին զործադրել նորա դէմ ամենակարելի

հնարներ. եկեղեցական չարագործութիւնների՝ դէմ յարձակուող քարոզիչներն ընկան հալածման ներքոյ: Գերմանական աստուածաբանները համալսարանի մէջ խսկոյն շտապեցին դատապարտել Վիկլիփի վարդապետութիւնը. իսկ արքեպիսկոպոսն արգելեց Հուսին քարոզելու, միայն թէ չկարողացաւ այդ արգելումը իրագործել:

Մենք ասումէինք, որ պրագայան համալսարանը կազմուած էր չորս «ժողովուրդներից» նորանցից «բաւարականը» և «սաքսոնականը» գերմանացիներ էին. մինչև անգամ՝ «լիհական ժողովուրդը» բաղկացած էր գերմանացիներից. այն է՝ պոմերանցիներից, պրուսացիներից. և շլեզուիգեան գերմանացիներից. իսկ լեհերն անցան դէպի կրակովեան համալսարանը: Չեխերը չորրորդ ժողովուրդն էին կազմում. և որովհետև ընտրութիւնների ժամանակ իւրաքանչիւր «ժողովուրդն» ունէր մի ձայն, ապա գերմանացիները միշտ յաղթող էին հանդիսանում չեխերից. այդպէս չեխերն ամենեւին ազդեցութիւն չունէին համալսարանի վերայ: Եւ որովհետև գերմանացիները հին կաթոլիքական եկե-

\* Վիկլիփը պահանջումէր և կ ե ղ ե ց ա կ ա ն փ ո խ ա կ ե ր պ ու լ թ իւ ն՝ եկեղեցական ստացուածները դարձնելու դէպի հասարակաց օգուտը՝ հարկերը թեթեացնելու համար, որոնք վիճակվումէին խեղճ դասերին, ոչ ոչ այց ու ց ու ց մն հոգևորականութեան ամենայն իրաւունքներին աշխարհական իշխանութիւնների վերայ և այլն:

ղեցին էին պաշտպանում, իսկ չեխերը պահանջում էին նորա փոխակերպութիւնը, ապա եկեղեցական փոխակերպութեան հարցի հետ միացաւ և հարցը ազգայնութեան վերայ: Չեխական ազնուականները մասնակից եղան չեխ ուսանողների դործում: Բայ՛ի դորանից, նորանցը պահպանում էին Փրանսիական թագաւորի և փարիզեան համալսարանի ղեկավարները, որոնք այն միջոցում զտանվում էին Պրագայի մէջ: Նորանք խորհուրդ էին տալիս Վոյլաւ թագաւորին փոխակերպել դորա վերաբերութիւնով պրագայան համալսարանը ըստ օրինակի փարիզեան և իտալական համալսարանների: Արդարեւ, 1409 թուականի Յունուարին Վոյլաւը հրատարակեց հրաման, որ ապագայում և Պրագայի մէջ, ինչպէս և միւս համալսարաններում, իւրաքանչիւր ձայնովութեան ժամանակ չեխերն ունենային երեք ձայն, իսկ միւս «ժողովուրդներն»՝ իմասին ունենային միայն մի ձայն: Այդ սահմանադրութիւնը մի փառահեղ հանդէս պատճառեց չեխ ժողովրդին: Գերմանական ուսանողները դժգոհ էին դորանից և թուով 5000 մարդ յաւիտեանս թողեցին Բոհեմիան: Նորանք ցրուեցան Գերմանիայի վերայ, ուր շուտով և հիմնուեցան նոր համալսարաններ, օրինակի համար Վէյպրիխում: Գա զարձաւ չեխերի համար մի առաւել մեծ յաղթութիւն: Նորաչէն համալսարանի առաջին ընկտորը երկրորդ անգամ Եան շուար զարձաւ. հուսի, Հերոնիմոսի և ուրիշների մտքերը տարա-

ծուեցան այժմ խիստ շատ անարգել կերպով: Գերմանիան սաստիկ զրզուում էր շուսի դէմ. ամենայն տեղ ազաղակում էին նորա համար, որ նա հերիախիոս և նեմէցների թշնամի է. բայց սակայն չեխ ժողովուրդն աւելի ու աւելի սիրում էր նորան, ինչպէս ազգային իրաւունքների և ազգայնութեան պաշտպանի թագաւորական կամքի և հոգեւորականների պահանջումների դէմ. իսկ հոգեւորականութիւնը դեռ 1409 թվում փորմնալական [կանոնաւոր] ձևով դանդատուեց նորա վերայ հոգեւորական դատարանում: Ղանդատի իմաստն էր այն, որ նա զրզուում է ժողովուրդը ընդդէմ հոգեւորականութեան և չեխերին-ընդդէմ նէմէցների, որ նա ուսուցանում էր արհամարհել եկեղեցին և նորա պատժողական իշխանութիւնը. որ նա Հոովմբ անուանում է սուտ Քրիստոսի զահ և իւրաքանչիւր քահանային, որ խորհրդակատարութեան ժամանակ փող էր առնում, հերիախիոս, իսկ ինքն հրապարակով դովում էր Վիկէի հերիախիոսին: Արիտիկ արքեպիսկոպոսը հրամայեց դատաստան բանալ Հուսի վերայ: շուար, իւր կարգով, դանդատուեց արքեպիսկոպոսի վերայ պապին, բայց պապը կատարեալ իշխանութիւն տուեց արքեպիսկոպոսին հալածել և արմատախիլ անել Վիկէի հետե ողներին և նորա վարդապետութիւնը: Իսկ շուար, ջնայելով պապի հրովարտակի վերայ, շարունակում էր պաշտպանել այդ վարդապետութիւնը: Նա յոյսը դնում էր իւր յարաբերու-

Թիւնների վերայ պալատի հետ և բացի դորանից, իմանումէր, որ ամենից ներգործող չեխական ջեղերը պաշտպան էին իւրեան: Սքինոկը հրաւիրեց վեց վարդապետների [գոկտորների] քննադատելու վիկլէփեան վարդապետութիւնը: Վարդապետները յայտնեցին որ Վիկլէփի բոլոր գրքերը պարունակումեն յայտնի հերիտիկոսութիւն: Այն ժամանակ սկսեցին ժողովել Վիկլէփի գրքերը նորանցից, որոնց մօտ գտանվումէին: Երբ հաւաքուեցան 200 գրքեր, արքեպիսկոպոսը հրամայեց նորանցը հաւաքել մի տեղ և այրել:

1410 Թուականի Յունիսի 16-ը, զանգահարութեան միջոցին, գրքերի ամբողջ կոյտն այրուեցաւ հոգևորականութեան ներկայութիւնով, արքեպիսկոպոսական տան զաւթում: Դա յառաջ բերեց մեծ շփոթութիւն քաղաքի մէջ: Հուան այդ առիթով հրատակեց մի հեղինակութիւն, որի մէջ ապացուցանումէր, որ հերիտիկոսների գրքերը պիտոյ է չայրել, այլ կարդալ. որ առաջին դարերի բոլոր քրիստոնէութիւնը կարդումէր հերիտիկոսական գրքերը, որս Ամբրոսիոսը և Բէդան խորհուրդ են տալիս ծանօթանալ հերիտիկոսների գրքերի հետ իմանալու համար բոլորը և բաժանելու համար սերմը որոմներից: «Ո՛ր արդեօք իրաւունքով, առանց մանրամասն քննադատութեան, պիտոյ է անհետացնել փիլիսոփայական պարունակութիւն ունեցող գրքերի մեծ մասը, համալսարանի վրասի և չեխական թագաւորութեան նուաստութեան

համար. ինչի՞ չայրեցին նորանք Արխատուէլի զիրքը երկնքի և երկրի մասին: Ինչի՞ չանհետացուցին Արխատուէլի Ֆիզիքան, որտեղ ծաղրածութեան տակ է ձգում Պլատոնի կարծիքը աշխարհաստեղծութեան վերայ:» Նորա հետ միասին Հուսը վերկացաւ և արքեպիսկոպոսի հրամանի դէմ, որ արգելումէր քարոզել եկեղեցիներում: «Գորանով խլումեն ժողովուրդից հոգեկան կերակուրը, որ հակառակ է աւետարանին և ս, հայրերի սահմանադրութեան:»

«Վոյլաւ թագաւորը մի կողմից դուրս եկու քաղաքացիների դէմ. միւս կողմից, հրամայեց որ Վիկլէփի անիծումը չունենար ոչինչ ներգործութիւն և որ արքեպիսկոպոսն ինքն վարձատրէր այն մարդերին, որոնց պատկանումէին այրած գրքերը, նորանց անուանական [նօմինալական] գնով: Արքեպիսկոպոսը չկատարեց թագաւորական հրամանը. այն ժամանակ Վոյլաւը հրամայեց առնել արքեպիսկոպոսի արդիւնքը արքունիքի մէջ և այն բոլորի արդիւնիքը, որոնք մասնակից էին գրքերի այրելում: Հուսի գործն անցաւ դէպի պապը, Յովհաննէս XXIII-դը: Պապը յանձնեց ննելու նորան ծիրանաւոր Կոլոնին [որ մի քանի տարի անցանելուց զինի բռնեց պապի տեղը ՄարտինՎ-դ անուանով]: Կոլոնը մերժեց եկեղեցուց Հուսին: Պապն խելոյն հրաւիրեց նորան զալ Հռովմի մէջ արդարաւայու նորա վերայ բարձած հերիտիկոսութիւնից. բայց Ստիլայ թագուհին չհամաձայնուեց, որ իւր

հողերականը գնար Հռովմի մէջ, իսկ Վոյց'աւը նախատուէր պապին այնոր համար՝ որ նա անարդարութիւնով մեղադրուէր Բոհեմիայի, իբր այն թէ նորանում խիստ շատ հերիտիկոսներ կան: Պապն առաւ գործը Կոլոննից և յանձնեց նորան երկու այլ կարդինալների: Այդ կարդինալները երկու տարիներ ընթացքում ոչինչ վճիռ չյայտնեցին. այնոր համար Սբինոկը հաստատուէր, որ Կոլոննից յայտնած մերժումը դարձեալ ունի զեռ զօրութիւն և այդ զօրութեան համսձայն վարուեց Պրագայի բնակիչներին հետ: Նա հաւասարապէս զրգռուած էր և թագաւորի գէմ, որովհետև թագաւորը չէր ո՛նչացնում իւր հրամանը, որանով պիտոյ է հողերականութեան ստացուածներըն ստացուէին արքունիքի մէջ: Այդոր համար 1411 թվում Բոհեմիայի մէջ ծագեց հողեր իշխանութեան պատերազմը աշխարհական իշխանութեան հետ: Արքեպիսկոպոսը վերջապէս մերժեց եկեղեցուց բոլոր քաղաքը, Պրագային. իսկ Վոյց'աւն սկսեց վարուել հողերականութեան հետ արդէն բարբարոսաբար: Շատ հողերականներ արտաքսուած էին քաղաքից, Վոյց'աւը ինքեան սեփականեց նորանց մեծաքանակ գանձերը: Ապա կոչեց չիխ ազնուականներին քաղաքական ժողովի մէջ ինքն անձնով նախագահ եղաւ նորա վերայ և հրամայեց հրատարակել օրէնք, որ հողերական կառաւարութիւնը ոչ ոքի կարող չէ պահանջել աշխարհական գործի վերաբերութիւնով:

Վոյց'աւի գործողութիւնները հասան իւրեանց նպատակին: Արքեպիսկոպոսը լռեց և թողեց եկեղեցին այնպիսի դրութեան մէջ, որպիսի դրութեան մէջ գտանվումէր նա նորան անիծելուց յառաջ: պապը յետ առաւ իւր վճիռը Հուսի գէմ, դատաստանը նորա վերայ կորեցին միջնորդական դատաւորները [третейские судьи] խաղաղասէր կերպով և արքեպիսկոպոսին հրամայեցին խոնարհել թագաւորի առաջն:

Հետեւած տարում կախը նորից ծագեց: Պապը Յովհաննէս XXIII որ արդէն վաղուց նախատել և արհամարհել էր բոլորին, հրամայեց քարոզել Պրագայի մէջ խաչակիրների արշաւանքը, որ այդ պատճառանքով աստուածապաշտ մարդերից փողեր հաւաքէ: Վոյց'աւը և նորընտիր արքեպիսկոպոսը, որ բռնել էր արդէն հանդուցած Սբինոկի տեղը, թոյլատրեցին այդ: Հրապարակատեղում թմբկահարութիւնով և փողերով յայտնուած էր մեղսաթողութիւն նորանց, որոնք կրնձայաբերէին փողեր: Հուսը յայտնապէս վերկացաւ մեղքերի այդ թողութեան գէմ, ասելով որնա խաբէութիւն է: Կախած գրաւոր յայտարարութիւնները յայտնեցին բնակիչներին, որ դորա առիթով պիտոյ է հրապարակական վիճարանութիւն լինի: 1412 թուականի Յունիսի 7-երորդ օրում այդ վիճարանութիւնը կառարուեց մի ընդարձակ դահլիճում սաստիկ խուռն բազմութեան ներկայութիւնով: Հերանմանն ասաց այդ միջոցում մի շնչաւորող և հողիացուցիչ ճառ՝ ուսանողները

յայտնեցին իւրեանց համաձայնութիւնը նոր եկեղեցական փոփոխութիւնների մասին և անհամաձայնութիւնը հին կարգադրութիւններին: Հերոնիմոսից և այլ մազիստրոններից ոգևորուած, նորանք ժողովրդի մեծ մասի առաջնորդութիւնով մի թափոր կազմեցին և կաղախանի ներքոյ այրեցին պապական հրովարտանքների մեծ բազմութիւն: Բայց Վոյլաւ թագաւորն սկսեց նոյնպէս խստութիւնով հալածել նոր սովորութիւններ հնարողներին, ինչպէս յառաջ վարվում էր քահանաների հետ, և հրամայեց մեռուցանել ամենայն անձի, որ որ-և-է կերպով կխանդարէր եկեղեցական կարգը. բայց ոչ Հերոնիմոսը, ոչ Վալլ'լ'շտէյնը, որոնք հանդիսաւոր թափոր կազմեցին դէպ'ի կաղախանը և ոչ շուրջ չկոչուեցան դէպ'ի դատաստան. միայն թէ երեք ուսանողներ դէպ'ի մահ դատապարտուեցան: շուան աշխատում էր համոզել մազիստրատին չկատարել վճիռը և, երբ վճիռը կատարուած էր, շուար թաղեց պատժուածներին ժողովրդի խուռն բազմութիւնով բոլոր եկեղեցական սովորութիւնների համաձայն և նորանց պատուի համար Բէթլէհեմեան մատուռի մէջ մի դամբանական ճառասուտութիւն արեց: Այդ ժամանակից շուարի կուսակիցները բոլորովին բաժանուեցան կաթոլիկներից և ասուեցան հուստեաններ: Նորանք արդէն ևս չէին ընդունում տիրապետող կաթոլիքական եկեղեցական հայրերի և տիեզերական եկեղեցիների աւանդութիւնները, այլ իւրեանց հա-

ւատի հիմը ուղիղ դնումէին Աստուածաշունչի վերայ: Պապը Յունիսում իսկ մերժեց շուարն եկեղեցուց իսկ Վոյլաւը հրատարակեց այդ մերժումը, որի հետևանքը եղաւ այն՝ որ Հոկտեմբերում Պրագայի մէջ ծագեցան մեծամեծ շիտթութիւններ. գերմանական կառավարութիւնը կամենում էր հալածել շուարն և ոճնչացնել նորա ազանդը, իսկ չեխերը պաշտպանում էին նորան. դորժը հասաւ մինչև յայտնի պատերազմը: Շուարով կոչման մէջ մտաւ նորընտիր արքեպիսկոպոս Կոնրադը, մի մոլեռանդ գերմանացի, և շուան արտաքսուեց քաղաքից. հետևանքը եղաւ խռովութեան անսովոր սաստկութիւնը: Ի վուր էին ջանք անում վերջ տալ կոիւններին միջնորդական խօսակցութիւններով: Վոյլաւը որ ըստ հաճոյքների էր ներդրուած, կրկին յարաձիուեց կաթոլիկների վերայ. բայց այդ ջօգնեց ինչպէս շուար, այնպէս և նորանք մնումէին նախկին համոզումներով: Բացի դորանից, Վոյլաւը իւր հնարներով ինքն շատացնում էր շուարի կուսակիցների թիւը. այդպէս, նա հրամայեց որ պրագայեան մազիստրատը (կամ վերին կատարողական և դատաստանական սեղը քաղաքի մէջ), որ բաղկացած էր մինչև այդ ժամանակները մեծ մասով նէմէյցներից, ապաղայում բաղկացած լինէր կէսով չափ չեխերից: Քաղաքի մէջ անդորրութիւնը տիրեց և շուար վարդապետութիւնը ասարածանվում էր հետ սհետէ առաւել և դարձաւ չեխերի համար մի ազգային կրօն:

Այն ժամանակ, երբ Ալիկէփն ունէր ազդեցութիւն միայն ուսումնականների և աստուածաբանների վերայ, Հուան ունէր ազդեցութիւն ժողովրդի վերայ: Նա զրուակէր ժողովրդական լեզուով և շատ ինչ նորահասանք գործեց: Նորան սիրուակէր ոչ միայն թագուհին, այլ և ամենաչքաւոր մարդերը. նորահասանք թիւն էին ցուցանում մէնչև անգամ միւս ազգերը, շվեյցարացիները, Ֆրանսիացիները և հասարակ ժողովուրդը, և քահանաները և ուսումնականները, և մինչև անգամ նոյն իսկ գերմանացիները: Հուան քարոզը զանազանութեան սրամտութիւնով և մտքի պարզութիւնով, ընդունակութիւնով՝ բացատրել ամենի համար առարկայի նոյն իսկ պատկերը, տարօրինակ ընթերցանութիւնով, մանաւանդ սուրբ գրքի, հաստատութիւնով՝ իւր կարծիքների պաշտպանութեան մէջ: Այդ բոլորը տալէս էին նորահասանք արարակախօտութեան սատակ զօրութիւն և զբաւոյնականութիւն: Նորահասանք մի խիստ ճշմարտասիրական յատկութիւն, զուտ-անարատ կեանք քարոզողի, ընդ ցանկանալէս էր հեղեցու մէջ լուսագոյն փոփոխութիւններ չգեղար:

Բացի անձնական քարոզութիւնը, Հուան արածուակէր իւր ուսումը բազմութիւ հեղինակութիւններով. ա ազդուակէր բոլոր Եւրոպայի վերայ, իսկ չեխական զրուածներով իւր ազգի վերայ: Նորահասանք կարեւոր հեղինակութիւնն էր Գերմանիայի վերայ: Նորահասանք անու մէնչև, որ անաբաւները [անաբաւները] չէին

նուանելով եկեղեցու զուխներ կամ սրբազնագոյններ՝ այլ՝ միայն Աստուածի և եկեղեցու ծառաներ. վերջին ժամանակներում գափփոխուեց, մեծ կոնստանդինոսի և նորահասանքների, ժամանակներից, պապը. հոռոկական եպիսկոպոսը, համարուեցաւ եկեղեցական զուխ, Քրիստոսի փոխանորդ երկրիս վերայ: Բայց իսկապէս պապը, «իբրև պապ», երբէք կարող չէ լինել այդպիսի փոխանորդ, և կարգիւնայները, իբրև կարգիւնայներ», երբէք կարող չեն համարուիլ առաքաւծների յաջորդներ: Պապը կարող է համարուել Պետրոսի փոխանորդ այն ժամանակ միայն, երբ հաւասարութեան Պետրոսին հաւատով, խաղաղասիրութիւնով և սէրով, բայց նոյն պիտոյ է մտածել և այլ մարդերի վեցայ, որոնք եղած չեն, ոչ պապեր, ոչ կարգիւնայներ: Իսկ եթէ պապը և կարգիւնայները չեն կատարում իւրեանց պարտքերը և, մոռանալով Քրիստոսին, մտածում են միայն աշխարհական իրերի վերայ, զեղխութեան և փառահեղ հանդերձի վերայ, և շուայութիւնովը զերազանցութեան մինչև անգամ աշխարհահաններից, այն ժամանակ նորանք ամենևին փոխանորդներ չեն Քրիստոսի, կամ Պետրոսի, կամ առաքաւծների, այլ փոխանորդներն աստանայի, սուտ Քրիստոսի, Յուդայ իսկարիտիտացու: Պապական արժանաւորութիւնը հարկաւոր ևս չէ հաւատացեալներն ազատելու համար. նախեղակ Քրիստոնէական եկեղեցու մէջ կային միայն երկու սրբազան կոչումներ, տարկաւազ և քա-

հանաներ, միւս մտածացները երեւցան յետոյ և կին լոկ մարդկային սահմանադրութիւն:

«Հարկաւոր է նախ ապացուցանել-ասումէ չուսը- որ պապն արդարև կարող է լինել զլուխ եկեղեցու, իսկ Քրիստոս է միայն անտեսանելի զլուխ . . . Ընդ- հակառակն, Քրիստոսն առաւել մօտ է մեզ, քան պապը, որ հեռի է մեզանից ամբողջ հարիւր մղոն- ներով, և կառաւարումէ եկեղեցին առանց հեռաւօ- րութեան արգելքների և ժամանակաւոր զլխաւորի, պապի: Հետաքրքիր էր առաջարկել վարդապետներին [դոկտորներին] այս հարցի լուծումը, էր արդարև Ա- դնէսայ պապուհին եկեղեցու զլուխ, ինչպէս կարծում էր ժամանակակից հոգևորականութիւնը, կամ թէ եկեղեցին երկու տարիներից աւել զտանվումէր ա- ռանց զլիս: Եւ ինչպէս է լինում նա անզլուխ մի պապի մահից մինչ միւսի ընտրութիւնը: Պապերի իշ- խանութիւնը զօրեղ է, որովհետև նորանք երեք նե- ցուկներ ունին. «ովորու-նէան» մեղադրել անմեղ քրի- ստոնեաներին հերիտիկոսութեան մէջ և այրել նո- րանցը, որպէս այրումեն բոլոր կոպիտ և կրքոտ դա- տաւորները, «ովորու-նէան» մերժել եկեղեցուց անմեղ մարդին և ըստ հաճոյքի զաղարեցնել աստուածա- պաշտութիւնը ամբողջ երկրի մէջ. «ովորու-նէան» ե- կեղեցի հարածող հրապարակել նորան, ով սահման է դնում նորանց հոչակուած ազահութեան:»

Կաթոլիկ հոգևորականութիւնը իւրեան բարձրա-

ցնելու համար ասումէր, որ «վատթար քահանան ա- ւելի արժանաւոր է քան Աստուածամայրը, այն որ համար, որ քահանան օր ըստ օրէ ստեղծագործումէ իւր Արարիչը և կարող է ստեղծագործել նորան, երբ միայն կամենումէր:

Հուան ընդդիմարդարձեց և դմա, պաշտօնը չէ շե- նում մարդիս քահանայ և իւրաքանչիւր քահանայ սուրբ չէ, բայց իւրաքանչիւր սուրբ է քահանայ . . . Ամէն մի մարդ ստանալով հրաման իւր իշխանութիւ- նից, պիտոյ է փորձէ թոյլատրել<sup>6</sup> է այդ հրամանը, կամ թէ հաւատարիմ. արդեօք և եթէ այդ հրա- մանը հակումէ դէպի վնասը՝ եկեղեցու և հոգու փրո- կութեան համար, նա պիտոյ է նմա ընդդիմագարձ լինի: Այդպէս, Ժողովուրդը պարսպան է չընդունել վնասը եպիսկոպոսներին. որովհետև «խողերի երամախ մերայ» անգամ չեն դնում «ուպիտան հովիւ:» Թէմի առաջ- նորդը պարտաւորուած է պաշտպանել իւր հօտը կող- մնական իշխանութիւնների հարստահարութիւններից, ստիպել այնպէս ներգործելու և ծխատէր քահանա- ներին: Բերանացի խոստովանութիւն հարկաւոր չէ հո- գին փրկելու համար-ապացուցութիւն այդ բանի կա- րող են լինել փոքրիկ մանուկները, ծննդից խուլեր և համրերը, անապատական բնակիչները, մեղքերը քա- ւումեն միայն զղջումը և սրտի խոստովանութիւնը:»

Նշանաւոր է նոյնպէս գրումսը «Քրիստոսի արիւ- նի» վերայ, որանում «յարձակվումէ նա եկեղեցական-

ների յանցաւոր խարէութեան զէմ՝ որոնք Հռովմում ցուցանումէին միս Յիսուս Քրիստոսի մարմնից, ուրիշ տեղերում ցուցանումէին Քրիստոսի արիւնը Աստուածածածոր կաթը: Պակասնշանաւոր չէ և նորա գրուածը «Նրկրաւոր իշխանութիւնները խլելու մասին հոգեորակաւորութիւնից»:

Եթէ Հուսի Լաթինական գրուածները ներգործութիւն ունէին ուսումնական մարդերի վերայ, ապա միւս կողմից չեխական գրուածներով նա շատ հետեողներ ունեցաւ ժողովրդից: 1413 թվում Ն. Բ<sup>0</sup> Խոմբ<sup>0</sup> շինան եպիսկոպոսը իւր գրութեան մէջ զէպի Պրագայի սինոդը հարկաւոր էր համարում, որ Հուսին իւր բարեկամներով հանդերձ լինէր արգելուած քարոզաւորութիւնը չեխ լեզուով և որ բոլոր չեխական գրերը, որոնք նորա հեղինակութիւններ են, անհետանային:

Այն միջոցում, երբ Հուսը, գտանուելով աքսորանքում, տարածումէր իւր վարդապետութիւնը, կազմուեց վերջապէս կոստանցում ընդհանուր ժողով հոգեորակաւորութեան: Այդ ժողովում բոլոր կաթովք ժողովուրդների հոգեորակաւորութիւնը պիտոյ է խորհրդակցէր ոչ միայն եկեղեցական միութիւնը վերականգնելու և նորան ուղղելու համար ամենայն մասնով, այլ և վէճը վերջացնելու համար Վիկէպի և Հուսի վերաբերութիւնով: Եկեղեցական փոփոխութիւն մանաւանդ հաստատամիտ կերպով պահանջումէր Ֆրանսիական հոգեորակաւորութիւնը, չնայելով որ նա բոլորովն կա-

թովք էր: Այդ նպատակի համար փարիզեան համալսարանի ղեկաորը նկարագրեց եկեղեցու խիստ դառն և ախուր վիճակը. կէմբրիջեան արքեպիսկոպոսը, հենց միայն եկաւ կոնստանցի մէջ, խիոյն նոյնպէս հաստատութիւնով պահանջումէր լաւագոյն եկեղեցական փոփոխութիւն:

Այդ ժամանակ արեւմտեան Եւրոպայի մէջ գտանվումէին երեք պապեր. Բենեդիկտոս XIII, Գրիգորիոս XII և Յովհաննէս XXIII, նորանք բոլորն ընտրուած էին զանազան տեղերում, չէին ընդունում անիծումէին միմեանց: Ժողովը կոնստանցի մէջ պարտ էր վրձուել, նորանցից որի՞ն արդեօք պիտոյ էր համարել ճշմարիտ պապ և կամ նորանցը բոլորին զրկել այլ արժանաւորութիւնից: Յովհաննէս պապը զեռ ժողովն բացումից յառաջ եկաւ կոնստանցի մէջ և յառաջուց յոյս ունէր, որ գործը կվճռուի իւր օգտի համար, որովհետեւ ժողովում գտանուած հոգեորակաւորութեան մեծագոյն մասը էին նմա հաւատարիմ իտալական եպիսկոպոսներ: Բայց երբ սահմանուեցաւ, որ ձայները տրուած լինէին ոչ ներկայ գտանուող եպիսկոպոսների թուի համեմատ, այլ ժողովուրդների, այն և երբ Գրիգորիոս XII պապն ուղարկեց կոնստանցի մէջ իւր կարգինալին, ապա գործն ստացաւ բոլորովն ուրիշ կերպարանք և Յովհաննէսն ամենեւին կորցրեց իւր յոյսը: Ծննդին եկաւ ժողովն մէջ և Սիզիլի մունդ կայսրը: Նորա հետ միասին հոգեորակաւոր և

աշխարհական անձների թիւը չափազանց շատացաւ : Ասպետներ և թիկնապահ զօրքեր կարգով դասաւորեցան քաղաքից հեռի նորա շուրջը : Բացի Սիզիզմունդը և պապը, ժողովում գտանվումէին տասն և երկու կարգինալներ, 33 արքեպիսկոպոսներ, 150 եպիսկոպոսներ, միքանի հարիւր պրէլատներ և զոկտորներ, 4 կուրֆիստներ, 24 հերցոգներ և իշխաններ, 78 գրաֆներ և 676 բարոններ և աղնուականներ : Պիտոյ է աւելացնել զորա վերայ, որ այնժամանակ ոչ ոք, մինչև անգամ ամենից աննշան աղնուականը, չէր գրնում այլ տեղ առանց բազմաթիւ թիկնապահների : Բացի զորանից, այս ժողովում կային մեծ բազմութիւն պատգամաւորների ուղարկած զանազան քաղաքներից, իւրեանց առանձին օրէկքներ և կարգադրութիւններ ունեցող հասարակութիւններից [կորպորացիաներից], մենաստաններից, այնպէս որ բոլոր օտարականների թիւը, որոնք Աոնտանց էին եկած, անցանումէր 50,000 մարդերից աւելի :

Այսպէս Սիզիզմունդը մանաւանդ կամենումէր, որ ժողովը վճռի Հուսի և Հերոնիմոսի զործը. Վոյլաւի մահից զինի, նա պիտոյ է իրրև ժառանգութիւն ստանար Բոհեմիան և որովհետև հուստիտեան չեխերը Բոհեմիայի մէջ բոլորովին յաղթահարել էին տեղական նեմէցներին, ապա նա չէր կամենում այդ : Այդ պատճառով և ժողովը սահմանեց ամենից յարաջքնել հուստիտեան հարցը. Սիզիզմունդը առաջարկեց

Հուսին դալ ժողովը մէջ խաղաղեցուցանելու վէճը և արդարեցնելու Բոհեմիան ժողովի առաջև. ապահովութեան համար նա առաջարկեց նմա իւր պաշտպանութիւնը և իւր ընթացակիցները Հուսը վճռեց դնալ. բայց նախ յայտնուեց Պրազայի ազգային ժողովին. արքեպիսկոպոսը չհամարձակուեց մեղադրել նորան 'հերիտիկոսութեան մէջ և ասաց, որ ոչ թէ ինքն, այլ պապն է դանդաղում Հուսի վերայ : Հուսը յայտնեց այդ բանը կայսրին և ասումէր, թէ նա կրդնայ զէպի Աոնտանց, եթէ իւր զայուսօր և խօսակցութիւնները պատի հետ անվանագ կլինեն : Հուսը յանձն առաւ իւր հաշուով իւր ճանապարհորդութեան և զօրծի ծախսերը, և որովհետև նա սիրելէր ոչ միայն թաղուհուն, Բեթլեհեմեան մատուռիկողներին, բայց և բոլոր չեխ աղնուականութեան, ապա առատ կերպով օղնեցին նմա : Ընդհակառակն, Բոհեմիայի հոգևորականութիւնը հաւաքումէր վտղեր, որ Արժիտոմը իշխան կպիսկոպոսը կարողանար յաջողութիւնով զանդատիլ Հուսի վերայ և ջանալ ասլ դատապարտել նորան : Հուսը գնաց ժողովի մէջ, ունենալով իւրեան ուղղակից երեք խիտ նշանաւոր աղնուականները : Նորանց հետ նա գնաց մինչև Նիւրնբերգ : Այստեղից, նորանցից մին գնաց Սիզիզմունդի մօտ պաշտպանողական հրովարտակի համար, իսկ Հուսն ուղղը ճանապարհով գնաց զէպի Աոնտանց և հասաւ այնտեղ զեռ Նոյեմբերի 3-ը :

Քայց նոյեմբերի 28-ը արդէն, չնայելով պահպանողական հրովարտակի վերայ, Հուսին բանդարկեցին: Հուսին առաջնորդող չեխ ազնուականը կարգինայների ներկայութիւնով սաստիկ յանդիմանեց պապին և սպառնացաւ նմա բողոք չեխ ժողովուրդի բարկութիւնով: Պապը ներողութիւն ինդրեց և մեղադրեց կարգինայներին: Քայց շուտ գորանից յետ Հուսը տարուեցաւ քաղաքից դուրս, դոմինիկեան մենաստանի մէջ և այնտեղ ձգեցին մի մաւշ ու մթին բանդի մէջ, որ գտանվում էր մի առուածն փոսի մօտ: Միգիզմունդը և իւր եղբայր Վոյլաւը կերպարանվում էին, թէ նորանք սաստիկ վշտացած են չեխ մտածողի բանդարկութեան համար. Միգիզմունդը յաւելացնում էր, որ նա ինքն այժմ ոչինչ չէ կարող անել, որ Հուսը պապի ձեռքումն է: Պապը կազմեց քննողական կոմիտեայ (ժողով) և գտաւ Հուսի քարոզի մէջ հետեւած հերիտիկոսութիւնները. 1] որ եկեղեցական քահանայապետութիւնը և պապը չեն հետեւում քրիստոնէական վարդապետութեան, 2] որ քաւարանը-առասպել է, 3] որ քարոզատուութիւնը պիտոյ է լինի ազատ, 4] արեղայ ասպետական կարգերը կամ օրդէնները-միւսապար են. 5] եկեղեցիներ և մենաստաններ հաստատուելը մի աստիճանի ծառայութեան չէ կարգաւ. 6] խմբովին եկեղեցական երաժշտութիւնը [Хоровое пѣніе] և պասպահներ չեն կազմում աստուածապաշտութիւն, 7] որ տասանորդը եկեղեցու համար մի լոկ ընծայաբերու-

թիւն է և ոչ պարտականութիւն, և այլն:

Այդ ժամանակ Հուսի հետ դոմինիկեան արեղաները բաւական չափաւոր էին վարվում. նա կարողանում էր ոչ միայն ընդունել այցելուներ, բայց և ուղարկել դէպի Բոհեմիայ նամակներ: Արժանական շարժողութիւնը Բոհեմիայի մէջ շարունակվում էր. Հուսի հետեւողներից մին քարոզում էր, որ հարողութիւնը պարտ է լինել երկու տեսակով, այն է՝ արխևի և մարմնի: Այդ բանը բաժանում էր ձգեց Հուսի հետեւողների մէջ, մինչև որ Հուսը բանդից չգրեց նոյնը, հարողութիւնը երկու տեսակով: Այդ միջոցում Հուսի դորժը երկար կանգ առաւ այն վիճաբանութիւնից, որ ծագեց Յովհաննէս XXIII-ի և ժողովի մէջ: Այդ վիճաբանութիւնը մինչև այն աստիճանի հասաւ, որ պապը, պրէլատներից սպառնալիք ստացած, աւելի լաւ համարեց զազունի փախել և թողնել ժողովը ձակատազրի կամքին . . . Նորա ծառաները նոյնպէս փախան [20-24-ը Մարտի] և յանձնեցին կայսրին Հուսի բանալիները: Եւ թէ Միգիզմունդը կամենար, հէնց նա կարող էր խեղճն աղատել Հուսին. նա ևս, ընդհակառակն, տուեց Արժանական եպիսկոպոսին, որ հրամայեց փոխադրել նորան իւր բերդի մէջ և շրթայակապ անել:

Այդ միջոցում Հերոնիմոսը, սերից դէպի Հուսը, գնաց դէպի Արժանական, չնայելով որ Հուսը երդումով մաղթում էր նմա նամակով չթողուլ Բոհեմիան:

Հերոնիմոսը եկաւ Ապրիլի 4-ը Կոնստանդին մէջ, բայց  
 այնպէս որ նորան չկարողացան ճանաչել: Միայն թէ  
 յետոյ նա ինքն յայտնեց, որ կ'այտնուի կարդինալ-  
 ների առաջև, եթէ ժողովը կտայ նմա պաշտպանո-  
 ղական թուղթ: Եւ արդարև, Ապրիլի 17-ը նոյն իսկ  
 ժողովը սուեց նմա հրովարտակ, մի խորամանկ իմա-  
 ստով, այն էր՝ թէ ժողովը կպաշտպանի նորան ընդ-  
 դէմ բռնութեան, այլ ոչ ընդդէմ իրաւունքի: Իսկ հե-  
 տեա՛ծ օրում ժողովը հրապարակով հրաւիրեց նո-  
 րան դէպի դատաստան, այնպէս որ Հերոնիմոսը աւե-  
 լին յարմար դատեց չերևել, այլ շտապել դառնալ  
 դէպի Բոհեմիայ: Բայց պիտի յղբարտուի ոչ հեռի  
 իւր հայրենիքի սահմանից նորան ճանաչեց մի քա-  
 հանայ (Ապր. 25.), ըմբռնուեցաւ, ներկայացուեցաւ  
 պիտի յղբարտին, նորանից կապուեցաւ ծանր շղթանե-  
 րով և յանձնուեց ժողովին Մայիսի 23-ը: Այդ բան-  
 դարկութիւնը եղաւ, չնայելով զօրեղ ազդային շարժո-  
 ղութեան վերայ բոլոր Բոհեմիայի և Մորաւիայի մէջ, չը-  
 նայելով անուախանների ներկայութիւններին, որոնք ժո-  
 ղովումէն Քրազայի և Բրիւնի մէջ, և չեխ և լեհ ազ-  
 նուականների թախանձողական խնդիրներին վերայ, որոնք  
 գտանվումէին Կոնստանդում: Հուսի և Հերոնիմոսի  
 ճակատադիրը վճռած էր արդէն եպիսկոպոսների մրո-  
 քում: այդոր համար դատաքննութեան բոլոր մնա-  
 ցած մասը միայն արտաքին ձև էր: Երբ վերջապէս  
 Հուսը կոչուեց հարցափորձութեան համար, հայհոյու-

թիւններն այնպէս զօրեղ էին, որ միւս հարցափոր-  
 ձութիւնից յառաջ Սիդիլիմունդը պարտ էր ամենա-  
 խիստ կերպով արգելել նորանց: Վերջապէս քննողա-  
 կան կոմմիսեան (մի կարդինալ և 60 դոկտորներ) վրձ-  
 ւեցին, որ Հուսը խաղաղութիւնով զղջար իւր մո-  
 լորութիւններն վերայ, որ նա երրորդէր միւսանդամ  
 չպաշտպանել ևս նորա հեղինակութեան մէջ դատա-  
 պարտուած տեղերը և որ պարտաւորուէր քարոզել և  
 պաշտպանել ամենեւին հակառակն: Վերջապէս կազ-  
 մեցին հրաժարման նոյն իսկ ձևը: Բայց այդ վճիռը  
 Հուսի համար կարգալուց յառաջ, կայսր Սիդիլիմունդը  
 զաղնտի խորհրդակցութիւն ունեցաւ եպիսկոպոսների  
 հետ: Կայսրն ասաց նորանց միւս բաների թիւում.  
 «Շատ յօգուածներից, որոնցը այժմ խոստովանուեց  
 Հուսը, կարելի է իւրաքանչիւրով դատապարտել Հու-  
 սին, այդոր համար դուք կարողէք, եթէ նա չկամե-  
 նայ հրաժարուել, այրել նորան կամ վարուել նորա  
 հետ միայլ կերպով ձեր օրէնքների համաձայն: Մի-  
 այն թէ, եթէ նա հրաժարուի մինչև անդամ, մի  
 հաւատաք նմա ինչպէս ես, որովհետև, եթէ դառնայ  
 դէպի Բոհեմիայ, ապա ևս աւելի չարիք կպատճնուի,  
 քան յառաջ էր պատճառում:» Կայսրը վերջացրեց  
 իւր խօսակցութիւնը այս խօսքերով. «Այո՛, պիտոյ է  
 դորձը շուտով վերջացնել և նորա աշակերտի հետ  
 . . . բայց դորանում մի առանձին դժուարութիւն  
 չկայ. արժէ միայն ուսուցնել վարձատրել ծառայու-

Թիւնների համեմատ, իսկ աշակերտի հետ հաշիւը կարելի է վերջացնել և քի օրում:» Այդ խօսքերը լսեցին երկու նշանաւոր չեխեր և շուտով յայսինի եղան բոլոր Բոհեմիայի մէջ:

Հուսի օգոտի համար հասու ժողովին Յունիսի 12-դ օրը մի նամակ, որի վերայ դրած էին երկու հարիւր յիսուն չեխ և մօրաւական ազնուականների կնիքները: Ժողովը արդելելով Յունիսի 15-դ օրը Բոհեմիայի մէջ մայրաճ հաղորդութիւնը երկու տեսակով, գործադրեց ամէնը, որ Հուսն ստորագրէր հրաժարման թերթի տակ: Հուսը չէր ևս մտածում գորա մասին: Այդպէս, իւր զրքերը դատասպարտելու առիթով, որ այրուին, նա գրեց իւր բարեկամներին Բոհեմիայի մէջ: «Թանկագին բարեկամներ, մի խռովէք նորանց վճռից, որոնք դատասպարտել են իմ գրերն այրելու. մտաբերեցէք, որ իւրայէլացիներն այրեցին Երեմիայմարգարէի գրերը, չվիսկչելով այն օրհասից, որ նա նորանց դուշակեց» և այլն: Եւ Յուլիսի 1-ը նա գրաւորապէս հրաժարուեց ամենատեսակ հրաժարումից կամ հերքումից: Յուլիսի 5-ը Թոլլատրեցին նորա մօտ նորան առաջնորդող չեխ ազնուականներից մինին: Նա պաղատումէր Հուսին հեռացնել իւր զլեից վտանգը, բայց Հուսը մնաց հաստատամիտ: Ապա հետեւած իսկ օրում հոգեւորականութիւնը կրօնական հանդիսակատարութիւնով յանձնեց նորան աշխարհականներին. նախ և յառաջ Հուսի զլեի վերայ դրին բամբակեայ դիշերա-

զլեարկ, որի վերայ նկարած էր մի սատանայ, որ պատառտում և շփոթումէր նորա հոգին. ապա Մայիցիցի աբբեպիսկոպոսը և վեց այլ եպիսկոպոսներ յանձնեցին նորան աշխարհական իշխանութեան հետեւած բառերով. «եկիլեցին այժմ ոչինչ չեկարող քեզ տալ, նա տալիս է քոյ մարմինը աշխարհականների ձեռների մէջ, իսկ հոգիդ-սատանային»: Սիդիզմուսը կատարեց հոգեւորականութեան վճռակատարի դերը: Հուսը և նորա հետ միասին նորա զրքերն այրուեցան 1415 թուականի Յուլիսի 6-ին: Նա տարաւ տանջանքներն այնպիսի տոկունութիւնով, այնպիսի հաւատարմութիւնով իւր օրհասին, հանդարտութիւնով և վրձնողականութիւնով, որոնցը ցոյց տուեց նա մինչեւ վերջին բուպէն, որ նորանք խայտառակեցին իւրեան հաւածողներին և, ինչպէս ասումէ մի պատմաբան, վրաս պատճառեցին եկեղեցուն որը կամենումէին դորանով աղատել, այն աւելի քան նորանից յառաջ եղած հերտիկոսութիւնները:

Այն միջոցում Հերտիմար նստածք Բոսի մեջ և այնպիսի ծանր շղթաներով, որ հազիւ կէ չէր Բաստում նորանից: Բանդապետները նշմարեցին այդ և վճռեցին վարուել նորա հետ փոքր ինչ չափաւոր, չնայելով որ ժողովում զրգուում էին աւելի Հերտիմարի, քան Հուսի դէմ: Շատ փարիզեան, կէօլնեան և հէյդէլբերգեան աստուածաբաններ ճանաչումէին նորան անձնով [նա ներկայ էր լինում նորանց դասա-

խօսութիւններին] և, տեսանելով նորան, աղաղակում էին. «այդ մարդը հակամտ է դէպ'ի ամենատեսակ հերիտիկոսութիւնս» Իւր կեանքն ազատելու համար Հերոնիմոսն ապաշխարեց: Բայց նորա թշնամիներն անբաւական էին դորանով և սխեցին նորա դէմ մի նոր պրոցէսս [գատ]: Այդ ընթացքն այնքան ազտեղն էր, որ Հերոնիմոսը ոչինչ չգրեց և այդոր համար դատաւորները պարտաւոր էին որոնել զանազան վկաներ նորա խօսքերի: Հերոնիմոսը բոլոր ժողովի առաջ և ապացուցեց բոլոր, իւր վերայ բարձած յանցանքների անարդարութիւնը և խօսումէր այնպիսի զարմանալի զեզեցիկ խօսութիւնով, ուսումնականութիւնով և հաստատութիւնով, որ նորա թշնամիներից շատերն անգամ գէպ'ի կարեկցութիւն էին շարժուած: Հերոնիմոսին երկրորդ անգամ անաջարկեցին հրաժարիլ և խնդրել թողութիւն մղորութիւնների համար: Այդ անգամ Հերոնիմոսը յայտնեց, որ Հուսին համարումէնա բարեգործ, աշնուամիտ և սուրբ մարդ, որ ոչինչ կերպով արժանի չէ այն պատժին, որին նա ենթարկուեց, և թէ նա ինքն իսկ պատրաստ է կրել ամենաանասակ մարտիրոսական մահ: Նորան մի քանի օր ժամանակ տուին՝ մտածելուց զկնի վտխել իւր դիտաւորութիւնը, և մայիսի 20-ը նա պատժուած էր: Մահից յառաջ վերադարձաւ կրկին նորա երիտասարդական ուրախարտութիւնը, նա ժպտալով նայումէր մի կրօնասէր զեզջկուհու վերայ, որ դէպ'ի հերիտիկոսութիւնն ու-

նեցած ատելութիւնից քարշ էր տալիս իւր վայտերը նորա դատապարտութեան համար: Հերոնիմոսը մեռաւ աղօթելով և բոցի մէջ երգումէր բարեպաշտական երգեր:

Բայց սակայն ճշմարտութեան և բարեգործութեան զօրութիւնն այնպիսի է, որ հենց Անտատանցեան ժողովում պապի ատենադպիրը [Բրայչլոլ'ինի] և ապագայ պապը, Պիոս II-ը գտանուեցան դատաւորների մէջ, տեսան բոլոր գործի անարդարութիւնը, և նկարագրեցին վերջում երկու նահատակների հերոսական մահը: Հուսի մահից յետ-ատումէ Ղիթերը-Օշաա տեղեր զերմանական երկիրներում միշտ համբաւ կար նորա վերայ և հեռ. զեռեռ. զբնիւ-ձեր:» Հուսի վարդապետութիւնը ներգործութիւն ունեցաւ Ղիթերի վերայ և յառաջ բերեց Գերմանիայի մէջ յեղախօխութիւնս Ղիթերն ատումէ նորա վերայ միւս զբքի մէջ:» Հուսն այժմ, ատուածային շարհով, յարութիւն է առած մեռածներից և աւելի զօրեղ ասնջումէ իւր սպանողներին՝ պապին և նորա գործակիցներին, քան տանջումէր նորանցը կենդանութեան միջոցում:»

Իսկ չեխերը, Հուսի դատապարտութիւնից յետ, նոյն ժամայն յախտեանս բաժանուեցին պապից և կայսրից: Բայց, պաշտպանելով հաւատի ազատութիւնը, չեխերն ստիպուած էին գրեթէ բոլոր այն ժամանակեան Եւրոպայի խաչակրական արշաւանքներին ընդդէմ կալ-

և, հասկանալի է, որ նորանք ճշուած էին գերմանացիներից: Սակայն Հուսի իդէան [նորա, հաւատի վերայ ունեցած ամենաբարձր գաղափարը], որին ճշուած էին Գերմանացիները Բոհեմիայի մէջ, յողթական հանդիսացաւ նոյն իսկ Գերմանիայի մէջ, յառաջ բերեց Վիթերին և գերմանական բողոքականութիւնը [պրոտեստանտականութիւնը]:

4.

Կ Ո Ղ Ո Մ Բ Ո Ս:

(1436—1506)

Քրիստոփոր Կոլումբոսը ծնուեց Գենուայի մէջ. նորա ծնողները թէպէտ և պատուաւոր ու յարգելի, բայց խեղճ էին: Նորանք ունէին չորս տղայ. Քրիստոփորն էր անդրանիկը. նորան թէ և կրթեցին սահմանափակ [չափաւոր], բայց զգուշաւոր կերպով, որքան թոյլատրուէր նորա ծնողների չքաւորութիւնը: Գեոտղայութեան մէջ ուսաւ կարգալ ու զրել, և զբրուէր այնպէս լաւ, որ կարողանուէր ապրել արտագրութիւններով: Ապա նորան ուսուցին մաթեմատիկայ, գծագրութիւն և նկարչութիւն, նորանից յետ, նորան ուղարկեցին դէպի Պաւեայ, համալսարան, որտեղ նա ուսաւ քերականութիւն և լատին լեզու: Նա պարապուէր մանաւանդ այնպիսի գիտութիւն-

ներով, որոնք արող էին պիտանի լինել ծովային կեանքի մէջ. ուսաւ նոյնպէս երկրաչափութիւն, աշխարհագրութիւն աստեղաբաշխութիւն և նաւագնացութիւն: Ծաղիկ սարիների մէջ նա ցուցանուէր չափազանց դէպի սէր ծով և աշխարհագրութիւնը, այդոր համար և ջերմ կերպով պարապուէր բոլոր գիտութիւններով, որոնք վերաբերումէին նմա: Նորա չափազանց սրը դէպի ծովը հասկանալի է. Գենուան ծովային քաղաք էր. նորա սերը դէպի աշխարհագրութիւնը նոյնպէս. այն ժամանակ դեռ նոր էին յայտնի հին աշխարհագիրներին. Պլինիոսի, Ստրաբոնի, Պոմպոնիոս Մէլայի գրուածները, միայն թէ՛ աշխարհագրական գիւտեր լինումէին Ափրիկայի մէջ:

Կոլումբոսն ստիպուեց շատ վաղ դուրս գալ համալսարանից. այդպիսի կերպով նա դուրս բերեց այնտեղից միայն սկզբնական տեղեկութիւններ. ապա արդէն քիչ-քիչ, անձնական ձգնաթափութիւններով, նա վաստակեց խորին տեղեկութիւններ իւր զործի մէջ. դորա համար, նա պէտք է նուիրէր ընդհատաբար ժամանակը, որը խլոււէր իւր սովորական զբաղումներից: Արդէն 14 տարեկան, նա մտաւ ծովային ծառայութեան մէջ: Այն ժամանակեան ծովայի կեանքը էր յանդուգն ձեռնարկութիւններ և շատ արկածախնդիր ճանապարհորդութիւններ: Հասարակ վաճառականական մարդերի ճանապարհորդութիւնը [Էքսպէդիցիան] նմանվուէր այն ժամանակ զննուորա-

կան էքսպէդիցիայի: Այդ զանազաններպ արկածա-  
 խնդիր երիտասարդական կեանքի մէջ, նա ձեռք բե-  
 րեց այն գործնական զիտութիւնը, այն հնարագիտու-  
 թիւնը, այն հաստատուն վճռորակմութիւնը, այն մըշ-  
 տական իշխեցողութիւնը իւր վերայ, որոնք փառաւոր կա-  
 ցուցին նորան ապագայում: Մի անգամ նորան ուղարկե-  
 ցին զէպ'ի Տունիս. գալով մինչև Սան-Պեդրոյի զգու-կողմը,  
 որ գտանվում էր Սարդինիայ կղզու մօտ, նախնայաւ որ  
 այն տեղ գտանվում էր թշնամիների մի քանի նաւեր:  
 Այդ այնպէս վախեցրեց նորանաւորներին, որ նորանք  
 չէին կամենում շարունակել ճանապարհորդութիւնը,  
 և պահանջում էին յետ դառնալ զէպ'ի Մայսիլիայ  
 ուրիշ նաւի և զօրքերի համար: Կոլումբոսը չկարողա-  
 ցաւ դադարեցնել նորանց, ցուցանում էր թէ գիջանում է  
 նորանց, իսկ ինքն փոխեց կողմնացուցի ուղղութիւնը  
 և արձակեց առագաստները: Այդ եղաւ զիշերը, միւս  
 օրն առաւօտեան նորանք հասան Տունիս, այն ինչ  
 բոլորը խիստ համոզուած էին, որ նաւարկում են յետ  
 դէպ'ի Մարտիլիայ:

1470 թուականում, Կոլումբոսը հասաւ Ղիսարոն.  
 այս քաղաքը կենտրոն էր դարձած զիւտերի Ափրիկայի  
 մէջ, որի հետեանք էր այն՝ որ նորա վերայ ուշա-  
 դրութիւն դարձրին այն ժամանակեան բոլոր մարդերը:  
 Կոլումբոսը գտանվում էր այն ժամանակ ծաղիկ հասա-  
 կում: Խօսում էր նա հեշտութիւնով և գեղեցիկ նո-  
 րա քաղցրամտութիւնը և բարութիւնը կոչում էին նո-

րա մօտ բոլոր ծանօթներին: Ղիսարոնում նա պա-  
 կուեց ծովազնացներից մինի օրիորդի հետ. բայց ա-  
 մենակն առանց օժիտի [բրթամի]: Բայց սակայն զո-  
 քանչը տեսանելով ինչպիսի հետաքրքրութիւնով նա  
 լսում է բոլորը, ինչ վերաբերում էր ովկիանոսին, պատ-  
 մում էր նմա բոլորը, ինչ որ միայն գիտէր իւր հան-  
 գուցած մարդի ճանապարհորդութիւններից և տակն  
 էր նմա նորա թղթերը, քարտեզները և օրագիրները:  
 Այս մի գանձ էր Կոլումբոսի - համար. նա զրուեցաւ  
 որպէս պորտուգալական հպատակ և առաջնորդում էր  
 երբեմն ծովային էքսպէդիցիաներ զէպ'ի Գուինեայ  
 [Ափրիկայի մէջ]: Տան մէջ իւր ընտանիքի գոյութեան  
 համար նա պարապում էր աշխարհագրական քարտեզ  
 պատրաստելով: Նորա միջոցներն էին խիստ նեղ ու  
 սահմանափակ. բայց շնայելով զորա վերայ, նա ու-  
 ղարկում էր իւր չափաւոր արդիւքների մի մասը իւր  
 ծերունի հօր՝ Գէնուայի մէջ և իւր երիտասարդ եղ-  
 բայրների կրթութեան համար:

Այդ ժամանակ խիստ հազուադիւտ էին անձներ,  
 որոնք կարողանային ճիշտ և ուղեղ աշխարհագրա-  
 կան քարտեզներ շինել: Այդ պատճառով Կոլումբո-  
 սեան քարտեզների ճշտութիւնը անպակաղ դարձրեց  
 նորա վերայ ուսումնականների ուշադրութիւնը և  
 հուշակաւոր կացուցեց նորան: Համեմատելով քարտեզ-  
 ները, նկատելով նոր զիւտերը, Կոլումբոսն ապշեցաւ  
 տեսանելով որ երկրի որպիսի մեծ մասը մնում էր գե-

ևս անցայտ: Այդ որ համար նա շատ անգամ մրտաճուճէր նորան գտանելու միջոցների վերայ: Մանօթները, որոնցն ստացած էր ամենաութիւնով, պահպանում և զարգացնումէին նորա մէջ նմանապիսի մտաճութիւններ: Մի քանի ժամանակ նա մինչև անգամ ապրումէր նորագիւտ Պորտոյ-Սանտոյ կղզու վերայ, որտեղ նորա կինն ստացել էր մի քանի զոյքի ժառանգութիւն և ծնուել էր նորա Տեղոյ որդին: Այդպիսի կերպով քիչ-քիչ կոլումբոսի մէջ ծնուեց և հասաւ միտքը՝ գտանել նոր աշխարհը, այնքան ևս աւելի, որ նա համարումէր երկրին երկրաջրային գունդ, որը կարելի է անցանել արեւմուտքից դէպ'ի արեւելք: Բացի գորանից նորան գորութիւն էին տալիս Ստրաբոնի խօսքերը, թէ ովկիանոսը շրջապատումէ երկրին: Բացի գորանից, այդ բանը հաստատումէին զանազան պատմութիւններ. օրինակ, մի նաւազնի պատմութիւն, որ նաւումէր բաւական հեռու ծովի մէջ դէպ'ի արեւմուտք Ս. վենցէնտ հրուանդանից և որ գտել էր ջուրի մէջ մի փայտի կոտոր փորագրական արուեստով որ 'ի հարկէ շինած էր ոչ երկաթեայ գործիքներից և որովհետև այս կոտորը բերել էր արեւմտեան քամին, ապա նաւազնը եղբարիակեց, որ նա կարող էր եկած լինել միայն մի որ և իցէ անյայտ արեւմտեան կողմից: Այդպիսի մի դէպք պատմումէր և կոլումբոսի կնոջ եղբայրը:

Ազգվելով իւր նախազիծը, կոլումբոսն արդէն խօ-

տումէր նորա վերայ բոլորովն վստահ, իբր թէ նա տեսել էր իւր յատուկ աչքերով կարծիքական երկիրը: Այ մի ընդդիմադարձութիւն չկարողացաւ շնչել նորան իւր նախազիծի խիստ և մշտական հետախուզութիւնից: Նորա եռանդը երևումէր նորա խօսակցութիւնից և արտաքին կերպարանքից, մինչև անգամ իւր յարաբերութիւնների մէջ թաղաւորների հետ, նա վարվումէր ինչպէս հաւասարը հաւասարի հետ: Այդ ժամանակ աստեղարաշխութիւն գործադրելը ճովազնացութեան անսովոր տպաւորութիւն գործեց ճովազնացների վերայ: Նա ազատեց նորանցը դանդաղ ճովազնացութիւնից, գտանելով ճանապարհ ավերով և աստղերի միջնորդութիւնով և տուեց կարողութիւն, արեղակի բարձրութեան միջնորդութիւնով, ճիշդ իմանալու այն տեղը, որտեղ գտանվումէ նաւը:

Բայց այն ժամանակ չէին հասկանում երկրի ձգողականութեան օրէնքները, ոչ ոք չէր հասկանում, արդեօք դնդաձև է երկիրը, ունի ովկիանոսը մի որ և իցէ սահման: Եթէ մինչև անգամ երկիրը գնդաձև է, ապա միւս կողմի վերայ անցանողը պետք է զլորուէր երկրից, եթէ երկիրը չէ ձգում. դէպ'ի ինքն: Հասարակութիւնը գտանվումէր տղիտութեան մէջ. այնպէս էին հասկանում թէ հասարակածը շրջապատած է տաք բևեռով, որի վերայ արեղակն արձակումէր իւր ճառագայթները ուղղահայեայ և այնպիսի տաքութիւնով, որին անկարելի է սանել: Մտախապաշտ ճո-

վազնացնեքը երևակայումէին, որ Բայազոր հրուանդանը էր ամենահեռի հրուանդանը, որտեղ կարող է հասանել ծովագնացը առանց վտանգների: Իսկ ով նորան անցաւ, նա ամենեկին յետ չէ դառնալու: Մտածող մարդերը կոլումբոսի նախագիծը համարումէին ունայն և ցնորամիտ:

Միայն նա դարձաւ դէպ'ի Պրոտուգալիայի թագաւորը, առաջարկելով նմա իւր ծառայութիւնները Այդ ժամանակ եռանդնոտութիւնը դէպ'ի զիւտերը արդէն հանգաւ. թագաւորը մերժեց նորան այնքան աւելի, որ կոլումբոսը խնդրեց իւր համար նոյն իսկ արածնութիւնները, որոնք ստացել էին և միւս զիւտ զտանողները: Բայց, չնայելով մերժողութեան վերայ, թագաւորը նորա գործը յանձնեց քննելու մասնաւոր ժողովին: Այս ուսումնական ժողովը երկու տիեզերագիրներից և մի թագաւորական Կոնսուլիէի, որ եպիսկոպոս էր, զտաւ կոլումբոսի նախագիծը անիրազոր՝ ծելի [անլինելի]:

Բայց թագաւորն այնուամենայնով յօժար էր այդ առաջարկութեան և կոլումբոսից դադանի ուղարկեց նաւեր այն ուղղութիւնով, որը ցուցած էր կոլումբոսը: Մովը փոթորկալից էր, ծովապեաները չունէին քաջութիւն և, տեսանելով անսահման ուկիանոսը, յետ դարձան, ասելով որ կոլումբոսի նախագիծը ցնորամիտ և անխորհուրդ է: կոլումբոսն իմացաւ այդ. այդպիսի անարդ հնարքը զայրացրեց նորան, և նա 1484

թուականի վերջում, փախաւ Պորտուգալիայից երկիւղեց դադանապէս, որ թագաւորը չըմբռնէր նորան: Նա վերցրեց իւր հետ և որդուն, նորա կինն արդէն մեռած էր: Վերջում պորտուգալական թագաւորը հրաւիրումէր կոլումբոսին, բայց նա հրաժարուեց:

Այդ միջոցում այդ հայթհայթանքն ու աշխատութիւնները ձգեցին նորան կանոնաւոր պարտքերի տակ: Նա առաջարկեց իւր ծառայութիւնները Գէնուային, բայց նա զբաղուած էր պատերազմով: կոլումբոսն ուղևորուեց դէպ'ի Խալանիայ: Նա մտաւ փոքրիկ ծովային նաւահանգստի մէջ, որ զտանվումէր Անդալուզիայում: Անցանելով մի մենաստանի մտով, կոլումբոսը խնդրեց դռնապանից հաց և ջուր իւր երեխայի համար: Նրբ տուին նմա այն, մենաստանի վանահայրը հիացաւ օտարական մարդի զգաստ դէմքի վերայ, խօսակցեց նորա հետ և զարմացաւ նորա առաջարկութեան վստահութեան վերայ: Վանահայրն ինքն այնքան հեռատես մարդ չէր, և խիղջն մարդ ուղարկեց իւր բարեկամի յետևից, որ բժիշկ էր Պալոսի մէջ: Խօսելով կոլումբոսի հետ, բժիշկը նոյնպէս ևս զարմացած էր օտարականի հաստատ բնաւորութեան և խօսքերի վերայ: Համոզուելով որ նորա առաջարկութիւնը մեծամեծ օրուաներ բերելու է կողմին, նա առաջարկեց կոլումբոսին հայթհայթել և ստանալ քաղցր ընդունելութիւն դրան առաջը:

Գարուն ժամանակ կոլումբոսը եկաւ թագաւորա-

կան դրան մօտ. բայց աղքատութեան պատճառով նա պիտոյ է երևէր համեստ շորով. պալատականների աչքերի մէջ այս խիստ ընդդիմաբանու մէր նորա նախագիծների մեծութեան: Աւ որովհետեւ, նա էր օտարական և փոխանակ որ-և-է յանձնարարութեան, ունէր միայն նամակ արեղայից, նորանք չէին հաւատում նորա խօսքերին և մինչև անգամ չէին լսում նմա . . . Նոյն իսկ դուռը դնումէր այն ժամանակ մի քաղաքից դէպի միւս նայելով հարկաւորութեանը: Այդ ժամանակ պատերազմ պատահեց մաւրների հետ: Քաղաքու հոգևորականք, որի համար կողմնորոշ բերեց նամակ, յօժարամիտ չգտնուեց նորա գործին: Այդպիսի կերպով կողմնորոշ ստիպուեց մարանչիլ թեթեամիտ և ամբարտաւան մարդերի ծաղրածութիւնների հետ, որ մի բաւական դժուար գործ էր համեստ մարդի համար: Բայց քիչ-քիչ այն խորին համոզումը, որ արտախայրումէր նորա բոլոր խօսքերի մէջ, վաստակեց նորա համար համեստ բարեկամներ: «Այս նոր բարեկամները ներկայացրին նորան Տոլեդեան ուր Եպիսկոպոսն, որ միշտ և ամենայն տեղ ուղեկից էր լինում թագաւորին և թագուհուն, և որին անուանումէին երրորդ իսպանական թագաւոր:» Նա ուսուցին անգամ համարեց կողմնորոշ նախագիծը Էպիսկոպոսն, բայց վերջապէս նորան համոզեցին որ նորա մէջ չկայ ոչինչ հերիտիկոսական, որ ընդհակառակն, խիստ օգտաւէտ կլինի «դտանել դեռ ևս ստեղծագործութեան գաղտնի

հրաշարէքները:» Այն ժամանակ կողմնորոշին ներկայացրին իսպանական թագաւորին: Թագաւորը սաստիկ ջանկացաւ փայլեցնել և զերազանցել փառքը սիրտուզալական:

Նա յանձնեց գործը ուսումնականներին՝ քննելու նորան: Ուսումնականները գտան, որ այն ժամանակից, երբ այնքան խիստ շատ վիլիստոլաներ և ուսումնական աշխարհադիրներ ուսումնասիրել են երկրի ձևը և այնքան յաջողակ ծովագնացներ նաւել են բոլոր ուղղութիւններով շատ հազար տարիների ընթացքում, -մի մեծ գոռողութիւն էր մասնաւոր մարդի համար, կարծել որ ինքեան պահուած մնացել է կատարելու այնքան մեծ զիւս :

Միւսները մինչև անգամ մեղադրումէին նորան հերիտիկոսութեան մէջ նորա համար, որ նա երկրին ընդունումէր գունդ:

Մի քանիսները թէպէտ և ընդունումէին, բայց անկարելի էին համարում անցանել այնտեղ անտանելի տաքութեան տատճառով. բայցի գորանից երկրի գնդաձև լինելը երեւակայումէին նորանք սարի տեսակ, որի վերայ անկարելի է բարձրանալ, որքան և յաջող լինէր քամին: Ապա կարծումէին, որ երկրի միւս մասը կազմուած է լ'արերինթոսից կամ անասհման ովկիանոսից:

Բայց կողմնորոշ ունէր լայնատարած զիտութիւն իւր գործի մէջ և մեծ տպաւորութիւն գործեց իւր ուսումնական դասաւորների վերայ, նա ջուջանումէր

նորանց, որ նոյն իսկ վաղեմի ուսումնական զիանահանները կարծումէին, որ երկու կիսադունդներում մարդեր են բնակուում, թէպէտ և երևակայումէին, թէ տաք բեւուր խանդարումէ որ և է տեսակ հաղորդակցութիւն, ապա յաւելացրեց, որ նա եղած էր Գուինեայի վերայ, համարիր հասարակած դժոււմ և խնացաւ, որ ոչ թէ միայն կարելի է անցանել այս տաք կողմը, բայց թէ նորանում բնակվումն մարդեր և առատաւորվումէ պտուղներով և արօտատեսիներով:

Ուսումնական խորհուրդներն ընդհատուեցին, երբ պալատը եկաւ Արլումի մէջ զարուն ժամանակ 1487 թիւում: Արլումբոսը յոյս ուներ, որ իւր նախագիծը կրնդունեն և այս յուսով կորցրեց մի քանի տարիներ ազատ ժամանակ զրան առաջև կարծես թէ կամենումէին պարսպել նորա զործով, բայց մի բողոքից յետ փշուակը արդէն նոր քամի և Արլումբոսին մոռանումէին . . . . Այս բոլոր ժամանակում Արլումբոսը ստիպուեց շատ շարչարուել ծաղրածութիւններէց եւ զրկանքներէց: Տղէտ եւ թեթեւամիտ մարդերը անուանումէին նորան մտացածին, արկածախնդիր, երազատես եւ այլն: Մինչեւ անգամ երկխախանները, երբ նա անցանումէր նորանց մօտով, նեղացնումէին նորան, տանելով ձեռքը դէպի ճակատը, յայտնելու համար, թէ նա կորուսել է խելքը:

Արլումբոսը, շատ սպասելուց յետոյ, նա ստացաւ վերջնական մերժումն և ուղեղ այն բողոքին գուր

կզնար խապանիայից, եթէ նորան չկապէր այնտեղ սերը դէպի մի կին, որից նա ունեցաւ երկրորդ որդին: Նա յոյս ուներ քարշելու մի որ-և-է հարուստ անձն դէպի իւր առաջարկութիւնը: Ծանօթացաւ զանազան հերցոզների և գրափների հետ, ունեցաւ շատ դաշնակցական խօսակցութիւններ, բայց այդ բոլորն առանց յաջողութեան:

Յանկարծ նա ստանումէ նամակ Ֆրանսիական թագաւորից, այնտեղ յուսադրումէր նորան և կոչումէր դէպի Փարիզ: Արլումբոսը նոյն բողոքում վճռեց դնալու. բայց զեռ կամենումէր առնուլ իւր հետ մեծ որդուն ևս, որին թողած էր անդալուզեան վանահօր մօտ: Երբ արեղան իմացաւ նորա անյաջող հայթհայթանքը նա բոլորովին շարժուեց դէպի գութ. խնդրեց նորան չգնալ դէպի Ֆրանսիայ և մի փոքր ինչ սպասել, իսկ ինքն յանձնեց նորան մի ծանօթի նորից հայթհայթելու իտալական գրան հաճութիւնը:

Իբրև պատասխան դմա, նա ստացաւ նամակ սպասելու նոր համբաւների: Այդ ժամանակ Արլումբոսը կրկին ուղևորուեց դէպի գուրը [այդ եղաւ Գրենսպան պաշարելու ժամանակ, որ Մաւրները վերջին քաղաքն էր խապանիայի մէջ] և ընդունեցաւ քաղցրութիւնով: Ապա Գրանադան առան. ուրախութիւնը որ պատճառեց այդ զիպուածը հասարակաց էր:

Այժմ զբաղուեցան Արլումբոսի զործով Արլումբոսը նախ և յառաջ, պահանջեց որ տան նմա ծովապետի տխու-

լու և փոխարքայի արտօնութիւն այն կողմերի վերայ, որոնցը նա կգտանի և որ նա ստանար արդիւնքի տասներորդ մասը [Կողմաբոսի պատուի համար պիտոյ է յաւելացնել, որ նա այս արդիւնքները նախամտադրուած էր գործածել ոչ իւր, այլ նորա կարծիքով մի ընդհանրաշահ գործի համար, այն է՝ նա կամենումէր ազատել Երուսայէմը մահամմէդներէ ձեռքից]: Պալատականներն, ՚ի հարկէ, չէին կարող թոյլատրել նմանապիսի պահանջողութիւններ. այդ չէր թոյլատրում նորանց դռնօղութիւնը: Եպիսկոպոսները նոյնպէս վերջացան նորա քէ՛՛ . . . բայց թագուհին չսեց նորանց և սկսեց նորա հետ ժամատականութիւն անել . . . Կողմաբոսը չզիջաւ ոչ մին իւր պայմաններից, ութսուն տարիների անյաջողութիւններն անգամ չխախտեցին նորան . . . Եւ ուղեորուեց ջորու վերայ դէպի Ֆրանսիայ:

Այն միջոցում զիւտերի կուսակիցները կարողացան համոզել թագուհուն, և [թէպէտ թագաւորը նայումէր գործի վերայ սառն կերպով] նա շուտով ուզարկեց նորա մօտ սուրհանդակին: Համբաւ ստանալով, Կողմաբոսը մի քանի ժամանակ չէր վճռում ենթարկուել նոր պալատական յետաձգութիւնների և ծուռութեք խօսքերի . . . Միայն թէ, տեսանելով զրական խոստումները, առանց ուշանալու յետ դարձաւ:

Պայմանները սորանք էին. 1] գտանելով կղզիներ կամ ցամաք, պէտք է Կողմաբոսը իւր համար և իւր սերունդների համար ստանար նաւապետի աստիճան իւր

բոլոր օրէնքներով. 2] որ նա նշանակուէր փոխարքայ բոլոր երկրների և կղզիների վերայ, որոնցը նա կգտանի, այն իրաւունքով որ ներկայացնի թագաւորին իւրաքանչիւր պաշտօնի համար երեք կանդիտատներ, 3] իւր նաւապետական իշխանութեան սահմաններում նա պէտք է ստանար տասներորդական մասը բոլոր ապրանքներից և պտուղների արդիւնքից: 4] նա ընդունումէր իւր վերայ ծախսերի ութերորդ մասը, այն նաւերի համար, որոնք պատրաստուած էին յարաբերութիւններ ունենալու նպատակով նորազուտ երկրների հետ, որք պատճառով պարտ էր ստանալ մի և նոյներորդական մասը օգուտներից:

Որովհետեւ, Կողմաբոսը զնալով դէպի արեւմտք կարծումէր գտանել Ասիային, ապա նմա տրուեցան յանձնարարական թղթեր դէպի թիւրքիայի խանը: Թագաւորը հրամայեց ծովազերեայ Պայնոս քաղաքին պատրաստել Կողմաբոսի համար նաւեր և հրամայեց տալ ծովապետներին չորեքամսեան ուժիկը յառաջուց: Երբոր Պայնոս մէջ իմացան Կողմաբոսի առաջարկութիւնը, զարմացքը և երկիւղը տարածուեցին քաղաքի մէջ. ժողովուրդը նայումէր նաւերի և ծովապետների վերայ, որոնց նորանից պահանջումէին, ինչպէս մի ՚ի զուր զոհի վերայ: Երկար ժամանակ, Կողմաբոսի ճիգը անյաջող գտանուեց: Վերջապէս մեծ զժուարութիւնով հաւաքեցին նաւային մարդեր: Վատեսնալով, որ ահազին ծախքերը պատճառ չդառնային գործի չկատարուելուն, նա բուականացաւ ամենահա-

սարակ ծախսով: Բոլոր նորա նաւային զուամարտակը  
բաղկանումէր երեք ոչ այնքան մեծ նաւերից, որոնց  
ամուռներն էին. Պիւսսայ, Սանտա-Մարիայ, Պիւսայ. սո-  
բանցից երկուսը նման էին թեթեւ ավային նաւակ-  
ներին. նորանց փոքրիկ մեծութիւնը թոյլատրումէր  
նորանց հեշտութիւնով մտանել փոքրիկ զետարերան-  
ների և գետերի մէջ. բայց այդպիսի նաւերով յանձն  
առնել երկար և վտանգաւոր նաւարկութիւնն ան-  
ճանօթ ծովերի մէջ բաւական մեծ քաջութիւն հա-  
մարուելու էր: Նաւային մարդերը զուրս եկան ծովի  
մէջ 1492 թուի Սգոստոսի 3-ին, բոլոր Պալոս քա-  
ղաքի մէջ ավարտութիւնը տարածուած էր. համարիւր  
բնակիչներից իւրաքանչիւրը հրաժեշտ տուեց և թիրեւս  
յաւխտեանս, կամ իւր աղջականի և կամ իւր բա-  
րեկամի հետ . . . .

Ի հարկէ, Արլամբոսն ուրախ էր, որ վերջապէս,  
չատ տարիներ ՚ի զուր սպասելուց յետոյ, սխուեց իւր  
մեծ առաջարկութիւնը. բայց նորա ուրախութիւնը  
թուլանումէր նորանով, որ յոյս չունէր իւր ծովա-  
պետների քաջութեան և հաստատամտութեան վե-  
րայ . . . Նա վախենումէր որ երկիւղի և ապաշա-  
ւանքի բոպէսում նորանք չկամենային միաբան կերպով  
չարունակել ճանապարհորդութիւնը, այլ՝ դառնային  
յետ: — Նորա կարծիքները ճշմարտացան, երրորդ օրը  
մի նաւ [Պիւստան] նշան է տալիս քամբաղդութեան.  
նորա զեկը կոտորուել էր . . . Արլամբոսը կասկածում

էր որ նաւը կամենար յետ դառնալ և այդ ձգեց նո-  
րան մեծ շփոթութեան մէջ: Նաւային ուղեկիցները  
ուղարկուած էին թագաւորից [կորոլից] իւրեանց կամքի  
դէմ, սրտերի անհանգստութիւնով և աղէտների նա-  
խագագութիւնով: Ամենափոքր արդելքը կարող էր  
տարածանել նորանց մէջ անհիմն և յանկարծական  
[պանիքական] երկիւղ, վերկացնել շփոթութիւն և  
խորտակել բոլոր նախադիժերը . . . Այդ ժամանակ  
քամին վառւմէր խիստ, այնպէս որ Արլամբոսը չկարո-  
ղացցաւ օգնութիւն հասուցանել Պիւստային առանց  
ենթարկելու վտանգի իւր սեփական նաւը: Բազդից,  
Պիւստայի հրամանատարը փորձառու և յաջողակ ծո-  
վագնաց էր. նա կարողացաւ ամրացուցանել զեկը պա-  
րաններով, այնպէս՝ որ այն ամենայնով կարելի լինէր  
կառաւարել նաւը: Բայց այս երկար ջօղնեց, հետեւած  
օրը պարանները ցած եկան. միւս նաւերը պէտք է  
թուլացնէին զնացքը նորա համար, որ չձգէին Պիւս-  
տային բազդի հաճոյքին: Բացի դորանից Պիւստայի վե-  
րայ երևեցաւ հոսանք, այնպէս որ Արլամբոսը վճռեց  
հասանել կանարեան կղզիներին՝ որոնելու Ֆորսե-  
նաւ Պիւստան փոխարինելու համար. նա դտու, որ նո-  
րանք էին խկապէս այս կղզիների մօտ, բայց ծովա-  
պետները այլպպէս էին մտածում: Միայն թէ հետե-  
ւած օրը վաղը դտան կանարեան կղզիները: Այստեղ  
մնացին նորանք երեք շաբաթից աւելի, որոնումէին մի  
որեւէ ուրիշ նաւ, բայց ՚ի զուր: Նորանք ստիպուե-

ցան շինել՝ կարկատել նոյն իսկ Պինտային և շինել նմա նոր ղեկ: Նինայի առաջաասները ևս ուղղուեցան որ նա գնար ուղեղ և յետ չմնար միւս նաւերից . . .

Մաւերով կանարեան կղզիների մօտով, նաւային գումարտակը ղնումէր, ՚ի նկատի ունելով Տեներիփ կղզին, որի դադաթը ժայթումէր բոցի հեղեղներ: Այդ ժայթումաների տեղքը ահաբեկ արեց ծովազնացներին. նորանք բացատրեցին իւրեանց այդ, ինչպէս մի չարագուշակ երևոյթ: Մեծ ջանքով կարողացաւ կողմբոսը ցրել Կանայի այդ ահը և միւս շատ հրաբուզն լեռաների օրինակով: Առնելով մի կղզու վերայ փայտեր, ջուր և ուտելիքներ, նորանք իմացան որ երեք պորտուգալական նաւեր նաւումէին դէպ ՚ի Փէրրոյ կղզին՝ տիրելու կողմբոսին. այն ժամանակ կողմբոսն շտապեց հանել խարխալը [Սեպա Յին] և, անցանելով յետին կանարեան կղզին, ուղևորուեց այժմ արդէն դէպ ՚ի անձանօթ տեղերը:

Բայց ջրի կատարեալ հանդարտութիւնը բմբռնումէր նորան ամբողջ երեք օր, մինչ նորանք նկատում էին հեռուից երկիրը . . . Այդ բանը չարաչար տանջում և անհանգիստ էր առնում կողմբոսին: Վերջապէս 9-ին փչեց քամի և երկիրն աներևոյթացաւ տեսքից: Իորա հետ միասին ծովազնացները կորուսին բոլոր քաջութիւնները, նորանք ըստ ամենայնի հրաժեշտ տուին աշխարհից և արդէն այլ ևս յոյս չունէին տեսանելու երբէք իւրեանց բնակարանը: Նորանք

զրկուեցան այն բոլոր բանից, որ թանկագին է մարդին. հայրենիքից, ընտանիքից, բարեկամներից, նոյն իսկ գոյութիւնից. իսկ նորանց առաջն գտանուումէին լաբիրինթոս, գաղտնութիւն և վտանգ: Միքանիսները թափումէին արտասուք, միւսները բոլորովն գոռումէին. կողմբոսն աշխատումէր նորանց մտիթարել. նա խոստացաւ նորանց երկիրներ ու հարստութիւններ, և խոստացաւ ոչ միայն նորա համար որ հանգստացնէր նորանց, ոչ. նա անկեղծ սրտով համոզուած էր, որ նորա խոստումը կկատարուի: Ապա նա յայտնեց, որ 2800 մղոն տարածութիւնով հեռի նա յոյս ունի գտանելու երկիրը. բայց նախազուշութեան համար, որ ծովազնացների երկիւղը չաստիճանայ որքան նորանք հեռանային հողից, նա ղիմից դէպ ՚ի հեռեւած միջոցը. նա ունէր իւր հետ երկու հաշուարարական գրքեր. մին ճիշդ հաշուադիրք էր, որի մէջ գրումէր խալութիւնով՝ անցած ճանապարհը. նորան նա պահումէր գաղտնութեան մէջ և ոչ ոքի չէր ցուցանում. իսկ միւսի մէջ նա սակաւացնումէր ամէն օր տարածութիւնը. այդ գիրքը նա ցոյց էր տալիս բոլոր ծովազնացներին: Սեպտ. 11-ին, 600 մղոն կանարեան կղզիներից դէպ ՚ի արեւմուտք, նորանք գտան մի մեծ կայմի կոտոր. նա իսկապէս պատկանումէր մի մեծ նաւի. ծովազնացները տիրութիւնով նայումէին այս կոտորի վերայ, և իւրեանց համար սպասումէին նմանապիսի վիճակ: 13-ին, երեկոյան ժամանակ, համարիւր 800

մղոն հեռի երկրից, Կոլումբոսը տեսաւ առաջին անգամ մագնիսական սլաքի խոտորումը: Փոխանակ ուղղելու ընթացքը դէպի բևեռային աստղը, նա խոտորուեց հինգ ու կէս աստիճանով դէպի հիւսիսաւարե մուտք: Հետեւած օրը տարբերութիւնը մեծ էր: Այդ հանգամանքից զարհուրած, նա երկպառիկ ուշադրութիւնով նկատումէր հետևորդ օրերը և գտաւ, որ իւրաքանչիւր օր սլաքի խոտորումը սաստկանումէր: Առաջին անգամ նա չէր ասում այս բանը ուղեկիցներին, խնայալով որ այն զարհուրելի կերպով երկիւղե մէջ կձգէր նորանցը: Բայց վերջապէս այդ նկատեցին և ծովագնացներն ինքները, որ, ՚ի հարկէ, ձգեց նորանցը զարհուրանքի մէջ: Նորանց թվումէր, որ բնութեան նոյն իսկ օրէնքները այս նոր աշխարհի մէջ բոլորովին այլ են. նորանք վախենումէին թէ կողմացոյցը կորուսած լինէր իւր արժանաւորութիւնը, և թէ այդպիսի կերպով նորանք մնացել են անսահման ովկիանոսի մէջ կատարելապէս առանց առաջնորդի . . . Բայց Կոլումբոսը նորանց հանգստացրեց, անպապաղ հնարելով երևոյթի այս բացատրութիւնը. և որովհետև խորին յարգանք էին սնուցանում դէպի նորա աստեղաբաշխական տեղեկութիւնները, ապա և նորանք հանդարտուեցան . . .

Սեպտեմբերի 14-ին նորանք տեսան երկրի առաջին նշանները. նաւերի շուրջը թռչումէին ձկնիւրը արագիլ, լակլակ] և մի ուրիշ տրոպիքական թռչուն:

Գիշերը նորանք ըմբռնուեցան երկիւղեց, տեսանելով օդային երևոյթներ, որոնք թվումէր թէ ընկան, ծով մէջ 16 կամ 20 մղոն հեռի իւրեանցից: Այս օդային երևոյթները շատ յաճախ՝ ընկնումէին տրոպիկների վերայ, և գեղեցիկ գիշերներում, ընկնելիս թողումէն իւրեանց յետուստը մի պայծառաւիայլ հետք, որ շարունակվումէր 12-15 րոպէ և նման էր բոցի: Ծովագնացներին թվումէր նա մի ահագին բոց:»

Հետևորդ օրերը քամին բարեկամոյ էր, թէպէտ և եղանակը յիշաշրջումէր երբեմն դէպի վատը և վտարիկ կաթիլների անկման նշաններ էին երևում: Նաւերը իւրաքանչիւր օր անցանումէին խիստ շատ տարածութիւն. քամին մինչև այն աստիճան հանդարտ էր, որ մի քանի օրերի ընթացքում չէին փոխել ոչ մի առադաստ:

Չրի մակերևոյթի վերայ սկսան երևել բոյսերի մեծ քանակութիւն. նորանք հետզհետէ շատանում էին: Այս լողացող մարդագետնիներից մինի վերայ տեսան տրոպիքական թռչուն այնպիսի տեսակից, որն ամենևին չէ նեջում ջրի վերայ. ծովային ջուրն աւելի թարմանումէր ծովագնացներն ուրախացան . . . Իւրաքանչիւր նաւ աշխատումէր յառաջել միւսին, որ առաջին անգամ տեսանի երկիրը: Պինտայի գլխաւորն ասաց Կոլումբոսին լսելափողով,\*] որ բազմաթիւ

\*) Մի գործի, որ անով խօսումն ծանրալուր մարդերի հետ սովորաբար. սա ծառայումէ և որպէս խօսակցական խոզովակ, նաւերի վերայ :  
 ծան. փոխադր.

Թոչուներից և մի քանի նշանների պատճառով հիւսիսային հորիզոնի վերայ, հարկաւոր է մտածել, որ երկիրը գտանվում է դէպ'ի հիւսիս նորանցից. նա առաջատաներով ճիզն էր թափում շտապելու. և որովհետեւ նորա նաւն ունէր ընտիր առաջատտ, ապա նա յառաջեց բոլոր նաւերին, զնաց յառաջ . . . Եւ արդարեւ, հիւսիսային կողմից կարծես թէ երևում էր երկիրը. ծովագնացներից շատերը կարծում էին թէ դորանք կղզիներ են: Նաւապետների բոլոր բազմութիւնը կամենում էր, որ նաւեր դէպ'ի այդ տիր. բայց կոչումբոսը համոզուած էր, որ դա խարէական երևոյթ է աչքի. որովհետեւ, զիշերն ամպերը, մանաւանդ արուսիկների տակ. ընդունում են խիստ անսովոր և տարօրինակ տեսք, շատ անդամ հեռուից թփում են որպէս երկիր: Եւ արդարեւ, կոչումբոսը ճշմարիտ երևեցաւ: Հետեւած օրը մի փոքր ինչ անձրևեց, բայց առանց քամու [Սեպտեմբերի 19-ը]: Երկու պէլիկաններ թռչելով հասան նաւին և նստեցին նաւի կայմի վերայ. նորանք չեն թռչում երկրից 80 մղոնից աւելի հեռի: Կոչումբոսը չափում էր ջրի խորութիւնը. նորա լոսար երկու հարիւր սաժէն գնաց, բայց չհասաւ յատակին: Կոչումբոսը մտածեց թէ կարելի է նա գնում է կղզիների մէջով, որոնք գտանվում էին հիւսիսի կամ հարաւի վերայ . . . Չնայելով դորա վերայ, նա յառաջ տարեց իւր ճանապարհն ուղիղ. ամենատեսակ անփստահութիւնը և անորոշութիւնը կարող էր վատ

ներգործել ծովագնացների վերայ. բայց, չնայելով նորա բռնած նախազգուշութիւնների վերայ, որ նա փոքրացնում էր անցած տարածութիւնները դրքի մէջ, ծովագնացներն սկսեցին աստիկ նեղանալ ճանապարհի երկարութիւնից. ինչքան նորանք չէին նաւում, նորանց նաւարկութեան ամենեւին վերջ չէր լինում: Երկրի մտաւորութեան նշաններն անյայտանում էին մին զինի միւսի, և նաւերի առաջը տարածանվում էր միշտ մի և նոյն անասման ծովը և երկինքը: Ծովագնացները կասկածաւորուեցան մինչև անգամ արևելեան քամու վերայ, որ յաջողում էր նորանց և բերեց նորանցը դէպ'ի արևմուտք. նորանք սկսեցին մտածել, որ այս քամին փչում է միշտ արևելքից, և այդպիսի կերպով նորանց ամենեւին չէ յաջողուելու յետս դառնալ դէպ'ի Խալանիայ:

Կոչումբոսը դործադրում էր բոլոր միջոցները՝ նորանցը հանգստացնելու համար . . . Սեպտեմբերի 20-ին փչեց նոր հարաւաւարևմտեան քամին. թէպէտ այս քամին նորանց համար հակառակ էր և ըմբռնում էր մի մասնով նորանց նաւարկութիւնը, բայց և այնպէս նա փոքր ինչ քաջալերեց ծովագնացներին, ապացուցանելով նորանց, որ այդ ծովը վերայ մի միայն արևելեան քամիներ չեն փչում. Թոչուների շատ բազմութիւն թռչում էին նաւերի վերայ, նորանցից երեքը մեծ չէին, այնպիսիներից, որոնք սովորաբար ապրում են արուեստական անտառների և սղոտատու այգիների մէջ:

Նորանք անցուցանու մէին ողջ օրը նաւերի վերայ մինչև երեկոյ: Կորանց երգերը ակտրժ և հաճելի էին վհատուած ծովագնացների համար. նորանք յիշեցնում էին նորանց՝ երկիրը: Այդ թռչուններից շատերը ունէին զօրաւոր վետուրներ, և կարողանում էին հեռու թռչել ծովի մէջ, բայց մի քանի փոքրիկ ճնճղուկներ շատ տկար էին հեռաւոր ճանապարհորդութեան համար, այն և նորանց երգերը ցուցանում էին որ նորանք յոգնած են:

Հետեւած օրը տիրապետում էր խորին լռութիւն, նորան ընդհատում էին միայն թեթև հարաւաւարեւելան քամիները . . . Ծովը, որքան մարդի աչք կարող էր թափանցել, ծածկուած էր խտտերով. այս խտտերն ունէին լայնատարած սուզած մարգագետնի տեսք. այդ երևոյթը շատ յաճախ երևում է ովկիանոսի մասերի վերայ: Այս բոյսերը դուրս են գալիս յատակում և այլքներից ու ծովային հոսանքներից խլուած, բարձրանում են մակերևոյթի վերայ. այս խտտերը առաջին անգամ յառաջ բերին շատ ուրախութիւններ, բայց յետոյ սկսեցին շատ տեղեր այնպէս թանձրանալ, որ խանգարում էին նաւերի գնացքին: Ծովագնացները մտաբերեցին սառուցած ծովի ծովագնացի պատմութիւնները, որտեղ գտել են նաւեր, որոնք կանգնել էին առանց կարողանալու տեղից շարժուել: Միւսներն ասում էին որ ծովը կճանճաղանայ, որ կարելի է կանգ առնել ճանճաղուտ տեղի վերայ:

Կողմերուն սկսաւ նորից չափել խորութիւնը, բայց Հասցրին յատակին:

Հետեւած երեք օրը թեթև քամին փչում էր հարաւից և արեւմուտքից, ծովային մակերևոյթը հաւասար էր որպէս հայելին: Անտոյոր մեծ կետը [վիշապ ձուկն] երևում էր մի քանի տարածութիւնների վերայ: Կողմերուն ասում է ծովագնացներին որ դա մի յաջող երևոյթ է. կէտերը սովորաբար ապրում են հողին մօտ: Բայց լռութիւնը շարունակում է անհանդիստ առնել նաւագնացներին: Հակառակ քամիներն այնքան տկար էին, որ չէին այեկոծում մինչև անգամ ծովի մակերևոյթը. բայց նա անշարժ էր ինչպէս լիճ: Այս կողմերը, ասում էին նորանք, այնքան չեն նմանւում այն աշխարհին, որին նորանք ընտել էին: Նորանք վախեւում էին կործանուել կայուն և անսահման ջրի մէջ. կամ թէ մտածում էին, որ արևելեան քամիները երբէք չեն թոյլատրելու նորանց յետ դառնալ դէպի հայրենիքը:

Կողմերու շարունակում էր զարմանալի համբերութիւնով համոզել նորանց, յայտնելով, թէ լռութիւնն անպատճառ յառաջանում է երկրի մերձակայութիւնից այն ուղղութիւնով, որտեղից փչում է քամին, այսինքն արեւմուտքից, այդոր համար և չկար բաւականաչափ տեղ, որ ծովն այեկոծուէր: Երկու շաբաթ էն խաւարեցրեց ծովագնացների նոյն իսկ բանակաւորութիւնը. և ինչքան աւելի Կողմերու նորանց հա-

մոլորակեր, այնքան աւելանումէր նորանց քրթմնջիւնը, նորանց անհանգստութիւնը ևս աւելի սաստկացաւ, երբ [Սեպտեմբերի 25-ը] ծովը յանկարծ բարձրացաւ, երբ քամի չկար: Այն ինչ դա մի սովորական երևոյթ է ովկիանոսի վերայ. նա յառաջ է գալիս կամ նորանից, որ մի որսուէ քամի բոլորովին դադարումէ փչելուց, կամ թէ նա հասարակ շարժողութիւն է, որ հաղորդած է ծովին մի հեռաւոր գօրեղ քամի:

Վոլումբոսի դրութիւնն օրից օր աւելի վտանգաւոր կերպարանք էր ստանում: Որքան մօտենումէր այն տեղերին, որտեղերում սպասումէր գտանել հող, այնքան ծովազնացների անհամբերութիւնն աւելանումէր և նորանք մինչեւ անգամ ծիծաղումէին երկրի երևոյթների վերայ: Վոլումբոսն այժմ վախենումէր որ նորանք չսպասամբուէին և չհարկադրէին յետո դառնալ այն ժամանակ, երբոր նա պիտոյ է հասանէր իւր բոլոր շարչարանքների վերջին: Այն միջոցում ծովագնացները զարհուրելով տեսան, որ ովկիանոսը միշտ անսահման է. ի՞նչ կլինի մեզ, մնածումէին նորանք, եթէ չբաւականանայ պաշարը: Նաւերը ևս այնքան թոյլ և վնասուած էին, որ անկարող էին, յետ դառնալով, այնքան մեծ ճանապարհը հատանել. ինչ պէտք է լինի եթէ նորանք գնան դէպի հեռուն, և եթէ ևս աւելի սաստկանայ այն տարածութիւնը, որ բաժանումէ իւրեանցը հողից:

Նորանք սկսեցին զանգատիլ միմեանց հետ, սկսե-

ցին ժողովուրիլ միմեանցից անջատուած նաւի անկիւնների մէջ, առաջին անգամ փոքրիկ խմբերով երկերիու կամ երեքերեք, ապա այս խումբերը շատանումէին աւելի ու աւելի և զրգռումէին միմեանցը՝ ընդդիմանալու Վոլումբոսին: «Այո, դա մի լոկ արկածախնդիր անձն է. իւր սաստիկ յիմարութեան մէջ նա վճռեց անել խելառութիւն, այն յուսով, որ ձեռք բերի փառք: Մնալ հաստատուն այդպիսի յիմար առաջարկութեան մէջ նշանակումէ ինքն լինել պատճառ իւր կորստի: Ո՞վ է ստիպում մեզ գնալ դէպի յառաջ, երբ մենք բոլորովին կատարած ենք մեր պարտականութիւնը. մի՞թէ հարկաւոր է գնալ մինչև այն ժամանակ, որ կորնչե՞ք կամ արդէն անկարելի լինի յետ դառնալ: Միւս կողմից, ո՞վ կարողէ մեզ նախաստել նորա համար, որ մենք մտածել ենք մեր ապահովութեան համար և վերադարձել ենք իւր ժամանակին: Իսկ եթէ Վոլումբոսը կզանգատուի իսպառնիայի մէջ՝ թէ մենք նմա չենք լսել, այն ժամանակն ո՞վ կհաւատայ նմա: Այն ևս իմացէք, որ նա օտարական է առանց կապերի և ազդեցութեան: Նոյն իսկ ուսումնականներն իմացան նորա նախազիծը խելացնոր և բոլոր աշխարհը ծաղղումէր նորա վերայ: Արևսակիցների նա չունի, իսկ նորա սիրողներից շատերը մինչև անգամ կուրախանան, տեսանելով նորա առաջարկութիւնը չյաջողուած:» Եթէ յաւելացնենք այս դատողութիւնների վերայ և խաղանական բնաւորութեան

սաստիկ եռանդնոտութիւնը, որ չէ կարող տանել ամենախորք հակառակախօսութիւն, և այն, որ նաւային զօրքը հաւաքուած էր բռնադատ կերպով, ապա հասկանալի է, որ շատ հաւանական է որ բայ շիթութութիւն պատահէր: Մի քանի ծովազնացներ մինչև անգամ առաջարկուեցին, որ, յախտանա ապատուելու համար կողմնորոշ, ձգեն նորան ծովի մէջ, եթէ նա կմերժէր յետս դառնալ, իսկ իսպանիացում ասել, որ նա ընկաւ ջրի մէջ, աստղերի վերայ զխտողութիւն անելու միջոցում:

Կողմնորոշ զգումէր որ մօտենումէր սպառնալիքը, միայն թէ պահպանումէր հաստատութիւն և հաւատարմութիւն. մի քանիսներին զննաթափ արեց քաղցր խօսքերով, մի քանիսներին հարստութիւն խոստանալով, իսկ ամենակատաղիներին սպառնումէր տարօրինակ պատիժ, եթէ նորանք փորձ կփորձեն ոչնչացուցանելու էքսպէդիցիան: Սեպտեմբերի 25-ին փչեց յաջող քամի և նորանք կարողացան գնալ ուղեղ դէպի արևմուտք: Քամին էր թեթև ու ծովը հանդարտ: Այդ ժամանակ, մինչև կողմնորոշ և ծովազնացներից մի քանիսը նայումէին քարտեզն վերայ, ջանկանալով իմանալ իւրեանց դրութիւնը, Պինտայից յանկարծ լսուեց աղաղակ. կողմնորոշ բարձրացուցեց աչքերը: Պինտայի զլիսաւորը կանգնած էր իւր նաւի կայմի վերայ և աղաղակումէր բոլոր զօրութիւնով: «Երկիրը, երկիրը, signor [տէր], ես պահանջում եմ

ինձ համար վարձատրութիւն» [իսպանական կառաւարութիւնը խոստացել էր որպէս վարձատրութիւն 150 մանէթ նմա, որ առաջին անգամ կնկատի երկիրը] Նա մատնանիշ էր լինում այդ ժամանակ հարաւարեմուտքի վերայ, որտեղ արդարև կարծես երևումէր երկիրը: Կողմնորոշ ընկաւ ծունկերի վերայ և աղօթեց Աստուածին. նաւախմբի բոլոր զօրքերն սկսեցին երգել. «Չքեզ Աստուած փառաբանեմք»\*) Ծովազնացներն ապա բարձրացան կայմերի բարձրութեան վերայ, թոկերի վերայ և սկսեցին նայել դէպի հարաւարեմուտք. բոլոր հաստատումէին մի մեծ նուրութիւն: Համոզումը դարձաւ այնքան հաստատ, նաւախմբի ողևորութիւնն այնքան զօրեղ, որ կողմնորոշ կարեւոր համարեց փոխել փոքր ինչ ուղղութիւնը և գնալ դէպի հարաւարեմուտք: Ամբողջ զիշերը գնումէին այս ուղղութիւնով, բայց արշալոյսը ցրեց նորանց բոլոր յոյսերը, այս երկիրն էր երեկոյան ամպը: Արտաբեկ նաւախմբը տխրութիւնով նաւումէր առաջին ուղղութեան պէս:

Շատ օրերի ընթացքում նորանք շարունակումէին գնալ մի և նոյն յաջող քամիով, մի և նոյն հանդարտ ծովով և մի և նոյն պարզ եղանակով: Չուրն այնպէս հանդարտ էր, որ ծովազնացները լողումէին նաւի

\*) Մի կրօնական երգ, որ լաթինական եկեղեցին երգում է. (Te Deum).  
ձան, փոխ.

շուրջը սկսեցին երեկ շատ դել'փին ձուկներ. թռչող ձուկները հասանելով օդը, ընկնումէին վերին նաւային աախտահամաճի վերայ: Երկրի այս նշանները նորից քաջայերեցին ծովագնացներին և հրապուրումէին նորանցը դէպ'ի յառաջ, նոյն իսկ նորանց համար աննկատելի կերպով: Հոկտեմբերի 1-ին, Կոլումբոսի հաշուեզրի համաձայն, նորանք նաւարկելով գնացել էին 2,320 մղոն տարածութիւն, թողնելով Կանարեան կղզիները [իսկ ծածուկ զիրքը ցուցանումէր 2830 մղոն]: Երբորդ օրը՝ չերեւցաւ ոչ մի թռչուն: Ծովագնացներն սկսեցին վախենալ, որ լինի՞ թէ նորանք անցանումեն կղզիների մէջով, որովհետև թռչունները, արդարև, թռչումէին մէ կղզուց դէպ'ի միւսը: Կոլումբոսը նոյնպէս կասկած էր կրում սորա վերայ, բայց կամակորութիւնով շարունակումէր գնալ դէպ'ի արևմուտք: Ծովագնացներն սկսեցին քրթմնջել և սպառնալ: Բայց միւս օրը նորանք տեսան այնքան թռչուններ և երկրի նշաններն այնքան բազմացան, որ նորանց խորին յուսահատութիւնը փոխուեցաւ դէպ'ի կնիզանի յոյսը: Եւ որովհետև իւրաքանչիւր ծովագնաց ցանկանումէր ստանալ խոստացած վարձատրութիւնը, ապա առաջին նշանը տեսանելուն պէս, բոլորն ազդաղակեցին. «երկիրը, երկիրը: Այդ անընդհատ յափշտակութիւններին վերջ տալու համար, Կոլումբոսը սահմանադրեց, որ եթէ մին կտայ նշան, իսկ երկիրը չգտանուի հետևած երեք օրերի ընթացքում, ապա նա յաւիտեանս

կորուսանումէ վարձն ստանալու իրաւունքը:

Առաւօտը, Հոկտեմբերի 7-ին շատ ծովագնացներ և նոյն իսկ Կոլումբոսը մտածումէին, որ տեսանումեն արևմուտքում երկիր, բայց նա այնպէս մութ էր, որ ոչ ոք չէր համարձակվում ազդաղակել, որ չտարուն և չկորուսանեն բոլոր յոյսը ընծայի ստացման համար: Մի նաւակ գնաց յառաջ՝ իսկն խնայալու: Մի քանի ժամանակից յետ, նորա կայմի վերեւից կախեցին նաւադրօշ և թնդաց հրացանաձողութիւնը. դա նշան էր երկիրը գտանելու: Նոր հիացումն զարթեց նաւերի մէջ, բոլորի աչքերն ուղղած էին դէպ'ի արևմուտք: Բայց երկրին մօտենալուն պէս, երևեցաւ որ այդ երկիրը ևս օդի մէջ էր: Ծովագնացներն ընկան նոր վհատութեան մէջ, որ այնքան զօրեղ էր ինչքան զօրեղ էր նորանց յոյսը:

Միայն թէ կրկին երևեցան բարեյաջող երևոյթներ. առաւանների շատ խումբեր թռչումէին դէպ'ի հարաւաւարևմուտք: Կոլումբոսը եզրակացրեց, որ մի տեղ արևմուտքի վերայ պիտոյ է լինի երկիրը, որտեղ նորանք հանգչում և սնանկումեն, և որովհետև նաւախումբը խնդրումէր նորան, ապա նա հրամայեց ուղղելու դէպ'ի արևմտահարաւային կողմը, որտեղ թռչումէին թռչունները: Երեք օր նորանք գնումէին այդ ճանապարհով և ամէն մի քայլի մէջ երկրի նշանները երևումէին յաճախ և աւելի պարզ: Առաւանների խումբեր թռչումէին նաւերի շուրջը, ապա

Թռչումէին դէպ'ի հարաւա արեւմուտք: Ձկնկուլը, պելի-  
կանը և բաղը երևումէին փոքր ինչ հեռու տարա-  
ծովթեան վերայ, ընթանալով միշտ դէպ'ի այն կողմն:  
Ծովագնացներն այդ բոլոր նշանների վերայ սկսե-  
ցին նայել ինչպէս մի խաբէութեան վերայ, որ ա-  
ռաջնորդում տանումէր նորանցը դէպ'ի կողուստ:  
Եւ երբ երեկոյններորդ օրը արեգակը դարձեալ ծա-  
ծկվումէր լայնատարած հորիզոնի վերայ, ծովագնաց-  
ները շփոթուեցան: Նորանք աղաղակներով սկսեցին  
պահանջել որ յետ դառնան դէպ'ի տուն, որ կողում  
բոսը թողնէր իւր յամառութիւնը՝ փորձելու Նախա-  
խնամութեան, առանց յոյս ունենալու մասնելով  
ովկիանոսի մէջ: Բոլոր զօրութիւնները՝ զործադրեց  
կողումբոսը նորանցը հանգստացնելու համար. բայց տե-  
սանելով որ նորանցը աղաղակը սաստիկնումէ, նա ա-  
սաց նորանց վճռողաբար եղանակով, թէ քրթմնջանքն  
անօդուա է, թէ նա ուղարկուած է Հնդկաստանը  
գտանելու համար և, Աստուածի ողորմութիւնով  
կգտանի նորան: կողումբոսի դրութիւնը կրիտիքա-  
կան էր:

Բայց միւս օրը առաւօտը երկրի նշանները նորից  
սկսեցին երևիլ խիստ պարզութիւնով: Բայցի թարմ  
զետախտերից, ծովագնացները տեսնումէին կանաչ  
ձուկն, որ սովորապէս ապրումէ ժայռին մօտ. ապա  
վիշնու ճիւղիկ, որ նոր կտրած էր ծառից. ապա  
դուս հանեցին ջրից եղէզն, փոքր տախտակ և ար-

հետաբար կտրած ձեռնափայտներ: Տխրութիւնը նո-  
րից փոխուեց դէպ'ի ուրախութիւն. իւրաքանչիւր ծո-  
վագնաց նորից պահապան դարձաւ, երկիրն առաջն  
անգամ գտանելու համար:

Բոլոր հետեւած օրերը ծովը սովորականից առա-  
ւել փոթորկալից էր, քամին շարունակվումէր և նո-  
րանք անցան չափազանց շատ տարածութիւն: Գի-  
շերը նորանք պատահեցան նոր ծովային հոսանքի և  
գնումէին սաստիկ արագընթաց. Պինտան յառաջա-  
ցած էր: Ծովագնացները հիացման մէջ էին, և ոչ մին  
չէր կարողանում աչքը փակել ողջ գիշերը: Երբ  
մթութիւնը տիրեց, կողումբոսը բարձրացաւ իւր նա-  
ւի իւտի վերայ: Եւ յանկարծ մօտ 10 ժամին, նա  
տեսաւ հեռուից կրակի փայլունութիւն: Վախենալով  
թէ արդեօք չէ'ն խաբում նորան իւր զգացումները,  
նա կոչեց իւր ուղեկիցներից մինին և հարցրեց նա.  
չէ' տեսանում արդեօք նա լոյս: Նա ևս հաստատեց:  
կողումբոսը զեռ տարակուսումէր, և կոչեց միւսին.  
բայց լոյսն արդէն այնպստացաւ. ապա նորանք նորան  
տեսան մի կամ երկու անգամ ևս, նա արագապէս  
անցաւ հորիզոնի վերայ. երբեմն, կարծես նա գտան-  
վումէր ձկնորսական մակոյկի վերայ, որ բարձրանում  
և ծածկվումէր ալիքների մէջ. երբեմն, կարծես թէ,  
մին տանումէր նորան ափի վերայ: կողումբոսի ընկե-  
րակիցները քիչ նշանակութիւն էին տալիս այդ լոյ-  
սին. բայց կողումբոսը ընդունեց նորան երկիր գտանե-

լաւ յայտնի նշան, այն ևս այնպիսի երկիր, որտեղ բնակուած են մարդեր:

Նաւերը շարունակումէին զնալ առաւօտի մինչև երկու ժամը, և այն ժամանակ հրացանաձգութիւնը Պիտոպից յայտնեց զիւրի մասին: Վերջապէս, բոլոր վտանգների և արգելքների դէմ Աղլումբոսը կատարեց իւր ձեռնարկութիւնը: Ովկիանոսի մեծ գաղանկքը գտանուեցաւ, և նորա նախադիժը, որի վերայ ծիծաղումէին ժամանակակից ուսումնականները, արդարացած էր. դժուար է երեակայել նմանապիսի մարդերի զգացումները:

Ուրբաթ առաւօտը [1492 թ. Հոկտեմբերի 12-ին] ևրոպացիներն առաջին անգամ տեսանումին Նոր Աշխարհը: Արշալոյսի ժամանակ բացուեց նորանց առաջև հարթ հաւասար կղզի, զրաւիչ տեսքով: Նա ծածկուած էր ծառերով և նմանվումէր այգուն, և, ՚ի հարկէ, այնտեղ կային մարդեր: Շուտով տեսան, որ բնակիչները դուրս են գալի անտառից, ամենայն կողմից փախչումեն դէպի ափ և խմբվումեն այնտեղ, նայելով նաւերի վերայ: Այս մարդերն էին կատարեալ մերկ և, նորանց ձեռնանշաններից և զիրքերից հեշտ կարելի էր եզրակացնել, որ նորանք յետին զարմացման մէջ էին: Աղլումբոսը հրամայեց ձգել խարխսը, թողնել ծովի մէջ մակոյկները և մատակարարել այդ մակոյկներին բոլոր պիտոյքներով: Նորանցից մինի մէջ նստաւ նա ինքն, հագնուած ամենեւին կարմրափայլ հանդերձ և ձեռքի մէջ առած զբոջակը: Մտենա-

լով դէպի ափը, խազանիացիները զարմանումէին նայելով լայնատարած անտառների և բոյսերի անսովոր առատութեան վերայ. ախորժ և յստակ օդը, ափային ջրերի թափանցիկութիւնը գործեցին նորանց վերայ անսովոր տպաւորութիւն:

Նաւազնացները սաստիկ զարմանքով անձնատուր եղան ուրախութեան. Աղլումբոսին համարումէին նորանք մի կարևոր մարդ, և նորանք, որոնք յառաջուց վիրաւորել էին նորան, այժմ սողումէին նորա ոտների տակ, խնդրումէին ներողութիւն և խոստացան լինել ապագայ ժամանակում կոյր հնազանդութիւն նորա կամքին:

Վայրենիները օրի նոյն իսկ սկզբից տեսան նաւերին տարածած առադատանքով և կարծումէին, որ սա մի հրէշ է, որ դուրս է եկած գիշերը ծովից: Նորանք ժողովեցան ափի վերայ և էին մեծ անհանգստութեան մէջ: Երբ նաւերը կանգ առան և առագաստները հանուեցան, այդ նորանքը վերին աստիճան զարմացրեց: Ապա նորանք տեսան որ մակոյկները նաւերով մօտենումեն դէպի ափը և դուրս են բերում անյայտ տեսակի էակներ, հագած փայլուն պողպատ, որոնց հանդերձները զանազան գոյներ էին ներկայացնում իւրեանցով, նորանք երկիւզով փախան դէպի անտառը: Բայց ապա, նկատելով, որ ոչ ոք իւրեանց չէր հալածում, նորանք մի փոքր հանդարտուեցան և սկսեցին երկչոտութիւնով վերին յարդանքի բոլոր

նշաններով մօտենալ խապանացիներին, շատ անգամ տարածանուելով երկրի վերայ և ցուցանելով յարգանքի այլ և այլ նշաններ:

Այն ժամանակ, երբ Աղումբոսը խապանիայի անուսնով ընդունումէր այդ կղզիները իշխանութեան տակ և սուեց նման անունս Սան՝ Սայվադոր, վայրենիները մնացել էին անշարժ և երկչոտութիւնով ու զարմանքով նայումէին ճակատների, մօրուսների, փայլուն գէնքերի և հարուստ և բուպական հանդերձների վերայ: Նորանց առանձին ուշադրութիւնն ընկաւ Աղումբոսի վերայ. նա բարձրահասակ էր, հազած փայլուն շորեր և ուղեկիցիները դառնումէին դէպ'ի նա, ինչպէս դէպ'ի զլուսւոր: Եւս աւելի քաջարտուելով, վայրենիները մօտ եկեցին դէպ'ի խապանացիները, շուշափումէին նորանց մօրուսները, նայումէին նորանց ձեռների և երեսների վերայ, զարմանումէին նորանց սպիտակութեան վերայ: Աղումբոսը յափշտակուած նորանց պարզամտութեան և հաւատարմութեան վերայ, չէր զսպում նորանցը և խիստ զեջողաբար տանումէր նորանց արարքները: Վայրենիները ենթադրեցին այն ժամանակ, որ նաւերը ցած են իջել երկնքից, որ շքապատումէ իւրեանց երկրի հորիզոնը, կամ թէ նորանք ցած են իջել երկնքից ուղեղ իւրեանց լայնատարած թւերով (առադասանելով) և թէ այդ անսովոր էականները երկնաքաղաքացիներ են:

Եւ վայրենիները իւրեանց կարգով զարթեցրին

խապանացիների մէջ հետաքրքրութիւն. նորանք տարբեր էին մինչև այդ ժամանակ անսուած բոլոր ցեղերից: Նորանք բոլորովին մերկ էին, նորանց երեսն էր պղնձազոյն, կատարելապէս առանց մօրուսի. մարմինները ներկած էին դեղերով, կամ բոլորը, կամ թէ չէ միայն երեսի մի մասը: Նորանք հանդարտ բնաւորութեան տէր էին, չափազանց պարզամիտ և քաղցրաբարոյ: Գործիների տեղ նորանք ունէին միայն սուրեր, որոնց ծայրերը կայծեցուցած էին կրակի վերայ կամ զինաւորուած գայլախաղով [չախմախ-քար], ստամներով կամ ձուկի ոսկրներով: Նորանք չունէին երկաթ. այդ և երևումէր որ նորանք չէին խմանում նորա յատկութիւնները: Երբ նորանց ցուցանումէին մերկացուցած թուրը, նորանք առանց որևէ պահպանութեան բռնումէին մերկ ձեռնով նորա բերանից:

Աղումբոսը բաշխեց նորանց զունաւոր զխարկներ, ապակեայ ուլունքներ, բոժոժներ և այլ խիստ չնչին իրեր, որոնցով պորտուղալացիները վաճառականութիւն էին անում Ափրիկացիների հետ Ոսկեայ ամի վերայ:— Վայրենիները համարում էին սորանցը անգին ընծաներ. ուլունքները շարումէին վեղերի շուրջը խի բոժոժների ձայները ձգումէին նորանցը զարմացքի մէջ: Ամբողջ օրը անցուցանումէին խապանացիները երկրի վերայ, հանգստանալով ճանապարհորդութիւնից, և յետ էին դառնում նաւերի մօտ միայն երեկոյաները:

Այդպիսի կերպով սկսուեց ևրօպացիների առաջին ծանօթութիւնն ամերիկացիներին հետ: Միւս օրը վայրենիները մակոյիներով նաւելով մօտեցան նաւերին, միքանիսներին վերայ երևումէր ոսկի: Նորանց հարցրին. ուստի էին նորանց ձեռք բերած: Նորանք ցուցանում էին ձեռքով հարաւարեմտեան կողմը: Այդ ժամանակ Կոլումբոսն ուղևորուեցաւ այդ ուղղութիւնով և գտաւ ևս երկու մեծ կղզիներ, Կուբան և Հայտին: Հայտու վերայ նա թողեց 30 մարդեր իսպանացիներինց, և մնացածներով յետ դարձաւ, հասաւ Իսպանիայ, Պաւլոսեան նաւահանգիստը, 1493 թ. Մարտ ամսում, ուղիղ եօթնամասեան ելքից [դուրս գալուց] յետոյ: Բայց դարձին, ահռելի փոթորկի ժամանակ նորա նաւերից մին ընկղմեցաւ, միւսը յետ մնաց և միայն Կոլումբոսը յետ դարձաւ միայնակ մի նաւով:

Երբ առաջին անգամ իմացուեցաւ նորա գալուստը, բոլոր քաղաքն ընկաւ շարժողութեան մէջ . . . Բայց երբ իմացան, որ Կոլումբոսը գտել է նոր Աշխարհ, բոլոր բնակիչներն ուրախութիւնից զարմանքի մէջ էին. խփեցին զանդակները, փակեցին խանութները, բոլոր գործերը դադարեցուցած էին: Շփոթութիւն, ազդակ, հիացումն և անհամբեր հետաքրքրութիւնը տիրեցին քաղաքի մէջ: Ամենայն տեղ, որտեղ և չէր երևում Կոլումբոսը, լսվումէին ուրախութեան աղաղակներ և ողջունատուութիւններ: Այնոր համար և բոլոր Եւրոպան ընկաւ աննկարագրելի զարմացման մէջ:

երբ տարածուեց համբաւ նորաղիւտ կղզիների և նոյն տեղացի բնակիչների վերայ: Կոլումբոսը բերել էր իւր հետ վայրենիներից եօթն մարդ: Պայքը անյապաղ ընծայեց Իսպանիային բոլոր երկիրները, որոնք նորանք կգտանեն Արեմուտքում: Իսպանական ժողովուրդը և նորա տէրերը առատօրէն վարձատրեցին նորան պատիւներով և գովասանութիւններով:

Այժմ նորա ձեռբաճութիւնով սկսեցին պատրաստել մի նոր էքսպէդիցիայ: Այս անգամ պատրաստ էին ամբողջ 17 նաւեր, և նորանք առատօրէն մատակարարուեցան բոլոր կարևոր բաներով: Նորանցով ուղևորուեցան 2,500 մարդեր—և որովհետև շատերին մերժեցին, ապա միքանիսները մտան նաւերի մէջ խաբէութիւնով: Շատերը յոյս ունէին կառուցանուլու նոր Աշխարհի մէջ գաղթականութիւններ:

Վերագառնալով Ամերիկայի մէջ, Կոլումբոսը գրտաւ ևս մի քանի կղզիներ, բայց Հայտու վերայ նա գտաւ բոլոր իսպանական շինուածները կործանուած ու այրուած, իսկ Իսպանացիներն անյայտացել էին: Կոլումբոսը հիմնեց այնտեղ մի նոր քաղաք, Խլարէլայ անունով: Այն ձիւները, որոնք բերել էր Կոլումբոսը, ազդումէին վայրենիներին այնպիսի երկիւղ, ինչպէս հրաձգական զէնքը: Մարդերը, որոնք փախչումէին այժմ զէպի Ամերիկայ, գնումէին արծաթ որոնելու յոյսով, կամ հասարակ աւարառութեան, աշխարհակալութիւնների համար. իսկ վայրենիներին

կամենումէին իւրեանց սորուհներ շինել: Թէպէտ և  
 իսպանական կառաւարութիւնը և ինքն կողմբոսը  
 նայումէին վայրենիների ծառայութեան վերայ, ինչպէս  
 մի օրինաւոր գործի վերայ, այնուամենայնով կողմ-  
 բոսն ընդունեց մի քանի հնարներ դաղթականներին  
 սանձելու, այդ յառաջ բերեց անմիաբանութիւն և  
 կողմբոսին յետ կոչեցին դէպ'ի իսպանիայ [1496 թ.]:  
 Երկու տարուց յետ նա ճանապարհ ընկաւ երրորդան-  
 դամ դէպ'ի Ամերիկայ, և գտաւ այս անգամ նոյն իսկ  
 ցամաքը: Բայց, յետ դառնալով դէպ'ի Իզաբելայ, նա  
 գտաւ այնտեղ բոլորն անկարգութեան մէջ. կառա-  
 ւարութիւնը ուղարկել էր այնտեղ զողեր և աւա-  
 զակներ. ոչ ոք չէր կամենում աշխատել. աւարա-  
 ռութիւնները և բռնութիւնները թագաւորումէին  
 ամենայն տեղ: Նոր զանգատներից յետոյ, իսպանիայից  
 ուղարկուեցաւ մի աստիճանաւոր՝ կողմբոսի գործը  
 քննադատելու համար. բայց նա առանց դատաստանի  
 շղթայակապեց կողմբոսին և ուղարկեց դէպ'ի իսպա-  
 նիայ [1500 թ.]:

Տեսանելով կողմբոսին առաջին անգամը շղթա-  
 ների մէջ, իսպանական ժողովուրդն բնկաւ տհաճու-  
 թեան մէջ. շիտթութիւնն այնպէս զօրեղ էր, որ  
 թագաւորը պիտոյ է անցապաղ հրամայէր ձգել նո-  
 բանից շղթաները և ազատել նորան . . . . Գորանից  
 յետ կողմբոսը յանձնառու եղաւ ևս չորրորդ ճա-  
 նապարհորդութիւնը դէպ'ի Ամերիկան և յետ դար-

ձաւ արդէն դէպ'ի Սեիլեայ: Իւր գործերը նա գտաւ  
 ամենեւին անկարգութեան մէջ: Այն արդիւնքները,  
 որոնցը նա պիտոյ է ստանար պայմանի համեմատ,  
 արդէն մի քանի տարիներ մնացին իսպանական կա-  
 ռաւարչի ձեռքը Ամերիկայում: Եւ որովհետեւ կողմ-  
 բոսը յանձն առաւ վերջին ճանապարհորդութիւնը  
 իւր հաշուով և նա նմա թանկ նստեց, ապա նա  
 ընկաւ դժուար դրութեան մէջ: Նա պիտոյ է պահ-  
 պաներ խիստ կերպով անտեսականութիւն և զրեց  
 դէպ'ի թագաւորը. բայց դրան մտ գործը միայն յե-  
 տաձգեցին: Նա զրումէ իւր մի նամակում դէպ'ի որ-  
 դին. «ես խիստ սակաւ օգուտ ստացայ իմ երկոտա-  
 սանամեան ծառայութիւններից, աշխատութիւններից  
 և վտանգներից, որովհետեւ ես չունիմ իսպանիայում  
 մինչև անգամ մի ծածկոց, որանով կարող լինէի  
 ծածկել զլուսս: Երբ ես կամենում եմ ուտել կամ  
 քնել, ես պարտաւորվում եմ զնալ դէպ'ի հիւրանոց  
 և շատ անգամ ես ոչինչ չեմ ունենում վճարելու:»  
 կողմբոսն անկասկած էր մի պատուաւոր մարդ. մինչև  
 անգամ գտանելով ոսկի, նա չէր կամենում ոչ յա-  
 վիշտակել, ոչ աւար հարկանել [թալանել] երկիրը:»  
 «Հարկաւոր է, ասում էր նա, նախ և յառաջ կառու-  
 ցանել կառաւարութիւն, ապա կարելի կլինի ձեռք  
 ոսկին, աստուց դիմելու դէպ'ի Բանուելին:» Այն միջո-  
 ցում իսպանիայի մէջ նա ստիպուած էր անցուցա-  
 նել իւր օրերը աղքատութեան մէջ:

Նա գրումէր դէպ'ի զուրը, բայց որովհետև ինքն չէր կարողանում գնալ, ծերութեան և հիւանդութեան պատճառով, ապա և նորա խնդիրը թողուած էր առանց ուշադրութեան:— Այն միջոցում իսպանական թագուհին մեռաւ. ապա Կոլումբոսն ինքն ուղևորուեց դէպ'ի զուրը հոգ տանելու այդ գործի մասին. բայց բոլորն անօգուտ. նա պատրաստ էր յետ դարձուցանել իւր բոլոր արտօնութիւնները. և ակտերը՝ դրամագլուխ ստանալու համար, ինչքան միայն կբարեհաճի թագաւորը: Նա խնդրեց միայն մի բան, այն է՝ որ իւր գործը շուտով վճռուէր, որ նա կարողանար հեռանալ դէպ'ի մի հանդարտ անկիւն: Նորա հիւանդութիւնը և ծերութիւնը պահանջումէին հանգստութիւն. թագաւորը բաւականացաւ տալ նմա խոստումներ և ցոյց տալ կեղծուպատիր հաճոյական խօսքերը [կոմսյի մենտներ]: Կոլումբոսն սպասումէր, բայց 'ի գուր: Վերջին այցելութիւնը դրան բոլորովին սպառեց նորա զօրութիւնները: Նա մեռաւ 1506 թուականի Մայիսի 20-ին, 70 տարեկան հասակում ծննդից:

Մահից զկնի թագաւորը հրամայեց կառուցանել նորա յիշատակի համար մի յիշատակարան:

5.

Ռ Ա Մ Ո Ի Ս :

(1515 — 1572)

Ռամուսը ծնուեց Պիկարդեայի մէջ [Ֆրանսիայում]. նորա ծնողները էին խիստ չքաւոր մարդեր. նորա հայրը պարապումէր ածխագործութիւնով, չկարողացաւ տալ նմա ոչինչ կրթութիւն և ստիպումէր նորան արածել հօտեր: Երեխան խիստ վաղուց զգաց չափազանց ջերմ սէր դէպ'ի զհիտութիւնը. ութ տարեկան նա փախաւ բոկոտն հայրական տունից դէպ'ի Փարիզ՝ ուսանելու: Բայց Փարիզի մէջ նա պատահեց այնպիսի չքաւորութեան, որ երկու անգամ դարձաւ տուն, միայն թէ չկորուսեց քաջութիւնը. երրորդ փորձն առաւել յաջող գտանուեց: Նա մտաւ ծառայի յատկութիւնով նաւարեան կոլլեգիայի մի հարուստ աշակերտի մօտ. ցերեկը նա ծառայումէր միշտ իւր պարոնին, իսկ զիշերն ուսանումէր: «Վերջում Ռամուսն իրաւունք ունէր ասելու. երկար ժամանակ ես ենթարկուած էի խիստ ստրկութեան, բայց իմ հոգիս երբէք չէ եղել ծախուած. նա երբէք չէ ցածացել և միշտ ազատ է եղել:»

Նոյն օրինակ ջերմեռանդութիւնով պարապումէր նա փիլիսոփայութիւնով, լեզուագիտութիւնով և մանկութեան իրաւունքով: Քաջութեան հետ միասին, Ռամուսը

յոյց տուեց և մտքի այն անկախութիւնը, այն ատե-  
լութիւնը դէպի հին ձևը գործողութեան և սէրը  
դէպի յեղափոխութիւնը, որոնք կազմեցին նորա  
փառքը և նորա քամբազողութիւնը: Այդ ժամանակ  
թագաւորումէր սխոլաստիքան\*.] յոյն մատենագիր  
Արիստոտելի խօսքերը նուիրական աշխարհից եկած մի  
ձայն էին համարվում. նորան ընդունումէին առանց  
ընտրութեան: Այդպիսի դիտութիւնը չկարողացաւ  
բաւականութիւն տալ Ռամուսի պայծառ մտքի պա-  
հանջումներին: Մագիստրոսի աստիճան ստանալիս, նա  
վատահումութիւնով պաշտպանեց այն կարծիքը, որ Ա-  
րիստոտելի բոլոր ուսումները սուտ են: Հակառակորդ-  
ները ընդդիմաբանեցին նմա, բայց նա յաղթող հան-  
դիսացաւ և սովաեց նորանց լռել: Նորա վարդապե-  
տական դասախօսութիւնները [լեկցիաները] զրուած  
էին նոյն հոգով: 1543 թուին նա հրատարակեց  
երկու գիրք. մինի մէջ նա մեկնաբանումէր արամա-  
նական յատուկ սխտէմը [սխտ աստիճանապէս հետե-  
ողական կարգ, գիտութիւնների արտայայտութեան  
մէջ]. միւսի մէջ խստութիւնով և մի մասնով ան-

\*) Մագած լատ. scholasticus (գորոցական) բառից, փի-  
լիսոփայութեան մի անուակ ուղղութիւն, միջին դարերում  
մանաւանդ, որ խիստ նեղ կապակցութեան մէջ էր դրան-  
վում աստուածաբանութեան հետ: Այդ բառով հիմայ հաս-  
կացվումէ, սովորաբար, գիտութիւնների մեռած ու ան-  
կենդան ուղղութիւնը դպրոցների մէջ:

Շան. փոխ.

արդարութիւնով քննողութեան տակ ձգեց Արիստո-  
տելի վարդապետութիւնը: Ռամուսի նպատակն պնդու-  
էր. նա մաքառումէր ոչ այնքան յոյն փիլիսոփոսի,  
որքան նորա մեկնաբանողների հետ. նա պահանջու-  
մէր գիտութիւնից պարզութիւն, զրականութիւն և  
ուղղակի ազդեցութիւն կեանքի վերայ. իսկ այդ բո-  
լորին ընդդիմաբանումէր սխոլաստիկան:

Բայց, յարձակուելով նորա վերայ, Ռամուսն իմա-  
ցաւ, որպիսի վտանգների է ենթարկվում. նորա քա-  
ջութիւնը յիշեցնումէ նոյն իսկ Հուսին, թէ մին թէ.  
միւսը, 'ի դուր չէր որ դուրս եկան ծողըւրեկ. «Արիք  
պատահելիս»-ասումէր նա հարկաւոր է մեռանել ա-  
ռանց քրթմնջելու և հանդիսապէս: Ամենից յառաջ  
վեր կացան նորա դէմ համալսարանների զլխաւորները,  
նորանց ատելի էին նորա նորամուտ սովորութիւնները.  
բացի դորանից, նախանձումէին այն սէրի վերայ, որ  
անուցանումէին դէպի նա աշակերտները: Նորանք ա-  
սումէին որ նա յարձակվումէր Արիստոտելի վերայ նո-  
րա համար, որ հետզհետէ քտորացնի գիտութիւն-  
ները և կրօնը. զանգատուեցին նորա վերայ քաղա-  
քական դատարանին, նա ևս պարլամէնտին: Սորանով  
չբաւականանալով Ռամուսի թշնամիները դարձան ուղ-  
ղակի Ֆրանցիսկոս 1-ին թագաւորին. նորանք խնդրում-  
էին նորան, որ նա «դատապարտէր այդ մարդին դէպի  
աքսորատեղին» թագաւորը յանձնեց գործի վճռողու-  
թիւնը ժողովին, որ կազմուած էր հինգ յայտնի ու-

սու մնականներէց: Նորանցից մեծ մասը Ռամուսին հա-  
կառակ էր, որն համար և դատապարտուեցաւ: Նմա  
թոյլ'ատրուած չէր մատակարարել փիլիսոփայութիւն,  
իսկ նորա դրքերն այրուեցան: Այս վճիռը հրատա-  
րակեցին լ'աթին և փրանսիական լեզուներով, տա-  
րածեցին փարիզեան փողոցներում և ուղարկեցին  
զլխաւոր և բոսպական քաղաքների մէջ: Ռամուսի  
թշնամիները չբաւականացան դորանով. նորանք նոյն  
իսկ նորա անունը նախատական անուն շինեցին:

Սպասելով ստանալ նոր կարողութիւն վեր կենա-  
լու սխոլաստիքայի դէմ, Ռամուսը սահմանափակուեց  
ճառախօսութեան և մաթեմատիքայի մատակարա-  
րութիւնով: 1545 թվում, երբ ժանտախտն արտա-  
քսեց Փարիզից բոլոր աշակերտներին և ուսուցիչներին  
և անապատ դարձրեց բոլոր ուսումնարանները, Ռա-  
մուսը հրաւիրուեցաւ վերականգնելու իւր մատակա-  
րարութիւնով Պրէլեան Աոլլէզիան: Նա դարձաւ  
զլխաւոր այս կոլլէգիայի մէջ և, նորա շնորհով, այդ  
կոլլէգիան դարձաւ ամենաճաղկածը բոլոր Փարիզի  
մէջ: Պարլամենտի մէջ մտաւ գանգատ, որ Ռամուսը  
համարձակուել է քննել Աուինտիլիանոսը և մեկ-  
նել Աիկերոնի գրութիւնները: Նւ նորան արդարեւ  
դատապարտելու էին այդ յանցանքի համար, եթէ  
հռովմէական արքեպիսկոպոսը չպաշտպանէր նորան:  
Նրբ գահի վերայ նստեց նոր թագաւոր, Ռամուսին  
նորից թոյլ'ատրեցին մատակարարել փիլիսոփայու-

թիւն, իսկ 1551 թուականում նա հաստատուած  
էր փիլիսոփայութեան և ճառախօսութեան վարդապետ:  
Յայնժամ հասաւ նորա համար ամենահարուստ և ամե-  
նազործունեայ ժամանակացանկանայով բարեզբել մատա-  
կարարութիւնը: Նա հազորդեց իւր ունեկիրներին մի նա-  
խագիծ, որն ընդունած էր նա տրամաբանութեան կա-  
նոնների լիապարունակ և հետեւական հրահանգութեան  
համար [1552 թ.]: Մազրածութիւնները և սուլողու-  
թիւնները [չվչվայնելը] նորա վերայ դադարեցրին նո-  
րան նոյն իսկ սկզբից. բայց նա սպասեց մինչև որ  
կտիրէր հանդարտութիւնը և, չնայելով հակառակորդ-  
ների աղաղակներին, վերջացրեց իւր ճառախօսութիւնը  
այնպիսի սառնարիւնութիւնով, որ նորանցը բոլորո-  
վին շփոթեցրեց: Նորանց դադանի դարանազործու-  
թիւնները արգելք չդարձան նմա լրացնելու նախա-  
գիծը, որը կազմած էր նա դասախօսութիւնը բարեզբելու  
համար: Նա յայտնուեց ինչպէս նորոգող համարիւր  
թէ բոլոր գիտութիւնների մէջ. ամենայն տեղ նա  
ցոյց էր ապիւս նոր ճանապարհներ: Նա կազմեց լիա-  
կատար Ֆիլոզֆամաթեմաթիքական կուրսի նախագիծ,  
հրատարակեց Ֆրանսիական, գերմանական և երբայա-  
կան լեզուների քերականութիւններ, և հին սկիզբների  
պաշտպանների հետ բացեց մի ջերմ հակառակութիւն:  
Նրբ երեւեցաւ կարեւորութիւն համալսարանները փոխա-  
կերպելու, սպա Ռամուսը նշանակուեց ժողովն անդամ,  
որ կազմուած էր կրթողական շինուածներում բարեզբ

փոփոխութիւններ ձգելու համար: Նա հաղորդեց թագաւորին կարծիք, որ զանազանվումէր հաւատարիմ և գործնական հայեացքով առարկայի վերայ: Միւսների թիւում, նա ապացուցեց ձրի մասակարման հարկաւորութիւնը. միայն թէ նորա կարծիքը չնդունուեց:

Այն ժամանակ բոլոր Եւրոպայում չկար պրոֆէսուսոր, Ռամուսին հաւասար, ունկնդիրներին ազդելու վերաբերութիւնով: Բազմակողմանի զիտութեան և մտքերի համարձակութեան հետ նա միաւորեց և փայլուն զեղեցկախօսութիւնը: Բարձր ձիրքերին հաւասար նա ունէր և բարձր բնաւորութիւն, մինչև անգամ թշնամիների համար անպարտաւելի: Նա չափազանց խիստ և բարձր բարոյականութեան տէր մարդ էր: Իւր համեստ արդիւնքների նշանաւոր մասը նա տալիս էր այն չքաւոր երիտասարդներին, որոնք զալիս էին դէպի Փարիզ՝ ուսանելու: Բայի դորանից, նա կարողացաւ կազմել մի դրամադուլս, որանով, նորա կտակի համաձայն, պիտոյ է հիմնուէր մաթեմատիքական զիտութիւնների ամբիոն: Իւր կեանքը վարելով արիւնհեղական խռովութիւններով զայրացած սիրունիների մէջ, նա ստացաւ այդտեղից միայն արհամարութիւն մահին, մի մասնով ևս, այն ժամանակ տիրապետող զրաւոր վիճաբանական ուղղութիւնը:

Հասկանալի է որ Ռամուսը չմնաց անտարբեր դէ-

պի քաղաքական և կրօնական հարցերը, որոնք ստանուումէին այն ժամանակ և բուպական ժողովուրդներին: Նա ջերմեռանդ բողոքական էր. չէր ծածկում իւր համոզումները կաթոլիք ֆարիզի մէջ: Նորա սէրը դէպի բողոքականութիւնը հասկանալի է, որովհետև բողոքականները զանազանվումէին ուսումնասիրութիւնով: Աթոլիքներում 10 քահանաների վերայ գալիս էր ութ մարդ, որ չգիտէին կարդալ: Այդ պատճառով չնայելով երեւելի մարդերի զօրեղ հովանաւորութեան վերայ, նա շատ անգամ միջնակութիւններում ստիպուած էր որոնել ապաստանարան իւր դաւանութեան զօրաբանականների մէջ, որովհետև ֆարիզից շատ անգամ արտաքսումէին բոլոր բողաքականներին:

Նորից վերադառնալով դէպի Փարիզ, ինչպէս Պրէպիան կոլլեգիայի վարդապետ, նա վերկացրեց իւր դէմ ամենավաղէմի և վտանգաւոր թշնամիներից մինի, Շարպանտիէի մահառիթ առելութիւնը, նորանով որ վեր էր կենում շատ անգամ այդ սահմանափակ մարդի կոչման դէմ, որ պրոֆէսուսոր էր մաթեմատիքայից: Շարպանտիէի և նորա բարեկամների կատաղութեան սահման չկար: Նոյն իսկ Ռամուսի մարուսը նորանց համար ծաղրածութեան առարկայ էր դարձած: Ռամուսի թշնամիների համար լաւ միջոցներ կային. ամենատեսակ նախատական թղթեր և զրպարտութիւններ, փորձեր՝ սպանելու նորան . . . Մի անգամ Ռամուսի մօտ մտաւ մի զինուորուած կատաղի մարդ,

նորան սպանելու դիտաւորութիւնով։ Ռամուսը կարողացաւ յաղթել նորան. բոլոր բաւականացաւ նորանով, որ արտաքսեց տանից, առանց ձգելու դատաստանի տակ . . . Միւս անգամ նորա թշնամիները վեր կացրին նորա դէմ շիոթութիւն. այնժամանակեան ակադէմիայի [այսինքն համալսարանի] ամենից նշանաւոր կուուսաէրները եկան պաշարելու Պրէպիան կոյ՛էզիան։ Ռամուսը հրամայեց բանալ նորանց դռները և ինքն դարձաւ դէպի նորանց մի ճառասուսութիւնով, որ գործեց նորանց վերայ այնպիսի տպաւորութիւն, որ բոլոր խումբերը ցրուեցան. այնպէս որ ոչ մի մարդ չէր համարձակվում փորձ փորձել նորան սպանելու, թէպէտ և սպանելը շատ հեշտ էր և այն աղմկալից միջոցում սպանութիւնը կարող էր մնալ բոլորովն անպատիժ։ 1568 թուականում, երբ սխուեցին փարիզի մէջ նոր հալածանքներ, նա գնաց դէպի Գերմանիայ, որտեղ նա այնքան յարգուներ ունէր, որքան և թշնամիներ Արիստոտէլի և սխոլաստիքայի պաշտպանողներ։ Հէյդէլբերգում նախապաշարուած ուսանողները ծաղրածութիւնով և սուլելով էին պատահում նմա։ Ռամուսը կարողանումէր բարձրանալ ամբիոնի վերայ իւր Ֆրանսիացի աշակերտներից մինի ուսի վերայ հաստատուելով։ Նորա դասերը այնպէս նոր էին երիտասարդների համար, նորա եզրակացութիւններն այնպէս զեղեցիկ, որ ընթերցանութիւնը վերջանումէր բոլոր ընկնողիւնների ծափա-

հարութիւնով։ Բոլոնեան և Կրակովեան համալսարանները առաջարկեցին նմա փիլիսոփայական ամբիոն։ Բայց Ռամուսի սերը դէպի իւր հայրենիքն այնպէս խիստ էր, որ նա հրաժարուեց և յետ դարձաւ դէպի Փարիզ։ Այնտեղ պատահեցին նմա նոր հալածանքներ. շուտով նորան, ինչպէս բողոքականի, արգելեցին դասասուսութիւն անել։ Այս նա ինչոքեց իւր համար վարդապետական պաշտօն ձեռնեկայի, կալվիսութեան կենարոնի մէջ. բայց նորան մերժեցին. հեղափոխական եկեղեցու ղեխաւորները չէին սիրում Ռամուսին, չնայելով նորա խորին բարեպաշտութեան վերայ։ Նորա նորամայժ սովորութիւնները դիտութիւնների մէջ ազդումէին նորանց սրտերում անհաւատարմութիւն. և արդարև, Նեման Ժողովում նա առաջարկեց սահմանափակել Կրակովեայի եշխանաւելեանը և սրբաբարեւ նորան հասարակութեան համար։

Այն միջոցում թաղուհին և մի քանի պալատական աղետականներ զաղանի դաշնկապեցին կոտորել փրանսիական բողոքականներին։ Այդ կոտորածից կարճ միջոց անցանելով, Ռամուսին առաջարկեցին խիստ շահաւէտ պայմաններ, որ նա զնար դէպի Ղեհաստան և իւր զեղեցիկասուսութիւնովը պահպանէր Ֆրանսիական կանդիտատին Ղեհական գահի համար։ Հռետորդապատասխանեց նա՛նախ և յառաջ բոլորի առաջև պիտոյ է լինի պատուաւոր մարդ. նա չպէտք է վաճառի իւր զեղեցիկասուսութիւնը։

Այդ հրաժարմանից եօթն օր անցանելով, փարիզի մէջ սխուեց բողոքականների սպանութիւնը: Ռազուհուն հարկաւոր էր սպանել վեց մարդ միայն: Բայց այդ առիթով զոհ եղան սպանութեան ամբողջ հազարաւոր մարդեր: Ուրիշների թվում սպանուեց և Ռամուսը: Սպանողներին բերեց նորա մօտ իւր ընկեր պրոֆէսոր Շարպանտին:

Շարպանտին Ռամուսի ամենաղլխաւոր թշնամիներից մին էր: Ռամուսը միշտ հպաճումէր այս անարժան վարդապետին, որովհետև Շարպանտին չէր իմանում առաջին երկրաչափական կանոնները, և արձաթի միջնորդութիւնով էր ստացել մատեմատիքայի ամբիոնը: Առաջին դասախօսութեան համար նորա մօտ ժողովուեցան 2000 մարդեր. իսկ յետոյ, ինչպէս ասումէր Ռամուսը, ժողովուեցան միայն 13 չքաւոր ուսանողներ:

Սպանողները գտան Ռամուսին վերին յարկում: Մին նորանցից ձգեց հրացանը նորա զլխի վերայ, երկու զնդակները դիպան պատին. միւսը խփեց նորան սրով: Արիւնը յորդութիւնով դուրս թափեց, բայց Ռամուսը զեռ ողջ էր. սպանողները դէպի վայր ձգեցին նորան հինգերորդ դռակոնի պատուհանից: Մարմինը դիպաւ յարկին, դրոուեց և ընկաւ գաւթի մէջ: Ռամուսն այնուամենայնով զեռ շունչ էր քաշում: Նորա ոտները կապեցին թոկով և քարշեցին դէպի Սէնայ փողոցը: Այստեղ նորան ձգեցին ջրի մէջ: Գիակը լու

ղումէր ս. Միքայէլի կամուրջի մօտ. Ռամուսի թշնամիները վճարեցին արծաթը: Գիակը դուրս ձգեցին և նորից ծաղը էին անում նորա վերայ . . . Յետոյ, մինչև անգամ Շարպանտինի բարեկամները երգեր յօրինեցին այդ սպանութեան համար և երգումէին այդ սպանութիւնը:

6.

Ջ Ի Ո Ր Դ Ա Ն Ո Յ — Բ Ր Ո Ի Ն Ո Յ:

[1550 — 1600].

Չորդանոյ Բրունոն ծնուեց Նոլում, որ մի փոքրիկ քաղաք է ոչ հեռի Նէապոլից [մօտ 1550 թ. ք. ծ. յետ]. Նորան դաստիարակեցին մեծ խնամքով. մատեմատիքայից և փիլիսոփայութիւնից զատ, նա պարագումէր զրականութեան և աստուածաբանութեան ուսումնասիրութիւնով. մանկութիւնից նա զանազանփումէր սուր յիշողութիւնով, հեշտ հասկացողութիւնով, եռանդնոտ բնութիւնով և հակամտութիւնով դէպի մտքի յափշտակութիւնը: Նա խիստ վաղ մտաւ դոմինիկեան արեղանների կարգի մէջ և կամենումէր նուիրել իւրեան մուսաներին այդ ապատարանի մէջ. բացի դորանից նորան քարշումէր դէպի այդտեղը հռետորական ասպարէզը. դոմինիկեան կարգը էր մեկարգ եղբայր-քարոյնչների:

Սակայն դա մի երիտասարդական պատրանք էր. նա պատահեց այնտեղ չարագործութեան, նախանձի

կոպտութեան, բռնաւորութեան և կեղծաւորուած բարեպաշտութեան: Նա չկարողացաւ հրաժարուել ազատամտութիւնից, այդոր համար և նմա ամենայն տեղ պատահեցին խիստ շատ հակառակութիւններ, ոչ միայն Նէապոլում, բայց և միւս քաղաքներում. Գէնուայում, Նիցցում, Միլանում, Վենետիկում: Նորա կարծիքները մի քանի կաթողիք վարդապետութիւնների վերաբերութիւնով, նմանապէս և Սրիստոտէլի մասին պիտոյ է յառաջ բերէին նորա համար հալածանքներ: Եւ սորանից ազատելու համար, նա պիտոյ է դեռ երեսուն տարեկան թողնէր խալիան [1580 թ.]: Կամենալով իւր կեանքը նուիրել իւր համոզումներին, նա պարտ էր զոհել և իւր ստացուածը և իւր հայրենիքը: Սակայն և այնպէս, նա յոյս ուներ, որ ատելութիւնը, որը զրգուց իւր դէմ խալիայում, կհանդիս և նա հանդարտութիւնով կըստանայ դէպի հայրենիքը: Նախ Բրունոն ուղևորուեց դէպի ժենևան. դէպի այնտեղ քարշում էր նորան համակրութիւնը եկեղեցական կերպարանափոխութեան: Բայց և այստեղ կեանքը նորա համար անտանելի դարձաւ: Կալվինի յետնորդները, պապերի պէս, աստուահաճոյ գործ էին համարում սուրով և թուրով հալածելը հերիտիկոսներին: Այդպիսի կերպով ժենևեայում ևս Բրունոն պատահեց մի և նոյն կրօնական անհամբերութեան, մի և նոյն անպայման յարգութիւնը գտաւ դէպի Սրիստոտէլը, որոնց համար նա փախած էր խալիայից:

Ապա նա բնակուեց Տուլուզում, բայց և այստեղ բարձրացրեց իւր դէմ սխոլաստիքական կատաղութիւնը, այդ քաղաքը չափազանց մոլեռանդ էր և Բրունոն շտապեց հեռանալ այստեղից: այլապէս նորան սպասուէր մի և նոյն վիճակը, որ հասաւ այդ քաղաքում Վանինիուն \*):

\*) Վանինին, փիլիսոփոս ինչպէս և Բրունոն, նախ ճանապարհորդեց համարիւր բոլոր կրօնական կողմերը, որտեղ մշակվում էր փիլիսոփայութիւնը. Գերմանիայի, Հոլլանդիայի, Բէլգիայի, Անգլիայի վերայ. կացաւ Ժէնևեայում. ապա բնակուեց առ ժամանակ Լիոնում և Փարիզում և ապա անխոհեմ գտանուեց տեղափոխուելով դէպի Տուլուզ քաղաք որ շառաւելապէս կաթողիքական էր», որտեղ գտանվում էր ինկուիզիցիան (հողևոր դատարան, պապերից սահմանած վասն գտանելու և պատժելու հերիտիկոսները) և որտեղ պարլամենտը նոյնպէս մոլեռանդ էր, ինչպէս յիսուսականները. Վանինուն իսկոյն մատնեցին, ինչպէս անաստուածի. նորան բանդարկեցին և դատապարտեցին: Նախ և յառաջ Վանինին պատասխանում էր խորշողաբար և ջանք էր անում արդարանալ: Բայց երբ ճակատագիրը վճռուեց, նա այլ ևս ողորմածութիւն չէնդրեց և գնաց դէպի տանջարանը սառնարիւն կերպով: Ժամանակակիցները մին ամուսն էր նորա մասին. «նա մեռաւ այնպիսի համբերութիւնով, որպիսին ևս տեսած չէի ոչ մի մարդի մէջ»: Դատի վճռի համաձայն, երեսնագործական հանդէսը կատարելուց յետ, կտրեցին նորա լեզուն և խեղտեցին թօկով: Ապա մարմինն այրեցին փայտակուտի վերայ և մոխիրն աւանդեցին քամուն, նորա ստացուածը առնուեցաւ արքունիքի մէջ: —

Այն ժամանակ Բրուսն ուղևորուեց դէպի Փարիզ. այտեղ, Ռամուսի շնորհով, մտքերը յառաջադիմութեան քայլ էին կատարած: Բրուսն սասցաւ իրաւունք տրամաբանական դասախօսութիւն անելու, և, չնայելով առարկայի չորութեան վերայ, իւր հրապուրողական խօսքի զորութիւնով, նա քարշեց դէպի ինքն շատ ունկնդիրներ և թողեց հիացած հետևողներ: Ապա, Անգլիայի մէջ ճանապարհորդելուց յետ, երկրորդ անգամ Փարիզի մէջ մտանելուց յետոյ, նա վճռեց զուրս դալ Արիստոտէլեան փիլիսոփայի դէմ: «Ճշմարտութիւնը ասաց նա իւր դասերի համար աւելի շուտով նոր է, քան թէ հին: Աթէ նա նոր է, ապա համալսարանը, որ սաստիկ սիրում է ճշմարտութիւնը, պարտաւոր է որ ցանկանայ իմանալ նորան. եթէ նա հին ճշմարտութիւն է, ոչինչ հարուած չէ կարող լախտել նորան. ամենախիստ յարձակումը նորա վերայ միայն կարող էր նորան հաստատել: Թէ այդպէս թէ այնպէս, ամենայն դիպուածում, իւրաքանչիւր փիլիսոփոս իրաւունք ունի ազատօրէն մտածել և ազատօրէն արտայայտել իւր միտքը . . . Չկայ մի հին կարծիք, որ եղած չլինէր երբ և է նոր: Աթէ հնութիւնը նշան է ճշմարտութեան, ապա մեր դարը ունի իրաւունք աւելի մեծ վարկ [համարումն] ունենալու, քան Արիստոտէլի դարը, որովհետև Արիստոտէլից յետոյ անցել է արդէն քսան դար:» Զինի դորա, նա իւր դասերի մէջ հերքումէր երկրի

անշարժութիւնը, խօսումէր տիեզերքի անասհմանութեան վերայ . . . . Դա այնպիսի շփոթ յառաջացրեց, որ նա պարտ էր հեռանալ Փարիզից:

Երանսիայից Բրուսն ուղևորուեցաւ դէպի Գերմանիայ և մնաց սկզբում Մարբուրգում, շէտէնի մէջ: Այդ համալսարանում արիստոտէլեան փիլիսոփայութիւնն արդէն հալածուած էր Ռամուսի տրամաբանութիւնով. միայն Բրուսն չստացաւ թոյլտվութիւն փիլիսոփայութեան դասեր տալու: Նորան մերժումէին «կարևոր պատճառներով». բայց կարևոր պատճառները յայտնում չէին: Նորանք, անտարակոյս, լինելու էին. ազատ միտքը և մտածողութեան համարձակութիւնը, որոնք Բրուսից յատկանիշներն էին:

Վիւրտէմբերգում, գերմանական լուսաւորութեան միջնակետում [կենտրոնում], Բրուսն զտաւ աւելի թոյլտվութիւն և պէտք էր մեծարել «փիլիսոփայական ազատութիւնը», որին նա այնտեղ պատահեց: Նա գրումէր Վիւրտէմբերգի սենթիսին. «Դուք թոյլատրեցիք մի օտարական մարդի, այլադաւանի, հրապարակով դասախօսութիւն անել ձեր մէջ. որպիսի մարդաիրութիւն: Դուք ականջ չդրեցիք տարածած համբաւներին նորա բնաւորութեան, նորա կարծիքների վերայ: Դուք զարմանալի չափաւորութիւնով տարեցիք նորա եռանդնոտ յարձակումները արիստոտէլեան փիլիսոփայութեան վերայ, որ թանկ է ձեր պրոֆին» չրածեշտին իւր վերջին բանախօսութեան մէջ

նա հիացած գովասանումէ Վիթերին, որպէս փիլիսոփոսի, «մտքերն ազատողի, բարոյականութեան մէջ կարգ ձգողի» Այդ առիթով վերջում Բրունոյի համար ասումէին, թէ «նա Վիւրտեմբերգում հրապարակով գովաբանեց սատանային և ծախեց իւր հոգին դէին» Միւսներն ասումէին թէ նա բնդունել է լիւթերական դաւանութիւնը, այն ինչ նա ոչ լիւթերական էր, ոչ կաթողիք. նա յոյս ունէր, որ կգայ ժամանակ, «երբ ոչ այս լեառնի վերայ, ոչ Երուսալէմի մէջ կ'երկրպագանէք Հօրը» [Յովհ. IV, 21]. նա դաւանումէր մի աւելի մշակադործուած, աւելի սուրբ և մաքուր դաւանութիւն, քան լիւթերականը, նա քարոզումէր նոյն ժամանակի մէջ և սէր դէպի մարդերը և սէր դէպի միտքը»

Բրունոն եղաւ մի քանի զերմանական քաղաքներում ևս, Գերմանիայի մէջ նա հրատարակեց շատերն իւր հեղինակութիւններից: Այդ հեղինակութիւնները յոյց են տալիս նորա բազմութեաց լինելը, կատարեալ հասկացողութիւնը հին փիլիսոփոսներին, հիմնաւոր դիտութիւն փիլիքայի և մատեմատիքայի, համարձակութիւն, բնբամոտութիւն, զօրեղ երեւակայութիւն, բայց նոյնպէս և սրամիտ ստոխրիքական \*) տալանտ:

\*) Ածականն է սատիրայ բառի, որ, ինչպէս նա և զրեթէ բոլոր արդի երոպական լեզուների բառերի մեծ բաժինը, ունի իւր ծագումը լատինական լեզուի մէջ, և նշանակումէ հեղինակութիւն, որանում ծագումն ճարտարաբուն կերպով որ և է հասարակութեան թոյլ կողմերը, ամէն յարաբերութիւնով, երգի ծաբանութիւն:

Ման. փոխ.

1584 թվում լոյս աշխարհ տեսաւ նշանաւոր «Աքսորումն հանդիսացող անասունի», որտեղ անասուն անունով հասկացվումէ տղիտութիւնը և առհասարակ ծագվումէ XVI-դ դարի վարք ու բարքը: Իսկ պապը բնդունումէր այդ իւր համար: Նորա միւս հեղինակութիւններից նշանաւոր է Del infinito universo e mondi, որտեղ նա ասումէր, որ տիեզերքն անասման և անչափելի է: Ապա իւր ուսումը աշխարհների բազմութեան վերայ. այդ բոլորն 'ի միասին 'ի հարկ է պարտ էր զօրացնել նորա խաղական թշնամիներիատելութիւնը: Առհասարակ, ինչպէս փիլոսոփոս, նա բարձր է բոլոր խաղացիներից և նորան իրաւացի կերպով էին ասում խաղիայի փիլոսոփայական հանձար»:

Վերջապէս իննամեայ թափառականութիւնից զինի օտար սահմաններում, Բրունոն դարձաւ դէպի հայրենիքը և բնակուեց Պադուայում: Բայց խեղճ բանդարկուեց վննեախիկեան Կնկուիլեցիոնից և վննետիկեան բերդերում նստեց ամբողջ վեց տարիներ . . . Մեծ ինկուիլատորը, որ այդ ժամանակ զտանվումէր Հռոմում, պահանջեց Բրունոյին իւր մօտ» Այդ մարդը գրումէր նա ոչ միայն հերիտիկոս է, բայց հերիտիկոսապետ. նա դրած է զանազան գրուածներ, որոնցում նա զովասանումէ անդլիական թազուհուն և ուրիշ հերիտիկոսական պրինցներին. նա դրած է զանազան բաներ, կրօնի վերաբերած և հաւատի հակառակ, թէ-

պէտ և նա նորանցն արտայայտումէ փիլիսոփայորէն: նա հաւատադրուժ է, որովհետև յառաջ եղած էր դոմինիկեան նա շատ տարիներ կացած է ձենեկայի և Անդլիայի մէջ և այլն. Հայր ինկուիզատորը խիստ հաստատ էր այդ բոլոր պատճառների վերայ և Բրու-նոյի մասին խօսումէր, ինչպէս մի մարդի վերայ, որին կորուսած չէր իւր աչքից՝ արդէն քսան տարի: Վե-նետիկը երկար պահպանեց իւր բանասարկածին, վեր-ջապէս վեց տարուց յետ զեջաւ ինկուիզեցիայի թա-խանձեցուցիչ պահանջներին և տուեց նորան 1598 թուականին:

Չգիտով նորան իւր ձեռքը, ինկուիզիան ձեռք վարկեց նորան ուղղելու: Վիսաւոր հռովմէական ա-ստուածաբանները գալիս էին նորա նորա հետ մարա-ռելու և աշխատումէին բոլոր զօրութիւնով դարձու-ցանել նորան դէպի կաթոլիքականութիւն: Բայց նա անյաղթելի մնաց իւր համոզումների մէջ: Ապա կա-մենումէին բռնութիւնով ստիպել նորան հեռանալ իւր կարծիքներից, սպառնալով պատիժ: Բրունոն կարող էր իւր կեանքն ապատել, բայց այնպիսի էին նորա համոզումների զօրութիւնը և բնաւորութեան ազնվութիւնը, որ նա չարեց այդ: Փիլիսոփայութիւնը նորա կեանքի գործն էր և նա չվճռեց հեռանալ նորանից:

Եւ ահա, 1600 թուի Փետրուարի 9-ին, երկա-մեան բանդարկութիւնից զինի ինկուիզեցիական բան-

դերում, Բրունոյին տարան մեծ ինկուիզատորի պալատի մէջ: Այնտեղ, ծիրանաւորների, աստուածաբանների, ինկուիզեցիական անդամների, հռովմէական նահանգա-պետի ներկայութիւնով, Բրունոյին ստիպեցին չոքել և ընել դատախիզքը: Գատախիզքը պատմումէր նորա կեանքը, պարապումները, կարծիքները, այն աշխա-տութիւնները, որոնցով ինկուիզատորները կամենում էին նորան ուղղել, նորա յամառութիւնը և անի-բաւութիւնը, եղբակացութեան մէջ ասուած էր, որ նա պարտաւոր էր պատժուել ամենակարելի ողորմա-ծութիւնով և «առանց արիւն թափելու»: ինկուիզի-ցիայի լեզուով, այդ նշանակումներէն էլ այսուսած էրուով: Ընթերցանութիւնն աւարտելով, Բրունոյին հանդիսաբար մերժեցին եկեղեցուց: Նորա հաստատա-մտութիւնը այդ բոլոր ծիսակատարութեան ընթաց-քում չխախտուեց զէթ միանգամ: Վերկենայուց յե-տոյ, նա ասաց դատաւորներին կատարեալ հաւատա-ցած հայեացքով. «կարելի է, այդ դասախիւքն ա-ւելի ձեզ է շփոթեցնում, քան ինձ:» Բրունոյին ութ-օր ժամանակ տուեցին մեղքերն ապաշխարելու: Նա մնաց հաստատուն և չդաւաճանեց իւր համոզումները: Նորան տարեցին դէպի հրապարակը մեծ հանդէսով, որտեղ դրած էր փայտակոյտը. հրապարակը լի էր խուռն բազմութիւնով: Բրունոն բարձրացաւ փայտա-կոյտի վերայ բոլորովին հանդարտ, և մինչև անդամ հանդարտ մնացած էր և բոցի մէջ . . . Նորա փո-

շին քամուն աւանդեցին:

Մանասպիսի վեճակի հանդիպեցին շատ ուրիշ լուսալացիներ: Այդպէս, մի ուրիշ Նէոպոլիտացի, Կոմպանելլոյ, Բրունոյի պէս, մտաւ սկզբում դոմինիկեան կարգի մէջ: Նա նոյնպէս յարձակուեց Արիստոտէլէ և միջնադարեան փիլիսոփայութեան վերայ: Այդոր համար, նորան նոյնպէս հարածեցին: Քսա՛ն և Եօթն տարի նա մնաց շղթաների մէջ, բանդարկուեցաւ 50 բերդերում, տասն և հինգ անգամ գատաստանի մատնեցին և Եօթն անգամ ենթարկուած էր ամենախիստ տանջանափորձութեան: Մինչև որ աստիճան անարդար էր նորա վերայ դատաստանը, երևումէ նորանից, որ նորան մի անգամ մեղադրումէին ինչպէս հեղինակողի մի զրբի, որ զրուած էր 30 տարի յառաջ նորա ծնուելոց. միւս անգամ նորան մեղադրումէն Գէմնիքէտէսի կարծիքների համար, այն ինչ նա հեղինակութիւններ էր շինում Գէմնիքէտէսի դէմ: Բայց մինչև անգամ բանդերում ևս Կոմպանելլան պարապումէր զխտութիւններով, պաշտպանումէր Կոպէրնիկոսի և նոյն իսկ Գալիլէի սխտեմը, երբ արևորը նոյնպէս գտանվումէր Ինկուիզիցիայի դատաստանի ներքոյ:



7.

Գ Ա Լ Ի Լ Է Է:

[1564 — 1642]

Տասն և վեց դարի սկզբում Կոպերնիկն առաջինը հերքեց նախկին կարծիքը այն բանի վերայ, թէ երկիրը կանգնած է, իսկ արեգակը շարժվումէ նորա շուրջը. ընդ հակառակն, նա սպառնացեց որ արեգակը գտանվումէ արեգակնային սխտեմի միջավայրում, որ նորա շուրջը շարժվումէ երկիրը և միւս մոլորակները: Առաջին անգամ արտայայտել նմանապիսի կարծիք այն ժամանակեան տղիտութեան և նախապաշարումների մէջ, ՚ի հարկէ, վտանգաւոր էր: Այդոր համար և իւրեան ապահովելու համար տգէտների յարձակումներից, Կոպերնիկը նուիրեց իւր գիրքը պապին. բայց և այնպէս, պապը մեռաւ այն միջոցում, նոյն օրի մէջ, երբ բերին նորա մօտ զրբի առաջին սպաղարական օրինակը [1543 թ.]: Գալիլէին, որ պաշտպանումէր նորա կարծիքը, բազմ չունեցաւ մեռանելու իւր ժամանակին, նմա վիճակուեցաւ մի այլ բաժին . . .

Գալիլէին դեռ մանուկ ցուցանումէր նշանաւոր ընդունակութիւններ զորձ կատարելու և մինչև անգամ մեքենաներ հնարելու: Այդ ընդունակութիւնները մեծ յոյսեր էին խոստանում ծնողներին: Յլորէնցիայի մէջ նա ստացաւ լեակատար կրթութիւն.

բայց այդ կրթութիւնով նա աւելի պարտական է իւրեան և իւր ընդունակութիւններին, քան թէ իւր միջակ ուսուցիչներին: Նորանց մատակարարման պահասութիւնները նա լրացրեց ընթերցանութիւնով: Երաժշտութիւնը և նկարչութիւնն էին նորա ամենացանկալի երիտասարդական ձկտումները. բացի դորանից, նա յաջող կերպով կրթուեցաւ խոսակցական պոէզիայի <sup>1)</sup> մէջ: Նորա հայրն ունէր բազմաթիւ բնտանիք, իսկ ապրելու միջոցներ նա խիստ քիչ ունէր. այդ էր պատճառը նորացանկութեան, որ որդին պարապէր մի արդիւնաբեր գործով: 19 տարեկան ուղարկուեցաւ դէպի Պիզան՝ բժշկականութիւն և փիլիսոփայութիւն ուսանելու: Սխոլաստիքան և պերիպատետիքան <sup>2)</sup> այն ժամանակ բոլորովին թազաւորումէին այդ համալսարանի մէջ: Բայց Գալիլէյն չունէր յօժարութիւն անպայման կերպով ընդունելու

1) Հիմարտութեան այն անընդմիջական զարգացումը, որի մէջ մտքերը կամ իդէաները արտայայտւումն պատկերներով և որի զլխաւոր գործակատարն է երևակայութեան արարչական (ստեղծագործական) գորութիւնը, Փանտազեան:

Ման. փոխ.

2) Պերիպատետիկու ուսումն, որ հին—յունական փիլիսոփայական ուսումնարան էր, հիմնած Արիստոտէլից, որ վարդապետումէր աշակերտներին, զբօսանք առնելով նորանց հետ լիցելում:

Ման. փոխ.

ուսուցիչների խօսքերը: Նա սկսեց մաքառել այն «ծրչմարտութիւնների դէմ», որոնցը նորան ուսուցել էին, և դորա հետեւանքը եղաւ այն, որ նորան մեղադրեցին կամակորութեան համար և մշտապէս հակառակելու կրքի մասին:

1583 թվում, 19 տարեկան ժամանակ, նա արդէն ցուցանումէ իւր հանձարը: Միանգամ, Պիզանեան մայր եկեղեցում, նա դարձրեց ուշքը կախած ճրագի վերայ, որ պատահամբ շարժուեց . . . Նանկատեց, ինչպէս աննման էր աղեղների երկայնութիւնը, որոնցը նա գծումէր, թէ և նա գծումէր նորանցը մի և նոյն ժամանակում: Այս նկատողութիւնը գտաւ խիստ հարկաւոր Ֆիլիքական օրէնք: Գալիլէյն առաջարկեց գործադրել նորան բժշկականութան մէջ շատ թէ քիչ բացատրելու համար ստէպ բազկապարկութիւնը: Նոյն իսկ օրէնքից նա օգուտ քաղեց շինութիւնների բարձրութիւնը որոշելու համար. վերջապէս, նա օգուտ քաղեց նորանից նկատողութիւններ անելիս և՛ բաժշտութեան, աստեղաբաշխութեան և երկրաչափութեան վերաբերութիւնով: Գալիլէի հայրը, որ ցանկանումէր որ նա զլխաւորապէս պարապէր բժշկանութիւնով, տխրապէս իմացաւ, որ իւր որդին պարապումէ սաստիկ կերպով միայն Ֆիլիքական և մաթեմատիքական գիտութիւններով: Նա մինչև անգամ արդեւ նմա չզնայ այլ ևս դասերի համար Յատիլիոյ Ռիցցիու մօտ, որից Գալիլէյն ուսել էր ա-

ուաջին երկրաչափական կանոնները. այդ արգելք չեղաւ  
 Գալիլէին. նա միայն ստիպեց նորան ևս աւելի ջեր-  
 մեռանդու թիւնով ուսանել այն ինչ որ նմա արգե-  
 լեցին: Այդպիսի կերպով նա հասաւ մինչև Հին եր-  
 կրաչափ Եւկլիդի վեցերորդ դիրքը: Հայրը ղթաշարժուած  
 այդպիսի հաստատամտութիւնից, թոյլատրեց նմա պա-  
 րապել ինչպէս կամենումէ: Սորանից յետոյ Գալիլէյն  
 ջերմեռանդութիւնով կարդումէր Հին երկրաչափա-  
 կան գրքեր, և նորանց զխոտութիւնները քաջ սե-  
 փականելով իւրեան, փորձ էր փորձում զնալ զէպի-  
 յառաջ: Արխիմէդի, Կեղանի-Լեւեքի մէջ շողացող Տար-  
 մինէրի վերայ գրքի ընթերցանութիւնը ազգեց նորա  
 մէջ միտքը ջրահշուութեան վերայ, բայց իդէան նա  
 աւելի զարգացրեց վերջին անգամ: Զորեղ պարա-  
 պումները այդպիսի նշանաւոր յաջողութիւններով  
 յառաջ բերին նորա համար հռչակաւորութիւն և  
 զարձրին նորա վերայ մի այնժամանակեան երեւելի  
 երկրաչափի ուշքը, որ և յանձնեց նմա պարտապել  
 հարձի Տարմինէրի ծանրութեան կենսարոնով: Գալիլէի հետա-  
 խուզութիւնները շատ հաճելի եղան նմա և նա յան-  
 ձնեց նորան Յովհաննէս Մեղիչիսին և մեծ Հերցոգ  
 Փերդինանդին: Իսկ սա նշանակեց նորան 1589 թ.  
 մաթեմատիքայի վարդապետ Պիզայի մէջ: Ռոմիին  
 աննշան էր. բայց երխտասարդ Գալիլէյն ջերմեռան-  
 դութիւնով օգուտ էր քաղում այդ զէպքից մտքեր  
 սարածելու համար, որոնք համաձայն չէին Հին սկիզբ-

ների հետ, որոնք թագաւորումէին համալսարանում:  
 Նորա մատակարարութիւնն առաջնորդվումէր փորձե-  
 րով. նա սկսեց մարմինների շարժողութիւնից: Ար-  
 դէն Լուկրեցիան ասաց, որ եթէ ծանր մարմինները  
 արգելքների չպատահեն, ապա նորանք կընկնին մի-  
 անման արագութիւնով. Գալիլէյն այդ բանն ստու-  
 ղեց փորձով: Պիզայի մէջ կար մի աշտարակ, կա-  
 ուցած առ'ի շեղ խոտորնակ: Ականատեսների, աշա-  
 կերանների և պրոփէսորների ներկայութիւնով, Գա-  
 լիլէյն թողեց աշտարակից զանազան տեսակ մարմին-  
 ներ, ծանրութիւններ և սնդութիւններ, և ապա-  
 ցուցեց, որ այս մարմինները զնումեն հաւասար տա-  
 րածութիւն մի և նոյն ժամանակում և թէ նորանց  
 շարժման աստիճանական արագութիւնը միակերպ է,  
 սորանից եղբաւիակեց՝ որ ծանրութեանը համ Տարմինէրի  
 դէպի վայր անշոտապէս չփոխուի և ամբողջ  
 Տարմինէրի մէջ: Զօ. եթէ բրթեղէն նիւթը ընկնում է ոչ  
 այնպէս շուտ, ինչպէս ոսկու կոտորը, ապա այս չէ  
 նշանակում որ նուազում է ընկնելու ձգտումը, այլ նորա  
 ընկնելուն օդն աւելի շատ արգելք է լինում, քան  
 ոսկու ընկնելուն: Իսկ եթէ հեռացնեք այդ  
 արգելքը, այդ ժամանակ երկունս ևս կընկնէին  
 հաւասար շուտութիւնով: Այս փորձը համոզեց, որ  
 իւր ժամանակում ընդունած կարծիքական օրէնքները  
 շարժման վերայ չեն համբերում քննադատութեան,  
 իսկ այդ համոզումը ստիպեց նորան յարձակուել սխո-

լաստիքական դաստիարակութեան դէմ: Այժմ՝ նա սկսեց քննել պտղովմեան աստեղաբաշխական սիստէմն աշխարհի, և կուպերնիկեանը: Կուպերնիկեան սիստէմը զանազանվումէր իւր պարզութիւնով և համաձայնութիւնով բնութեան օրէնքներին, և հանդարտաբար վաստակումէր ինքեան հետեւողներ լաւ նկատողներ և մտածեմաթիքոսներ ձեռք. շատերը, որոնք յառաջ պտղովմեան սիստէմն էին ընդունում, դարձան դէպի կուպերնիկեանը. որովհետեւ պտղովմեանը իւր ցիկլաներով և էպիցիկլաներով<sup>1)</sup> ամենայն օր կարօտութիւն էր գլուժ նորանոր ուղղութիւնների և լիակատարութիւնների: Գալիլէյն անցաւ նոյնպէս դէպի կուպերնիկեան սիստէմը և տեսաւ նորա դէմ ընդդիմութիւնների բոլոր ոչնչութիւնը. նորանք բոլորը ցուցանումէին որ հիմնողը չէ հասկացել մեքենաբանութեան օրէնքները, կամ թէ չէ վատ կերպով է բնութեան Արիստօտէլի, Աստուածաշնչի և եկեղեցական հայրերի դրուածներ ժողով տեղերը . . . Միայն թէ՛ Պիզանեան համալսարանում նա չհամարձակուեց հերքել Պտղովմեան, աւելի յարմար ժամանակի սպասելով: Մինչև անգամ և այս գլուշութիւնը չխանգարեց որ նա համբաւուի իբրև ճիշտագիտական խմաստակութիւններով մարդ, որ յարձակվումէր, կամ դէժ շատ

<sup>1)</sup> էպիցիկլ — շրջան, որի կենտրոնը կշարժուի ուրիշ շրջանի շրջապատի վերայ:

Ման. փոխ.

կատածաւոր էր երևում յարձակուելու Արիստօտէլի և Աստուածաշնչի դէմ: Շատերը նորա ընկերներից Պիզանեան համալսարանում, նախանձվումէին նորա փառքին և զիւտերին, և այդ պատճառով աշխատումէին հալածել նորան ամէն մի համարձակ կարծիքի համար:

Այդոր համար իսկ Գալիլէյն ուրախութիւնով ընդունեց վենետիկեան սենոթի առաջարկութիւնը, որ 1592 թ. առաջարկեց նմա վեց տարի ժամանակով մտածեմաթիքայի ամբիոնը Պադուանեան համալսարանում: Գալիլէյի կեանքը Պադուայի մէջ, որտեղ թագաւորումէր մտքի բաւական մեծ ազատութիւն, դարձաւ նորա համար ուսումնական գործունէութեան ժամանակ. նա պատրաստումէր շատ մեքենաներ վենետիկացիների համար. գրումէր նա իւր աշակերտների համար շատ գրքեր. քաղաքական և պատերազմական ճարտարապետութեան, աստեղաբաշխութեան, մեքենաբանութեան, արեգակի ժամացոյցներ շինելու զիտութեան վերայ: Այս գրուածներն արտագրումէին նորա աշակերտները, տարածուեցան բոլոր Եւրոպայի մէջ և հռչակեցին Գալիլէի մտքերը և անունը: Նա հնարեց առաջինը Էլեմէնտարի Ի հարկէ այս գործին շատ անկատար էր, բայց արդէն առաջին քայլը կարևոր քայլ էր: Գալիլէյն ամենամտերիմ նամակագրութիւններ էր անում այն ժամանակեան ականաւ որ աստեղաբաշխի, Ալպիերի հետ: 1599 թվում, վենետիկեան սենոթը հրաւիրեց

Գալիլէին մի այլ վեց տարի ժամանակով ևս և երկուստեանց նորա ռոճիկը: Գալիլէի վառքը սաստիկ մեծացաւ, նորա մօտ հաւաքվումէին ունկնդիրներ թագմութիւն: 1804 թ. մի փայլուն կենդանակերպի մէջ երևեցաւ նոր փայլուն աստղ, Գալիլէին նորան իւր դասերի նիւթ շինեց, և նորանց մէջ նա այնքան պարապում չէր այդ երևոյթի յայտնութիւնով, որքան Պտոլոմէոսը քննելով և նորան հերքելով: Բացի աստեղաբաշխութիւնը, Գալիլէին պարապումէր Ֆիզիքայով և հետազօտումէր նմա վերաբերած զիւտերը: Մօտ այս ժամանակին նա խիստ սաստիկ դանեց [քոթակեց] մի խտալացու, որ վերագրումէր ինքեան համեմատական ցիրիուլէ զիւտը, որը հնարել էր Գալիլէն: Մի փոքր ժամանակից յետոյ նա մտածեց երեք գիշեր աշխարհային սիստեմի վերայ, երեքը շարժման վերայ, երեքը մէտէնոսփոփանքի վերայ, հեղինակութիւններ Յայնի, Խօսի, Լայնի, Ժովայնի մանիլեպոլիտեաների և Գալիլէաների վերայ, կենդանիների շարժման վերայ: Այդ մեզ չհասան. կարծումեն որ նորանց մեծ մասը այրեցին նորա ազգականները նորա ընտանիքի խոստովանահօր թախանձանքով:

1606 թ. վենետիկեան սենոթը կրկին հրաւիրեց նորան նոր վեց տարի ժամանակով: Այդ ժամանակ Գալիլէին հնարեց խոշորացոյց [1609 թ.]: Նա օգուտ քաղեց խոշորացուցի զիւտից, որ մօտեցնումէր հեռաւոր առարկաները, զործադրեց նորան երկնային մարմինների

նկատողութեան համար: Նորա, առաջին հնարած զործին մեծացնումէր առակային ինն անգամ, նա կատարելագործեց նորան, և խոշորացոյցն սկսաւ մեծացնել 60 անգամ. վերջապէս նա ընծայեց վենետիկեան սէնատին մի խոշորացոյց, որ մեծացնումէր առարկան հազար անգամ: Սէնատը, զարմացած ստանով, հաստատեց նորան մշտապէս Պադուայի համալսարանի պրոֆէսոր. նշանակեց նմա տարեկան ռոճիկ հազար Ֆլորին, որը երբէք չէր ստացել մակթեմաթիքայի պրոֆէսորը:

Գալիլէին շտապեց նայելու երկնային աստղերը իւր խոշորացոյցով և տեսաւ այն, որը չէր տեսել ոչ մի մարդ նորանից յառաջ: Նախ և յառաջ նա սկսեց նայել լուսնին և առաջին նայելովը խմացաւ, որ սուտ է այն սխրաստիքական ճշմարտութիւնը, թէ բոլոր երկնային մարմինները բոլորովին կոյր գունդեր են, և թէ նորանք բոլորը լոյս են տալիս ինքն ըստ ինքեան: Լուսնի մակերևոյթի մութ մասները բացատրումէին յառաջ այն շագիների միջնորդութիւնով, որոնք բարձրանումեն երկրից. հիմայ երևեցաւ, որ լուսինը կատարեալ բոլորակ գունդ չէ, որ նորա մակերևոյթը անուղիղ և անհասարակ է, որ նորա վերայ գտանվումեն լեռաներ և հովիտներ, ոչ փոքր երկրի լեռաներից և հովիտներից: Այս լեռաների և հովիտների տեսքը, որոնցը Գալիլէին համեմատումէր մի մասնով Բոհեմիայի հետ, ծաղկեցրեց նորա մեջ այն կարծիքը թէ լուսնի վերայ

բնակիչներ կան, որ, ՚ի հարկէ, զարմանքի մէջ ձգեց  
ուսումնական սխալաստիքներին և կաթօղիք հողևորա-  
կաններին: Արովհետև արեղակի լոյսը, ընկնելով լու-  
սնի սարերի վերայ, լուսաւորումէ նորանց զագաթ-  
ները, իսկ նորանց ծայրերը և հիմները [ստորանները]  
մնումեն ստուերի մէջ, ապա արգէն Գալիլէյն օգուտ  
քաղեց այս ստուերից՝ լուսնի վերայ դրաննուած լեռա-  
ների երկարութիւնը որոշելու համար: Նա նոյնպէս  
առաջին անգամ նկատեց լուսնի շարժողութիւնը իւր  
առանցքի վերայ, բայց աստիճանաբար շտապական գիտութիւն-  
ների անկատարելութիւնը չէր թոյլատրում նմա բա-  
ւականացուցիչ կերպով բացատրել այդ երեւոյթը:  
Յառաջ տանելով իւր նկատողութիւնները, նա գտաւ  
որ լուսնի մի կողմը միշտ զարձուցած է դէպի երկիրը  
և թէ նորա մակերևոյթի համարիւր կէտը բոլորովն  
անտեսանելի է մեզ համար: Աւշե ուշով նայելով  
խոշորացուցով մութ բծերի և յատկապէս կաթնային  
ճանապարհի վերայ, Գալիլէյն գտաւ որ նորանք կազ-  
մուած են անթիւ անհամար աստղերի բազմու-  
թիւնից:

Իւպիտեր մոլորակը շուտով նորա համար զար-  
ձաւ աւելի մեծ նկատողութեան առարկայ: 1610  
թուի Յունուարի 7-ին նա տեսաւ այս մոլորակների  
մօտ երեք փոքր, բայց խիստ պայծառախալ աստղեր,  
որոնք էին իւրեանց մոլորակի հետ իսկ մի և նոյն ու-  
ղեղ գծի վերայ, որ զուղահեռական էր խաւարա-

ճրոխն [էլլիպտիկային]: Երեք աստղերից երկուսը գտան-  
վումէին արևելքում, երրորդն արևմուտքում: [Չոր-  
րորդը գտանուեցաւ Գալիլէից յետոյ]: Այս նկատողու-  
թիւններից, որոնք հինգ օր շարունակուեցին, նա եզ-  
րակացրեց, որ այս աստղերը մոլորակներ էին և թէ  
նորանք իւպիտերի համար այն էին, ինչ լուսնին է մեր  
երկրի համար, այսինքն արբանեակներ: Այդ մտածու-  
մանի նմանութեան մէջ լուսնի հետ՝ Գալիլէին տեսաւ  
նոր ապացուցութիւն Կոպերնիկեան սխալէմի օգտի  
համար: Նա նոյնպէս հասկացաւ, որ այս ուղեկիցներից  
կարող են օգուտ քաղել ծովագնացները՝ երկրի լայ-  
նութիւնը որոշելու համար . . . . Նա առաջարկեց  
իւր ծառայութիւնները Իսպանիային, որ Կոլումբոսի  
չնորհով ամենակարողն էր այնժամանակ, բայց գիտու-  
թեան քամբազդութեան համար, նորա առաջարկու-  
թիւնը չընդունեցին:

Այդ փայլուն զիւտերը նախանձ վերկացրին սնա-  
պարծ և հասարակ ժողովուրդի մէջ, որոնցում բնա-  
կումէր Գալիլէյն: Շատերն սխեցին ընդդիմադարձել  
նմա, բայց ընդդիմադարձութիւնը մեծ մասնով էին  
ճաղրածութիւններ: Այդպէս, մին ասումէր, որ նա  
ինքն նայել է խոշորացուցով և ոչինչ չէ տեսել այն  
բաններից, ինչ որ պատմումէր Գալիլէյն և այլն: Միւս-  
ներն, ընդհակառակն, իւրեանք պարծենումէին սուտ  
գիւտերով, ասումէին որ նորանք գտել են Կոպերնիկե  
մօտ ամբողջ 9 ուղեկիցներ . . . . Այս բոլորն արգելք

չդարձան Գալիլէի նկատողութիւններին: Պարզ չտեսանելով իւպիտերի մանեակը [օղը], նա յայտնեց որ իւպիտէրը երրորդ մոլորակն է \*): Յետոյ նա գտաւ, որ Վեներան ևս ունի այնպիսի կերպարանք ինչպէս և լուսինը. դա անհերքելի ապացուցութիւն էր կուպերնիկեան սիստէմի օգտի համար, որովհետև ցուցանուէր Վեներայի շարժումը արեգակի շուրջը: Քիչ զգալի հարուած չպատճառեց Գալիլէյն իւր առաջին նկատողութիւնով արեգակի բժերի վերայ, որանով հերքվումէր երկնային մարմինների անկործանելի լինելը: Այդպիսի կերպով, նորա գիւտերից ամէն մէկն մծտե-

\*) Նա յայտնեց այդ դիւտի մասին այսպիսի լոգոգրիփով <sup>1)</sup> (բառական առեղծուածով).

Smaismmil mepoetal evmibvnenvgflaviras.

Ի դուր էր կէպիւրը ջանք անում գտանելու այդ հանելուկը, որ կազմուած էր տառերի լոկ անդափոխութիւնից: Գալիլէյն մեկնեց նորան.

Altissimam planetam tergeminum observavi այսինքն՝

ես գտայ որ ամենահեռաւոր մոլորակը—երրորդն է.—

11 Գեկտեմբերի 1610 թ. Գալիլէյն գրեց նոր լոգոգրիփ.

Haec immatura a me jam frustre leguntur.

11 Յունուարի նա բացատրեց նորան. Cinthiae figuras aemulator mater amovum. այսինքն Վեներան ունի նոյնպիսի իսկ կերպարանք, ինչպէս լուսինը:

<sup>1)</sup> Այն բառը, որ զանազան նշանակութիւն ունի մի քանի տառերի անդափոխութիւնից կամ նորանցը եղծանելուց:

Օճան. փոխ.

ցրեց նորան կուպերնիկեան սիստէմին և խրաբանչիւրը տալիս էր հակառակորդներին նոր պատճառանքներ՝ հալածելու նորան: Մինչդեռ Գալիլէյն ապրումէր Վեներիկեան հասարակապետութեան երկրի վերայ, նորա հակառակորդների նախանձութիւնը տկար էր. բայց 1610 թ. Օգոստոս ամսում նա թողեց Պապուան և յետ դարձաւ դէպի Տոսկան: Այստեղ նա նշանակուած էր սիլեզանեան համալսարանում առաջին մատենաթիւղիս և մինչև անգամ առանց պարտականութեան՝ փիլիսոփայութիւն անել կամ մնալ Պիզայ քաղաքում: Որովհետև թշնամիները տարածել էին նորա վերայ համբաւներ, թէ նա հերիախիոս է, ապա Գալիլէյն 1611 թուականին ուղևորուեց առաջին անգամ դէպի Հռոմ: Այստեղ, նորան ընդունեցին պատուով, և նա թոյլտուութիւն ստացաւ մտանել ակադեմիայի մէջ: Բայց որովհետև նա շարունակումէր հասառա պահպանել իւր նախկին աստեղաբաշխական կարծիքները, ապա և թշնամիները շարունակեցին համարել այդ մի յանցանագործութիւն նորա կողմից: Քիսուսականները ցանկանումէին համարել նորան այն կուսակցութիւնից, որ հալածել էր նորանցը Պապուայից: Հռոմէական ինկուիզիցիայում նորա վերայ գանդատեցին: Մի դոմինիկեան՝ Վատտիցինի ասացաւ. Մարեամեան եկեղեցու մէջ, Ֆլորէնցիայում նորա դէմ մի քարոզ, սկսելով նորան սուրբ զբքի խօսքերովս. «Գալիլէացի՛ մարդեր. ինչե՞ կանգնած նայումէք

երկնքի վերայ» [Գ. առաք. 1, 11]: Գոմինիկեան զօրապետը ներողութիւն խնդրեց Գալիլէի առաջև. «իմ քամբաղղութիւնից-դրումէր նաևն պարտական եմ պատասխանել 30-40 արեղաների բոլոր յիմարութիւնների համար: Միայն թէ Գալիլէյն կարևոր համարեց արդարայնել իւրեան հասարակութեան առաջև: Իւր մի նամակում դէպ'ի իւր աշակերտը, և միւսում դէպ'ի Գրիստինիան, մեծ տոսկանեան հերցոզուհին, նա ջերմ կերպով հերքում է մեղադրութիւնները իւր մասին, որ իբրև թէ նա յարձակվումէր կրօնի վերայ. և ասումէ որ ինքն մատակարարումէ աստեղաբաշխութիւն, իսկ սուրբ զիրքը [աստուածաշունչը] ունի իւր առարկանց-ցոյց տալ մարդերին փրկելութեան ճանապարհը: Այդ պաշտպանութիւնն անբաւական երևեց: Կատտիցինին գնաց աւելի հեռու և դաւաճանեց նորան հռովմէական ինկուիզիցիայի առաջև: Գալիլէյն ճանապարհ բնկաւ 1615 թուականում նորից դէպ'ի Հռովմ և նա կարողացաւ իւր ճարտարութիւնով ստիպել թշնամիներին լռելու: Միայն թէ, թէպէտ և նորանք ուղղակի չկարողացան Գալիլէուն մեղադրել, բայց և այնպէս կարողացան դատապարտութեան տակ ձգել կոպերնիկեան փստէմբ: 1616 թ. Մարտի 5-ին հրատարակուեց մի հրովարտակ [դէկրէտ], որի մէջ ասած էր. «Կոպերնիկի այն վարդապետութիւնը՝ թէ արեգակը շարժվումէ երկրի շուրջ, իսկ արեգակն անշարժ է աշխարհքի մէջ տեղը,

չշարժուելով արևելքից դէպ'ի արևմուտք, ընդդէմ է սուրբ Գրութեան և, հետևապէս, չէ կարելի նորան ոչ մատակարարել, ոչ պաշտպանել:» Հրատարակած դէկրետում խօսք անգամ չկար Գալիլէի վերայ, բայց ծածուկ նա ստացաւ մի խիստ վճիռ: Ահա այդ սպառնալի նախադուշութիւնը:

«Որովհետև մենք ցանկացանք քաղցրաբար վարուել քեզ հետ, ապա սահմանեցին սրբազան կոնգրեգացիայի<sup>1)</sup> մէջ, 25-ին փետրուարի 1616 թուականի, որ նորին Բարձր-Սրբազնութիւնը տէր կարդինալ Հելլ'արմէնը հրամայէր քեզ թողուլ վերոյիշած սուտ վարդապետութիւնը կասարելապէս, չվարդապետել նորան ուրիշներին, չպաշտպանել նորան, չգրել նորա մասին ոչինչ ոչ մի ժամանակ. իսկ անհամաձայնութեան դիպուածում, դու կնատես բանդի մէջ:»

Այդ քաղցր [բարեհամբոյր] վճիռը պարտ էր խել Գալիլէից սերը դէպ'ի աստեղաբաշխութիւն. բայց և այն ամենայնով, նա չէր հեռանում իւր զբաղումներից, մանաւանդ երբ տեսաւ 1618 թվում երեք գիտաւոր աստղեր: Թէպէտ հանձարեղ կարծիքները նորանց վերաբերութիւնով սուտ երևեցին, բայց նորանք ցուցանումեն, որ ծերութեան ժամանակ նա պահեց մի

<sup>1)</sup> Կարդինալների և ուրիշ պապական մինիստրները խորհուրդ, որ պիտոյ է կառավարի կառավարութեան որ և է մաաը.

և նոյն եռանդուն միտքը, որ երիտասարդութեան մէջ ստիպումէր նորան մաքառել պրովէստորների հետ։ Այն միջոցում Գալիլէոն, ինչպէս մտածող մարդի, բերին հրաման, որ արգելումէր պաշտպանել կոպերնիկեան սխառէմը, և նա վճռեց քաղաքապար լինել զէպի հրամանը [եօլայ գնալ նորա հետ]։ Նա կազմեց խօսուիցութիւններ երեք անձների մէջ, ի մէջ ստուլտեան սխառէմի երկու պաշտպանների և կոպերնիկեան սխառէմի մի պաշտպանի։ Նա ոչինչ չէր ասում նորանցից ոչ մինի օդտի համար, յառաջաբանութեան մէջ ընդհակառակն նա ասաց, որ զրել է դիրքը նորա համար, որ ցոյց տայ օտարականներին, թէ կոպերնիկեան սխառէմը արգելուած է Հռոմի մէջ ոչ թէ սգիստութեան պատճառով, այլ գործի լիակատար գիտութիւնով։ Չեռնարկը եկեղեցուած էր Հռոմի մէական ցեղաւորի քննադատութեան և ուղղութեան, բայց երբ գրուածք լոյս տեսաւ, պարզ երևեցաւ, որ Գալիլէոսը հանդիսացնումէր կոպերնիկեան սխառէմի գերազանցութիւնը, և բացի դորանից, պտուղմեան պաշտպաններից մին յայտնումէր ծաղրայի ընդդիմախօսութիւններ, որոնցը Գալիլէոսը լսել էր և նոյն իսկ Ուրբանոս VIII պապից։ Հասկանալի է, որ պապը զայրացած էր այս զրքի հրատարակութեան վերայ։ Բացի դորանից, այս պատահման վերայ ուրախացան Գալիլէոսի թշնամիները և նախանձորդները, որոնցը զրգուումէր չէ, թէ երկրի շարժումը, այլ նախանձի

շարժումը։ Նախ և յառաջ արգելեցին այս զրքի ծախիլը, երկրորդ, պահանջեցին որ Գալիլէոսը անձնով երևէր ինկուիզիտին դասաստանում։ Երևելի ծերունին, որ այն ժամանակ 70 տարեկան էր, ՚ի զուր էր իւր ծերութիւնը և հիւանդութիւնը պատճառ բերելով հրաժարվում։ ՚ի զուր էր մտածում ամենակարելի պատճառանքներ, նա պարտաւոր էր գնալ . . . .

Գալիլէոսը հասաւ Հռոմի 13-ին փետր. 1633 թուականի. նորա զործը տեսց չորս ամիս, որի ընթացքում նա բանդարկուած էր, երբեմն դետպանի տան մէջ, երբեմն ինկուիզիցիոնական դատարանի պալատում։ Նմա սպառնումէին զարհուրելի շարչարանք, բայց այդ շարչարանքը չէին զործադրում նորա համար միայն, որ զառամած ծերունին համաձայնուէր այն բոլորին, ինչ որ նորանից պահանջումէին . . . . Վերջապէս 22-ին Յունիսի 1633 թուի նորան տարան եկեղեցու մէջ և կարդացին վճիռը, որ այսպէս էր վերջանում։

Որպէս զի այդ մահաօրիթ և վնասակար մտորութիւնը չմնար կատարելապէս անպատիժ և որ դու ծառայէիր օւրիշներին օրինակ, որ յետ դարձուցաներ նորանցը դոյն օրինակ յանցանազործութիւններից, մենք սահմանումենք որ Գալիլէոս Գալիլէոսի 4-րդ խօսուիցութիւններէ հրապարակով արգելուի, իսկ քեզ մենք կգատապարտենք, ձգելով ինկուիզիցիայի բանդի մէջ այնքան ժամանակով, որքան մենք կրարեհա-

ճենք նշանակելու, և հրամայումենք քեզ, իբրև նշան սպաշխարելու, կարդալ շաբաթը մի անգամ, երեք տարու մէջ, ապաշխարական պատճանները, մեզ վերայ թողնելով նուազեցնել կամ փոփոխել և կամ ոչնչացնել կատարելապէս վերոյիշած պատիժները և ապաշխարանքը:»

Ապա այդ ճնաշխարհիկ անձը պարտ էր ծնկաչոք արտասանել հետևածը:

«Ես Ֆլորենտացի Գալիլէոս Գալիլէոսեան, որդի Ալինկենտ Գալիլէոսի, ծննդիցս եօթանասուն տարեկան, չորսձ անը ներկայութիւնով, ամենապատիւ սրբազան տէրեր, կարդինալներ, զխաւոր ինկուիզատորներ բոլոր քրիստոնէական հասարակութեան ընդդէմ հերիտիկոսների չարագործութեան, ունենալով աչքերիս առաջև սուրբ Աւետարանը, որին դպչումեմ իմ սեփական ձեռներով, երդումեմ որ ես միշտ հաւատացել եմ և հաւատումեմ այժմ և աստուածային օգնութիւնով կհաւատամ միշտ այն բոլորին, ինչ ընդունում է, ինչ ուսուցանում է և քարոզում է սուրբ կաթողիքական, առաքելական և հռոմէական եկեղեցին . . . Եթէ ինձ կպատահի [որից Աստուած ազատի] մի որ և է խօսքով հակառակիլ եմ խօսքերիս, հաւատալիքներիս և երդումներիս, ապա ես ենթարկվումեմ բոլոր չարչարանքին և պատիժներին, որոնցը սահմանած է նմանապիսի չարագործների համար հաստատած օրէնքը . . . Ես ներքեում յիշած Գալիլէոս

Գալիլէոսեանս հրաժարուեցի, երդուեցի, խոստացայ և պարտաւորուեցի վերոյիշածը կատարել, որի ստուգութեան համար և ստորագրեցի այս վկայագրի տակ իմ սեփական ձեռովս և ասացի նորան բոլորը բերանացի՝ բառաւորաւ:»

Աւանդութիւնը յաւելացնում է, որ Գալիլէյն, վեր կենալով չորսձ տեղից, քրթմնջեց, այնու ամենայնով երկիրը պտոյտքվում է . . . Հաւանական է, որ Գալիլէոսը ասած չէր լինելու այդ. բայց այդպիսի է արդէն մեծ ճշմարտութիւնների ընդհանուր վիճակը: Տգիտութիւնը և մոլեռանդութիւնը պատրաստում են թոյներ, գործում են շղթաներ, սրում են դանակներ, այրում են փայտակոյտներ, օգնութիւն են կոչում ամենատեսակ պատիժներին՝ ճշմարտութիւնը խրացնելու համար արիւնհեղութիւնով և արտասուաթորութիւններով . . . Բայց, ճնայելով այդ բոլորի վերայ, երկիրն այնու ամենայնով շարժվում է, ճշմարտութիւնը այնու ամենայնով յաղթող է հանդիսանում . . .

Ա՛ն ոից յետոյ, Գալիլէոսն ինն տարի ևս ապրեց. դա էր մի ցաւալից և անհանգիստ կեանք: Այդ միջոցում էր, որ նորա աղջկը մեռաւ, և երկու տարուց յետ, նա բոլորովին կուրացաւ: Բայց ճնայելով իւր կուրութեան և վատառողջութեան վերայ, նա չկարողացաւ հրաժարուել գիտութիւններից: Չհամարձակուելով տպել իւր հայրենիքում, նա ուղարկեց իւր գրուածները դէպի Հոլանդիայ: Հիւանդ

դրութեան մէջ գտանուելով, նա խոստացաւ իւր բարեկամներին, եթէ կներեն հանգամանքները, հրատարակել իւր գրուածը շարժման վերայ և այլ, «աւելի կարեւորները քան յառաջուց հրատարակածները»։ Նա մեռաւ 78 տարեկան հասակում. մեկնանդները կամենումէին ապօրինի կացուցանել նորա կրտսեր և մինչև անգամ մերժել նորան թաղելուց եկեղեցական կարգով . . . Բայց դորանում չյաջողուեցան . . .

Ծ.

Ո Ւ Ա Շ Ի Ն Գ Տ Ո Ն :

(1733 — 99)

Արք. Արուստեանը գտաւ նոր աշխարհը, նորանից յետոյ և բողոքականներն ամբողջ լաճեցող սկսեցին փոխադրուել դէպի նոր երկիրը. Հիւսիսային Ամերիկայի մէջ մեծ մասնով փոխադրուեցին անգլիացիները: Այս համարիւր բոլոր անգլիական գաղթականութիւնները դեռ սկզբից ստացան թղթեր [խարտիաներ], որոնք տալիս էին անգլիական գաղթականներին արտոնութիւններ: Այդ թղթերը դատարկ խօսքեր չէին. ընդհակառակն, նորանք սահմանեցին ինքնակառաւարութեան զխաւոր հիմները, տալիս էին գաղթականներին կարողութիւն պաշտպանել իւրեանց ազատութիւնը և յանձնել իշ-

խանութիւնը. երգուածների դատատանարան, իրաւունք հաւաքուել և խորհիլ հասարակական գործերի մասին, ձայնելութիւն հարկեր նշանակելու ժամանակ, զխաւոր հասարակական աստիճանաւորների ընտրութիւն:

Այդպիսի կերպով, հասարակական ինքնակառաւարութեան սկիզբները մեռ գործեցին անգլիական գաղթականութիւնների մէջ Ամերիկայում նոյն իսկ նորանց հիմնարկուելու սկզբից: Բացի դորանից, հիւսիսային տեղերում գաղթուել էին պուրիտանական փախտականները, մարդեր, որոնք եկած էին Անգլիայից կրօնական հարածումների պատճառով: Արօնական անկախութեան հոգու հետ, նորանք բերին իւրեանց հետ և հաւատարութեան հողին. նորանց հիմնած հիւսիսային շտատների<sup>1)</sup> մէջ չկային ստրուկներ, չկային մեծ կալուածատեղեր, չկար քահանայապետական եկեղեցի տերութեան անունով: Պուրիտանացիները զանազանվումէին խոտութիւնով և մաքուր բարոյականութիւնով: Թողնելով յանցաւոր երկիրը,

<sup>1)</sup> Առանձին առանձին գաւառներ, որոնք կազմումն էր աշխարհում թիւն տէրութեան, այն ինչ պրովինցիայ (նահանգ) նշանակումէ գաւառ տէրութեան, ուրեմն, չէ պիտոյ շիտթել այդ երկու բառերը նահանգ կամ գաւառ թարգմանելով միշտ անխափր:

Ման. փոխ.

նորանք ցանկանումէին Ամերիկայի ամայի անսպասաներում՝ հաստատել կեանք իւրեանց կանոններով, պահպանելով միայն իւրեանց, ժառանգութիւնով ստացած իրաւունքները և անկախութիւնները: «Կարո՞ղ էինք արդեօք մենք, ասումէին զաղծականները, թողուլ հայրենիքը, առանց հաւաստի լինելու այդ իրաւունքներն ունենալու: Արաւարութիւնը և օրէնքները հողից աւելի կարևոր են:»

Այդ պատճառով հարաւային շտատները հակառակ էին հիւսիսայիններին, նորանց մէջ բնակվումէին մարդեր, որոնք տարել էին իւրեանց հետ հին Աշխարհից հին սովորութիւններ և պանդութիւններ, հին ազնուապետական շարժումներ: Հարաւային շտատների մէջ, մանաւանդ Վիրջինիայում և Կարոլինիայում, երկիրը պատկանումէր մեծամեծ կալուածատէրերի: Կտակի համաձայն, նա անցանումէր հօրից միայն դէպի անդրանիկ որդին. այդպիսի կերպով զոյքերը չէին մանրվում և էին միայն մեծ սեփականութիւններ [կալուածատէրեր]: Այս պարոնները նախ և յառաջ ձեռք էին բերում իւրեանց համար մշակներ Անգլիայից: Անգլիական նաւերը բերումէին լայնտեղից աղքատների և փախստականների խումբեր, որոնք իւրեանց փոխադրուելու համար պարտաւոր էին ծառայել մի քանի տարիներ. բայց դրանք կամ ծոյլ ժողովուրդ էին կամ ուղիղ փախստականներ: Այն ժամանակ ամերիկական կալուածա-

տէրեր պլանտատորները [անկարկած տեղերի տիրողները] սկսեցին նորանցից գերապատիւ համարել զնաձեռներին, որոնք ձեռք էին բերում և բերումէին Ամերիկայից. այս նեղրներին նորանք ընդունեցին իւրեանց մօտ փախստական մշակների տեղ: Հարաւային կալուածատէրերը պահումէին իւրեանց մէջ և վաղեմի անգլիական օրէնսդրութիւնները Ֆէօդալական<sup>1)</sup> [փեճական] նշմարանքով:

Բայց և այդ պարոնների մէջ զարգացաւ սեր և սովորութիւն դէպի անկախութիւնը: Անգլիական Աթուարթները կարողութիւն էին տալիս նորանց ամբանալու՝ սովորութիւնների մէջ դէպի անկախութիւնը. անգլիական յեղափոխութեան ժամանակ, Վիրջինիան միացաւ Անգլիայի հետ հետեւած պայմաններով. «Վիրջինիայի ժողովուրդն օրուս պէտք է քաղի բոլոր արտոնութիւններից, և անկախութիւններից, որոնք պատկանում են ազատ անգլիական ժողովրդին. վաճառականութիւնը

<sup>1)</sup> Ած. Ֆէօդալիզմ, որ նշ. կալուածատէրի, ստացած (թագաւորից) ոչ իրրե լիակատար ստորադրութիւն և որի համար վճարվումէր յայտնի հարկ. — Ֆէոդալականութիւնը մի սխառէմ էր որ կայանումէր նորանում, որ արդէն կործանուած Հռովմէական կայսրութեան պատկանող, և ապա Գերմանացիներից նուաճած, հողերը բաժանվումէին դորավարների մէջ մշտապէս վայելման համար. այդպիսի հողամասը ասվումէր Ֆէօդալ, զա լինումէր, որքան ինձ յայտնի է, թիջին դարբում միայն: —

նոյնպէս պէտք է լինի ազատ, ինչպէս և Անգլիայում.  
 ոչինչ մարքս կամ հարկ չէ կարող սահմանուել զազ-  
 թականութեան մէջ և ոչ մի ամբողջ չէ կարող կա-  
 ուուցանուիլ նորա հողում, առանց համաձայնու-  
 թեան մեծ ժողովի:» Այդ արտօնութիւնները մար-  
 մին և արիւն ստացան Վիրգինացիների մէջ, և երբ  
 նորանք սպահովուեցին, ապա զտղթականութեան  
 կարողութիւնը և բարելաւ վիճակը սկսեցին արագ  
 կերպով զարգանալ: Բայց այն ժամանակից երբ զար-  
 դանուակեր Վիրգինացի հարստութիւնը, անդլիական  
 թագաւորները ևս սկսեցին նայել նորա վերայ ինչպէս  
 հանքային բովքի վերայ իւրեանց և իւրեանց բարե-  
 կամների հարստութեան համար. Առհասարակ ամե-  
 րիքական ժողովուրդը նայուակեր իւր արտօնութիւն-  
 ների վերայ, ինչպէս մի դաշնադրութեան վերայ իւր  
 և թագաւորի մէջ, որ չէ կարող փոխուել առանց  
 երկու կողմերի համաձայնութեան: Ընդ հակառակն,  
 թագաւորները և պարլամենտը ժամանակ առ ժամա-  
 նակ յայնուամէին իրաւունք փոխելու ինչպէս ասուակին  
 այն ժամանակամենաողորմաճաբար շնորհած սահ-  
 մանադրութիւնները: Այդոր հետեանքը եղաւ այն, որ  
 Վիրգինական և միւս զաղթականութիւնները թէպէտ և  
 չէին դուրս գալիս օրինաւորութիւնից, բայց սկսեցին  
 զգոյշ կերպով նայել թագաւորական կառաւարիչ-  
 ների գործերի վերայ և սովորել ընդդիմանալու:

Վիրգինացում իսկ ծնուեց Գէորգ Աւաշինգտոնը

22-ին փետրուարի 1732 թուականի: Աւաշինգտոնեան  
 ընտանիքը նշանաւոր տեղ էր բռնում վերգինական  
 պլանտատորների մէջ: Նորա հայրը հարուստ և ներ-  
 գործող մարդ էր. նա մեռաւ, երբ Գէորգը 11 տա-  
 րեկան էր: Տղայն մնաց իւր ձեռքածութեան [սնամբի]  
 տակ, որ մի բարեմիտ, պարզ, արդարասէր և կրթուած  
 կին էր: Յայտնի է, որ ծնողների օրինակը ամենից շատ  
 ազդեցութիւն ունի մանուկների բնաւորութեան վի-  
 բայ: Նրիտասարդ Գէորգի, պարզ և ազատ դաստի-  
 րակութեան հետեանքը եղաւ այն, որ նա մանկու-  
 թիւնից ղէպի վեր զանազանվումէր զօրութիւնով,  
 համարձակութիւնով և ուղղամտութիւնով. մանկու-  
 թիւնից սկսած նա կարողանումէր իւրեան կառաւա-  
 րել: Այն ժամանակի պլանտատորների մեծ մասը քիչ  
 էր կրթուած, և Աւաշինգտոնը նոյնպէս ուսաւ միայն  
 սկզբնական ուսումնարաններում:

Այդ ժամանակ Ամերիկայում դրամովումէին խիստ  
 շատ կոյս՝ չգործած [չմշակած] երկիրներ և անտառ-  
 ներ: Եւ Վիրգինացում ճիշդ նոյնպէս զաղթածները  
 շարունակումէին կտրել անտառներ, բռնել նորանոր  
 տեղեր: Մի չափազանց հարուստ լորդ, Աւաշինգտո-  
 նեան ընտանիքի բարեկամ, իշխումէր անչափելի հո-  
 ղերի Ալէքանեան սարերի վերայ և յանձնեց Գէոր-  
 գին չափել նորանցը: Տասն և վեց տարեկան Գէորգը  
 ճանապարհ էր ընկնում երկրաչափական շղթայով  
 ղէպի սարերը: Երեք տարի նա թափառումէր անտառ-

ներում, ուսումնասիրելով հնդկացիների վարք ու բարքը և մասնակցելով նորանց խաղերին: Իսկ ձմեռը նա գնումէր դէպի Մոնտ-Վերնոն, իւր անդրանիկեզբօր՝ Լորէնց Ուաշինգտոնի մօտ: Լորէնցը կարևոր մարդ էր Վիրջինեայի մէջ. հենց նորա մօտ Գէորգը պատահեցաւ լաւ վերգինական հասարակութեան: Գէորգի հաւատարմութիւնը, ընդունակութիւնները և քաջութիւնը հռչակուեցան ամենայն տեղ:

Այն ժամանակ անգլիացիների ամերիքական զաղթականութիւնների հետ միասին կային և Ֆրանսիական զաղթականներ: Քէ առաջինը թէ երկրորդը վաղուց հակաձառվումնին միմեանց հետ՝ յատկապէս տիրապետելու ամերիքական երկրների վերայ: Մովսէսի մեծ զօրութեան շնորհով, Անգլիան տիրապետեց Ատլանտեան ովկիանոսի երկարութիւնով տարածուած բոլոր ափին, թողնելով Ֆրանսիացիներին միայն սուրբ Լ'աւրէնտիոսի և Միսիսիպի գետերի բերանները: Բայց այս երկու բերանների վերայ Ֆրանսիացիները զօրեղ կերպով ամբարացան. նորանք ներս մտան երկրի մէջ, տարածուեցին այնտեղ և իւրեանց առաքածների [քարոզչաների] օգնութիւնով հնդկացիների վերայ ունէին մեծ ազդեցութիւն. նորանք բռնեցին տեղեր անգլիացիների յետին կողմը և աշխատումէին նորանցը փակել Ալլեգանեան սարերի և ծովի մէջ, չթողնելով հեռու: Երբև հետևանք դորա, պատերազմը սահմաններում գրեթէ մշտական դարձաւ: մինչև անգամ խաղաղու-

թեան միջոցում Ֆրանսիացիները և անգլիացիները անհանգիստ էին անում միմեանցը մշտական յարձակումներով: Ամենայն տեղ, որտեղ և միայն պատահումէին, նորանք վիճումէին միմեանց հետ՝ երկրին իշխելու մասին, և այդպէս անդադար պատճառներ էին տալիս իւրեանց կառաւարութիւններին պատերազմելու, որոնցից [պատճառանքներից] նորանք [կառա' ] օգնուէին քաղում կամ ոչ, նայելով քաղաքականութեան կարիքներին:

Վիրջինեային պաշտպանելու համար հնդկացիների յարձակումներից և Ֆրանսիացիների կռիւներից, զաղթականութիւնների կառաւարութիւնը բաժանեց այդչտատը զինուորական նահանգների և իւրաքանչիւրի մէջ նշանակեց մի մի օփիցեր՝ զինուորութեան վերայ հրամանատար լինելու և նամակատունների վերայ վերատեսչութիւն անելու: Տասն և ինն տարեկան Ուաշինգտոնը նոյնպէս նշանակուած էր նահագի հրամանատար, մայօրական աստիճանով: Նա ջերմ կերպով սկսաւ զործակատար լինել, որոնելով զտանում էր պատերազմանցութիւններում եղած օփիցերներին, ուսումնասիրումէր զինուորական կրթութեան արհեստը, և նորանց վերաբերած զլիաւոր հեղինակութիւններն ընթերցասիրումէր: Նորա զործուէութիւնը ՚ի հարկէ երևումէր և իւր հրամանի տակ զտանուող օփիցերների վերայ:

Այդ միջոցում Գէորգի անդրանիկ եղբայրը, Լորէնց,

մեռաւ և Կորա ժառանգութեան տէր դարձաւ Գէորգը: զորանով նորա միջոցներն ընդարձակուեցին. ուստի և նա, ինչպէս աղնուամիտ մարդ, իւր բոլոր կենըր ծառայեց հայրենիքին, երբէք չստանարով նորանից վարձ ծառայութիւնների փոխարէն: Եղբօր մահը Ուաշինգտոնին մի փոքր հեռացրեց պաշտօնական գործից, բայց Ֆրանսիացիների շարժողութիւնը սահմաններում կրկին հրաւիրեցին նորան դէպի գօրքերը: Ֆրանսիացիներն այդ ժամակակ շինեցին նորանոր բերդեր Միսսիսսի և Յօլիոյ գետերի վերայ: Եւ որովհետև անգլիական կառաւարութիւնը պահանջողութիւններ էր անում բոլոր Հիւսիսային Ամերիկայի վերայ մինչև Խաղաղական Ուիլիսնտը, ապա նա ցանկանում էր պատերազմը և հրամայեց վերդինական կառաւարութեան քշել Ֆրանսիացիներին: Վիրգինեան թէ և ցանկութիւն չունէր դէպի այդ կռիւը, որովհետև նա սկսվում էր մի միայն անգլիական կառաւարութեան պատուասիրութեան համար, այնուամենայնով պատերազմը սկսուեցաւ:

Ուաշինգտոնն ամենաջերմ կերպով մասնակից դրամնուեց այդ պատերազմին: Նորան զնդատուտ նշանակեցին. նայելով զորա վերայ, նա անգլիական լիակատար իշխանութիւն ունեցողներից տարաւ շատ անարգանք և զըպարտանք, որոնք հակառակ էին նմա: Վիրգինեայի թաղաւորական զուբերնատորը վերդինական զօրքերի օճիցներն էր ունիւր նուազացրեց, հրա-

ժարուեց հաւասարել նորանցը անգլիական թագաւորական զօրքի մի և նայն կարդի օճիցներն էր հետ և կամենում էր վերջիններին զանազան արտօնութիւններ ստլ, որոնցից մերժեց զաւառական օճիցներն էր: Այդ բանը վերաւորեց ամերիկացիների պղպայն զգացումը և շատ անկարգութիւնների պատճառ դարձաւ. Ուաշինգտոնը ծառայութիւնից հրաժարուեց և ձմեռն անցուցեց իւր կալուածատէրում: Գարնան ժամանակ բրիտանական կառաւարութիւնը ուղարկեց անգլիական զենեքայի. նա 'ի հարկէ անձանթ էր տեղե դիրքերի հետ, այդ պատճառով և կարօտանում էր Ուաշինգտոնի ծառայութիւններին, որ և մնաւ նորա շտաբի<sup>1)</sup> մէջ: Նորեկ զենեքայն այնքան հեռատես չէր, բայց զորանից լսում չէր Ուաշինգտոնի խորհուրդները, սկսեց անյաջող պատերազմն Ֆրանսիացիների հետ և մահով չափ վերաւորուեց: Ուաշինգտոնը յանձն առաւ զօրքերի հրամանատարութիւնը այն ժամանակ, երբ պատերազմն արդէն տարուած էր. սակայն և այնպէս, նա ցոյց տուեց իւր, զօրքեր կառաւարելու բոլոր ընդունակութիւնը և քաջութիւնը: Այս ժամանակից նորա վերայ սկսեցին նայել, ինչպէս իւրեանց

1) Շտաբ--աստիճանաւորներ, որոնք պատկանում են այն պաշտօնական մասնին, որ կառաւարում է զօրքերի և զինուորական ուսումնարանների գործերը:—

երկրի միակ յոյսի վերայ: Արովհետեւ, թէպէտ և Աւաշինգտոնը կամենումէր դուրս գալ ծառայութիւնից, բայց Վիրգինայի աւելի նշանաւոր մարդերը խնդրեցին նորան լինել գլխաւոր հրամանատար զօրքերի, իսկ կառաւարիչը պիտոյ է համաձայնուէր այն բոլոր պայմաններին, ինչ նա առաջարկէր: Բայց այնուամենայնով նորա նորոգ գրութիւնը շատ ծանր էր: Նմա տունին միայն 1500 մարդ, որոնցով նա պարտաւոր էր պաշտպանել 400 վերստից աւելի սահման, որի վերայով հնդկացիները յարձակվումէին և ամացի էին անում սահմանամերձ տեղերը: Միայն թէ շատ աստիճանաւորներ չէին կատարում անհրաժեշտ հարկաւոր պայմանները՝ սահմանների ապահովութեան համար, այդոր համար Աւաշինգտոնը վաղուց արձակուրդ ստացած կլինէր իւր պաշտօնից, եթէ նորան չըմբռնէին Վիրգինացիների խնդիրները: «Եթէ դուք կթողուք ծառայութիւնը՝ գրումէին դէպի նաւապա բոլոր օփիցերները ևս նոյնը կանեն»: Այդպիսի նեղ դրութիւնը շարունակուեց, մինչև որ Անգլիայից շուրջարկուեցան նոր զօրքեր մի բաւական խոհեմ գեներալով միասին, որ կովում չէր Աւաշինգտոնի հետ և նորա օգնութիւնով տիրեց կարեւոր Ֆրանսիական բերդին. այդ փրկեց Վիրգինային Ֆրանսիացիներից: Քէ և պատերազմը գեռ շարունակվումէր, բայց Աւաշինգտոնը կարողացաւ արդէն դուրս գալ ծառայութիւնից:

Զօրքի գլխաւոր կանգելով, Աւաշինգտոնը սիրելի

դարձաւ և զօրքին, և ժողովուրդին: Նա գիտէր յարմարուել բազդի և քամբազդութեան, զինուորների սակաւութեան փոխարինեցին նորա զօրծունէութիւնը և հսկողութիւնը. խիստ զինուորական հնազանդութեան [դիւցիպլինային] փոխարինեց նորա անձնական ազդեցութիւնը զօրքի վերայ, բայց նորա հետմիասին քաղաքական իշխանութիւններին չէր թոյլատրում անցանել իշխանութեան սահմանից, չհերքելով այն ամենայնով նորանց օրինաւոր պահանջները: Մառայութիւնը թողնելիս, օփիցերներն ուղղեցին դէպի նա սրտառուչ նամակներ, որոնց մէջ արտայայտումէին խորին զգացում «անկեղծ բարեկամի և ցանկալի եղբոր կորուսանելու մասին»: Մի և նոյն զգացումով լցուած էր և ժողովուրդը. վիրգինացիների ինքնասիրութեան ակտը էր տեսանել թէ ինչպէս ընդունումէր բոլոր Ամերիկան իւրեանց օփիցերի քաջագործութիւնները և ծառայութիւնները: Վերջին պատերազմագնացութեան մէջ, Աւաշինգտոնն ընարուեց վիրգինեան քաղաքացիների ներկայացուցիչ պալատի մէջ: Նորան ընտրեցին ուղիղ այն կամութեան մէջ, որ տեղ հանգամանքները շատ անգամ ստիպումէին նորան դնել բնակիչների վերայ խիստ ծանր պարտականութիւններ, այդ բանը ցոյց է տալիս թէ ինչպէս նա քաջ գիտէր դէպի ինքն քարշէլ ժողովրդի համակրութիւնը: Այդ ժամանակից, 15 տարիների ընթացքում, նա անգամ էր վերդինական քաղաքական

պաշտում, և նորա մէջ մեծ ազդեցութիւն ունէր: Նա ձեռք բերեց այդ ազդեցութիւնը բոլորովն հանդարտ, առանց աղաղակի, իւր կարծիքների ճշդութիւնով, փորձնականութիւնով և բնաւորութեան անխորդախութիւնով: Նա քիչ էր խօսում, չէր խառնուում փոթորիկացի կամ անձնական հակաձառութիւնների մէջ, բայց միշտ պատրաստ էր ասել իւր կարծիքը պարզ կերպով վճռողական հարցերում. բայցի զորանից ամէն ևս յարգութիւն էին ցոյց տալիս նորա արդարութեան և հաստատութեան:

**Այդ ժամանակ Ուաշինգտոնը** պատկուեց. նորա կինը իւր լուսաւորութիւնով խիստ բարձր էր ինքեան ժամանակակից ամերիկացուհիներից, Ուաշինգտոնի պէս, նա նոյնպէս խիստ հարուստ էր: Փոխադրուելով Մոնտվերնոնի մէջ, Ուաշինգտոնը նոյնպէս գործունէաբար սկսեց կառաւարել իւր զոյքը, ինչպէս յառաջ հրամանատարի պաշտօն էր կատարում զօրքի վերայ: Նա ինքն նայում էր իւր երկրի մշակութեան վերայ, հետազօտում էր երկրագործութեան յառաջգնացութիւնները Եւրոպայի մէջ և մտքոյն նորանցը Վիրջինիայի մէջ: Առանց կոմիսիօններին [յանձնարարութիւններ կատարողներին] օգնութեան նա սկսեց յարաբերութիւններ ունենալ Վոնդոնի գործակալների հետ իւր թամբաբուն վաճառելու համար. իւր հաշիւները պահում էր նա ամենախիստ վաճառականի կանոնաւորութիւնով: Զափազանց ճիշդ լինելով ամենայն գոր-

ծերի մէջ, նա թոյլատրում չէր անանքրութիւնները և ուրիշներին: Բարեկամներին նա շատ օգնում էր իւր միջոցներով, զիտու թիւններով և վարկով. նորա բարութիւնը և ազնուամտութիւնը շուտով յառաջ բերին նորա համար այնպիսի յարգութիւն բոլոր Վիրջինիայի կողմից, որ նորա մօտ զիմուսներն ամէն կողմերից. կամ խնդրելու նորան լինել խնամակալ պաշտպան որ-եւէ մարդասիրական կամ ընդհանրօգուտ գործի: Նմանապիսի հօգսերը, ՚ի հարկէ, քիչ նեղութիւններու աշխատանք չէին պահանջում նորանից, բայց և այնպէս պատճառու մէկն զուր բարոյական բաւականութիւն: Ուաշինգտոնի բոլոր գործերում երևում էին համազման զօրութիւն, սեփական մտքի հաւասարմութիւն: Նորա միտքը վարմանալի կերպով անկախ էր: Նա փոխ չէր աւնում մտքեր ուրիշներից, այլ նորա, փակտեր սուսնասիրելը յղացնում էր նորա մէջ նորանցը, կամ թէ չէ, նայում էր գործի վերայ պարզ, առանց կանխակալ կարծիքների: Արք նա մի որ և է բան նկատում էր, ասպա ոչինչ բան արդէն չէր խանդարում նորան. կհակառակէին նմա թէ ոչ, կխրատուսէին թէ կյանդիմաննէին այդ արդէն չէր փոխում նորա վճիռը:

**Այն միջոցին** նոր անդլիական նախարարութիւնը խաղաղութիւն հաստատեց Քրանիացիների հետ, բայց այդ խաղաղութիւնն անշահաբեր էր: Մեծաբանակ պարտքերով ծածկուած, չզխոնալով, ինչպէս մեղմացնել անդլիական ժողովրդի հետ զհետեւ

առաւելանող անբաւականութիւնը, նախարարութիւնն առաջարկեց լոնդոնական պարլամենտին ձգել գաղթականութեան վերայ հարկերի մի մասը, որոնք խիստ ծանր էին Անգլիայի համար. պարլամենտը համաձայնութիւն ցոյց տուեց: Երբ այդ բանը լսուեց Ամերիկայի մէջ, բարձրացան այնտեղ զանգատներ, վերկացաւ շփոթութիւն: Հարկն ինքն ըստ ինքեան չնչին էր. բայց հարկեր նշանակելու պահանջողութիւնը խանգարումէր գաղթականութիւնների իրաւունքները և սաստիկ անհանդիստ էր անում նորանց՝ ապագայի վերաբերութիւնով: Այդ անհանգստութիւնները շուտով իրաւացի համարուեցան.

Հետևած թվում պարլամենտը սահմանեց, որ բոլոր դա շնազրերը, արձանադրութիւնները<sup>1)</sup> գաղթականութիւններում լինէին դրուագաւոր թերթի վերայ, այլապէս, նորանք չեն կարող իրական համարուիլ: Այդ մի նոր հարկ էր գաղթականութիւնների համար, առանց նորանց համաձայնութեան. այժմ ծագեցան մրրկալից մանիֆէստացիաներ<sup>2)</sup>: Բոստոնում ժողովուրդը բարձրացաւ և պաշարեց տունը, որ ծախումէր դրուագաւոր թուղթ. վաճառականական

1) Թղթերը, որոնք որ-և-է կառավարչական անօրէնութիւնը են յայտնում:

Ծան. փոխ.

2) Դիտաւորութեան արտայայտելը հրատարակապէս, հանդիսարար:

Ծան. փոխ.

նաւերը, որոնք գտանվումէին նաւահանգստում, որպէս տիրութեան նշան, կախեցին նաւադրօշները, զանգակները խփեցին ըստ եղանակի յուղարկաւորական զանգահարութեան: Ֆիլադելփիայում բնակիչները թնդանօթների բերանները խցեցին բեռեւելով, միքանի ուրիշ քաղաքներում այնկոծութիւնը և սաստիկ զօրեղ էր: Այդպէս, Նիւ-Հէմշըրի շատ քաղաքներում այդպիսի մանիֆէստացիաներ կային. փաղոցներում, յուղարկաւորական զանգահարութեան ժամանակ, տանումէին կարմիր զազազ վերնազրովս *ապրտու-լի-ան Ծննդից 145 արտէ-ան*: Գազազը յուղարկաւորումէին թմրուկը հարկանելով. հրացանաձգութիւնները լսվումէին ամէն մի րոպեում: Վերջապէս զազազը բերին և խճուցին զերեզմանի մէջ. սորանից յետ խմբի մէջից դուրս եկաւ մի անձն, որ սկսեց մի ըստ միոջէ համարել մեռածի [ազատութեան] բարեգործութիւնները. բայց ճառախօսութեան մէջ կանգ առաւ և աղաղակեց. «ես նկատում եմ կեանքի նշմարանք»: Ապա զազազը դուրս քաշեցին զերեզմանից և նոր վերնազրով ասղատութեան յարութիւն» ման ածեցին փողոցներում. զանգակների ուրախ ձայները և մարդերի զուարթ աղաղակները հնչեցին՝ տարածուեցան քաղաքի մէջ . . . Անգլիական ազատութեան զլխաւոր հիմը եղած է այն կանոնը, թէ անզլիական հպատակի վերայ չի կարելի հարկեր դնել առանց նորահամաձայնութեան: Գաղ-

Թականութիւնները ներկայացուցիչներ չունին լոն-  
դոնական պարլամենտում, այդ պատճառով և իրա-  
ւունքից զուրկ էին համարում նորան դնել իւրեանց  
վերայ հարկեր: Թագաւորին անյապաղ զանգատուե-  
ցին. հարկը փոխեցին: Բայց պարլամենտն ամենևին  
չզիջաւ իւր պահանջողութիւններից. փոխելով այդ  
հարկը, նա մի և նոյն ժամանակ հրատարակեց, որ  
իւր սահմանադրութիւնները պարտաւորեցուցիչ են  
զաղթականների համար՝ ամենայն դիպուածներում:»  
Սկզբում այդ յայտարարութիւնը մնաց աննկատելի.  
ամերիկացիները չնչին էին համարում: Բայց շուտով  
ապա պարլամենտը դրեց բաժ չայլ վերայ, ապակու,  
թղթի և այլն, և կարգեց՝ մշտական աստիճանաւոր-  
ւորներ արիւ հարկերի հոծոր: Նմանապիսի մշտական  
բարձրութիւնների պատճառով կառաւարութեան  
կողմից, զաղթականութիւնները բոլորովին թշնամի  
դարձան դէպի նա: Անկախութեան հողին նորանց մեջ  
չափազանց զօրեղ էր և, չնայելով բոլոր ամերիկական  
շտաաների ներկառակութիւններին և թշնամութիւն-  
ներին միմեանց հետ, նորանք միացան կուռելու ընդ-  
դէմ՝ Անգլիայի բռնաւոր պահանջումներին: Նախ՝  
փորձ փորձեցին ընդդիմադործել խաղաղ միջոցներով:  
Գաղթականութիւնները կրճատեցին ամենատեսակ վա-  
ճառականութիւնը Անգլիայի հետ. Մտասաչուղէտը և  
Վիրգինիան շարժողութեան զլուխ կանգնեցին, բայց  
նորա հետ միասին ոչ մի սեղ չէին գործում բանի

ընթացքներ: Իսկ այն ժամանակից, երբ սկսեցին յար-  
ձակուել զաղթականութիւնների իրաւունքների վերայ,  
Ուաշինգտոնը վճռողապէս վեր կացաւ պարլամենտի  
դէմ: Այդ պահանջողութիւնները թվումէին նմա-  
ւատելի և ոչ կոնստիտուցիոնական:»<sup>1)</sup> «Ոչ ոք, ա-  
սումէր նամի բուպէ ևս չպէտք է տարակուսի պաշտ-  
պանելու համար դէկրով այդքան թանկագին և սր-  
բազան շահերը: Բայց ամենայն դէպքում զէնքը պի-  
տոյ է վերցնել միայն ինչպէս վերջին ապաստանարան:»  
Սկզբից իսկ Ուաշինգտոնը մեծ ազդեցութիւն ունէր  
եղելութիւնների վերայ. նա կատարելապէս յոյսը դը-  
բած էր արդար գործի յառաջադիմութեան վերայ:

Այն միջոցում խաղաղ և օրինաւոր միջոցները  
սպառուած էին, աղրէսները դէպի թագաւորը և դէ-  
մոնստրացիաները<sup>2)</sup> պարլամենտին ոչինչ չչինեցին: Փո-  
խանակ վախեցնելու գէորդ Ոււին, բուտոնեան շար-  
ժողութիւնները առիթ դարձան նորա նորանոր խստու-

<sup>1)</sup> Ա. ժ. Կոնստիտուցիայ բառի, նշ. այն թագա-  
ւորական ակտը (իրաւութեւրթը), որանով օրոշվում են  
կառաւարութեան իրաւունքի սահմանները հպատակների  
վերայ:

<sup>2)</sup> Մտքերի կամ զգացման ձևի արտայայտութիւն,  
պատգամաւորների առաքման միջնորդութիւնով, և այլն:

Ման. փոխ.

Ման. փոխ.

Թիւնների, և Մասսաչուզէտսի հին խարտիան<sup>1)</sup> ոչնչացուցին: Իւրաքանչիւր օր ընկձուձէր (Ճանրացնումէր) նոր սահմանադրութիւնը գաղթականութիւնների դրութիւնը: Այն ժամանակ վերդինական ժողով պահանջման համաձայն, հաւաքուեց վերջապէս բոլոր շտանների ընդհանուր կոնգրէս<sup>2)</sup> Ֆիլադելփիայում (4 Սեպտեմբերի 1774 թ.): Բոլոր նահանգները, բացի Գեորգիայից, ուղարկեցին այնտեղ իւրեանց ներկայացուցիչներին: Այդ կոնգրէսը զեռ չէր մտածում բաժանուիլ Անգլիայից և այդ հոգով թագաւորին ազդէս ներկայացրեց: Սակայն բաժանուելու միաքնարդէն աւելի ու աւելի էր տարածանվում. իսկ շտանների առօրեայ յարաբերութիւնները միմեանց հետ յառաջ բերին փոխադարձ վարկ զէպի ընդհանուր դաշնակցութիւնը և զէպի նորա գորութիւնը: Երկրորդ կոնգրէսում [16 Մարտի 1775 թուի] վճռած էր պատրաստուիլ պաշտպանուելու: Ուաշինգտոնը վճ-

1) Խարտիայ (Թուղթ). Magna charta-հին անգլիական կայսերական սահմանադրութիւն գերագոյն իշխանութեան իրաւունքների վերայ:

Ծան. փոխ.

2) Թագաւորների կամ նորանց իշխանութիւնով լիովին մատակարարուածների ժողով՝ վճռելու համար միջազգային գործերը: Այստեղ նահանգատէրերի ժողովը պիտի հասկանալ:

Ծան. փոխ-

ուեց նուիրել իւր կեանքը և իւր գոյքը ազգային գործին: Գեռ պատերազմների ժամանակ Ֆրանսիայի հետ ամերակացիները ընտելացան պատերազմին և այդոր համար նորանց մէջ կային շատ փորձառու և ծերունի զինուորներ: Ծուտով սկսուեց և պատերազմը:

Բոստոնի բնակիչներն արդէն մի քանի ամիսներ նկատումէին անսովոր զործունէութիւն անգլիական բերդապահ զօրքի մէջ: Միշտ ուսանումէին զօրքերը, զիշերապահները շրջումէին փողոցներում, նախազեկոյց զինուորները [որոնք զեկուցանումէն մօտաւոր թշնամու յանկարծական յարձակումը, յառաջուց] դատաւորուած էին արուարձաններում: Քաղաքին շրջապատող հողերը յատակուած էին. Բոստոնը մի բանակի կերպարանք ուներ թշնամու հողում. ժողովրդի և զինուորների մէջ քիչ անգամ չէին յառաջ գալիս արխնահեղ կռիւներ, և անգլիական զինուորներին ուրիշ անուն չէին տալիս, բայց եթէ անգլիական մարդասպաններ. 18 Ապրիլի 1775 թուի, մասսաչուզէտսի գուբերնատորի զլխաւոր շտաբում, սովորականից դուրս զործունէութիւն կար. ամէնը շարժվումէին նորա չորս բոլորը, բայց անգլիական զօրքի մէջ ոչ ոք չէր իմանում նորա զխաւորութիւնները, և զիշերը դաղտնապէս նա ուղարկեց իւր զնդապետ Սմիտին բռնել Երկու զլխաւոր զործողներին, ժողովրդական սիրելիներին՝ Աղամսին և Հանկոկին, բացի՛ դորանից, Սմիտը պարտաւոր էր ոչնչացուանել զինու-

որական հանդերձների և զէնքերի ամերիկական դէպոս [պահարանը]: Բայց ամերիկացիներն խնանուձէին այն, ինչ չգիտէին անգլիական զինուորները. նոյն իսկ զիշերը ամէն կողմերից հաւաքուեցաւ ժողովուրդը իւրեանց գործողների պաշտպանութեան համար, իսկ միւս օրը Ամիան արդէն խորտակուած էր Լէզսինդտոնի մօտ: Այդ կերպով պատերազմն սկսեցաւ, և ութ օրից յետոյ արդէն 20,000 ամերիկացիներ պաշարեցին Բոստոնը:

Ժողովուրդը վարմանայով լսեց առաջին յաղթութեան համբաւը: Անգլիական կառաւարութեան հաւատարիմ մարդերը պարտաւոր էին հանդարտուելու: Կոնգրէսը, որ Ֆիլադելֆիայում հաւաքուել էր, յանձն առաւ զինուորական գործերի կառաւարութիւնը և սկսեց զխաւոր հրամանատար ընտրել: Գլխաւոր հրամանատարը պարտ էր լինել ոչ միայն պատերազմակազմի տալանտով անձն, բայց նա բոլորից յարգելի: Միաձայն ընտրութիւնը փիճակուեց Ուաշինգտոնին: Յանձն առնելով հրամանատարութիւնը, նա հրաժարուեց ռոճիկից: Ուաշինգտոնը զնաց դէպի զօրք կիսով միաւին: Կինը միշտ առաջնորդուձէր նորա [զրնուձէր նորան հետ] և լսուձէր ինչպէս առաջին, այնպէս և փերջին հրացանաձգութեանը իւրաքանչիւր պատերազմազնացութիւն ապստամբական պատերազմի ժամանակը: Գալով զօրքի մէջ, Ուաշինգտոնը դտաւ միայն ապստամբների դանապան խմբեր. ոչ զօրքերի հիւանդա-

նոյններ պատերազմազնացութեան մէջ, ոչ զինուորական դրամարկը, ոչ ռաբաձիւզ զօրքերի գունդեր, ոչ ինժէներներ<sup>1)</sup>. տեսաւ մարդեր, բոկոսն, վատ զինաւորուած, հիւանդ, առանց պատերազմական զիսցիպլինայի<sup>2)</sup>: Այդպիսի իսկ խմբից պիտոյ էր կազմել զինուորներ և զօրք, այն ևս թշնամու ներկայութիւնով: «Արդարեւ, այդ մի խիստ յանդուգն ձեռնարկութիւն է» բացականչուձէ, Ուաշինգտոնը յաւսահատութեան բուպեում. և ուղիղ, դժուար է երեւակայել, որպիսի ձգնաթափութիւններով և չարչարանքներով կարողացաւ նա ողևորել, հանդարտել անբաւականութիւնը և ձգել կարդ այդ յանկարծակի հաւաքուած և անպատրաստ զօրքերի մէջ: Շատերը չէին կամենում հնազանդել զիսցիպլինային [կարգապահութեան] և փախչուձէին: Բայց ի գորանից, Ուաշինգտոնը պարտ էր մնաքառել ուրիշ արգելքների հետ. նորա ամենափոքր հրամանները կատարելու համար պիտոյ էր ստանալ կոնգրէսի համաձայնութիւնը, իսկ կոնգրէսը դանդաղ էր ներդործում:

<sup>1)</sup> Ձինուորական մտքով առնելով նշ". այն անձը, որ հմուտ է բերդեր պաշարելու, նորանցը պաշտպանելու և ամրացնելու զիտութեան մէջ:

Ծան. փոխ.

<sup>2)</sup> Անպայման աստիճանայարդութիւն բոլոր զօրքերի մէջ. այլ և, պաշտօնի (կամ արքունի ծառայութեան) բոլոր կանոնների խիստ պահպանութիւնը:—

Ծան. փոխ.

Հագիւ Ուաշինգտոնը կարողացաւ ձգել զօրքի մէջ կարևոր փոփոխութիւնները, խնայն վերջացաւ այդ ժողոված զինուորների ժամանակակէտը: Զինուորները հաւարվումէին միայն մի տարի ժամանակով: Պետոյ էր կազմակերպել նոր զօրք այն յոյսով, որ տարու վերջում նա ևս կցրուէր. բայց, չնայելով ամերիկական զօրքի խղճայն դրութեան վերայ, անգլիացիները, շարունակ սաշարմանից յետ, թողեցին Բոստոնը և նաւելով հեռացան: Այդ անցքի բարոյական նշանակութիւնը խիստ մեծ էր. նա քաջակերեց և խրախուսեց ամերիկացիներին: Միայն թէ անգլիացիները, նաւարկելով, կարող էին ծովափնեայ քաղաքներից որի վերայ և կամենային յարձակուել. նորանք վճռեցին այդ յարձակումն անել Նիւ-Նորկի վերայ, որպէս զե հիւսիսային շտաները բաժանեն հարաւայիններից և պահպանեն վերջինների մէջ անգլիական թագաւորին հաւատարիմ մարդերին: Ուաշինգտոնն իմացաւ նորանց նախադիժը և յառաջուց ծանուցեց նորանց:

Այդ ժամանակ արդէն բոլոր շտաներն ազատ էին անգլիացիներից. թագաւորական զուբերնատորները ամենայն տեղ հալածուած էին: Մինչև անգամ, չնայելով անգլիացիների մի քանի յառաջադիմութիւնների վերայ հիւսիսի վերայ, ընդհանրական կարծիքը Անգլիայի մէջ իսկ ընդդէմ էր պատերազմին, միայն Գէորգ III-ը հաստատուն մնաց նորա վերայ: Նա դրնեց 17,000 մարդ մանր զերմանական պրինցներից,

որոնք իւրեանց հպատակների կեանքը վաճառումէին, և ուղարկեց դէպի Սմերիկայ 25,000 անգլիական զինուորներ ևս: Այդ ժամանակ անգլիական կոնգրէսը հրապարակեց շտաների անկախութիւնը:

Իջանելով Լոնդոնէ յլանդի մէջ, անգլիացիները յանկարծ յարձակուեցին ամերիքական զօրքերի վերայ: Անգլիացիները շատ էին, յաւելացրու և այն որ լաւ կրթուած էին. ամերիկացիներն սկսեցին փախչել, թողնելով 1000 զերիներ իւրեանց յետուս: Այդ մի վճռորական հարուած էր. ստորջ գնդեր զօրքից փախան, միւսները հրաժարվումէին գնալ դէպի հեռուն, երրորդները խստնումէին կարգերը [ԲՅԱԸԻ]: Ուաշինգտոնը պարտ էր յետ կասիլ [փախչիլ]. նա յստակեց Լոնդոնէ յլանդը, Նիւ-Նորկը և գնաց դէպի Նիւ-Չերքէյեան սարերը: Նորա զինուորներն այնչափ վախենումէին անգլիացիներից, որ երկու բրիգադներ <sup>1)</sup> փախչումէին 50 մարդերի առաջ: Ի զուր էր Ուաշինգտոնը բնկնում իւր զինուորների մէջ, սպառնում նորանց, յարձակվում թշնամու վերայ. ոչ աղաղակները, ոչ օրինակը չէին կանդնեցնում փախչողներին: «Գնել յոյսը այդպիսի զինուորների վերայ-առումէր ինքն Ուաշինգտոնը-մի և նոյն է, թէ հաստատուել կոտրած զաւազանի վերայ:» Այն միջոցում

<sup>1)</sup> Բրիգադը (Ֆր. la brigade, մարդերի հաւաքումն) — զօրագունը, թուով 10,000, մի գնդապետի առաջնորդութեան տակ:

Թագաւորի կուսակիցները ևս զուլս բարձրացրին: Նուրբ կերպով պարտ էր Ուաշինգտոնը նայել նորանց վերայ, մի և նոյն ժամանակ ոգևորել իւրեաններին, որոնք ընկած էին յուսահատութեան մէջ, զրել զէպ'ի կոնգրէսը, որ նորան ստիպի դանդաղ չներգործել, զէպ'ի նահանգական ժողովները, նորանցը գրգռելու զօրքերի հաւաքման համար, և նորա հետ միասին պարտ էր Թուրսցնել իւր ղեներախների նախանձը: Այն ամենայնով սառն ձմեռը երբ հասաւ, Ուաշինգտոնը կարողացաւ մի փառաւոր զօրական — ուղեգնացութիւն անել և երկու փոքրիկ յաղթութիւն կատարել անդլիացիների վերայ: Այդ յաջողութիւնը զօրացրեց, ինչպէս Ներուպայի, այնպէս և նոյն իսկ ամերիկացիների մէջ վարկ զէպ'ի իւրեանց գործը, և շատ ձեռնառու եղաւ նոր զօրքի կազմակերպութեան:

Կոնգրէսը վերջապէս զիջաւ Ուաշինգտոնին, օփիցերների ռոճիկը շտապցրին, զօրաժողովը պիտոյ է լինէր երեք տարի ժամանակով և բատայիոնների Վիլիամ շտապրած էր մինչև 88-ը, բայց և այն ամենայնով, զօրքի մէջ Թագաւորումէր անկարգութիւն, ռոճիկների զանազանութիւնը և տարբեր զիւցիպլինան պատճառ դարձան նախանձի, զինուորների և զէպ'ի պատերազմ յարուշած մարտերի մէջ: Կոնգրէսը

1) Մօտ 1000 հեռակ-ղխուորներից զօրագունդ:

Ման. փոխ.

վճռեց վերջապէս տալ Ուաշինգտոնին զիկտատորութիւն 1) վեց ամիս ժամանակով: Գործերը յաջող էին գնում. զօրքին տուած էր պաշար, բատայիոնների թիւը հասուցած մինչև 110-ը, անընդունակ օփիցերի տեղ բռնեցին ընդունակները:

Այն ինչ անկախութիւնները, որոնց համար պատերազմումէին ամերիկացիները, յառաջ բերին Ներուպայի մէջ շատերի համակրութիւնը. այդոր համաձայն շատ երիտասարդ մարդեր, Ֆրանսիացիները մանաւանդ, զայլս էին և մտանում ամերիկական զօրակարգերի մէջ: Նորանց մէջ նշանաւոր էր մանաւանդ Ֆրանսիական մարքիզ 2) Լաֆայէտը: Այդ անկախ երիտասարդը չափազանց հարուստ էր, մեծ կապեր ունէր Ֆրանսիայում և կայսերական դրան առաջև կարողացաւ ունենալ «ամենափայլուն ասպարէզ [յառաջադիմութիւն բոտ ծառայութեան]: Տասն և ինն տարեկան նա թողեց կիներ և վճռեց զնալ պաշտպա-

1) Նշ'. կոչումն և պաշտօն զիկտատորի: Գիկտատորը հին — հռոմէական հասարակապետութեան մէջ մի բարձրաստիճան անձ էր, որ ընտրվումէր կէս տարի (6 ամիս) ժամանակով, անսահման, իշխանութիւնով պատերազմի մէջ: Նոյն մտքով է նորա զործածութիւնը և այստեղ:

Ման. փոխ.

2) Այժմ այդ բառն առնվումէ Ֆրանսիայում ժառանգաբար ստացած տիտլոսի նշանակութիւնով:

Ման. փոխ.

նելու ամերիքական ազատութիւնը: Սկզբում, երբ  
 Ղաֆայէտը եկաւ Ուաշինգտոնի մօտ, սա սառնարի-  
 նաբար ընդունեց նորան, որովհետեւ Ֆրանսիացիներէց  
 և շատ արկածախնդիրներ և շատ բազմախնդիրներ էին  
 դալին այդ ժամանակ: Առաջին հրաժարումն ստանալուց  
 յետոյ, Ղաֆայէտը խնդրեց իւր համար մի հասարակ  
 զինուորի պաշտօն, որանով ցոյց տուեց իւր անշահա-  
 սիրութիւնը: Շուտով նա բոլորովին միացաւ Ուա-  
 շինգտոնի հետ և նմա շատ օգնեց իւր կապերով և  
 իւր փողով:

Հետեւած տարում [1777 թ.] անգլիացիները  
 բռնեցին Ֆիլադելֆիան, միայն թէ Ուաշինգտոնի աշ-  
 խատութիւններն առանց հետեւանքների չմնացին: Թէ և  
 նորա զօրքերը դեռ ևս անփորձ էին, բայց պահպա-  
 նումէին եռանդնոտութիւն, և անգլիացիները վախե-  
 նումէին շատ անգամ անհանգիստ անել նորանցը:  
 Չմբան համար Ուաշինգտոնը կարևոր համարեց բա-  
 նակ թողուլ ամրապինդ դիրքում, թշնամուն մօտ: Նա  
 ինքն ուսուցանումէր զինուորներին մաքրել տեղն ան-  
 տառից, շինել խրճիթներ [քոխեր] և տանել զրկանք-  
 ներ: Մի քանի օրում մի ամբողջ քաղաքիկ էր շե-  
 նուած: Այն միջոցում հիւսիսի վերայ, Ուաշինգտոնի  
 խրատների շնորհով, ամերիկացիները Չարզեցին մի  
 այլ անգլիական զօրք: Այդ յաղթութիւնը Սարա-  
 տոգի մօտ խիստ նշանաւոր էր. 6,000 մարդեր զե-  
 րեցին ամերիկացիները: Այդպիսի յաջողականութիւնը

մեծ ազդեցութիւն ունեցաւ բոլոր պատերազմի վերայ:  
 Ֆրանսիական կառաւարութիւնը, տեսանելով ամե-  
 րիկացիների զօրութիւնը, ընդունեց Ամերիկական Շտատ-  
 ների անկախութիւնը և վճուեց յայտնի նորանց կողմը  
 բռնել. նմա շահաւէտ էր թուլացնել Անգլիային:

Այն ինչ մի քանի ինքնասէր մարդեր նախանձ-  
 վումէին Ուաշինգտոնին և ցանկանումէին նորան դե-  
 պի վայր ձգել: Այդպիսի էր գեներալ Կոնվայն, մի  
 իրլանդացի, սնասպարձ և ինքնասէր անասհամանաբար:  
 Նա սկսեց իւր խորամանկական հնարները մինին պա-  
 տիւններ էր խոստանում, միւսին արծաթ, երրորդի  
 մէջ նախանձ էր յարուցանում, չորրորդում ան-  
 վստահութիւն և կասկածաւորութիւն ռամկապետու-  
 թեան մէջ և ամէնին օրինակ էր տալիս անհնազան-  
 դութեան և լքութեան Ուաշինգտոնի վերաբերութիւ-  
 նով: Այդ հնարները յաջողութիւն գտան և Կոնվայն  
 միտք ունէր բռնել գլխաւոր հրամանատարի տեղը: Նա աշ-  
 խատու էր իւր կողմը քաշել և Ղաֆայէտին, խոստա-  
 նալով նմա առանձին կորպուս <sup>1)</sup>: Ղաֆայէտը մերժեց:  
 Ուաշինգտոնի թշնամիները մտան և կոնգրէսի մէջ,  
 բայց մի քանի խօսքերը Կոնվայն և Գատէսի մասին

<sup>1)</sup> Կորպուս (լատ. corpus, ֆր. corps—մարմին) նշ. զօրքի  
 որ և է անկախ կամ ինքնակայ մասը, որ բաղկացած էր, սո-  
 վորաբար, հետեակ, հեծած և ուղմարձակ զինուորներից:

բացեցին բոլորի աչքերը: Ուաշինգտոնի բոլոր ժողովողականութիւնը կրկին դարձաւ դէպի նա:

Արջին անգամ Անոկայն ունեցաւ մենամարտութիւն մի Գենեթալի հետ, վերաւորուեց և, մնածելով թէ կմեռանի, գրումէր դէպի Ուաշինգտոնը. «Զգումեմ, որ կարող եմ դեռ բռնել զրիչը մի քանի բոսպէներ: Ես օգուտ եմ քաղում այդ բանից, որ արտայայտեմ ձեզ իմ անկեղծ ապաշառութիւնը [փոշմանութիւնը] նորա մասին, ինչ ես գործել եմ, գրել եմ որ և է, ձեզ անհաճելի բան: Իմ ասպարէզը վերջանումէ: Ըշմարտութիւնը և արդարութիւնը ստիպումեն ինձ բանալ իմ վերջին զգացումները: Իմ աչքերի առաջև, դուք մի հոյակապ, ընտիր մարդ էք երևում: Յանկանումեմ, որ դուք երկար կարող լինէիք օգուտ քաղել սերից, յարգանքից և պատուից այդ շտաաների, որոնց ապառութիւնը դուք պահպանումէք ձեր բարեգործութիւններով:»

Ամերիկական զօրքի խղճութիւնները ոչ մի ժամանակ այնպէս զօրեղ չեն եղել, ինչպէս 1778 թուի ձմեռ ժամանակը. շատ օփիցերներ դուրս եկան ծառայութիւնից: Ուաշինգտոնը գրումէր կոնգրէսին. «տեսանել որ մարդերն առանց հանդերձի, առանց ծածկոցների, առանց կենսական պաշարների և շատ անգամ առանց կոշիկի [որի պատճառով նորանց ճանապարհը կարելի է գտանել հետևելով նորանց ոտներից թափած արիւնին] անց են կենում սառոյցները

և ձիւները, անցուցանումեն ձմեռը իւրեանցից իսկ շինած խճիթների մէջ, տեսանել՝ որ այդ բոլորը նորանք տանումեն առանց քրթմնջելու, արդարև, դա մի հպուռազիւտ տեսարան է: Ուղիղ է, զօրքը մի քանի դէմնարացիաներ արեց կոնգրէսին և ուղարկեց նմա մի քանի զանգատներ. բայց մենք կլինէինք իրական ստրուկներ, եթէ մեզ մերժէին և այդ իրաւունքից: Մի քանի բացառութիւններով, օփիցերները պարտաւոր են ծախել իւրեանց սեփական զոյքը, որ կարողանան պահպանել իւրեանցը և այն դէպքում առանց ամենայն անկալութեան ապագայի կենսապահութեան վերայ: Ես խորին կերպով համոզուած եմ, որ մեր զործի փրկութիւնը կախուած է օփիցերների մշտական թողակի կէսը նշանակելուց՝ զինի պատերազմի:» Արեքամնեան ճղնաթափութիւններից յետ վերջապէս կարողացաւ Ուաշինգտոնը համոզել կոնգրէսին. նշանակեցին կէսը ուճիկի կօթն տարի ժամանակով: Օփիցերները ևս դադարեցին թողուլ ծառայութիւնը: Մի և նոյն ժամանակ Ուաշինգտոնը հոգս էր քաշում և զերած ամերիկացիների վերայ:

Բայց այն ժամանակից, երբ Ֆրանսիան յայտնի մտանակեց ամերիկացիների պատերազմին Անգլիայի հետ, բոլոր կրքերը, բոլոր սեղական նախանձները Ամերիկայում, որոնք մի բոսպէսչափ ժամանակ լռել էին վտանգը տեսանելով, նորից բարձրացան. դադարած լինելով կռուից, ամերիկացիները բոլոր յոյսը դրել

էին Ֆրանսիացիներն վերայ, մինչև անգամ պահանջումէին Ռաշինգտոնից որ նուազացնի զօրքը, այն ինչ բոլոր նորա զօրքը հասանումէր 11,000-ի, իսկ նորանց դէմ կացած անգլիական զօրքերի թիւը, 19,000-ի: Այնուամենայնով, չնայելով թուական գերազանցութեան վերայ, Անգլիացիները յստակեցին ճիշդ գէլիիան և զնացին դէպ'ի Նիւ-Նորի: Ֆրանսիական կառավարութիւնը ուղարկեց նորանց օգնութեան համար մինաւախումբ, որ նորանց չէր բաւական. այս ամենայնով Ֆրանսիական նաւախումբի գործողութիւնները յաջող ելք չունեցան: Այդոր հետեանք եղաւ, որ ամերիկացիները զրգուեցան Ֆրանսիացիներին դէմ: Այդոր համար Ռաշինգտոնը աշխատումէր ջնջել նորանց դէմ գործած անբաւականութիւնները: «Ի՞նչ պիտոյ է անել-զրուակէր նա Վաշայէտին-ամէն մին կամենումէ խօսել, ինչպէս նա մտածումէ կամ աւելի լաւ, առանց մտածելու:» Համաձայնութիւնը Ֆրանսիացիներին հետ կրկին վերականգնեց. Վաշայէտը զնաց դէպ'ի Ֆրանսիայ, որ զրգուի Ֆրանսիական կառավարութեան դէպ'ի աւելի գործունեաց օգնութիւնը:

Այն ինչ, որպէս զօրքի, այնպէս և ժողովուրդի մէջ ամէնքն սկսեցին անտարբեր լինել դէպ'ի անկախութեան գործը. լաւ մարդերը կանգնեցան թողեցին, նա բաժանուած էր կուսակցութիւնների և բոլորովին կորուսեց իւր յարգը: Ամենին թվումէր թէ պատերազմը վերջացել է, թէ ժամ է արդէն օգուտ քա-

ղիլ յաղթութիւնից և հանգստանալ, բաւականութիւն տալ իւրեանց արդէն բաւական երկար սանձած կրքերին և հաճոյքներին: «Մարդերը-ասումէ Ռաշինգտոնը-ընկղմած են ծուլութեան և խեղճութեան մէջ. շահագիտութիւնը, հարստութիւնների անհաղ ծարաւութիւնը արեցին բոլոր մտքերին, բոլոր կոչման և կարգի մարդերին. մասնաւոր անձների վէճերը զլիսաւոր դարձ են շինել. այն ինչ հասարակաց շահերը, արեւութեան մուտքի խանգարած զրուութիւնը, վարկի բացակայութիւնը, միւս կենսական հարցերը քիչ ուշք են գորաւում դէպ'ի իւրեանք:» Բացի թղթաղբամները, կանգնեցան փող չունէր. «Պաշարի բեռը թղթաղբամների բեռնով միայն կարելի է զնել»-ասումէ Ռաշինգտոնը: Այդոր համար և Ամերիկային մեծ օգուտ բերեց դաշնակցութիւնը Ֆրանսիայի հետ. Ֆրանսիան իւր դաշնակցութեան մէջ խալանկայի հետ շրջեց Անգլիայի ուշքն ու զօրութիւնները: Եւ բացի զորանից, Վաշայէտի աշխատութիւններով Ֆրանսիական կորպուսը զնաց դէպ'ի Ամերիկայ: Այդ օգնութիւնը խիստ յարմարաւոր օժանդակութիւն էր. այդ ժամանակ հիւսիսում ամերիկացիները միայն 10,000 մարդ ունէին, որոնք տառապումէին ցրակց և քաղցից, առանց ուճիլի, առանց կենսական պաշարների առանց կօշիկների, հարաւում անգլիացիները յաղթող գտանուեցան և գերեցին 5,000 ամերիկացիներին: Ֆրանսիացիներին դաւաճող կրկին ոգւորեց ժողովրդին: Սակայն ամէն մի-



զօրքերին և յանձն է առնում նորանց համար հոգս քաշել կոնգրէսսում: Բայց սակայն, կոնգրէսսը չէր կարողանում օգնել. նա չունէր արծաթ: Վճռեցին կրկին դառնալ դէպի Ֆրանսիայ:

Այն ինչ հարաւում անգլիացիները միքանի յաջողութիւններ էին գտել, բայց նորանց հետ միասին ամացի էին անում և կողոպտում զոյքերը [ուրիշ ստացուածների մէջ պրեցին Ուաշինգտոնի տունը և նորա սնկարկած տեղերը], որանով նորանք ևս աւելի չարացուցին իւրեանց դէմ ամերիկացիներին: Հիմայ Ուաշինգտոնը վճռեց յարձակուիլ անգլիացիների հարաւային զօրքի վերայ: Եւ այդոր համար, պատերազմագնացութեան պատրաստուելով, նա երեւոյրեց թէ, կամենումէր դնալ դէպի հիւսիս՝ պաշարելու Նիւ-Յորկը. անդլիական զօրական զխաւոր հրամանատարը ևս քաշեց իւր զօրքերը Նիւ-Յորկի շուրջը, ոյնժամ աննակ Ուաշինգտոնը շուտ ուղևորուեց դէպի հարաւ և յարձակուեց հարաւային անգլիական զօրքի վերայ Նորկտօնի մօտ: Ֆրանսիացիները և ամերիկացիները ջանք էին անում պճնասիրել միմեանց, այդոր համար և նորանք ներգործուէին զարմանալապէս աշխոյժ և եւանդնոտաբար: Անգլիական զինեռալը զօրքի հետ միասին պարտաւոր էր գերի ընկնիլ:

Այդ նորութիւնը յուսահատութեան մէջ ձգեց բոլոր Անգլիային, բայց թաղաւորը մնաց անդրդուելի, այստ ամենայնով, զօրութիւնից սպառած երկիրը

չէր կարող հետևել ոչ թաղաւորական կուրութեան, ոչ նորա քաջութեան: Երբ հարց առաջարկեցին պատերազմի շարունակութեան մասին, նորա համար դուրս եկաւ մի ձայն միայն: Չնայելով թաղաւորի ընդդիմութեան վերայ, հին նախարարութիւնը պարտ էր թողուլ ծառայութիւնը: Նորընտիր նախարարութիւնը պարտ էր հաստատել խաղաղութիւն:

Ուաշինգտոնը չէր հաւատում պատերազմի վերջանալուն և շարունակումէր մեծ պատրաստութիւն տեսնել նորա համար: Չժախազանց վտահանալով մեզ վերայ, կորուսանումէնք ամենայն բանստու մէր նա. բայց և այնպէս երբ առաջին անգամ լսեց հասարակաց խաղաղութեան մասին Փարիզում, նա ուրախ էր վերջ տալ ծանր զինուորական արուեստին և պարապել ներքին գործերով: 1780 թ. խոստացան օֆիցերներին իւրանքանչելի բոլոր կենսական թոշակի կէսը տալ ամէն մինին նորանցից, բայց խոստումը խոստում մնաց միայն. հիմայ այդ հարցը կրկին բարձրացու. կոնգրէսսը ոչ կարողութիւն, և ոչ ցանկութիւն ունէր կատարել իւր վճիռը: Կոնգրէսսի անդամները կամենումէին արձակել զօրքը, ոչինչ չանելով նորա համար, մինչև անգամ չապահովելով նախկին մնացորդը սոճկի:

Յուսահատութիւնը տիրեց զօրքերին, պեկոծութիւնը բարձրացաւ բոլոր զօրքի մէջ: Նորա մէջ տարածուեցաւ մի, գեղեցիկ ոճով զրած հրատարակութիւն, որի բովանդակութիւնն էր. «Եթէ պատերազմը

կվերջանայ, ցած չգնէք ամենևին զէնքը, մինչև չստանաք լիակատար բաւարարութիւն: Եթէ պատերազմը կշարունակուի, ապա մեկուսացէք զէպ'ի անապատը ձեր փառաւոր զօրականի առաջնորդութիւնով և ձեր քարոզով ճիծաղեցէք ապերախտ [անշնորհակալու] մարդերի երկիրդի վերայ: Միջնակուիք պատրաստ էր բորբոքուելու . . . Ուաշինգտոնը կարողացաւ հեռացնել այդ փոթորիկը: Բանդարիութիւնների և հետևողութիւնների [հալածանքների] տեղ, նա նշանակեց օֆիցերներին հաւաքուել յայտնի ժամանակում և յայտնուեց նորանց մօտ: Նա իւր խօսակցութիւնն սկսեց զբաւոր հրատակութեան քննութիւնով: «Եթէ պատերազմը կշարունակուի, գնացէք զէպ'ի անժարդաբնակ կողմերը և թողեցէք այդ անշնորհակալութողութիւնը իւր սեփական պաշտպանութեան» . . . Բայց որին արդեօք թողունք իւր սեփական պաշտպանութեան. մեր կիներին արդեօք, երեսաներին, մեր ստացուածք . . . «Եթէ խաղաղութիւն կլինի, ապա ցած չգնէք սուրը, մինչև որ ստանաք լիակատար բաւարարութիւն» . . . Աստուած իմ, ինչ է ունեցել աչքի առաջև զրոգը, որ խորհուրդ է տալիս այդպիսի հնարքներ: Ո՞վ է նա. զօրքի բարեկամ, մեր երկրի բարեկամ. բայց աւելի շուտ դա մի նենգաւոր թշնամի չէ, որ ուղարկուել է այստեղ զաղանապէս . . . Յոյս ունեմ, որ կոնգրէսը առանց այդպիսի միջոցների ևս բաւականութիւն տայ ձեզ: Ինչ ինձ է վերաբերում,

ապա երախտադիտութեան պատճառով զէպ'ի այն ապաւինութիւնը, որը ցոյց տուեցիք ինձ. սիրալիր կապի պատճառով զէպ'ի այդ զօրքը, որին ես պատիւ ունեցայ այդպէս երկար իշխելու, ես պարտք եմ համարում ինձ հանդիսաբար յայտնել ձեզ, որ դուք կարող էք ձեր յոյսը դնել իմ գործակցութեան վերայ ձեր գործի վերաբերութիւնով . . . Բայց, միամտացնելով ձեզ այդ բանում, ես թոյլատրում եմ ինձ խնդրել ձեզ, պարոններ, զէպ'ի մի կողմը ձգել այդ միջոցները, որոնք անպատիւմ են ձեր արժանաւորութիւնը, որոնք արատաւորում են այն փառքը, որ մինչև այժմ չէ նախատեսւած, և հեռացնում են այն նպատակը, զէպ'ի որը դուք ձգտում եք:»

Ուաշինգտոնը բռնեց խօսքը. նա կոնգրէսի հետ սկսեց խօսել այնպիսի տօնով [շարժուածքով], որ չէր թոյլատրում նորանց մերժելու նորա առաջարկութիւնը. կոնգրէսը հասկացաւ գործի կարեւորութիւնը, բնորոնեց և ապահովեց զօրքի իրաւունքները: Միայն թէ, զինուորանրից իւրաքանչիւրին ցմահ ապահովող թոշակի կէսը, որ պահանջվում էր տալ նորանցից ամէն մինին, չտրուեցաւ. որովհետև, եթէ տային, ապա այն ժամանակ կրկազմվուէր մի ժողովրդական դասակարգ, որ կապրէր անախատ կերպով օտարի հաշուով: Զօրքին խոստացան տալ միայն լիակատար հնգամեան ռոճիկ:

Ամերիկական կոնգրէսը, որ պատերազմի սկզբից հաւաքուած էր, մի ժողով էր լի հայրենասէրների,

որոնց գործողութիւնները խորհրդակցութեան բնառութիւն ունէին. բոլոր պատերազմի ընթացքում նա մի ժամանակաւոր կառաւարութիւն էր: Այժմ պիտոյ էր կազմել մշտական կառաւարութիւն: Գեւ պատերազմի սկզբում շտաաններին առաջարկուած էին «կոնֆէդերացիայի և մշտական դաշնակցութեան յօդուածները», որոնք քանի գնում, այնքան ևս կոնգրէսի ու շտաանների հաւանութիւն էին ստանում: Բայց այդ կոնստիտուցիան [սահմանադրութիւնը] կազմուած էր չեւոտոյ և չէր կարող լինել յաջող. նա տալիս էր կոնգրէսին սահմանադրական իշխանութեան ստուերը, և համարիւ թէ բոլորովին չէր պարգևում կատարողական իշխանութիւն: Կոնգրէսն ինքն չէր կարող հաւաքել ոչ հարկեր, ոչ զօրքեր. նա կարող էր միայն նշանակել թուանշաններ, իսկ շտաանները պարտաւոր էին հաւաքել այս և այն և, ի հարկէ, կարող էին առանց պատժուելու չանել այդ:

Որովհետև ինչպէս հետևանք դորա կենտրոնական կառաւարութիւնը խիստ թոյլ էր, ապա մինչև անգամ այն մարդերը, որոնք սկզբում հակամէտ էին դէպի հասարակապետութիւնը, մտածում էին. չկազմել արդեօք միապետականութիւն և շինել Ուաշինգտոնին թագաւոր: Այդ մտքերը, որոնք մեծ կերպով պտոյտք վումէին ժողովրդի մէջ, աւելի ջերմ կուսակիցներ գտան զօրքի մէջ: Այդ զաղափարներին անձնատուր էին մի քանի մարդեր, որոնք ցանկանում էին բաւարարել

կանութիւն տալ իւրեանց սնտիառութեան, այլ շատ ազնիւ ու անխարդախ մարդեր: Նորանցից մին, Նիկոլայ զնդապետը, որ շատ անգամ միջնորդ էր լինում զօրքի և Ուաշինգտոնի մէջ, հաղորդեց նմա մինչև անգամ այդ նախագծերի և յոյսերի մասին: Շատ թէ փոքր պատուասէր կամ իշխանասէր մարդ օգուտ կը քաղէր անշուշտ զօրքի և ժողովրդի այդպիսի ուղղութիւնից, ինչպէս արեց այդ Նասպոլէոն I-ը: Բայց Ուաշինգտոնը հազիւ թէ միակ օրինակը չէր երևել զիներայի, որ մնացել էր այդպիսի դրութեան մէջ հաւատարիմ՝ այն համոզումներին, որոնց անունի համար նա պատերազմում էր: Երբ լսեց ցանկութիւնը իւրեան թագաւոր կացուցանելու, Ուաշինգտոնը մի անկեղծ դժգոհութեան մէջ ընկաւ: Նա պատասխանեց Նիկոլային: «Չարմանքի և տխրութեան ծաղրալի զգացումով, ուշադրաբար կարդացի ես այն մտքերը, որոնցը բացատրած էք դուք: Հաւաստի եղէք, ողորմած տէր, բոլոր պատերազմի ընթացքում ոչ մի եղելութիւն չտխրացրեց ինձ այնպէս սաստիկ, ինչպէս ձեր ծանուցումը այնոր մասին, թէ զօրքն այդպիսի մտքերին համաձայն է . . . Զարհուրելով նայումեմ նորանց վերայ և դատապարտումեմ նորանցը ամենախիստ կերպով: Որ ինչ վերաբերում է ձեր նամակին, ես կը պահեմ նորան զաղանութեան մէջ, գէթ մինչև այն ժամանակ, երբ նոր մանիֆէստացիաները ինձ կարեւոր կ'իսցուցանեն նորան յայտնելը: Ես ի զուր եմ որոնում

իմ վարքիս մէջ մի բան, որ կարող լինէր ձեզ համարձակութիւն տալ անելու ինձ այն առաջարկութիւնը, որինես համարուեմ այն ամենամեծ թշուառութիւնը, որ միայն կարող է հասանել մեր երկրին: Եթէ ես չեմ սխալուեմ իմ իսկ անձնի վերաբերութիւնով, դուք չէք գտանելու ոչ ոքին, որին ձեր նախադժերն աւելի ահաճելի լինէին»:

Նորա հետ միասին Ռւաշինգտոնը համոզուած էր կոնգրէսի իշխանութիւնը գորացնելու կարևորութեան մէջ: Ծառայութիւնից գուրս գալով [1783 թ.], նա ասումէր իւր զօրքին. «արտիւր, արժանաւորութիւնը, արդարադատութիւնը կկորչեն յաւիտեանս, եթէ չմեծացնեն Գաշնսկցութեան իշխանութիւնը: Ահա իմ վերջին հրամանը իւրաքանչիւր օ՛ջիցերին և զինուորին—միաւորեցէք ձեր բոլոր զօրութիւնները արժանաւոր քաղաքացիների զօրութիւնների հետ՝ այդ մեծ և խիստ հարկաւոր հեռեանքին հասանելու համար որից կախուած է զոյութիւնը ամերիկացիների, ինչպէս առանձին (անկախ) ժողովրդի:» Հրաժեշտի ժամանակ, օ՛ջիցերներն արտասուք թափեցին, ամէն մին սեղմուեւոր նորա ձեռները. նոյն իսկ ինքն զըթաշարժուած էր և շփոթուած. . . Գինուորները չդաւաճանեցին և հաւատարիմ մնացին նորա վերջին հրամանին. ցրուելով զէպի աները, նորանք տարեցին նորա միտքը, որ հետ զհետէ ժողովրդական դարձաւ:

Դարձած լինելով Մոնտօւէրնոնի մէջ, Ռւաշինգ-

տոնը նախատեսանումէր, որ ինքեան անկարելի է կրկար մնալ առանձնութեան մէջ: Ազաղալը նորա շուրջ աւելի ու աւելի շտապումէր. բացի դորանից նա ինքն ևս քաղաքական մարդ մնաց իւր քաղաքացիների համար: Ցան մէջ նա նոյնպէս անգործ չէր մնում, լաւացնումէր իւր դաշտերը, պարապումէր վիրգիների տեղական շահերով, հիմնումէր ուսումնարաններ, ընդարձակ նամակագրութիւններ էր անում այնժամանակ քաղաքականութիւնով պարապող մարդերի հետ: Ռւաշինգտոնը համառօտ կերպով ուսու ամերիկական գետերի ու զոյութիւնը, նորանց տաշտի խոտորումը, նորանց անկման բարձրութիւնը: Եւ 1784 թ. վիրգիական կառաւարութեան նա ներկայացրեց ներքին ջրային հաղորդակցութիւնների ընդարձակ սխտեմի նրբամիտ նախադիժը, որի համեմատ, Պոտոմաք գետի ջրերը կապվումէին Օդիոյ, Միսսիսիպի գետերի և մեծ լճերի հետ: Այդ կարող էր կապել կողմերը, որոնք միմեանցից անջատուած էին սարերով. այլպէս, սարերի այն կողմ գտանուող երկրները կսկսէին յստկապէս վաճառականութիւն անել ամերիկացիների հարեանների՝ անդլիացիների և իսպանացիների հետ: վիրգիների օրէնսդրական ժողովը հաստատեց որ երկու ընկերութիւն կազմուի Ռւաշինգտոնի նախադիժը կատարելու համար: Այդ գործառնութեան օգնական գտանուելու համար, Ռւաշինգ-

տոնն ինքն սկսեց ծառայել որպէս ինժէներ<sup>1)</sup> ՝ Ս. յդ մեծ աշխատութիւնները ներքին նաւագնացութեան համար կարող են լինել Ուաշինգտոնեան փառքինոր յիշատակարանները՝ այդ կերպով էր վերաձայնվում [արձագանք տալիս] վերդինական կառաւարութիւնը:

Այն միջոցում, 1783 թվում, հասարակաց պարտքի շահը կոնդրէսը որոշել էր 2,500,000 դոլար<sup>2)</sup>: Այդպիսի գումարը ոչ կարելի էր փոխ առնել, ոչ ստանալ հարկերի միջոցով: Միացած Շտատները եւրոպայի մէջ չունէին ոչինչ վարկ. ամերիքական երկրի մէջ «կենտրոնական իշխանութեան պահանջները լոկ խօսքեր և գուարձութեան առարկայ էին»: Այդ ժամանակ յայտնվեցաւ շտատների մէջ շնչին թշնամութիւն. նորանք ունէին առանձին հարկեր մաքսատան, որոնք սպառնումէին բաժանումն ձգել շտատների մէջ: Ի զուր էր կոնդրէսը ներկայացնում նորանց կարևորութիւնը՝ ապահովելու մշտական և իրական արդիւնքները, կարիքներին բաւականութիւն անպուհամար՝ ՚ի զուր էր նա խնդրում նորանցից զօրացնել իւր իշխանութիւնը: Շտատները լռել՝ անգործունէութեան մէջ էին մնացել. իսկ կոնդրէսը մի միայնակ

1) Ինժէներ—նշ. նոյնպէս այն անձն, որ հմուտ էր կամուրջների, ձանապարհների, ջրային հազորակցութիւնների կազմութեան կամ յիսութեան մէջ:

Ման. փոխ.

2) Գործածական փ. դ Ամ. րիկայում, արժէքով մօտ 1 ո. 35 կ. Ման. փոխ.

ոչինչ չէր կարող շինել, դէպի նա շատ քիչ վարկ կար. իսկ իւր իշխանութիւնը դեռ թոյլ էր:

Վերջապէս 21-ին Յունուարի 1786 թուի, վերգինական օրէնսդրական ժողովը առաջարկեց միւս շտատներին կոչել կոնվենցիայ, ըստ երևոյթին միայն նորա համար, որ զանազան օրէնսդրական ժողովների պատգամաւորները խորհրդակցէին մաքսատան դաշնակցութիւն սահմանելու: Կոնվենցիան հաւաքուեցաւ Աննապոլիսում: Նորա համար եկան միայն հինգ շտատների պատգամաւորներ, որոնք ժողովը չի ուշքը դարձրին գործերի զրութեան վերայ և յերևան հանեցին սահմանադրութեան [օրէնսդրութեան] թերութիւնները: Աննապոլիսի կոնվենցիան նորանով վերջացաւ, որ իւր նշանակութիւնը խիստ սահմանափակ գտաւ և խորհուրդ էր տալիս շտատներին կոչել կոնվենցիայ լիակատար իշխանութիւնով՝ ուզողութեան ենթարկել սահմանադրութիւնը: Վերդինեան առաջինը յայտնեց իւր հաւանութիւնը այդ առաջարկութեան. քիչ-քիչ նմա հետևեցին և միւս շտատները: Երևեցաւ, որ ժողովուրդը ցանկանումէր սահմանադրութեան փոփոխութիւնը: Իւր պատգամաւորներին զուլս Վերդինեան ընտրեց Ուաշինգտոնին. այդ նոր ժողովը պարտ էր լինել Ֆիլադելֆիայում: Հրաժարուիլ Նշանակում էր զանց առնել ամենազեղեցիկ դէպքը փրկելու Միացած Շտատներին, այլոր համար և Ուաշինգտոնը վճռեց մասնակցիլ:

Սակայն նա զենաց կասկածամտութիւնով և անհան-  
 զատութիւնով: Արդարև, բաւական դժուար էր ստեղծել  
 բաւական զօրեղ սահմանադրութիւն, որանով կարելի  
 լինէր միաւորել ծագունել, կրօնով, կարգադրու-  
 թիւնով, վարքութարքով տարբեր շտատներին, որոնք  
 տարբեր էին մինչև անդամ իւրեանց շահերում: Յի-  
 լադէլիփական ժողովը ոչ միայն իւր լուսաւորութիւ-  
 նովն էր նշանաւոր, բայց և իւր անդամների փառա-  
 ւոր ընդունակութիւններով, որոնց թվում տեսա-  
 նումենք Ուաշինգտոնին, Ֆրանկլինին, Համիլտոնին,  
 Մորրիս դուբերնատրին, Վիկկիտոնին: Ուաշինգտոնը  
 կոնվենցիայի նախագահ ընտրուեցաւ. կոնվենցիայի ան-  
 դամները նոյն իսկ սկզբից իւրեանց գործողութիւն-  
 ները յայտնեցին զազանի, որ շատ ձեռնտու եղաւ  
 նորանց գործի յաջողութեան: Աթէ խորհուրդները  
 զազանի չլինէին, ապա կոնվենցիայի անդամների մէջ  
 ծագած շատ անհամաձայնութիւնները կ'այտնուէին և,  
 շտատների թշնամանականութեան ժամանակ, փոսն-  
 դաւոր կրառնային ներքին խաղաղութեան համար.  
 այն ժամանակ կոնվենցիան կ'ըրուէր և յառաջ կ'ը-  
 բէր ոչ թէ դաշնակցութիւն, այլ միջնակուի [միջազ-  
 ցային պատերազմ]:

Չնայելով ամենից խաղաղասէր դիտաւորութիւնների  
 վերայ, անդամների ներկայացուցիչները երկու կուսակ-  
 ցութեան բաժանուեցան: Մեծ շտատների ներկայա-  
 ցուցիչները ցանկանում էին նորաձեւութիւններ՝ դաշնակ-  
 ցական կառաւարութիւնն աւելի զօրեղ կացուցանե-

լու համար. իշխանութիւնների դէպի մի տեղ կենտրոն-  
 նաւորուիլը (централизация), մեծ թուականու-  
 թեան շտրհով, խտտանումէր առաւելութիւն մեծ  
 շտատների ներկայացուցիչներին, և կտար նորանց կա-  
 րողութիւն կենտրոնական կառաւարութեան վերայ ունե-  
 նայու ազդեցութիւն, իւրեանց զօրութիւններին հա-  
 մապատասխանող. այն ինչ փոքր շտատների պատգա-  
 մաւորները, ընդհակառակն, ցանկանում էին որ կեն-  
 տրոնական իշխանութիւնը, կարելի եղածին չափ, թող  
 լինէր և որ շտատները միապէս հաւասար լինէին կոն-  
 գրէսսի մէջ: Այդոր հետ միացաւ հիւսիսային և հա-  
 բաւային պատգամաւորների թշնամանականութիւնը.  
 մինքը հակառակ էին ստրկութեան, միւսները նորա  
 պաշտպաններ: Ուաշինգտոնը մի էր կենտրոնական կա-  
 ոււարութեան զխաւոր պաշտպաններից, դաշնակցա-  
 կան կառաւարութեան նա շատ իշխանութիւն էր  
 ցանկանում, այնոր համար, որ նա [դաշն.՝ կառա-  
 ւարութիւնը] բաւականաչափ զօրութիւն ունենար  
 ապահովելու բոլորի կեանքը, ազատութիւնը և սե-  
 փականութիւնը:

Ուաշինգտոնի ազդեցութիւնն ահազին էր. վերջա-  
 պէս երկար վէճերից յետոյ, կոնվենցիան սահմանա-  
 դրութեան նախագիծը կազմեց: Դաշնակցական կա-  
 ոււարութեան իշխանութիւնը զօրեղացուցած էր:  
 կոնգրէսսը բաղկանում է 1] ներկայացուցիչների պալատի:  
 Նա կազմվում է անդամներից, որոնք ընտրվում են ժո-  
 ղովորից երկու տարուց մի անգամ. անդամները ընտր-

վումեն ոչ շտատների թուի, այլ բնակութեան համեմատ. իւրաքանչիւր 30,000 մարդի համար մի մի անդամ: Պալատը գատումէ հարկերը, տէրութեան մեւաքերը և վաճառականական դործերը, յայտնումէ պատերազմ կամ խաղաղութիւն, հողս է քաշում պատերազմի և նաւախմբի մասին. 2] և Սէֆաւէից: Սէնաթի ներկայացուցիչներն ընտրվումեն արգէն շտատների կողմից, երկ-երկու մարդ իւրաքանչիւր շտատից: Սէնաթին տրվումէ վերին գատաստանական իշխանութիւնը: Բացի դորանից իւրաքանչիւր չորս տարուց յետ լինումէ նախագահի ընտրութիւնը. նորա ձեռքումն է կատարողական իշխանութիւնը:

Ես կցանկայի, որ սահմանադրութիւնն աւելի կատարեալ լինէր՝ առայ Ռաշինգտոնրբայց անկեղծաբար համոզուած եմ, որ նա աւելի լաւ է այն բոլորից, ինչ միայն կարելի է ստանալ ներկայումս: Հետեւած սահմանադրութիւնը կատորադրուի [կհաստատուի] արիւնով [մարգարէական խօսքեր]:»

Սահմանադրութեան նախագիծը՝ ներկայացուեց շտատներին՝ հաստատութեան համար. հետ զհետէ նա ստացաւ 9 շտատների հաւանութիւնը, որպիսի կերպով և ստիպողական դարձաւ բոլոր 13 շտատների համար: Այնուամենայնով սահմանադրութեան վերայ վանազան յաւելումներ աւերացրին, որոնք կոնդրէսի իշխանութիւնը սահմանափակումեն. 1] կոնդրէսը չէ կարող դնել ստիպողական օրէնք կրօնի

վերաբերութիւնով կամ արգելիլ նորանցից մին. նա կարող չէ սահմանափակել խօսքի և տպագրութեան ազատութիւնը կամ ազատութիւնը ժողովրդական իրաւունքի՝ հաւաքուելու և տալու կառաւարութեան ինդիքներ. 2] ոչ մի զինուոր խաղաղութեան ժամանակ չէ կարող դնուիլ տան մէջ, առանց տանուտէրի համաձայնութեան. 3] իւրաքանչիւր քաղաքացի և նորա թղթերը անմատչելի են. հետազօտութիւններ կարող են լինել միայն երդումով հաստատած ցուցումների հիմնի վերայ և մանրամասնաբար նշանակելով անզը և նոյն իսկ անձներն ու առաքիանները, որանք խոյզի և հետազօտութեան են ենթարկվում:

13-ին Սեպտեմբերի 1786 թուականի կոնդրէսը հրաման հանեց՝ կատարման մէջ բերել նոր սահմանադրութիւնը և ընտրել նախագահ: Ժողովուրդը միաբան կերպով նախագահ ընտրեց Ռաշինգտոնին: Երբէք դեռ ևս ոչ ոք չէ հասել այդպիսի բարձր պաշտօնի աւելի ուղղակի ճանապարհով, ընտրողների աւելի մեծ միաբանութիւնով, աւելի ընդարձակ ազդեցութիւնով ժողովրդի վերայ: Թէ և Ռաշինգտոնի առողջութիւնը բաւական թոյլ էր, բայց նա մոռանումէր իւրեան, յատկապէս անձնատուր եղած լինելով հասարակաց զօրձին: «Այսօր-ասումէ նորա օրագիրը՝ 16-ին Ապրիլի, տանն ժամին, ևս մնաւ բարով ասացի վերնոնին, մանաւոր կեանքին, ընտանական բաղաւորութեան, և աննկարագրելաչափ ար-

խուր զգացումներով ուղղեորուեցի դէպի Նիւ-Նորկի, գճուած լինելով ծառայել հայրենիքին, հնազանդելով նորա կոչման [հրաւերքին], բայց վորք յոյսով՝ պատասխանելու նորա ակնկալութիւններին:»

Նորա գնացքը հանդիսաւոր էր. քաղաքներում, որոնց մէջով նա պետք է անցանէր, բոլոր բնակիչները հաւաքուեցան և ծափահարումն նորա վերայ և ազօթում: Նիւ-Նորկի մէջ նա մտաւ կնիգ-րէսի կոմիտարների <sup>1)</sup> առաջնորդութիւնով, զեղեցիկ դարդարած նաւով որունէր 13 թիւաւարներ, 13 շտապների անունով, ժողովրդի խուռն բազմութեան ներկայութիւնով ավի վերայ: Այն ինչ Ուաշինգտոնը նայումէր ավի երկայնութիւնով, նաւերը արծարծեցին նաւադրօշները, խաղաց երսժշտութիւնը և լրսփումէին հրացանաձգութիւններ և ժողովրդի հանդիսաւոր ձայները: Որքան և հաճելի էր Ուաշինգտոնին տեսանել ժողովրդի սէրը, այնու ամենայնով նորան սոստիկ տանջումէր այն միտքը, որ, այո՛, կգայ ժամանակ որ ամենին հակառակ տեսարաններ կլինին, չնայելով նորա բոլոր ճգնաթափութիւնների վերայ բարութիւն անել:

<sup>1)</sup> կոմիտար—այն անձն, որ պարտական է նկատողութիւն ունենալ ուսուցիչէն պաշարներին և այլ իրերի վերայ և այլն: Վ. երանկատող, ղերակալ ու.:

Ման. փոխ.

Արդարև, նորա գրութիւնը բաւական դժուար էր: Նորան անհանդիստ էր անում այն միտքը, թէ պիտոյ է ինքն պատասխանատու լինի սերունդի առաջև և ամենաչնչին գործի համար: «Ես մտանումեմ մի հողի վերայ, որի վերայ դեռ ոչ ոք չէ ման եկել: Իմ գնացքի մէջ համարիք թէ չկայ ոչեւ, որի վերայ ապագայում մտանանիշ չլինելին, ինչպէս օրինակի վերայ: Այդ միտքը ազդում է ինձ մի և նոյն ժամանակ մեծ անգտահոյսութիւն դէպի իմ յատուկ անձը և մի նոյն ժամանակ տանջող ցանկութիւնը՝ բոլոր միջոցները կարելի եղածին չափ բարւոքելու: Բոլոր կասկածաւոր հարցերում խորհուրդ էր անսանում ոչ միայն իւր ստոյգ, տէրութիւնից նշանակած խորհրդականների, բայց և իւր նշանաւոր բարեկամների, Մադիսոնի, Ջէյ յիւհեա, և այլն: Բացի դորանից, նա ուշք էր դարձուցանում հասարակաց կարծիքների վերայ, և տեղեկանումէր նորանցը իւր բարեկամներից, որոնք ամենևին մասնակից չէին քաղաքականութեան. և թէ կառուարչութիւնից բռնած մի գործ հասարակութիւնը սխալ կերպով էր դատում, ապա աշխատումէր ուղղել սխալ տպաւորութիւնները և հանդիսացնել իւր գործողութիւնները իսկական աշխարհի մէջ:» Այն ժամանակում, երբ բոլոր Ամերիկայի, թերևս և բոլոր աշխարհի աչքերն ուղղած են դէպի ամերիկական կառուարչութիւնը և երբ այսքան մարդեր ղխումն ազմիր-

ստրացիայի <sup>1)</sup> անգամների ամէն մի գործը-գրումէ Ռւաշինդտոնը-ես շատ ուրախ կլինէի կարողութիւն ունենալ հետամուտ լինելու հասարակաց կարծիքին ազմինիստրացիայում մասնակցող մարդերի և նորանց գործողութիւնների վերայ, մանաւանդ իմ վերաբերու-  
թիւնով:» Այդպիսի կերպով, բայց հաւատարմու-  
թիւնը, անձնական յակտութիւնները և ընդունակու-  
թիւնները, բայց այն մեծ ծառայութիւնները որ  
ցոյց տուեց հայրենիքին, Ռւաշինդտոնն այժմ ևս գոր-  
ծադրում էր իւր բոլոր գորութիւնները՝ ինչ կարող  
էր անելու. հասարակաց պարտականութիւններ նա  
դնումէր այնպիսի անձների վերայ, որոնք յարգելի էին  
շտաններում, ստացած էին հասարակութիւնից բարի  
կարծիք և վճռած էին առանց ծածկած մտքի (задняя  
мысль, l'arrière pensée) ծառայել հայրենիքին: Նմա-  
նապիսի անձները ամենայն տեղ հազուադիւրս են և  
շատ անգամ յոժար չեն լինում մտանել հասարա-  
կաց ծառայութեան մէջ, և այդ այնքան աւելի, որ  
այն ժամանակ աստիճանաւորների ռոճիկն Ամերիկա-  
յում շատ փոքր էր [նախարարները մինչև անգամ,  
հրաժարվումէին ռոճիկի աննշան լինելու պատճառով,  
բայց Ռւաշինդտոնի յարգութեան համար, նորանցից  
շատերը համաձայնվումէին:

<sup>1)</sup> Այն բոլոր միջոցների գումարը, որոնցը տէրութիւնն  
ընդունումէ թաղաւորութեան կարգը չխանգարելու համար:  
Ման. փոխ.

Ռւաշինդտոնը թշնամի էր ստրկութեան [իւր կտա-  
կում նա արձակեց ստրուկներին իւրեանց կամքին],  
նա ստրկութեան թշնամի էր, ոչ միայն նորա համար,  
որ նմա ցաւալի էր տեսանել ժողովուրդին հարստա-  
հարութեան մէջ, բայց և նորա համար՝ որ քաջ  
հասկանումէր որ ստրկութեան հետեւանքները տխուր  
և վատթար են ժողովրդական անարարութեան [կա-  
ռաւարութեան] համար: Նախագահ լինելով դարձած,  
Ռւաշինդտոնը վճռեց նպատամտոց լինել այդ ստր-  
կութեան նուազուելուն, բայց այնքան որ չխանգարէր  
ներքին խաղաղութիւնը: Այդ գործը կախուած չէր  
միայն նորանից, այլ օրէնադրական իշխանութիւնից:  
Կուակէրները <sup>1)</sup> նոյնպէս խնդիր տուեցին կոնգրէսսին  
ստրկութիւնը ոչնչացնելու համար, բայց կոնգրէսը

<sup>1)</sup> Կ ու ա կ եր ն եր (դոգորջուններ—այդպէս են ասվում  
նորա համար, որ նորանց կրօնական ներշնչումը (ոգևորու-  
թիւնը) արտայայտվումէ ցնցողական շարժողութիւններով  
և դողողալով) անուանումեն մի տեսակ քրիստոնէ ա-  
կան հասարակութեան հետևողների, որը հիմնեց  
մօտ 1650 թ. կոշկակար Գեորգ Փոկոր: Կուակէրները շու-  
տով տարածուեցան Անգլիայի և Հիւսիսային Ամերիկայի  
մէջ. նորանց ուսումը իւր բովանդակութիւնով շատ մօտ է  
պրոտեստանտականութեան և դիմումէ, աւելի շատ, դէպի  
Աստուածաշնչի խօսքերը և ս. Հոգու ներքին յայտնութիւնը:  
Քահանայ չունեն, իւրաքանչիւրը նորանցից կարող է խօսել  
ժողովում, երբ միայն յօժարութիւն ունենալու: Նորանք  
շատ օգնեցին, հիմայ ևս օգնումեն դ եր ի ն եր ծ ա խ ե-

յետ ձգեց այդ դործը:

Ստրկութեան հարցը հենց սկզբից բաժանեց ամերիքական դաշնակցութեանը երկու կուսակցութիւնների. հիւսիսային և հարաւային: Հիւսիսայինն աւելի զօրեղ էր, ցանկանում էր ստրկութեան ոչնչացուցումն, և կարելի էր նախատեսանել, որ վաղ թէ ուշ ստրուկները կլինեն ազատուած: Հարաւայինը պաշտպանում էր ստրկութիւնը, և նորա հետ միասին կամենում էր թուլացնել դաշնակցութեան իշխանութիւնը, անզօր կացուցանել իշխանութեան կենտրոնականութիւնը: Ուաշինգտոնի նախագահութեան ժամանակ, հարաւային կուսակցութիւնը մի ընդդիմակութիւն էր:

Կուսակցութիւնների կոխը կենտրոնաւորվում էր երկու զլխաւոր հարցերի վերայ. պարտքի հարցի և կոնգրէսի ու կառաւարութեան մայրաքաղաքի ընտրութեան հարցի վերայ:

Պիտոյ է ասել, որ պատերազմի ժամանակ զանազան շքաններ զանազան ընծայաբերութիւններ էին անում հասարակաց դործի համար. նորանց պարտքերը զանազան էին. մինչև անգամ նահանգների նոյն խի աշխատութիւնները՝ հատուցանելու նորանցը՝ խաղաղութեան ժամանակից սկսած զանազան էին: Այժմ

Լ ու ո չ ն չ ա ղ ու ց մ ա ն : Կուսակերները ինքները իւրեանց անուանում են Աստուածային ժողովուրդ, Աշխարհի Խոստովանողներ, և այլն:

Ծան. փոք.

Ճագեցաւ միտք փոխադրելու բոլոր այդ պարտքերը կենտրոնական կառաւարութեան վերայ, որն արդէն պարտ էր հողայ վճարման մասին: Հարաւային շտաաներից շատերը չունէին բշինչ պարտքեր. այդոր համար այդ պարտքերի կենտրոնականութիւնը թվում էր նորանց ծանր և յարմար միայն հիւսիսի համար: Ուաշինգտոնը պաշտպանում էր պարտքերի կենտրոնականութիւնը, որովհետև նա զօրացնում էր դաշնակցական իշխանութիւնը և շտաաների շաղկապը: «Գործը, որի վերայ ծախքը եղած է, պատասխանում էր Ուաշինգտոնը իւր հակառակորդներին՝ հասարակական դործ է: Կոնգրէսի նոյն խի սկզբից շտաանները յայտնեցին նորան հասարակական և պարտաւորուեցին պահպանել միմեանցը: Կնչ անկեր թէ մի քանի շտաաններ, առանձին զրութեան պատճառով, աւելի քան միւսները նեղն էին ընկել և շատ պարտքերի ենթարկուել:» Պարտքերի հարցը սաստիկ ալեկոծեց հարաւայիններին, և նորանցը վարձատրելու համար, վճռած էր փոխադրել կոնգրէսի առեանը տասն տարի ժամանակով Ֆիլադելֆիայի մէջ, բայց ապա դաշնակցութեան գահը մշտապէս դարձաւ Ուաշինգտոն քաղաքը, որ հիմնած էր նահանգում և չէր պատկանում ոչ մի շտաաի:

Արդէն Ուաշինգտոնի առաջին նախագահութեան ընթացքում նոր սահմանադրութեան յառաջադիմութիւնը գերազանցեց յոյսերը. ամենայն տեղ մտաւ կարգ, հասարակութիւնը չէր կասկածում իւր անս

փոանգութեան մասին, ամենայն տեղ թագաւորումէր վաճառականական գործունէութիւն, հողագործութիւնը շուտով տարածուեցաւ, աշխատութիւնը մի նորաձեւութիւն [սօղայ] դարձաւ: Չորս տարին անցանելոց յետ, Ուաշինգտոնը երկրորդ անգամ ընտրուեցանախագահ: Հարաւային դաշնակցութիւնը, լինելով Ուաշինգտոնի հակառակ, ծածկաբար տարածուեց համբաւներ այն փոանգի մասին, որ Ուաշինգտոնը չդառնար թագաւոր: Այդ համբաւների հետեանքը եղաւ այն որ Պենսիլուանեայում ծագեց ապստամբութիւն, որ բորբոքուեց հարկ դնելուց ոգելեց ըմպելիների վերայ: Այդ ապստամբութեան լուելուն պէս, տհաճութիւնը և զարհուրանքը պաշարեցին պատուաւոր մարդերին: Ուաշինգտոնը ներգործուեց խելացի և վճռողական կերպով: Նա հրատարակեց յայտարարութիւն, որանով հրաւիրուեցր զրդուածներին ցած դնել զէնքը երեք շաբաթի ընթացքում, այլապէս նա ստիպուած կլինի բռնութիւնով ներգործել: Հէնց միայն ժամանակն եկաւ, Ալբրդինայի, Մերիլանդեայի, ՆիւՋրզէյյու և Պենսիլվանեայի զօրքերի ժողովը հաւաքուեցաւ. ժողովուրդը մի հասարակաց տհաճութիւն ցոյց տուեց ապստամբներին: Վեներալները կանգնեցին օձիցերների տեղերում, օձիցերները, չգտանելով տեղ, մնումէին զօրակարգերի մէջ և ծառայումէին ինչպէս հասարակ զինուորներ. ամենանշանաւոր մարդերը մեծ թուով միաւորուեցին զօրքերին,

երկար ուղեգնացութիւններ էին անում, քնումէին յարդերի վերայ, զինուորական վրանների տակ, ցրտաշունչ զիշերներով: Երկուտասարդ կուակերների շատ բազմութիւն ամենաերեւելի ցեղեց, մտան զօրակարգերի մէջ և գնումէին զօրքերի հետ: Տեսանելով այդ բոլորը, ապստամբները հաշտուեցան առանց թրնդանօթածգութիւնների: Նորանցից բանդարիուեցան 150 մարդեր, դատարանը դէսլի մահ դատապարտեց միայն երկուսին, բայց, նորանց ևս Ուաշինգտոնը ներեց: Նա չէր կամենում դատատանով հալածել այն մարդերին, որոնք դարանամուտ էին լինում նմա, դա նշանակուեցր զօրացնել նորանցը:

Արտաքին քաղաքականութեան մէջ Ամերիկան Ուաշինգտոնի ժամանակ նոյնպէս մեծ յառաջադիմութիւններ գործեց: Նորա նախագահութեան սկզբից իսկ, Միացած Շտատները բարձրացան Լեռուական հասարակութեան աչքում, բայց Լեռուական կառուարութիւնները դարձեալ դեռ մտաբերումէին կոնդրէսի անզօրութիւնը: Բացի Փարիզը և Բերլինը, որտեղ բարեկամական դաշներ էին հաստատել, միւս ղիպլումատիքական<sup>1)</sup> ջանքերը մնումէին անօգուտ:

<sup>1)</sup> Ած. դ ի պ լ ո մ ա տ ի ա յ բառի, որ նշ. Տերութիւնների փոխադարձ հաղորդակցութիւնը, յարաբերութիւնը. կամ այդ հաղորդակցութիւնների նոյն իսկ եղանակը կամ միջոցը:

Ուաշինգտոնը երբ նախագահ դարձաւ, Անգլիան, 1783 թուի դաշնի գէմ՝ շարունակուեմք չտալ պատե-  
րազմական պոստերը՝) մեծ լճերի վերայ. այդ կերպով  
նա խտիանել էր հիւսիսային ամերիկացիների հա-  
զորդակցութեան ճանապարհը արևմտեան երկրների  
հետ, զրգուեմ և հովանաւորուեմք հնդկացիների  
ապստամբութիւններին նոյն իսկ Միացած Շտատնե-  
րում և բացի դորանից զանազան ճանապարհներով  
նա ծռվումէր կարգից, և այդ կարգախանդարումը պատ-  
րաստ էր ամէն մի բոլորում փոխարկուիլ գէպի  
յայտնի պատերազմը: Նոյնն էր անում հարաւային  
ամերիկացիների հետ միւս հարեանը, Իսպանիան:  
Անգլիական կառաւարութիւնը չարժանացրեց ամերի-  
կացիներին պատուին՝ ուղարկելու նորանց մօտ Անգլի-  
այի ներկայացուցիչ. այդ կերպով կոնգրէսը ևս պարտ  
էր յետ կոչել իւր գեապանին Վոնդոնից: Այնպէս որ  
երբ մտաւ Ուաշինգտոնը պաշտօնի մէջ, ոչինչ զիպլո-  
մատիքական յարաբերութիւններ [փոխադարձ յարա-  
բերութիւններ] չկային այդ երկու տէրութիւնների  
մէջ:

Ուաշինգտոնի յարաբերութիւնների ձևը չունէր  
զըպարտանք, կասկածներ, կռիւներ, զեջողութիւն-

\*) Ա յետեղերը, ուր կարգած՝ զետեղած են զինուոր  
— պահապաններ, վասն պահպանելու թշնամիներից մեր-  
ձակայ կամ նոյն իսկ տեղերը, և այլն:  
Ման. փոխ.

ներ էր անում մանր բաներում, բայց վերջին աստի-  
ճանի գործունեայ էր և կամակոր գլխաւոր ամերիկա-  
կան շահերը պաշտպանելում: Նոր ամերիքական կա-  
ռաւարութեան հաստատամտութիւնն ու զորութիւնը  
անհանգիստ էր անում Անգլիային և Իսպանային,  
պաշտօնական կերպով սկսան նորանք լաւ յարաբե-  
րութիւնների մէջ մտանել, բայց ծածկապէս աշխա-  
տումէին զրգուել ամերիկացիների դէմ թշնամիներին:  
Վոնդոնի պալատը ուղարկեց Ֆիլադէլֆիայ իւր դես-  
պանին, որ լիակատար իշխանութիւն էր ստացել վա-  
ճառականական դաշն կապելու, իսկ Մադրիտեան  
դուռը խոստանումէր կանուխ վճիռ Միսսիսիպի զետի  
գործի մասին. բայց մի և նոյն ժամանակ անգլիական  
և իսպանական գործակալները, որոնք բնակուել էին  
հնդկացիների մէջ, երկպատուումէին իւրեանց զաղտնի  
դարանները, հեռացումէին հնդկական ցեղերին ա-  
մենատեսակ դաշնից և վաճառականութիւնից ամե-  
րիկացիների հետ. տալիս էին զինուորական զէնքեր և  
չորեր, և զրգուումէին նորանց՝ սպանել տնկարկած  
— տեղերի տէրերին, որոնք հարեան էին նորանց: Չայրե-  
նիները ՚ի հարկէ սէրով լսումէին այդպիսի խրատներին,  
այնքան աւելի որ նորանք կրումէին այդ հարեան  
տնկարկուներից մշտական անարդարութիւններ: Ամե-  
րիկացիները արտաքսեցին հնդկացիներին մինչև ան-  
գամ այն երկրներից, որոնք ապահովուած էին նորանց  
համար դաշներով. պլանտատորները [տնկարկուները]

նայումէին նորանց վերայ, ինչպէս մի վնասակար ցեղէ վերայ, որին քրիստոնեաներն իրաւունք ունին ջնջելու: Ուաշինգտոնը շատ ցաւումէր հնդկացիներէ քամբաղ դուրեան վերայ, անկեղծաբար յարգումէր նորանց իրաւունքները և ազատութիւնը, բայց չկարողացաւ դադարեցնել գործի սարսափելի ընթացքը: Պատե-  
րազմը հնդկացիների հետ սկսուեց և շարունակուեց համարիւր հինգ տարի, մինչև որ խաղաղեցուցին նո-  
րանցը:

Ուաշինգտոնի քաղաքականութեան նպատակն էր «ստիպել ուրիշներին միամիտ լինելու Ամերիկայի զօ-  
րեղութեան մասին, առանց պարծենալու այդ զօրե-  
ղութիւնով, և յարգել ուրիշներին, առանց վախե-  
նալու նորանցից:» Այդոր համար նա չէր խառնվում  
ևրոպական պատերազմներում, թէ և խառնուելու  
շատ առիթներ եղան: Այդպէս, նա չխառնուեց Ֆրանս-  
սիայի պատերազմներում, որտեղ նոյնպէս կազմվումէր  
հասարակապետութիւն: Նա յայտնեց, որ Ամե-  
րիկան չէ համակրում այն նեղսիրտ և խաբէական  
քաղաքականութեան, որ ցանկանումէ որ և է ազգի  
ոչնչանալը, որ կարծումէ, թէ որքան նուաստանան  
ուրիշ տէրութիւնները, այնքան կմեծանայ իւր սե-  
փական նշանակութիւնը, և թէ, ընդ հակառակն,  
ամերիկացիները ուրախութիւնով կնայեն այն բոլոր  
ազգերի վերայ, երբ նորանք օգուտ կքաղեն բոլոր  
շահերից, որոնցը միայն կկարողանան հանել իւրեանց

դրութիւնից և իւրեանց բնութիւնից, եթէ այդ դի-  
պլոմատում ոտնակոխ չեն անիլ ուրիշ ազգերի իրա-  
ւունքները և ազատութիւնը:

Եւրոպական պատերազմները կարողութիւն տուին  
Ուաշինգտոնին կապել բաւական շահաւէտ բա-  
րեկամական, վաճառականական, և նաւագնա-  
ցական դաշն Անգլիայի հետ: Այդ դաշնի համե-  
մատ, Անգլիան պարտաւորվումէր տալ լիակատար  
բաւականութիւն ամերիկական քաղաքացիներին, որոնց  
նաւերը բռնուած էին անգլիական պատերազմական  
նաւերից, յտակիւ, մծտաւորապէս 1-ին Յուլիսի  
1796 թուականի, պատերազմական ամբոցները մեծ  
լճերի վերայ, և թոյլ տալ ամերիկական նաւերին  
[տակսյն 80 տոններից <sup>1)</sup>] ոչ աւելի] մասնակցել Միա-  
ցած Շտատների վաճառականութեան Անտիլեան կրղ-  
զիների հետ: Բացի դորանից, դաշնը ապահովումէր  
վաճառականութեան և ծովազնացութեան լիակա-  
տար ազատութիւնը Ամերիկայի և Մեծ-Բրիտանիայի  
միջ:

Իսպանիան նոյնպէս կապեց Միացած Շտատների  
հետ դաշն, որ ապահովացնումէր ազատ նաւարկու-  
թիւնը Միսսիսիպիու վերայ:

<sup>1)</sup> Մի տոննը—40 խորանարդեան ոտնաչափի տարա-  
ծութիւն ունի: Նշան". նոյնպէս կչիւ 62 փթից բաղկացած:  
Կան փոխ.

Թողնելով իւր նախագահութիւնը, Ուաշինգտոնը հրաժարուելիս գրեց իւր քաղաքակիցներին Թուղթ, քաղաքական կտակի պէս մի բան: «Նղէք արդար դէպ'ի ամէն ազդերը. մնացէք խաղաղութեան և համաձայնութեան մէջ բոլորի հետ: Հեռացէք այն ատելու թիւններէց, որոնք, ամենից խոհեմ քաղաքական զգուշութիւնների հակառակ, շատ անդամ պատուութեան գնով, հարկադրումէն կառաւարութիւններին պատերազմելու . . . »

Այժմ, ութամեան բացակայութիւնից յետ, Ուաշինգտոնը նորից դարձաւ դէպ'ի Մոնտօւլերնոն: Այստեղ նա ապրումէր գիւղական կեանքով, վեր էր կենում արեղակի ծագման հետ, և, երբ օրական վարձուորներին չէր գտանում նշանակած ժամանակում իւրեանց տեղում, նա մարդ էր ուղարկում նորանց յետեից. բոլորը կարգի բերելով, նա գնումէր ընդհանրապէս տեսանելու այն վնասները, որոնցը պատճառած էր նորա երկարատե բացակայութիւնը: Բայց, հեռացած ևս լինելով դէպ'ի Մոնտօւլերնոն, չնայելով իւր բոլոր ցանկութեան վերայ, Ուաշինգտոնը չկարողացաւ անտարբեր մնալ դէպ'ի եղելութիւնները: Իւրաքանչիւր օր դալիս էր նորա մօտ մի որ և է անձն. Ուաշինգտոնը շարունակեց լինել հասարակական մարդ: Մինչև անգամ Ամերիքական Շտատների Թշնամի յարաբերութիւնների մէջ Ֆրանսիայի հետ, երբ պատերազմի էին սպասում, Ուաշինգտոնը նորից միաշունչ

և միաբան կերպով նշանակուած էր գեներալ լէյտենանտ<sup>1)</sup> և գլխաւոր հրամանատար բոլոր ժողոված զօրքերի վերայ և որոնք պէտք է հաւաքուէին Միացած Շտատներում՝ նորանց վերայ . . .

Ուաշինգտոնն ուշադրութիւնով քննումէր գործի ընթացքը: Բայց միանգամ [12-ին Վեկտեմբերի 1799 թուին] նա ուղևորուեց, սովորութեան համեմատ, իւր դաստակերտը շրջագայելու: Հնգաժամեայ զբոսանքից յետոյ անձրևի և ձիւնի տակ, նա դարձաւ բոլորովին թրջուած և ցրտից ընդարմացած. նորա վզակապը շաղաղուած էր ջրով. ձիւնի ծիւերը կախուած էին նորա մագերից: Տիկին Ուաշինգտոնը սպասումէր նմա ճաշին. նա չփոխեց իւր շորը և շուտով սկսեց գանգատուիլ սաստիկ ցաւի վերայ խռչափողի մէջ: Բայց սակայն, միւս օրը նա շատ ուրախ և զուարթ էր. նշանեց ծառերը, որոնք խաւարեցնումէին հայեցուածքը դէպ'ի գետը, հրամայելով հատանել նորանցը: Երեկոյին հրամայեց բերել իւր մօտ օրագիրները, ազահաբար վերադիտում էր նորանցը և, չնայելով իւր կերկերուած ձայնին, բարձր ձայնով կարդումէր այն տեղերը, որոնք իւրեան ապշեցուցանումէին: Խորհուրդ էին տալիս նմա հոգս քաշել անձի վերայ: «Ոչ, պատասխանեց նա, դուք զիտէք որ ես երբէք բանի տեղ չեմ ձգում»

<sup>1)</sup> Չինուորական աստիճան 3-դ կարգի:

հազը. նա կանցանի՞»

Գիշերը Ուաշինգտոնը զգաց իւրեան վատ դրու-  
թեան մէջ. նորա շնչառութիւնը դժուարացաւ: Նա  
զարթացրեց իւր կնոջ, որ կամենումէր վերկենալ և  
կոչել ծառային, բայց Ուաշինգտոնը չթողատրեց նմա  
այդ. նա վախեցաւ որ չբութ նա: Միւս օրը Ուաշինգ-  
տոնը իւրեան աւելի վատ զգաց և կամեցաւ արիւն  
թողուլ: Երեք հրաւիրուած բժիշկ-վարդապետներ  
սպառեցին բոլոր իւրեանց գիտութիւնները. արիւնա-  
հանութիւնները, ՚ի հարկէ, չօգնեցին. շնչառութիւնը  
քանի զնում, ծանրանում էր և կարճանում. նորա  
ձայնը խանգարուեց: Ուաշինգտոնը այլ ևս չկարողա-  
ցաւ կանոնաւոր կերպով շունչ քաշել, նա հրամա-  
յեց ուղղել կտակը և հաշիւները: Բժիշկ-վարդա-  
պետները խմբած էին շուրջը, առաջարկելով նմա  
ընդունել զանազան դեղեր: «Շնորհակալ եմ՝ ձեր նե-  
ղութիւնների համար-ասաց Ուաշինգտոնը-բայց խընդ-  
րում եմ՝ ձեզանից ընդհատեցէք ձեր հոգատարութիւն-  
ներն իմ մասին: Թոյ՛ տուեցէք ինձ հանգիստ մե-  
ռանիլ, ես երկար չեմ ապրելու:» Այդպէս մնաց նա  
մինչև երեկոյ, չէր տրտնջում և շատանգամ հարցա-  
նումէր, ո՞ր ժամն է: Տասն ժամին մեծ դժուարու-  
թիւնով նա քրթմնջաց. «Հասաւ ժամը . . . թա-  
ղեցէք մարմինս երրորդ օրում . . . Հասկանումէք  
արդեօք ինձ»-Ա. յո.-«Բարի՛»

Փոքր ինչ անցանելով, նորա շնչառութիւնն ան-

արդել դարձաւ. նա շօշափեց բազկազարկը. կերպա-  
րանքն այլանդակուեց: Ձեռքի սեղմած դաստակը բա-  
ցուեցաւ և ընկաւ . . . Նա մեռաւ:

Բոլոր Ամերիկան վշտակցութեան և ցաւակցութեան  
հարկը վճարեց նորա մահին: Կոնգրէսը հրամայեց նո-  
րա պատուի համար կառուցանել մարմարեայ յիշա-  
տակարան. անգլիական նաւերի հրամանատարը հա-  
նեց սուզի նաւադրօշները . . . Փրանսիայում մինչև  
անգամ, չնայելով իւր թշնամի յարաբերութիւնների  
վերայ Ամերիկայի հետ, Ուաշինգտոնի պատուի համար  
սուզի հանդերձ էին կրում, ծառեր էին կարդացվում,  
լուսամէկն կտակներ. իսկ նորա կիսարձանը դրուեցաւ  
Քիւլլրիում մէջ:

10.

Ա Բ Բ Ա Հ Ա Մ Լ Ի Ն Կ Ո Լ Ն .

[ 1809 — 1865 ]

Վինկոնի նախնիներն էին ամերիքական կուակերներ  
և հասարակ հողագործեր: Նորա հայրն այնպէս աղ-  
քատ էր, որ պարտ էր մշակութիւն անել զանազան  
տեղեր: Աբրահամ Վինկոնը ծնուեց 1809 թուակա-  
նում: Եօթն տարեկան նա զնումէր իւր մեծ քրոջ  
հետ դէպի սկզբնական վարժարանը, բայց այդ ընդ-  
ամէնը շարունակուեց երկու ամիս: Ռոյվհեաւ նորա

հայրը կուակէր էր և թշնամի էր ստրկութեան, ապա նորա զրայցիները, վերդինական ստրկատէրեր-կալուածատէրերը վատ աչքով էին նայում նորա վերայ, այդ պատճառով ևս ապրումէր նա վերջին չքաւորութեան մէջ և վճռեց զաղթել դէպ'ի նոր, անմարգարնակ և հեռաւոր տեղեր, դէպ'ի անտառախիտ վայրերը, ոչ միայն հեռի ստրկութիւնից, բայց և համարի՛ր ամենատեսակ բնակութիւնից: Քննելով տեղը, հայրը զարձաւ և երեք ձիերով ուղղւորուեց բոլոր բնտանիքով միասին դէպ'ի նոր հայրենիքը: Բայց այդ փոխադրութիւնը ծանր նստեց նմա. չլինելով ճանապարհհներ, նորանք ստիպուած էին ճանապարհ կտրել անթափանցելի անտառների վերայով: Գիշերները մնումէին նորանք մերկ գետնի վերայ: Վերջապէս հասան իւրեանց տեղը և յառաջ, քան թէ կշինէին տուն, նորանք պիտոյ է գեռ յստակէին երկիրը: Հայրը վերցրեց մի կացին, որդուն ևս տուեց միւսը: Այդ կերպով փոքրիկ Աբրահամը այլ ևս ժամանակ չունէր պարապելու ուսումնարանական զբաղումներով. սակայն, դորա փոխարէն, ութ տարեկան ժամանակ, նա չափազանց բարձրահասակ և ամրակազմ էր միտ դրնելով իւր տարիներին, և օգնական էր լինում հօրը փայտ կտրելում, մարգերի և դաշտերի համար տեղեր մաքրելում: Եւ միւս հետեւած իննը տարիները նա պարապումէր միայն այդ գործով: Փոքր հասակից նա ցուցանումէր մի տարօրինակ ուսումնասիրութիւն շըր-

ջակայ տեղերում՝ զրքեր թէ և խիստ շատ քիչ էին գտանվում, բայց նա ճարումէր ինչ և է զրքեր, կարդում, կրկին կարդում՝ դարձեալ կարդումէր նորանցը, երբեմն անտառում և երբեմն ճանապարհի վերայ նստելով: Մի անգամ հարեան պատորից <sup>1)</sup> նա ձեռք բերեց Ռաշինգտոնի կէանքը: Պատարը խնդրեց նորան պահպանել զիրքը որքան կարելի է խնայելով: Դեռ չքնած, կարդալով մի քանի էջեր, Աբրահամը զգուշութիւնով ծայեց զիրքը և զրեց իւր տեղում: Առաւօտը նա զարթնումէ. նա զարհուրելով տեսաւ, որ բոլոր զիրքը թրջած էր. զիշերը որոտում էր պատահել, անձրեւը բաւականաչափ կիրպով թափանցել էր առաստաղը և թրջել էր զիրքը: Փող չունէր զրքի արժէքը վճարելու, և Վինկոնը նորա փոխարէն մշակութիւն արեց պատտորին երեք օր շարունակ: Երբեմն նա տեսութիւն էր դնում մի ուսումնարանի, որ մօտ այն ժամանակը հիմնած էր մի ժամանակաւոր ուսուցչից:

<sup>1)</sup> Պահած է իւր ծաղումը լ'աթինական pascere (արածել, հովուել) բառի մէջ. ուստի նշանակումէ աբրահամը, հովուիւ. Հոգեւորական մտքով առած, նա կամենումէ ասել պրոտէստանտեան կամ լիթերական քահանայ, որի ծովը նոյնպէս երոպական բառով ասլումէ պատարութիւն, հովութիւն. այն ինչ հովմէական կաթողիք քահանան ասլումէր պատար (հայր), և նորա ծովը—պատարու (ֆր. la paroisse):--

Ման. փոփ.

Մանկական խաղերին նա չէր մանակցում. ընկերները դառնումէին դէպ'ի նա իւրեանց վէճերը վճռելու համար միայն և տալիս էին նմա անունս հաշտարար: Ամենից շատ հետաքրքիր էր Վինկոնին թուաբանութիւնը, բայց, ցաւելով պիտիասել՝ որ ուսուցիչը միայն սկիզբներն էր հասկանում, և չէր կարողանում նորան ևս յառաջ տանել: Առհասարակ, եթէ հաւաքենք Վինկոնի ուսումնարանական պարապումների բոլոր ժամանակները, կտեսանենք որ նա չպարապեց գէթ մի տարի: Իւր բոլոր կրթութիւնը և լուսաւորութիւնը նա ստացաւ վերջում, և ոչ միայն առանց որևէ ուսուցչի, մինչև անգամ աստից աստջնորդի, մի մտն խոր աշխատանքաւեան շնորհով:

Տասն և ինն տարեկան Աբրահամ Վինկոնը վարձուեց ինչպէս մշակ նաւակի վերայ. այն ժամանակի նաւակները աւելի շուտ նմանվումէին լաստերի, քան թէ նաւակների: Նորանք ուղղւորվումէին ապրանքներով ցած՝ Մասիսիպի գետի վերայով, դէպ'ի Նոր-Օրլէան: Այդպիսի նաւակներով ծովադնացիները բաւական դժուարին էր. մանաւանդ բարձրանալը դէպ'ի վեր գետի վերայով: Բացի դորանից, նորանց վերայ յարձակվումէին փախտական նեղրները և Վինկոնը ակնատես էր նորանց անարգ և ցաւալի դրութեան, այն և նորանց տերերի բոլոր անարդարութեան:

Բայց այն միջոցում նորա հայրը դարձեալ են-

թարկուեց վեասների և բոլոր բնասանիքը փոխադրուեց դէպ'ի Նյլինոյիս շատոր, որ նոյնպէս նոր էր, և նոր մարդարնակ կացուցած: Այստեղ նա ստիպուած էր նորից սարգ ու կարգի բերել [կարգաւորել] իւր տունն ու տեղը: Աւան [Ֆէրմայ] շինելիս երիտասարդ Վինկոն ստիպուած էր կտրել և տաշել մինչև երեք հազար [3000] գերաններ և ցիցեր. այդ միջոցում նա բանումէր այնպէս արագընթաց և յաջողակ, որ նա համբաւաւորուեց շրջակայ տեղերում ինչպէս մի ընտիր հիւան [դուրգայ]: Չէնց առաջիկայ ձմեռը Նյլինոյիսի մէջ այնքան շատ ձիւնաթափութիւն եղաւ, որ ամբողջ երեք ամիս բոլորովն անկարելի էր գնալ մի Ֆէրմայից դէպ'ի միւսը. այդոր համար, շատերը հազիւ թէ կարողանում էին ազատուել մահի քաղցից. երիտասարդ և ուժեղ Աբրահամը գնումէր մի քանի ընկերներով կալատախտակի ձևով շինած փոքրիկ տախտակների վերայով մի Ֆէրմայից դէպ'ի միւսը. մատակարարումէր իւր զրացիներին այն ամէն բանով, որ ինչ նորանց հարկաւոր էր, և այդ կերպով քիչ բարութիւններ չգործեց: Որովհետև տան մէջ իւր մշակութիւնով աննշան գումար էր վաստակում, ապա նա պարտ է յանձն առնէր՝ մօտաւոր քաղաքում կտրել մի քանի հազար մեծ ցիցեր: Գարունը, հետեւորդ տարում [1831] նա ուղևորուեց դէպ'ի Օրլէան: Մի վաճառականի յանձնարարութիւնով, նա շինեց նաւակ, որին բեռնաւորեցին հացերով և ուրիշ ուտելիքներով: Երիտասարդ Վինկոնը կառաւարումէր նաւը, տանելով Օր-

լէանի մէջ, ծախեց ինչպէս նորան, այնպէս և նորա վերայի ապրանքները: Այն ժամանակ նա վարձուեց ինչպէս մշակ մի շոգենաւի վերայ, որ գնումէր դէպի վեր՝ դետի վերայով, և այդպիսի կերպով նա դարձաւ դէպի տուն: Հետևորդ տարում Վինկոնը կրկին յանձն առաւ այդ գործառնութիւնը, և ժողովեց այդ կերպով մի քանի հարիւր ուրբիներ: Վինկոնի գառահութիւնն ու ճիշդ վարեցողութիւնը ամէն բանի հետ շատ հաւանելի եղաւ վաճառականին, որ երկու անգամ նորան դէպի՛ նոր Յրէան ուղարկեց, և նա հրաւիրեց նորան ինչպէս գործակալ կրպակի և ջազացի մէջ Նիւ-Սալեմում: Նոր տեղում նա, իւր ուրախ և վարուող բնաւորութիւնով, ամենակարճ ժամանակում ձեռք բերեց շատ ծանօթներ և բարեկամներ: Շուտով ընծայեցին նմա մականունս. «հաւատարիմ Աբրահամ»: Մի տարի, նորանից յետ, անցանելով, հարեան հնդկացիները սկսեցին յարձակուել ել լինոյիս շտապի վերայ. այդ միջոցում Վլինոյիսում կազմուեց հեռամուտների մի բոտ,<sup>1)</sup> որի մէջ մտաւ և երիտասարդ Վինկոնը: Հետապնդողների զոււարթ ընտրեց նորան ինքեան կապիտան [աւազ-օֆիցերական աստիճանաւոր], որովհետև նա ընդունուած էր նորանց մէջ ինչպէս մի հաւատարիմ և վճռողական

<sup>1)</sup> Բատալիոնի մի մասը. (մօտ 250 ղինուորներ):

Ծան. փոխ.

անձ: Այդ ընտրութիւնը Վինկոնին սաստիկ դարմացման մէջ ձրեց. վերջում նա շատ անգամ կրկնում էր, որ ոչ մի յաջողութիւն իւր կեանքում այնքան բաւականութիւն չէ պատճառել ինքեան, ինչպէս այդ ընտրութիւնը: Նորա ուղեղնացութիւնը հնդկացիների դէմ շարունակուեց երեք ամիս. իւր ընկերների հետ նա տարաւ զանազան զրկանքներ ու նեղութիւններ, բայց ոչ մի կռուի չէր մասնակցում:

Այն ինչ վաճառականը, որի մօտ Վինկոնը ծառայումէր ինչպէս գործակալ, հնդկական պատերազմական ուղեգնացութեան մէջ սնանկացաւ, [կոտրացաւ], ինկոնը ևս զրկուեց տեղեց և ապրելու միջոցներից: Այնու ամենայնով նա չէր կամենում դառնալ դէպի հայրենի Ֆլորիան և հրաժարուել իւր բարեկամներից ու ծանօթներից, որոնք յայտնեցին վերջին ժամանակում չսփազանց համակրութիւն: Երկար ժամանակ չգիտեր ինչով պարտպել: Վերջապէս Նիւ-Սալեմի վաճառականներից մին վճռեց ծախել նմա և նորա միւս բարեկամին պարտքով իւր հին ապրանքի պաշարը. այդ կերպով, երկու կոմպանիոնները [վաճառականական ընկերները] բացեցին կրպակ և սկսեցին ընկերաբար նորա մէջ վաճառականութիւն անել: Բայց նորանց վաճառականութիւնը յաջող ելք չունեցաւ: Գործին յաջող գնացք տայու համար, Վինկոնի ընկերը կամեցաւ կրպակի մօտ բանալ գինու և օղու վաճառանոց. Վին-

կողմը չհամաձայնուեց, որովհետև նա միշտ պահպանու  
նումէր իւրեան ժուժկալ և ամենեւին չէր բնկում  
ողբից ըմպելիներ և չէր ծխում թամբաքու: Այն-  
ժամանակ նորա ընկերը միայնակ սկսեց կառուարել  
վաճառականութիւնը իւրեանց կրպակում և շուտով  
բոլորովին փնասուեց: Այդ միջոցում Վինկոլը ոչ մի-  
այն կողմեց իւր բոլոր արծաթը, բայց և պարտա-  
ւորուեց վճարել ինչպէս պարտք հազար մանկթից  
աւելի: Այն ժամանակ Վինկոլը տեսաւ որ կացնով  
չէ կարող վճարել այդպիսի պարտքը և հոգս էր  
քաշում զտանել իւր համար միլիաւելի յարմար պա-  
րագումն: Ձախորդութիւնները չկորուսին նորա զու-  
արթամութիւնը. ընդհակառակն, նորանք զրգռեցին  
նորա մտաւոր ընդունակութիւնները: Առաջին անգամ  
նա բռնեց նամակատան կարգավարի անշան սեղը Նիւ-  
Սայէմում, և մի և նոյն ժամանակ վճուեց իրագործել  
իւր վաղեմի ցանկութիւնը, որ էր՝ պարապել իրաւա-  
զիտական զիտութիւնների ուսումնասիրութիւնով:  
Այդոր մասին նա մտքում դրած էր զեռ. յառաջ,  
հնրեական պատերազական ուղեգնացութիւնից դառ-  
նալուց յետոյ. բայց զգումէր որ խիստ չնչին էին իւր  
ձեռք բերած տեղեկութիւնները: Այդոր համար զեռ.  
իւր կրպակում սկսեց ուսանիլ. 24-երորդ տարում  
նա սկսեց անգլիական քերականութիւնը և սովորեց  
կանոնաւոր, մանաւանդ թէ զեղեցիկ կերպով խօսել  
և գրել անգլիական լեզուով: Այն ժամանակ ստանա-

լով արդէն նամակատան կարգավարի տեղը, նա վճուեց  
ուսումնասիրել իրաւաբանական զիտութիւնները;  
պաշտպան դառնալու մտքով: Որովհետև նա խիստ  
աղքատ էր և ինքն չէր կարողանում գնել խիստ  
հարկաւոր գրքերը, ապա և ստանումէր քոթանցը իւր  
մի ծանօթ մարդից: Երեկոյին նա գնումէր նորա մօտ,  
առնումէր մի որ-և-է գիրք, կարդումէր նորան գի-  
շերը, իսկ վաղ առաւօտ յետ էր դարձուցանում  
աւերին, որովհետև ցերեկը կարող էր նմա պիտանի լի-  
նել նա: Այդպէս, ցերեկը Վինկոլը աշխատումէր նա-  
մակատան հաշուանոցում, նամակներ ընդունելով և  
ուղարկելով, իսկ գիշերը ուսումնասիրումէր իրաւա-  
բանական զիտութիւններ: Բարեբաղդաբար, նա դորա  
համար ուներ կոճիկ պարտաւիճակ և ճարձիկ ուժեղութիւն,  
նախկին գործունեայ կեանքը պարզեւել էր նմա մի  
ամրակազմ մարմին: Իւր ընկերների մէջ նա համար-  
վումէր մի քաջ ըմբիշ [փահլաւան], փախչող և  
թռչող: Նմանապիսի խնդիրներում Վինկոլին միշտ  
ընտրումէին նախագահ և նա միշտ կատարումէր այդ  
պաշտօնը այնպիսի արժանաւորութիւնով և անկրք-  
քութիւնով, որ արժանանումէր հասարակաց դո-  
վասանութեան:

Ապա տեղական երկրաչափի առաջարկեց Վինկոլ-  
նին պարապել կոպարադութիւնով [սահմաններ դը-  
նելու պաշտօնով] և խօստացաւ տալ նմա իւր գործի  
մի մասը: Վինկոլը համոզուեց որ երկրաչափի պաշ-

տօնը աւելի միջոցներ կոտայ իւրեան ապրելու, այդոր համար և համաձայնուեց, ճարեց իւր համար կողմ նացոյց, սահմանաչափական շղթայ, մի լաւ ձեռնարկութիւն, կարճ միջոցում ուսումնասիրեց նորան և սկսեց սահմաններ դնել Նիւ-Յայքի շրջակայ տեղերում գտանուող հողերին: Այդ նոր պարապման մէջ ևս նա յայտնեց իւր սովորական ընդունակութիւնը՝ կատարել լաւ այն բոլորը, ինչ որ նա սկսումէր: Բայց երկրաչափ դարձած լինելով, Վինկոյնը չըհրաժարուեց իւր իրաւաբանական ղեաղումներէց, ընդհակառակն, նա այժմ աւելի միջոց ունէր պարապելու:

1835 թվում, Տննդից 25 տարեկան Վինկոյնը Կլինկոյի շտափի օրէնսգրական ժողովն անդամ ընտրուեց, այդ ժամանակ նա ունեցաւ աւելի շատ ձայներ, քան երբ և իցէ առաջաւոր պարապի<sup>1)</sup> մի կանդիտատ<sup>2)</sup>: Իսկ աշունը 1836 թուի, բռնելով՝ սահ-

1) Մի քանի անձների հաւաքում, որոնք միեւնոյն կարծիքն ունեն որ և է բանի վերաբերութիւնով (կուսակցութիւն), այլ և—գորքի մի մասը:

Ման. փոխ.

2) Կան դիտատ, այստեղ հասկացվումէ այն անձը, որ պատրաստվումէ մտանել պաշտօնի մէջ:

Ման. փոխ.

մանած հարցաքննութիւն, նա իրաւունք ստացաւ պաշտպանական [ադուակատական] գործով պարապելու: Միւս տարու ապրիլում նա փոխուեց դէպի Նլլինոյիս շտափ գլխաւոր քաղաքը, Սպրինգփիլը: Մօտ այդ միջոցին նա պսակուեց մի հասարակ և աշխատասէր կնոջ վերայ Կենտուկի շտափից. իսկ նորա պաշտպանողական գործունէութիւնը հետ վհետէ աւելի զօրանումէր և նորա համեստ կեանք վարելու միջնորդութիւնով, սուեց նմա կարողութիւն իւր համար մի փոքր ստացուած յետ ձգելու: Շուտով բոլոր Նլլինոյիսում նա համբաւաւորուեց ինչպէս մի լաւ պաշտպան և բաւական մեծ գործնականութիւն [հմտութիւն] ունէր, նորա անունը մեծ ժողովրդականութիւն ստացաւ: Նա իւր ընդունակութիւնները ցոյց սուեց մանաւանդ շատ հարկաւոր գործերում, որոնք վճռվումէին երգուած դատաւորներից: Ամենից մութ և խոր [մճրճուած] բաները նա խիստ ընդունակ էր երևեցնելու բոլորովին հասարակ, պարզ և շոշափելի կերպարանքով. այնպէս որ նորանք հասկանալի էին ամենից անկիրթ մարդին անգամ: Բացի դորանից Վինկոյնը զանազանվումէր իւր առաջնայճ, անէֆ և ասողջ գաղտնաւիտայ: Նա չէր յանձնառնիլ երբէք պաշտպանելու մի գործ, եթէ նախ չլինէր համոզուած նորա արդարութեան մէջ. այդպիսի դիպուածներում նա մի ջերմ համակրութիւն էր ցոյց տալիս դէպի ամենայն բան որ հարկային էր, և այդ խիստ համոզողական էր շինում նորա ճա-

ուերը: Յառաջ բերենք այստեղ նորա իրաւաբանական պրաքտիկայից <sup>1)</sup> մի օրինակ:

Մի երիտասարդ մարդ, Արմատրոնդ անունով, որի ընտանիքի հետ Վինկոլնը ծանօթ էր դեռ իւր մանկութիւնից, մեղադրուեց մարդասպանութեան մէջ: Վկաներն այնպէս դրականապէս հաստատեցին որ ամէնքը նորան ընդունումէին յանցաւոր. ժողովուրդը նորա դէմ այնպէս էր գրգռուած, որ պէտք է պահանակ դէնք այն բանդի դռների մօտ, որտեղ նա բանդարկուած էր. լրագրներն առաջուց ուրախանումէին սպասելի պատժին: Արմատրոնդը և մայրը բոլորովն յուսահատութեան մէջ էին ընկել: Վինկոլնը յանձն առաւ այդ գործը, քննեց նորան և համոզուեց, որ երիտասարդ Ամատրոնդին բոլորովն 'ի զուր էին զընկալուած: Նա յառաջ եկաւ իւր վերայ առնել այդ գործի պաշտպանութիւնը: Ամենից յառաջ, նորա ջանքով գործը փոխադրուեց-դէպի մի ուրիշ կոմսութիւն, որտեղ ժողովուրդն այնքան չէր գրգռուած Արմատրոնդի դէմ: Բայց և այտեղ, վկաների ցուցում:

<sup>1)</sup> Գիտութեան օրէնքները և կարծիքները, քանի դեռ չեն յարմարուած կամ գործադրուած իրականութեան, ասվում են տէօրիայ (տեսական գիտութիւն): Հակառակ դիպուածում—պրաքտիկայ (գործնական գիտութիւն): Այստեղ, այդ բառը հայումէ դէպի հմտութիւն նըշանակելը.

ներով կազմուեցաւ ակտ <sup>1)</sup>, որ դատաստանի ենթարկուածի բոլոր մեղապարտութիւնն ընդունումէր, և արդարեւ, կարծես նորանում կարելի ևս չէր երկբայել: Բոլոր ներկայ գտանուողները տարակուսումէին թէ ի՞նչ հերքողական ապացոյց կարող էր դարձեալ յառաջ բերել պաշտպանը յանցաւորութեան այդքան պարզ ապացուցութիւններից յետոյ: Նախ և յառաջ Վինկոլնը յառաջ բերեց մի քանի վկայութիւններ այն բանի մասին թէ մեղադրածի անցած կեանքը եղած էր անարատ. նորանից յետոյ նա ապացուցեց, որ զխաւոր վկայի և դատաստանի տակ ընկածի մէջ վաղուց արդէն կայանումէր թշնամութիւն: Ապա առաջարկեց մի քանի հարցեր յանցանագործութեան տեղի և ժամանակի մասին և ապացուցեց դատաւորներին, որ վկաների ցուցումները զարհուրելի կերպով ընդդիմաբանում են մին միւսին և սուտ ու անվաւեր են: Գլխաւոր վկան յայտնումէր, զօրօրինակ, որ կռիւը, երբ պատահել է մարդասպանութիւնը, եղաւ երկկողին և որ լուսապայծառ լուսնի միջնորդութիւնով նա կարողացաւ մարդասպանի մէջ ճանաչել Արմատրոնդին: Վինկոլնը հերքեց այդ ցուցումը, ապա-

<sup>1)</sup> Գատաստանական մտքով, ակտ նշանակումէ ամենայն թուղթ, որ պարունակումէր որ և է կառավարչական անօրէնութիւն:

ցուցանելով, օրացուցի հիմնաւորութեան վերայ, որ այդ միջոցում լուսինն ամենեւին չէ ևս դուրս եկած: Այդ ծանուցումը մեծ ապաւորութիւն գործեց ատեանի վերայ: Գորանից յետոյ, Վինկոլնը այնպէս զօրեղ ու հաւատարիմ կերպով նկարագրեց սուտ վկայի անձնաւորութիւնը, որ նա չկարողացաւ երկար մնալ և շտապով հեռացաւ. ապա նա հանդիսացուցեց [ներկայացուցեց հրապարակապէս] իւր լսողներին՝ անարդարապէս մեղադրած մարդի յուսահատ դրութեան զարհուրելի պատկերը և պաշտպանական ճառք վերջացրեց այն խօսքերով, [թէ նա հաւատացած է, որ, արեգակը դեռ չմտած, դատաստանի ենթարկուածը կլինի արդէն ազատութեան վայելման մէջ: Մի կիսածամից յետ երդուածները յայտնեցին Արմստրոնգին անարատ: Երբ երիտասարդը, որ կեանքը պիտոյ է վերջանար կախաղանով, այլ և նորա մայրը ընկան Վինկոլնի ոտքերի տակ իւրեանց երախտապարտութիւնը յայտնելու, Վինկոլնը սահմանափակուեց նորանով, որ նայեց դէպի արեւմուտք և ասաց. «արեգակը դեռ չմտած, դու վայելումես ազատութիւն»: Այդ անարուեստ խօսքերը զօրեղ ապաւորութիւն գործեցին ներկայ գտանուողների վերայ: [Այդ խօսքերը ցոյց են տալիս մի և նոյն ժամանակ աշխարհահայեցողութիւնը մարդի, որ ապրումէր 'ի մէջ բնութեան:]

Եւ այդպէս մինչև քսան և ութ տարեկան հասակը Վինկոլնը կարողացաւ լինել հովիւ, հողագործ,

հնձող, փայտահատ, հիւան, նաւաշէն, մշակ երկաթուղու շինութեան ժամանակ, գործաւոր՝ նաւակների և շոգենաւերի վերայ, նաւավար, գործակալ կրպակում և ջաղացում, կապիտան զօրաժողովի, մանրավաճառ, նամակատան կարգավար, երկրաչափ, անդամ օրէնրսդրական ժողովի և վերջապէս իրաւաբանական պաշտպան, որի պաշտօնի մէջ նա մնաց, և այդ ժամանակից, քսան տարու շարունակութեան մէջ և աւելի, նա այլ ևս չեկաւ դէպի ուրիշ պարսպումներ:


Ընդարձակ գործնական հմտութիւնը և ահադին յառաջադիմութիւնը չքարշեցին Վինկոլնին քաղաքականութիւնից <sup>1)</sup>: Անդամ ընտրուելուց յետոյ Նլինոյիսի օրէնսդրական ժողովի մէջ [1834 թ.], նմատուին այդ պաշտօնակատարութիւնը և երեք հետեւած երկտարիները [1836-ին, 38-ին և 40-ին]: Օրէնսդրական ժողովում նա բռնեց առաջաւոր պարտիայի կողմը, որ ընդդէմ էր ստրկութեան Վինկոլնի

<sup>1)</sup> Գաղափարականութիւնը կամ պոլիտիքան այն դիտութիւնն է, որ ուսուցանումէ թէ ինչպէս պիտոյ էր կառաւարել տէրութիւնը. այլ և նշանակումէ կառաւարութեան գործողութիւնների նոյն իսկ ձևը, եղանակը: Ուստի այն անձը որ հմուտ էր այդ գիտութեան, ասումէ քաղաքագետ կամ պոլիտիքոս. սակայն գործնական կեանքը քաղաքագետ ասելով հասկանումէ և այն անձին, որ հմուտ էր մարդկային կենցաղաւարութեան մէջ:

քաղաքական ճառերը նոյնպէս անարուեստ, պարզ, մեկին և անկեղծ էին: Իւր տալ'անտի շնորհով, նա շուտով դարձաւ մին զխաւոր ժողովրդական աստեղաբաններից և նորա հետ միասին նա մեծ ազդեցութիւն ձեռք բերեց իւր, ըստ պաշտօնի ընկերների վերայ. և երկար տարիների հոսանքում իւր շտատի առաջաւոր պարտիայի առաջնորդ էր. մի քանի անգամ նորան նշանակեցին նախագահ ընտրող: Հարկաւոր է ասել, որ Ամերիկայում ժողովուրդն ուղղակի չէ ընտրում նախագահին. այլ իւրաքանչիւր շտատ ընտրում էր ինքեան նախագահ-ընտրողներ. ընտրողների թիւը հաւասարվում է նորանից կոնգրէսի մէջ ուղարկած սենատորների <sup>1)</sup> և ներկայացուցիչների թուին: Չէ կարող նախագահ ընտրել. ոչ սենատորը, ոչ կոնգրէսի անդամը, ոչ, առհասարակ, պաշտօնաւոր անձը: Ընտրողները չեն գնում կոնգրէսի մէջ, այլ տալիս են իւրեանց ձայները շտատում և ուղարկում են ընտրողական ցուցակները Ուաշինգտոնի մէջ. այնտեղ նորանցը ստուգում են և ձայները համարում: Ինչպէս նախագահ ընտրող, Լինկոլնը սաստիկ եռանդով ներգործում էր առաջաւոր պարտիայի օգտի համար: Ապա 1846 թվում Իլինոյիսի

<sup>1)</sup> Վերին կառավարչական տեղն ասվում է սենատ. իսկ անդամը — սենատոր:

Ծան. փոխ.



շտատի նահանգներից [ИЗЪ ДЕРУГОВЪ] մին ընտրեց Լինկոլնին պատգամաւոր Ուաշինգտոնեան կոնգրէսի համար: Այստեղ ևս Լինկոլնը մի անգամից յայտնուեց, ինչպէս թշնամի ստրկութեան. բայց սկզբում նորա ճիգերն անօգուտ էին, որովհետեւ միւս ընտրածների մեծ թիւը պաշտպան էր ստրկութեան: Այդ արգելառիթը աւելի հաստատեց Լինկոլնին այն վրձնողականութեան մէջ՝ որ ձեռնտու լինէր ստրկական պարտիայի թուլացնելուն բոլոր Ամերիկական դաշնակցութեան մէջ: Այդպէս, 1848 թուականում Լինկոլնը ջեռմեռանդաբար հոգաց որ նախագահ ընտրուէր իւր պարտիայի մարդ գեներալ Տէյլլըրը, որ արդարեւ տարեց յաղթութիւնը ստրկական պարտիայի կանդիտատներից:

Երկտարեայ նիստերը [1847-9 թ.] վերջացնելով, Լինկոլնը չկամեցաւ, որ իւրեան նորից ընտրէին կոնգրէսի անգամ. և ապա հինգ տարիների ընթացքում նա թողեց քաղաքականութիւնը և պարապում էր յատկապէս պաշտպանական գործով և մանաւանդ որդիների կրթութիւնով: Բայց այդ հինգ տարիների ընթացքում ստրկական պարտիան սաստիկ զօրացաւ և հասարակապետական պարտիայից բարձրացաւ. այդպէս 1850 թվում հարց դրին փախստական ստրկները յետ տալու մասին, այն շտատներից, որտեղ չկար ստրկութիւն, այն ևս առանց որ-և-է դատաւորանական քննութեան և բողոքի գէպի բարձրա-

գոյն ատեանը: Ապա 1853 թուականում ստրկական պարտիան ևս աւելի զօրեղացաւ. նա հրատարակեց մինչև անգամ օրէնք, որ սպառնումէր տասն կամ քսանամեայ բանդարկութիւն այն ամէն քաղաքացուն, որ կգրէր և ստրկատէրերի դէմ հեղինակութիւններ: Պարզ երևեցաւ, որ մտքի ազատութիւնը մինչև անգամ հասարակականութեան մէջ չէր կարող բնակուել ստրկութեան հետ միասին . . . Ապա ստրկատիրական պարտիան փոխեց հին սահմանադրութիւնը, որ արգելումէր մտցնել ստրկութիւնը դէպի հիւսիս 36°-ից հիւսիսային լայնութեան:

Միայն թէ ստրկատիրական պարտիայի գործողութիւնների այդ գոռոզ և յանդուգն ձևը ահագին ազդեցութիւն գործեց բոլոր Գաշնակցութեան ճակատագրի և մանաւանդ Ալինկոլնի կեանքի վերայ: Առաջաւոր պարտիան, որ մինչև այժմ ներգործումէր առանց կամքի զօրութեան, առանց միաբանական հոգու, առանց գործողութիւնների որոշ նախագահավարների, այժմ սարսեց ստրկատէրերի ինքնիշխանութիւնը տեսանելով: Հիւսիսային շտատների ամենալաւ մարդերը վճռեցին ընդդիմագործել ստրկութեան: Սկսանելով 1854 թուից Միացած Շտատների հիւսիսա-արևմտում և հիւսիսում կազմուեցաւ մի զօրեղ պարտիայ. Ալինկոլնը ևս, ըստ օրինակի ուրիշների, գուրս եկաւ նոյնպէս քաղաքական ասպարէզի մէջ: Այդ միջոցումն էր որ նա յայտնեց մի զարմա-

նայի զօրութիւն կամքի:

1854 թուի վերջում Ալինկոլնը, իւր պարտիայի մարդերի հետ միասին, սկսեց հոգաբարձու լինել, որ Շիլդս սենատորի փոխարէն ընտրուէր իւրեանց պարտիայի կանդիդատը: Այդ ժամանակ, Ալինկոլնը ամենաշօշափելի կերպով ապացուցեց, որ իւրեան առաջնորդումէ ոչ թէ իւր անձնական օգուտը, այլ արդար գործի օգուտը: Ստրկութեան հակառակորդներից մի քանիսը կամենումէին տալ իւրեանց ձայները Տրումբուլլոսի օգտի համար, միւսները նոյն իսկ Ալինկոլնի օգտի համար: Ալինկոլնը յառաջուց տեսաւ, որ երբ իւր պարտիայի ձայները երկուսի բաժանուեցին, ստրկատիրական ձայների թիւը կշատանար, և այն կերպով կընտրուէր նորանց կանդիդատը: Որպէս ընդ տեսայ գորանից, նա գնաց իւր ամենազղու կուսակիցների մօտ և խնդրեց նորանց տալ ձայները Տրումբուլլոսի օգտի համար: Այդ կերպով այդ վերջինը և ընտրուեց սենատոր. այրով զօրեղ հարուած ստացաւ ստրկական պարտիան Կլինոյիսում:

1856 թվում հասարակականության պարտիան յառաջ բերեց արդէն իւր կանդիդատին նախագահութեան համար, քան թէ յոյց տուեց թէ ինքը զօրեղ է հիւսիսային շտատներում. այդ կանդիդատը միայն թէ չընտրուեց, որովհետև շտատերը վախենումէին որ հարաւային շտատները կընկնեն, և թէ նախագահը հասարակականության կանդիդատ լինէր:

1858 թուականում վերջանումէր Դուզլասի՝ իլ-  
 լինոյիսի սենատորի մնալու ժամանակակետը Ուաշինգ-  
 տոնեան սենատում: Ստրկական պարտիան նորից կան-  
 դիտատ ընտրեց նորան սենատոր ընտրելու միջոցում,  
 իսկ հասարակապետականները, նշանակեցին կանդի-  
 տատ Վինկոլնին: Ընտրութիւններից յառաջ, Գուզ-  
 լասը ման եկաւ բոլոր շտատը աւելի լաւ երևան  
 հանելու իւր արած գործերը, որոնք օգնած էին  
 ստրկութեան: Ընդդիմադործելու համար նմա, Վին-  
 կոլնը ևս մօտ երկու ամիս ճանապարհորդեց շտատի  
 վերայ և իւրաքանչիւր որ ճառախօսութիւններ էր ա-  
 նում ազգային ժողովների առաջ և զանազան քա-  
 ղաքներում և զիւզաքաղաքներում: Չբաւականանա-  
 լով դորանով, Վինկոլնը նշանակեց Գուզլասին մի  
 քանի սեղեր, որ նա որոշէր ժամանակ և նորանք կա-  
 բողանային հաւաքուել ու ժողովուրդի ներկայութիւնով  
 քննուէին այն ժամանակի զխաւոր քաղաքական հար-  
 ցերը: Գուզլասին անվայել էր հրաժարուել այդ բա-  
 նից, ուստի նա համաձայնուեց: Վինկոլնի բարեկամնե-  
 րից մի քանիսը վախենումէին, որ նա անկարող լի-  
 նէր մաքառելու այդպիսի ճարտար ատենաբանի հետ,  
 որպիսի է Գուզլասը: Միայն թէ Վինկոլնը գերազան-  
 ցեց ամենից յափշտակուած բարեկամների յոյաներն  
 անգամ: Մտքի ճշդութիւնը, պարզ և անպաճոյճ  
 խօսակցութեան ձիրքը, վերջապէս Վինկոլնի եռանդ-  
 նատութիւնն ու անկեղծութիւնը շփոթեցուցին Գու-

զլասին և նա մի քանի անգամ աշխատեց խօսք վեր  
 բերել անձնականութիւնների վերայ: Բայց Վինկոլնը  
 չթողեց ցածացնել իւրեան: Թշնամիներն անգամ  
 պարտաւոր էին նորա ճառերի գերազանցութիւնն  
 ընդունել: «Թէ և չեմ ընդունում Վինկոլնի կարծիք-  
 ները,—ասաց նորանցից մին—բայց և այնպէս չէ կա-  
 րելի չզարմանալ այն պարզմտութեան և անկեղծու-  
 թեան վերայ, որոնցով նա պատասխան տուեց Գուզ-  
 լասին:» Սակայն միւսներն աշխատումէին համբաւ տա-  
 րածել, թէ Վինկոլնի անունով տպած ճառերը գրել  
 են խմբագիրները: Այդ բոլոր ճառերի մէջ նա պար-  
 զապէս ցոյց տուեց ատելութիւնը դէպի ստրկութիւնը  
 և դէպի հարաւային շտատների քաղաքականու-  
 թիւնը: Չայնտփութեան միջոցում, Վինկոլնի համար  
 մօտ 126,000 ձայներ կային, իսկ Գուզլասի համար  
 122,000. միայն թէ ձայներն այնպէս կարգաւորուե-  
 ցին ըստ նահանգների [ՅԿՐՅԴԵ], որ Գուզլասը նորից  
 ուղարկուեց ինչպէս սենատոր . . . Մնայելով դորա  
 վերայ, Վինկոլնի մաքառումը Գուզլասի հետ շուտ իւր  
 վերայ դարձուցեց բոլոր հիւսիսա-արեւմտեան շտատների  
 ուշադրութիւնը: Մեծ մասը ազահաբար կարդումէր  
 նորա առօրեայ ճառերը և տեսանումէր նորանց մէջ մի  
 տալանտաւոր և գործին անկեղծաբար անձնատուր ե-  
 դած մարդի: Այդ ժամանակից ամէնքը համոզուեցին  
 որ Վինկոլնը պիտոյ է մի խիստ հարկաւոր դեր կա-  
 տարէր Հիւսիսա-ամերիկեան շտատների ապագայ պատ-

մութեան մէջ: Նոյն իսկ միջոցում նա ձեռք բերեց  
 և ստրուկների սէրը և համակրութիւնը: Չնայելով  
 ստրկատերերի բոլոր ընդունած նախազգոշութիւննե-  
 րին, ներդրներին այնուամենայնով հասանումէին այս  
 կամ այն համբաւները և նորանք բնազդողապէս [ին-  
 ասինխոխքաբար <sup>1)</sup>] իմանումէին, որ Վինկոյնը ամենից  
 յարմար մարդն էր իւրեանցը ազատելու համար:  
 Ապա նա շուտով նորանց համար զարձաւ մի կիսա-  
 ստուած, ամենազէտ, ամենատես և երկնքից ուղար-  
 կուած:

Հասանումէին 1860 թուի նախագահութեան  
 ընտրութիւնները: Հասարակապետական պարտիան նո-  
 րից սկսեց շարժուիլ. արդէն չորս տարի գործնից  
 յառաջ, նա կարողացաւ տալ իւր կանդիտատին <sup>2)</sup>,  
 -երորդական ընտրողական ձայներ: Այժմ այդ պար-  
 տիայից կանդիտատներ էին մի քանի մարդեր. Միւարդ,  
 Չէս, Բէսս և Վինկոյն. 16-ին Մայիսի Չիկագոյ քա-  
 ղաքում եղաւ հասարակապետական ժողով, որ այդ  
 մի քանի անձներից ընտրեն մի կանդիտատ բոլոր պար-

<sup>1)</sup> Ի ն ս տ ի ն կ տ բ ա ռ ի մակրայօրէն շինուածը, որ  
 (ինստիւկտը) նշանակումէ կենդանիների այն բնածին  
 զգացումը, որանով նորանք փախչումնն մնասակարից և  
 գտանում կամ համակրումնն ինքեանց օգտաւէտին: Հայկա-  
 կան լեզուն յայտնումէ մեզ գորա նշանակութիւնը բա-  
 ատիս բն ա զ գ ու թ իւ Ն կ ու մ բ ն ա կ ա ն ա զ գ ու մ ն:

Ման. փոխ.

տիայի համար: Ամենից հոչակաւորը նորանց մէջ էր  
 Միւարդը իւր նշանաւոր ընդունակութիւններով, իւր  
 մտածութիւնների ձևի անխարդախութիւնով և ու-  
 րիշ շատ ծառայութիւններով: Բայց նա արդէն շատ  
 երեւելի անձ էր. հարաւայինները շատ ասումէին նո-  
 րան, այն ինչ Վինկոյնին համարումէին աւելի չափա-  
 ւոր անձ, թէ և նորա համոզումները համարիւր միա-  
 կերպ էին Միւարդի. համոզումների հետ. այդպէս, նա  
 գրեց իւր քաղաքական բարեկամներին հետեւած նշա-  
 նաւոր խօսքերը. «ոյ ինքը չէ կամենում լինել ստրուկ,  
 նա պարտ է որ չունենայ ստրուկներ: Ով մերժումէ ու-  
 րիշներից ազատութիւնը, նա ինքն անարժան է ազա-  
 տութիւն վայելելուն»: Չիկագոյի կոմիտէտի մէջ գը-  
 տանվումէին մինչև 30,000 մարդեր, որոնք ցանկա-  
 նումէին շուտով վերահասու լինել վերջին ընտրու-  
 թեան մասին . . . Ժողովը երկար միջոց անկարող էր  
 գտանվում վճռելու: Յանկարծ մի անգամ դուրս  
 բերեց ժողովի առաջը երկու ցիցեր, որոնք ձոխ զար-  
 դարած էին ծաղիկներով և ժապաւէններով և որոնց  
 տակ գրած էր, որ նորանք առնուած են այն 3000  
 ցիցեբեց, որոնցը պատրաստած էր Աբրահամ Վինկոյնը  
 . . . Գա մի այնպիսի տպաւորութիւն գործեց, որ  
 Վինկոյնը վրձնաբար ընտրուեց բոլոր պարտիայի կող-  
 մից կանդիտատ նախագահի: Այդ ժամանակից հա-  
 մարիւր բոլոր շտատներում հասարակապետական

կուրսերը <sup>1)</sup> ցանկանում էին ունենալ թուրքա Վինկոլնի Ֆերմի ցիցերը: Նորանք շատ երգերի նիւթ դարձան, և հասարակապետականները հանդիսաբար կրում էին նորանցը, ինչպէս նշան իւրեանց սկիզբների, այն հանդէսներում, որոնցը ամերիքական պարտիաները կատարում են սովորաբար քաղաքի մէջ, մեծ քաղաքական ժողովների նախնիթաց երեկոյին:

Վինկոլնի վերջնական ընարուիլը կանդիտատ ուրախագին արձագանք դտաւ իւր համար ինչպէս Չիկագոյում, այնպէս և Միսսիսիպիու դետի բոլոր հովտի վերայ: Ամենայն տեղ լսվում էին ազմկալի ձայներ, զանազան մանիֆէստացիաներ, հրացանածղութիւններ . . . Վինկոլնը դորա մէջ տեսանում էր մի անբաւականութիւն ստրկատիրական անպատիւ և փաստաբեր քաղաքականութեան դէմ. այլ և ցանկութիւն նուաճելու հարաւային ստրկատերերի ինքնականութիւնն ու յանդգնութիւնը, և հասկանում էր, թէ ինչպիսի կարեւոր դեր կայ իւր առաջև կատարելու և նորա հետ միասին ինչպիսի ծանր պատասխանատուութիւն: Կանդիտատ ընտրուելուց յետոյ, նա իւրեան հասարակ էր պահում: Ընտրողական պա-

<sup>1)</sup> Ժողով կամ հրապարակական տուն ժամանակ անցուցանելու համար. մասնաւոր մտքով, նշ<sup>1)</sup>. քաղաքական պարտիայի անդամների ժողով:

Ծան. փոխ.

տերազմի միջոցում, բարեկամները և յարգողները համարիր թէ բռնութիւնով պիտի դուրս քարշէին նորան ամբօխց, որ ցոյց տան նորան ժողովուրդին: Նոյնպէս հասարակ էր վարում իւրեան և նախագահ ընտրուելուց յետոյ: Այդպէս, 1861 թվում, ուղևորուելով դէպի աթոռանիստ տեղը, նա իւր ընտանիքով միասին նստեց հասարակ ամբօխի հետ ամենացածր կարգի վազոնում. նորա հետ կարգով մի և նոյն վագոնի մէջ նստած էին չորս կալանաւորներ: Մինչև վերջին նախագահական ընտրութիւնները դարձեալ մնացել էին մի քանի ամիսներ: Հիւսիսային շտատների բնակիչներին աւելի լաւ ծանօթացնելու համար Վինկոլնի քաղաքական հայեացքների [մտքերի] հետ, նորա քաղաքական բարեկամները հաւաքեցին և հրատարակեցին բոլոր նորա ձառերը, զրած 1858 թուականում. այդ հրատարակութիւնը հազիւ թէ չտարածուեցաւ միլիոն օրինակ: Այն ինչ հասարակապետական պարտիան ներդրածու էր միաբանական հողով, ստրկական բաժանուեց երեք ստրկական կանդիտատների մէջ: Կոնգրէսի բոլոր ընտրողների ընդհանուր թիւը հասանում էր 303-ի, որոնցից 183-ը պատկանում էին 18 ազատ շտատների, և 120-ը-15-ը ստրկատիրական շտատների: Գուդլան ստացաւ 12 ձայն, Բէլը-35, Բրեկկներիջը-72, Վինկոլնը 180: Վինկոլնի այդ վերջին ընտրողութիւնը յառաջ բերեց հիւսաւարեւմտեան և արեւմտեան շտատներում ևս

աւելի զարմացք: Անճանօթ մարդերը սեղմու մէին փողոցներում մին մինի ձեռները և շորհաւորումէին նոր քաղաքականութիւնը:

Նախազահի ընտրողութիւնից մինչև 'ի նորա, պաշտօնակատարութեան մէջ մտանելը սովորաբար անցանումէ չորս ամիս. այդ միջոցում հարաւայինները յայտնեցին, որ նորանք քառանկէս դաշնակցութիւնից: Ալեկոծութիւնը Հարաւում հետզհետէ աւելի զօրանումէր. շատերը հիւսիսային շտատներում, որոնք վախճանումէին բաժանուելուց, յայտնեցին ցանկութիւն, որ Աինկոլնը հրատարակէր հանդիսապէս մի թուղթ, որ հանգստացներ Հարաւին: Աինկոլնի բարեկամներն ընդդէմ էին այդ բանին. մինչև իւր, պաշտօնի մէջ մտանելը, ասումէին նորանք նորընտիր նախազահն ուրիշ ոչինչ չէ, եթէ ոչ մի մասնաւոր անձն, որ մինչև անգամ չունի իրաւունք անելու պաշտօնական յայտարարութիւններ: Աինկոլնը ինքը անօգուտ, մինչև անգամ անյարմար էր համարում զէթ մի քայլ անել մօտաւորուելու այն կուսակցութեան, որ ընդդիմանումէր նորա ընտրութեան և մինչև անգամ սպառնումէր բաժանուել: Աւելի շուտ ևս կհամաձայնուեմ մեռանելու ասումէր նա քան թէ լինէր մեր կողմից մի այնպիսի համաձայնութիւն, որ տար կերպարանք, իբրև մենք փողով ենք առնում իշխանութեան իրաւունքը, որ պատկանումէր մեզ օրէնքով:» Բայց առհասարակ, Աինկոլնից և նորա բարեկամներից հրատարակած բոլոր յայտարարութիւնները, վերին աստիճան մեղմ ու չափաւոր էին հարաւի համար: Աինկոլնը թէ և ասումէր, որ դաշնակցութիւնը չի կարող յառաջ տանել իւր գոյութիւնը, եթէ նորա մի մասը կունենայ ազատ կարգադրութիւնները, իսկ միւսը կպահպանի ստրկութիւնը, բայց և այնպէս նա չէր ևս մտածում զիմել զէպ'ի խստութեան ծանր միջոցները. սակայն այս ևս պիտոյ է հասկանալ, որ հասարակապետական պարտիայի դրութիւնը շատ խաղաղ կերպարանք էր ստացած:

Չնայելով դորա վերայ, ստրկատէրերը շատ քիչ յոյս ունէին այն բանի համար, որ ոչ ոք չէ դպչելու իւրեանց իրաւունքներին և կարգադրութիւններին. նորանց հակաւոր էր որ ինքները տարածանէին իւրեանց կարգադրութիւնները բոլոր Վաշնակցութեան վերայ և ոտնակոխանէին միւսների իրաւունքները: Նորանք տեսանումէին յառաջուց, որ նորընտիր նախազահի մօտ անկարելի է իւրեանց այդ անել: Ահա, ուրեմն, թէ ինչք՞ Հարաւային Վարդինան և, ըստ օրինակի նորա, միւս հարաւային շտատները անջատուեցին Վաշնակցութիւնից, չնայելով հասարակապետական պարտիայի բոլոր չափաւորութեան վերայ . . . Ստրկատէրերի ամբարտաւանութիւնն ու յանդրդնութիւնը վաղուց արդէն յառաջ էին բերելու այդ անջատումը, եթէ հիւսիսային շտատները յետաձգած չլինէին նորան իւրեանց զիջողութիւնով . . .

Որովհետև նախկին նախագահը և նորա նախարարները ստրկական պարտիայի անձներ էին, ապա և նորանք պաշտպանումէին նորան, զինուորական նախարարը ուղարկեց հիւսիսային զինարաններից հարաւայինների համար 115 հազար զէնքեր: Այդ կերպով հարաւայինները զեղեցիկ կերպով պատրաստուեցան պատերազմելու: Լինկոլնը իւր դրութեան բոլոր պրօբուարութիւնը հասկանումէր: Աւելորուելով զէպ'ի Ուաշինգտոն, նա ասաց. «այն խնդիրը, որ ընկել է ինձ իբրև բաժին, ես կարծումեմ աւելի ծանր է այն բոլոր խնդիրներից, որոնք, Ուաշինգտոնից յետոյ, ընկել են ինչպէս բաժին բոլոր նախագահներին»: Բոլոր նշաններից կարելի էր եզրահացնել, որ Լինկոլնը կտրած սրտով էր հրաժարվում Ապրիլի վերջից քաղաքից, որանում շատ խաղաղ և երջանիկ տարիներ էր անցուցած, որոնցից յետոյ նա մտաւ նոր, հոգսերով, դժուարութիւններով և մինչև անգամ վտանգներով լի կեանքի մէջ:

Դէպ'ի Ուաշինգտոն գնալու ժամանակ, Լինկոլնը կանգ առաւ զխաւոր քաղաքներում: Ճանապարհին, Լինկոլնի վագոնում, նորա նստած տեղի տակ գտան մի վառօդայից զնդակ: Դաշնակցութեան պոլիցիան գտաւ յետոյ, որ նախագիծ է կազմուած սպանանելու նախագահին կամ բռնելու նորան այն միջոցում, երբ կնտանէր նա Բալտիմորի մէջ, սովորութեան պէս,

առանց ընթացակից զօրքերի<sup>1)</sup> և հետաքրքիր մարդերով շրջապատուած: Այդ բանը յառաջուց իմաց տուեցին Լինկոլնին, և նա անցաւ Բալտիմորի մէջով զիշերը, այն ևս ծպտած [Թաքուն], և եկաւ Ուաշինգտոնի մէջ երկու օրով յառաջ, քան նորան կրօպասէին: Ապա մարտի 4-ին Լինկոլնը մտաւ կառաւարութեան մէջ: Այդ օրը, երդումն ուտելուց յառաջ, Լինկոլնը ասաց զօրաւոր և հաստատուն ձայնով մի ճառ իւր ասպազայ կառաւարութեան համար: Այդ ճառը զանազանվումէր իւր պարզութիւնով, անկեղծութիւնով և չափաւորութիւնով: Լինկոլնը նորա մէջ խօսումէր զխաւոր բանի վերայ՝ հարաւային շտատների բաժանման վերայ: «Այդ շտատները ստումէր նախաւունք չունին բաժանուելու, որովհետև պայման են դրել հիւսիսայինների հետ՝ լինելու մի դաշնակցութեան մէջ: Եթէ նորանք ապստամբվումեն կամ քանդումեն պայմանադիրը, ապա նորանք կարող չեն պահանջելու որ իւրեանց իրաւունքները յարգուէին միւս կողմից. այդպիսի զխաւածում այլ ևս չեն կարող անմատչելի մնալ նորանց այն իրաւունքները՝ որոնցը ընդունած են հիւսիսային շտատները: Վերջա-

<sup>1)</sup> Ընթ. զօրքերը կարգուած են նորա համար, որ ուղեկից լինեն մեծ քաղաքական մարդերին (ինչպէս էր Լինկոլնը), նորանց ապահովութեան համար:

պէս ստրկական շտաների բաժանումը Ղաչնակցու-  
թիւնից չունի ոչինչ հիմն: Ես չեմ պատրաստուում խառ-  
նուել ստրկութեան կարգադրութեան մէջ այնտեղ,  
որ տեղ նա կայ, որովհետեւ, չունիմ ես դորա հա-  
մար իրաւունք:» Այնկողը հրաժարվումէր վճուելուց  
վեճաբանական հարցերը իւր իշխանութիւնով, նա  
առաջարկումէր կոչել ժողովրդական կոնվէնցիայ, <sup>1)</sup>  
որ և վճուէր նորանցը ձայների շատութիւնով: Այդ  
կերպով նա շատ զեջող էր, իւր անձը ժողովրդի ծա-  
ռայ էր համարում, բարձր հասկացողութիւն ունէր  
ժողովրդի իշխանութեան նշանակութեան վերայ և  
բռնաւորի շարժումներ բողոքովին չունէր, աւերացրու-  
դորա վերայ և այն, որ նա վերին աստիճան մարդա-  
սէր և խաղաղասէր բնաւորութիւն ունէր և ցանկա-  
նումէր ոչնչացնել միջազգային [ազգի, ժողովրդի մէջ  
ճաղելի] պատերազմը:

Չնայելով դորա վերայ, հարաւայինները յարձա-  
կում արեցին, ձեռնի տակ ձգեցին մի փոքրիկ նա-  
ւախումը, հաւաքեցին 6,000 զինուորականներ և  
գնացին դէպի Ուաշինգտոն, որտեղ ընդ ամէնը զը-  
տանվումէին 600 զինուորականներ: Նախագահին ոչ

<sup>1)</sup> Այնվէնցիայ — դաշն 'ի մէջ երկու տէրութիւնների.  
այստեղ, տէրութիւնների փոխաբէն պիտի հասկանալ  
հարաւային շտաները և հիւսիսային  
շտաները, ինչպէս երևումէ մտքից:

Ման. փոխ.

մի ժամանակ դեռ չէր հարկաւորուած այնքան զօ-  
րութիւն, և ոչ մի ժամանակ դեռ նա չէր ստացել  
այնքան փոքր իշխանութիւն և այնքան արտասուելի  
զրութեան մէջ: Բայց քիչ-քիչ Ուաշինգտոնի մէջ  
սկսեցին հասանել զօրազնդեր հիւսիսային շտաներից,  
որոնցով և մայրաքաղաքը ազատուեցաւ: Հիւսիսային  
բնակիչները զայրացած էին. տարու վերջում Այն-  
կողի իշխանութեան տակ արգէն գտանվումէին  
500,000 զինուոր մարդեր: Հարաւը նոյնպէս դուրս  
բերեց համարիւր թէ նոյնքան զօրք: Սորա կողմից  
պատերազմը ստացաւ ատելութեան և անողորմու-  
թեան մի զարհուրելի կերպարանք: Հարաւայինները  
անօգուտ խտուրթիւններ և աւերներ էին գործում,  
վերաւորումէին գերիներին, պատերազմի դաշտի վերայ  
բողոքովին մեռուցանումէին վերաւորներին և կամ  
եթէ և վերցնումէին նորանցը երկրից, ապա թողում  
էին նորանցը մեռանելու առանց որ և է օգնութեան:  
Հիւսիսային զօրքը հետ զհետէ սկսեց յաղթութիւնը  
իւր ձեռքի տակ բերել. այն միջոցում ստրկութեան  
հարցը նոյնպէս չէր դադարում միշտ յառաջ զնա-  
լուց: Պատերազմի առաջին տարում արգելուած էր  
ստրկալաճառութիւն. երկրորդ տարում սկերին [եզ-  
բոններին, որոնք սարչու-լեւան գրեւէ մտի տասարէն երեւ  
հարտայիններէն համար], թողարկեցին մտանել զինուո-  
րական ծառայութեան մէջ [70,000 փախտա-  
կան ներգններ մտան հիւսիսային զօրքի մէջ] և ստրկ-

կութիւնը խափանեցին մի քանի տեղերում. երրորդ տարում շատացաւ նահանգների թիւը, որոնք ազատութիւն էին տալիս ստրուկներին, և հրատարակուեց պրոկլամացիայ [յայտարարութիւն] նորանցը ազատութիւն տալու համար այն շտատներում, որոնք յետ չպիտի դառնան դէպի Վաշնակցութիւնը. վերջապէս, չորրորդ տարում Ուաշինգտոնին կոնգրէսը երկու երրորդական <sup>[2/3]</sup> ձայների շատութիւնով վճռեց ձգել ամերիքական սահմանադրութեան մէջ ստրուկներին ազատութիւն պարգևելու յոյուածը բոլոր Վաշնակցութեան մէջ:

Պիտոյ է ասել, որ չորս տարիներ անցանելոց յետ, Վինկոյնը ընտրուեցաւ նախագահ երկրորդ անգամ: Հարաւային շտատները յոյս ունէին, թէ նախագահ կընտրուի մի ուրիշ մարդ, և այդպէսով իւրեանց դործը կուզուի: Բայց երևեց որ 234 ընտրողներից, որոնք ուղարկել էին իւրեանց ձայները կոնգրէսի մէջ, 213-ը տուել էին Վինկոյնի համար: Այդպէս հարաւայինների յոյսերը նախագահ փոխելու վերաբերութիւնով վլատակուեցան. դորանից յետոյ նորանց դորքը բոլորովին ջարդուեցաւ և զլիաւոր քաղաքներն աւելուեցան: Մի ընդհանուր ուրախութիւն պատեբազմի վերջանալուց յետոյ թագաւորեց ամէնայն տեղ [1865 թ.]: Ամէն քաղաքներում, զեղերում և խորճիթներում գործերը կրճատուեցան, մագազինները և գործատուները փակուեցան, գաշտային գործերն ընդ-

հատուեցան: Ամենայն տեղ կախ էին արած նաւադրօշները, խփումէին զանգակները, հրացանաձգութիւններ և թնդանօթաձգութիւններ էին անում, երգումէին հայրենասիրական և կրօնական երգեր, լինվումէին հանդիսաւոր ճառախօսութիւններ, լուսաւորումէին փողոցները և շինում արուեստական կրակներ [Ֆրշանգներ]: Յաղթութիւնը յառաջ չբերեց Վինկոյնի մէջ հպարտութիւն. ինչպէս յառաջ, նա փայլումէր իւր հեզութիւնով և չափաւորութիւնով, նորան սպանանելու փորձերն ու սպառնալիքը մինչև անգամ չզարթեցրին նորա մէջ ասելութիւն:

Ղեռ 1864 թվում մի լրագիր յառաջ էր բերել նախագահին սպանանելու խորհրդի մանրամասնութիւնները: Պատերազմի սկզբից իսկ, հարաւային լրագիրները յառաջ էին կոչում սպանողներին և պրնգումէին հաւաքելու մի միլիոն զոլլար <sup>1)</sup> սպանողներին վճարելու համար: Երբ բարեկամներն զգուշացնումէին Վինկոյնին, նա պատասխանեց. «բայց ես չեմ հասկանում, ինչ պիտի շահուեն հարաւայինները, ինձ սպանելով: Ես մարդ եմ, և իմ մահս ամենեւին չէ խանգարում, որ գործը իւր կարգով զնար: Երբ ես նախագահի կանդիտատ նշանակուեցայ թէ ոչ, իսկոյն սկսեցին դէպի ինձ նամակներ ուղարկել, որա-

<sup>1)</sup> Արծաթդրամ Հիւս'. Ծառաներում, որի արժէքը առասական փողով հիմայ հասանումէ 1 սուրբու 35 կոպէկի: Ման. փոխ.

նում յայտնումէին կեանքս խելիւ մասին սպառնալիք: Առաջին և երկրորդ նամակներն անհանգիստ էին անում ինձ. բայց վերջապէս, ես բոլորովն սովորեցի այդպիսի պարունակութեան նամակներին. նորանցն ստանումէի ես ամէն շաբաթ: Այդ շարունակուեց մինչև իմ մտանելը պաշտօնի մէջ, սորանից յետոյ դարձեալ ես քիչ անգամ չէի ստանում նամակներ այդպիսի հոգով, բայց նորանք այլ ևս ինձ անհանգիստ չէին անում: Մի ուրիշ անգամ նորա կաբինէտի [պալատական կառավարութեան] անդամներից մին ասումէր նմա մի և նոյն բանի մասին: Ղինկոյնը լուծիւնով լսելուց յետոյ, վեր կացաւ տեղեց, հանեց շարժական [հանուող] բրկիկից նամակների բազմութիւն և ձգեց նորան սեղանի վերայ: «Ահա, այդ նամակներից ամէն մին ինձ մահ է սպառնում: Ես ջղային հիւանդութիւն կստանայի, եթէ ուշք դարձնէի այդ բոլորի վերայ: Եթէ արդարև այդ մարդերը կամենումեն սպանանել ինձ, ապա նորանք ամէն օր կարողութիւն ունեն անելու այդ: Այդ տեսակ մահից հեռանալ ե՞նչ անկարելի է, և ես հոգս չեմ քաշում նորա մասին»

Հարաւայիններին կատարելապէս յողթելուց յետոյ, Ղինկոյնը միայն խօսումէր հաշտութեան և նոր կարգադրութիւնները վերայ: Ապրիլի 14-ին Չարչարանքի եօթնեակում, առաւօտեան նա հրաման հանեց անհանգիստ չանել հարաւայինների երկու զխա-

ւոր առաջնորդներին, որոնք կամենումէին զնալ դէպ'ի Եւրոպայ: «Այ մի ժամանակ դեռ չէինք տեսած նորան աւելի բազդաւոր և աւելի ուրախ, ասումէ նորա նախարարներից մին» Այդ ժամանակ Ուաշինգտոնեան հասարակութեան յայտնի եղաւ, որ նախագահը՝ նոյն օրի երեկոյան ժամանակում կլինի ֆորդի թէատրոնում, որտեղ պիտի կատարուէր մի խիստ զուարճալի կոմեդիայ: Հարաւայիններից կաշառուած Բուս անունով դերասանը թաքնաբար մտաւ այն օրը ֆորդի թէատրոնի մէջ խիստ կանուխ, քան թէ նա կբացուէր հասարակութեան համար: Այստեղ Բուսը ինչպէս արժանն էր լաւ զննեց նախագահի լոճի<sup>1)</sup> դրութիւնը, նախագահական աթոռը դրեց այնպէս, որ ինքեան աւելի հեշտ լինէր հրացանաձգութիւն անել նախագահի վերայ. մի փոքրիկ ծակ բացեց դրան մէջ, որ կորրիդորից [նեղ ճանապարհ դէպ'ի սենեակը, շինութեան մէջ] կարելի լինէր տեսանալու, թէ ինչ է լինում լոճի մէջ և խանդարեց սողնակները, որոնցով լոճի դուռը կարող էր փակուիլ ներսից: Երեկոյին, Յ ժամի կէսում նախագահը եկաւ իւր կնոջ, մայրը Ռէտբերնի և մի ուրիշ ծանօթ տիկնոջ հետ միասին: Ղինկոյնը այդ զիշեր ամենևին չէր ուզում այց ելանել թէատրին, և այդ այնքան աւելի,

1) Մի տեսակ թէատրոնական սենեակ, որ նշանակուած է հանդիսատես—մարդերի մի յայտնի թուի համար:

Ման. փոխ.

որ նորա կենը մի փոքր հիւանդ էր: Բայց որովհետև նա դիտեր, որ հասարակութիւնը սպասումէ իւր գալուն, ապա և նա չէր կամենում որ նորա յոյսերը խափուած լինէին: Եկած լինելով այնտեղ, Ղինկոյնը ուշի ուշով գնում էր պիէսայի ընթացքը և նայումէր թէատրոնական հանդիսարանի վերայ . . . Երբորդ զործողութեան կէտում նախադահի լոժի դրան մօտեցաւ մի մարդ, ասելով դռնապահին, որ նա բերումէ Գրանտ <sup>1)</sup> զեներալից շատ հարկաւոր թղթեր: Կռնապահը թողեց նորան մտանելու: Այն միջոցում այդ անձը հանեց զրպանից միաձիւղ ատրճանակ, շուտով ուղղուեց դէպի բաղկաթոռը, որտեղ նստած էր Ղինկոյնը: Մայր Աէտրերնը վերկացաւ տեղից և կամենումէր գնալ դէպի նորա առաջ, բայց նա ձեռքի մեծ դանակով հեռացրեց նորան իւրեանից, մօտեցաւ նախադահին, դրեց ատրճանակը նորա զլնի յետին մասնի մօտ, ոչ հեռի աջ ականջից, և նորան [ատրճանակը] արձակեց: Առաջին րոպէում բոլորը կարծուէին, թէ հրացանաձգութիւնը եղաւ հանդիսարանի վերայ և վերաբերումէ կոմեդիային: Այդ ժամանակ խոյն ցած իջաւ մի գերասան հանդիսարանից, որ մի քանի վայրկեան դատարկ էր մնացել և ժողովուրդն սպասումէր միւս զործող անձներէ զայրու: Խոյն, հրացանաձգութիւն լուելուց յետոյ նախադահի լոժից [որ գտանվումէր բոլորովին մօտ հանդիսարանին], անմիջապէս դուրս թռաւ հանդի-

1) Գրանտը հիմայ նախադահ է Ամերիկայում:

սարանի վերայ մի մարդ, որ բռնած էր լայն դանակ ձեռքում, և աղաղակեց, «Sic semper tyrannis!» և, վախշելով տեսարանի բոլոր լայնութեան վերայ, աջակողմեան կուլիաների այն կողմը ծածկուեց: Մի քանի րոպէ թէատրոնում թաղաւորեց դերեզմանական լուութիւն: Հասարակութիւնը դեռ շուարանքի մեջ էր . . . Բայց այդ միջոցում լուեց մի սուր, թափանցիկ և յուսահատ աղաղակ, որ հասարակութեան մեծ մասնին ստիպեց սարսուղ. «վրիցէք իմ մարդին:» Այդ էր աղաղակը տիկին Ղինկոյնի, որ, նայելով հանդիսարանի վերայ, չէր տեսել, թէ ինչպէս մտել էր սպանողը լոժի մեջ և հրացանը ձգել իւր մարդի վերայ, և միայն մի քանի րոպէից յետոյ նկատեց, որ նա տապալուել և դէպի յետ էր ընկել բաղկաթոռի վերայ . . . Թէատրոնում խոյն համբաւ տարածուեց, որ Ղինկոյնին սպանեցին: Վարազդոյրը լծուցին հասարակութեան մեջ տիրեց մի աննկարագրելի շփոթութիւն <sup>1)</sup> . . .

Խոյն գտան պատգարակ, որի վերայ դրեցին վերաբորուած Ղինկոյնին և թէատրոնից տարան դէպի մօտաւոր տունը: Հասարակութիւնը տեղի տալով ճանապարհ էր բանում տխուր գնացքին իւր խոր լու-

1) Մարդասպանը կարողացաւ ծածկուել, բայց յետոյ որոնելով գտան և պատժեցին նորան:

թեան մէջ : Գնդակը [գուլլան] ծակել էր ծոծրակը աջ կողմից, [Թափանցել էր մի և կէս վերջով ու զեղի մէջ, որտեղ և մնացել էր. վերքից Թափուել էր մի փոքր ուղեղ և արիւն : Ախնկոյնը փռուել էր պատգարակի վերայ գունաթափ, բայց անխռով կերպով . նորա աչքերը փակուած էին : Տ. Ախնկոյնին թէատրոնից դուրս բերին ուշաթափուած : Կոչուած բժիշկները իսկոյն յայանեցին, որ վէրքը մահաբեր է և թէ Ախնկոյնին մնումեն կեանքի մի քանի ժամեր միայն : Բոլոր վերջին ժամերում Ախնկոյնը մնաց ուշաթափութեան մէջ, բայց նորա աչքերը բաց էին. բազկի զարկը հետ-դհետէ թուլանումէր, շնչառութիւնը երբեմն դանդաղ, երբեմն ազատ, երբեմն հանդարտ, երբեմն ևս կերկերաձայն էր. նա աստիճանաբար նուազումէր, և վերջապէս առաւօտի 7 ժամին [15 ապր, 1865 թ.] նա իսպառ դարդարուեցաւ :

Այդ զիշերը Ուաշինգտոնում տիրապետումէր աննկարագրելի խռովութիւն և վեշտ. բոլոր քաղաքը ոտքի վերայ էր, մասնաւոր մարդեր պոլեցիայի հետ միասին ամենաջերմ կերպով որոնումէին սպանողին . . . Մի խուռն ժողովրդական բազմութիւն բազմահոգ և զբաղուած դէմքով կանդնած էր ողջ զիշերը այն տան առաջև, որտեղ զտանվումէր վերաւորուած Ախնկոյնը և, մեծ զգուշութիւնով զսպումէին իւրեանց շնչառութիւնը, ախանջ էին դնում այն համբաւներին, որ յայտնումէին հիւանդի դրութիւնը : Ահագին բազ-

մութեան մէջ լսվումէին միայն հանդարտ քրթմնջիւն [շնջիւն], և զսպած հեծկտանք : Այդ զիշերը Ուաշինգտոնի մէջ համարիւր թէ ոչ որ չլսիեց աչքը : Ապա և բոլոր Ամերիկայում մի քանի օրերի ընթացքում լսել էին միայն հեծեծանքներ և յուսահատութեան զոչիւններ :

Տիկին Ախնկոյնի ցանկութեան համեմատ, հանդուցածի մարմինը փոխադրեցին դէպի Նլինոյիսի շտապը, Սպրինգֆիլդ քաղաքի մէջ, որտեղ անցուցել էր կեանքի 26 տարիները, որտեղ կազմե'լ էր իւր համար ազնիւ և անխարդախ մարդի անուն, և որտեղ նորանից ստեղծուեց այն յեծ' *պիտոսոսոսոսոսոսոսոս* ցի, որ ծառայել էր այնպիսի սէր և հաւատարմութիւն իւր ժողովուրդի մէջ : Ուաշինգտոնից մարմինը պէտք է անցանէր շատ քաղաքների մէջով : Ամենայն տեղ կրկնվումէին յուսահատութեան և դառնաղէտ ցաւի տեսարաններ : Նիւ-Նորկի մէջ 200,000 մարդերից աւելի ուղեկից եղան այդ ազնիւ մարդի դազողին :

Ահա, թէ որպէս վերջ դրուեցաւ չորս միլիոն ստրուկներ ազատողի կեանքին. մարդի, որ ատումէր ստրկութիւնը ճնորա պլանդակ անարդարութեան պատճառով :» Զորս տարիներ, բոլոր պատերազմի ընթացքում, նա ման էր դալի առանց ընթացակից գորքերի, ընդունումէր նշանակած օրերում բոլորին առանց ծանուցման, այնպէս որ շատ անգամ գալիս

էին նորա մօտ անծանօթ մարդեր առանց մի զործ  
ունենալու, պարզապէս նորա համար, որ միայն սեղ-  
մէն նախագահի ձեռքը, սյղ տեսակ տեսութիւն եւ  
կողմերի թվում՝ զտանձումէին եւ ներգրտներ . . .  
Վինկոնին ամէն ժամանակ կարելի էր սպանանել,  
բայց մահը տեսութիւն եկաւ նորան այն միջոցում,  
երբ պատերազմն արդէն վերջացել էր, երբ նա աւ-  
ստիտիսի իւր աչքերով՝ խաղաղութեան, պարպիւնների հո-  
մաշարանութեան նախ հայրենիքի շահագոյն փոփոխութեան  
նշքի վերաբերման ուղիքը:



Մ և թ ջ:

**Մեծապատիւ հայ և օտարազգի պա-  
րոնների անունները և ազգանունները,  
որոնք գրքիս տպագրութեան օգնական  
եղան իւրեանց գրամական ձեռնտվու-  
թիւնով:**

№	Ա.Ու.Ր.
1	Ռոմանոս Նաղիրեան . . . . . 15
2	Գաւիթ բէկ Արխիպեան . . . . . 15
3	Ալէքսանդր Թաշիրեան . . . . . 15
4	Ալէքսանդր Մանթաշեան . . . . . 15
5	Եղբայրներ — Պիտոյաններ . . . . . 15
6	Ն. Ի. Շահ. — Պարսեան . . . . . 12
7	Մ. Վախչ . . . . . 5
8	Եղբայրներ — Բարութլեաններ . . . . . 5
9	Յարութիւն Յովհաննիսեան . . . . . 5
10	Ս. Маргузовъ . . . . . 15
11	Քուշարեան . . . . . 5
12	Բարսեղ Արուսեան . . . . . 5
13	Նունէ Եփէնդեան . . . . . 5
14	Մին . . . . . 3
15	Թովմաս Խանդավիրեան . . . . . 3

16	Ա. . . . .	5
17	Միքայէլ Թամանյան . . . . .	3
18	Ն. Տ. Յ. . . . .	3
19	Յ. Տէր — Միքայէլյան . . . . .	3
20	Н. З. АФИМОВЪ . . . . .	3
21	Բարսեղ Խոջայան . . . . .	3
22	Բաղդասար Խոսրովան . . . . .	3
23	Իսահակ Ծովկանեան . . . . .	3
24	Николай Епифановъ изъ Саратова . . . . .	1
25	Иванъ Меликъ—Саркисовъ . . . . .	1
26	յճՅՅՅՅՅՅ յճճճճճճ . . . . .	1
27	Նիկոլոս Արէշեան . . . . .	1
28	Գաբրիէլ Մէլքումեան . . . . .	2
29	Մովսէս Միրիմանեան . . . . .	2
30	Տիգրան Գուլազարեան . . . . .	1
31	Յովսէփ Տէր — Զարարեան . . . . .	1
32	Արշակ Մատուրեան . . . . .	1
33	Յովհաննէս Գուրգէնիբէկեան . . . . .	2
34	Համբարձում Գասապեան . . . . .	1
35	Բարսեղ Շանշեան . . . . .	3
36	Рейтеръ . . . . .	1
37	Нейзвъстный . . . . .	1
38	Нейзвъстная . . . . .	1
39	Егоръ Давидовъ . . . . .	1
40	Սուրէն Նալիան . . . . .	1
41	Տօստղրափ Արթուր . . . . .	1

42	Արէշ Տէր — Մինասեան . . . . .	1
43	Գրիգոր Մեհրաբեան . . . . .	1
44	Կոնստոտրիայի Անդամ Տէր — Մովսէս Աւագ քահանայ Սայաթնեան: . . . . .	1
45	Մուշեղ Ք. Տէր — Ղևոնդեան . . . . .	1
46	Գէորգ Ք. Գալստեան . . . . .	1
47	Канкаладомовъ . . . . .	1
48	Գրիգոր Իզմիրեան . . . . .	1

Ն.Յ. Զնայելով, որ յիշած արձաթի հաւաքումը շատ նեղութիւններ յառաջ բերեց ինձ համար, ես պարտք եմ համարում դարձեալ, խնդրել ձեզ, քաղաքացի հայեր, ընդունելու իմ անկեղծ շնորհակալութիւնը. զբքի տպագրութիւնը իւր յաջողութեան մի մասնով պարտական է ձեր արձաթին . . .



Եր" 2

**Վերևից՝ 25 տողից յետոյ**

Տ Պ Ա Մ Է

**Լիկն զնոսա՝ հալածեն,  
Ապա զարձանս նոցին կանգնեն  
Ի բանիլ աչացն  
Զփառս նոցին տեսանելով . . .**

Պ Ի Տ Ի Լ Ի Ն Է Բ

**Տանջումեն նորանցը՝ հալածում.  
Ապա արձան նորանց կանգնեցնում,  
Երբ իւրեանց աչերը բանալով  
Նորանց փառքն էին տեսանում . . .**

170. 2

of the year 1702

1702

I have the honor to acknowledge the receipt of your letter of the 14th inst.

in relation to the

affairs of the said year

1702

and in consequence thereof

to have the same referred to the

committee appointed for that purpose

and to have their report thereon

Հայաստանի Ազգային գրադարան



NL0455021

